

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱՄԱՐԱ ԱՐԱՅԻ ՇԱԶԱՐՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ

ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 340 (479.25)
ԳՄԴ 67.99 (2Հ) 0
Շ 380

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Գիտական խորհրդատու՝ *իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան*

*Շաքարյան Թ.Ա. – ՀՀ գլխավոր դատախազի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Շ 380 Իրավաբանական անձը՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ/Թ.Շաքարյան-Եր.: ԵՊՀ.հրատ., 2013, 288 էջ:

Մենագրությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ գիտական չափանիշներով ներկայացվող իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի, դրա առավել խնդրահարույց հիմնախնդիրների վերհանձնան և դրանք լուծելու ուղիների մշակման առնչությամբ համալիր ու ամբողջական հետազոտություն: Նրանում լուսաբանվում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի պատմաիրավական նախադրյալները և զարգացման փուլերը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրների ներպետական օրենսդրական բարեփոխումների վրա միջազգային իրավական չափանիշների ներազդեցությունը՝ միջազգային փորձի խորը և համակողմանի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա, իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի, առանձնահատկությունները, իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի տեսակների առանձնահատկությունները, արդի ժամանակաշրջանում իրականացվող դատաիրավական բարեփոխումների խորապատկերում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հայեցակարգային հիմնադրույթներն ու բարելավման ուղիները: Նշված հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում Հեղինակի կողմից կատարվել են բազմաթիվ տեսական եզրահանգումներ, վեր են հանվել քննարկվող հիմնախնդիր առնչությամբ օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները, մասնավորապես, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի առկա բացերը և թերությունները, մշակվել դրանց բարելավման արդյունավետ ուղիներ և գործնական առաջարկություններ:

Նախատեսված է հանրապետության բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, գիտական գործունեությամբ զբաղվող անձանց համար: Կարող է օգտակար լինել նաև վարչական իրավունքի հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի, ինչպես նաև իրավաստեղծ գործունեությանը մասնակցող մասնագետներին, իրավակիրառ տարբեր մարմիններին, մասնավորապես՝ վարչական մարմինների աշխատողներին:

ՀՏԴ 340 (479.25)
ԳՄԴ 67.99 (2Հ) 0

ISBN 978-5-8084-1815-8

© Շաքարյան Թ., 2013

SHAKARYAN TAMARA

LEGAL ENTITIES AS SUBJECT OF ADMINISTRATIVE RESPONSIBILITY

Yerevan
YSU Press
2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ...5
ԳԼՈՒԽ 1. Իրավաբանական անձը որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ...10
§1. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության պատմաիրավական նախադրյալները և ձևավորման փուլերը10
§2. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի սահմանումը և զարգացումը հայրենական վարչական իրավունքում35
§3. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի էությունը և դերը վարչական իրավունքի համակարգում53
§4. Իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի առանձնահատկությունները 74
ԳԼՈՒԽ 2. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի առանձնահատկությունները և բարելավման արդի միտումները..... 101
§1. Սեղքի գնահատման առանձնահատկությունները՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության պարագայում 101
§2. Իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրը 125
§3. Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի շրջանակը ու դրանց իրավական կարգավորման հիմնախնդիրները..... 145
§ 4. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի բարելավման հիմնախնդիրները՝ դատաիրավական բարեփոխումների խորապատկերում 181
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ200
ՔՅՈՒՄԵ.....232
SUMMARY235

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի ձևավորումը, ըստ էության, սկիզբ է առել խորհրդային իշխանության հիմնադրմանը զուգահեռ, երբ կուրորեն ժխտվում էր ցարական Ռուսաստանի իրավական համակարգի յուրաքանչյուր ինստիտուտ և գիտական տեսակետ: Ցավոք, զուտ նոր իրավական լուծումներ առաջադրելու մոլուցքը, ինչն անխուսափելի է նման իրավիճակներում, նպաստեց բավարար գիտական հիմնավորվածություն չունեցող տարաբնույթ իրավական ինստիտուտների ի հայտ գալուն: Այդ առումով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը բնավ բացառություն չէր:

Տնտեսության ազատականացման զարգացումներին զուգընթաց՝ անխուսափելիորեն մեծ արդիականություն են ձեռք բերել վարչարարության, ինչպես նաև իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրները: Մակայն, ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության և իրավական ոչ համարժեք պատկերացումների անկատարության պարագայում դեռևս բավարար չափով լուծված չեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցերը: Դրանք հավոր պատշաճի չեն ուսումնասիրվել նաև հայրենական իրավական գիտության շրջանակներում: Նշված հարցերի վերաբերյալ կան ընդամենը մի քանի տեսական հոդվածներ, որոնք իրավակիրառ պրակտիկայի կողմից առաջադրվող խնդիրների լուծման հետ կապված, ըստ էության, այլևս բավականաչափ արդիական չեն:

Միջազգային հանրությունը, կամա թե ակամա, հարկադրված է կենսական համարել օրավոր աճող և նորանոր ոլորտներ ընդգրկող հանցավորության և տարաբնույթ իրավախախտումների դեմ գիտականորեն հիմնավորված և արդյունավետ գործելու ունակ ինստիտուտների անհրաժեշտությունը: Բնականաբար, առաջին հերթին համայն մարդկությանը մտահոգում են լայն շրջանակներ ընդգրկած, աննախադեպ դաժանությամբ դրսևորվող և ողջ քաղաքակրթության գոյությունը հարցականի տակ դնելուն միտված ահաբեկչական ակտերը, մարդկության և խաղաղության անվտանգության դեմ ուղղված այլ ծանր հանցագործությունները: Իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի բարելավման, այն առավել ամբողջական դարձնելու

խնդիրն այսօր առաձևակի սրությամբ են դնում նաև այն միջազգային կառույցները, որոնք որոշակի պատասխանատվություն են կրում փողերի լվացման, կոռուպցիայի, մարդկանց առևտրի և նմանաբնույթ այլ հանցագործությունների դեմ միջազգային պայքարը համակարգելու տեսանկյունից¹:

Գաղտնիք չէ, որ նշված ինստիտուտի առնչությամբ, ցավոք, գիտական հետազոտությունները չեն առանձնանում անհրաժեշտ հարցադրումների ընտրությամբ և հիրավի արդիական խնդիրների վերլուծությամբ: Այդ անցանկալի իրավիճակին նպաստել է նաև այն, որ անկախության երկու տասնամյակների ընթացքում ձեռնարկված դատաիրավական բարեփոխումներն անհասկանալիորեն շրջանցում էին ոչ միայն իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը, այլև վարչական պատասխանատվության ինստիտուտն ընդհանրապես: Այդ նկատառումով որոշ քայլեր ձեռնարկելու փորձեր արվեցին միայն 1999թ., երբ ՀՀ վարչապետի՝ 1998 թ. նոյեմբերի 16-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 635 որոշմամբ ստեղծվեց վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրություն մշակող աշխատանքային խումբ, սակայն շատ չանցած՝ աշխատանքներն ստացան բոլորովին այլ ուղղվածություն և սահմանափակվեցին սուկ վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին օրենսդրական դրույթների մշակմամբ, որն առավել մանրամասն ներկայացված է սույն ատենախոսության երկրորդ գլխում:

Թեպետ իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը բնավ երիտասարդ չէ, սակայն, իրավահամեմտական վերլուծությունը վկայում է, որ այն իր տեսական մշակվածության աստիճան

¹ St'u Рекомендация № Rec (91) 1 Комитета министров Совета Европы государствам—членам относительно административных санкций от 13.02.1991г. Հղումն ըստ համացանցի՝ [http://www.coe.int/tf/affaires_juridiques/coop%E9ration_juridique/droit_et_justice_administratifs/textes_&_documents/Conv_Rec_Res/Rec%20R\(91\)1.asp](http://www.coe.int/tf/affaires_juridiques/coop%E9ration_juridique/droit_et_justice_administratifs/textes_&_documents/Conv_Rec_Res/Rec%20R(91)1.asp), Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա 18-րդ հոդված, (27 հունվարի 1999թ., Ստրասբուրգ), ՀՀ համար այն ուժի մեջ է մտել 2006 թ. մայիսի 6-ից, Կոռուպցիայի դեմ կոնվենցիա 26-րդ հոդված (14 դեկտեմբերի 2005թ., Նյու-Յորք), ՀՀ համար այն ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 7-ին, Convention on Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions, (Adopted by the Negotiating Conference on 21 November 1997) հղումն ըստ համացանցի՝ <http://www.oecd.org/dataoecd/4/18/38028044.pdf>:

նով և իրավական կարգավորման ընդգրկվածությամբ դեռևս էապես զիջում է ֆիզիկական անձանց պատասխանատվության ինստիտուտին:

Այս կամ այն կողմերի կազմավորումների հանրային պատասխանատվության գոյության ողջ ընթացքում, հընթացս տնտեսության ազատականացման, շուկայական հարաբերությունների աճին, այնուամենայնիվ, քաղաքակիրթ հասարակության մեջ և գիտական հարթության վրա դեռևս չեն դադարում վեճերը՝ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության սահմանման նպատակահարմարության և դրա առանձին հարցադրումների կարգավորման հիմնախնդրի շուրջ: Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտին առնչվող հիմնախնդիրները մասամբ հետազոտվել են թե՛ հետխորհրդային և թե՛ արտասահմանյան իրավագետների կողմից: Ի դեպ, նրանց հետազոտությունների առարկա չեն դարձել քննարկվող ինստիտուտի միջազգային-իրավական կողմի խնդիրները և տարբեր երկրների օրենսդրությունների համեմատաիրավական ասպեկտը: Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ հիշյալ հիմնախնդիրների վերաբերյալ դեռևս չի ձևավորվել միասնական մոտեցում, իսկ ՀՀ-ում՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը և դրան առնչվող հիմնախնդիրները տակավին չեն դարձել համակողմանի ուսումնասիրության և համալիր գիտական հետազոտության առարկա: Ավելին, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ չկա միասնական մոտեցում նաև հայ իրավական մտքի շրջանակներում, ինչն, անշուշտ, այդ բնագավառում հանգեցնում է ոչ միայն տեսական, այլև գործնական լուրջ խնդիրների, որոնք հրատապ լուծման կարիք ունեն և վկայում են այս աշխատության արդիականության մասին:

Աշխատությունում լուսաբանված են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի պատմաիրավական նախադրյալները և զարգացման փուլերը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդրի ներպետական օրենսդրական բարեփոխումների վրա միջազգային իրավական չափանիշների ներազդեցությունը, իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի, առանձնահատկությունները, այդ թվում՝ մեղքի գնահատման, իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) վարչական պատասխա-

նատվության հարաբերակցության հիմնախնդիրը, իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի տեսակների առանձնահատկությունները, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի և դրա հիմնախնդիրների բարելավման ուղղությունները: Համակողմանի ուսումնասիրության է ենթարկված իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը, միջազգային փորձը և դրա հիման վրա ներկայացված է արդի ժամանակաշրջանում իրականացվող դատաիրավական բարեփոխումների խորապատկերում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հայեցակարգային հիմնադրույթները, վեր են հանված քննարկվող հիմնախնդրի առնչությամբ օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները, մասնավորապես, ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի առկա բացերը և թերությունները, մշակված են դրանց բարելավման արդյունավետ ուղիներ:

Հենց նշված խնդիրների ուսումնասիրությանն է նվիրված այս աշխատությունը, որում բացահայտվել է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի ձևավորման պատմաիրավական նախադրյալները և զարգացման փուլերը, այդ թվում՝ այդ ինստիտուտի ձևավորման փուլերը Հայաստանի Հանրապետությունում՝ հընթացս տարբեր երկրներում դրա կայացման ու զարգացման գործընթացին, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի դերն ու առանցքային նշանակությունն իրավական պատասխանատվության համակարգում, գիտականորեն հիմնավորվել է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի միասնական օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը, համալիր հետազոտություններ է անցկացվել իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության ինստիտուտի միջազգային փորձն ուսումնասիրելու տեսանկյունից՝ առավել ընդունելի օրենսդրական լուծումներ գտնելու և հայրենական օրենսդրության մեջ դրանք ամրագրելու նպատակով, հետազոտվել են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հայրենական օրենսդրության համապատասխան դրույթները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, այնպես էլ Նախագծի հիմնադրույթները, բացահայտվել և վեր են հանվել դրանցում կարգա-

վորված ընդունելի իրավական լուծումները, ինչպես նաև հայեցակարգային և օրենսդրական որոշակի կարգավորումների թերությունները՝ առաջադրելով դրանց իրավակարգավորման համարժեք լուծումներ, համակարգված ներկայացվել են վարչական պատասխանատվության և մասնավորապես, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրները, ներկայացվել են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի բարելավման ուղիները:

Աշխատության նշանակությունը կարևորվում է հետագա իրավական բարեփոխումների ուղղությունները և եղանակները վերանայելու, ինչպես նաև դրանք առավել իրատեսական ու արդյունավետ դարձնելու վերաբերյալ այնպիսի կոնկրետ եզրահանգումների առաջադրմամբ, որոնք կարող են ունենալ համապատասխան կիրառական արժեք և կարող են նպաստել օրենսդրական բազմաթիվ թերությունների վերացմանը: Որոշ եզրահանգումներ կարող են պիտանի լինել դատաիրավական բարեփոխումների կոնկրետ հարցադրումներով գիտական հետազոտություններ իրականացնելու, վարչական օրենսդրության կատարելագործման, առանձին իրավական ակտերի կիրառման մեթոդական ցուցումներ պատրաստելու տեսանկյունից, ինչպես նաև օգտագործվել գիտական, ուսումնամեթոդական գրականություն նախապատրաստելու նպատակով:

Հիմնախնդրի վերաբերյալ կատարված վերլուծությունը, աշխատանքում արտացոլված առանձին առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի լրամշակման, դրա առանձին դրույթների վերանայման, վարչական օրենսդրության բարելավման և իրավակիրառ միասնական պրակտիկայի ձևավորման համար²:

Հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Գանիեյանին** աշխատանքի վերաբերյալ ներկայացված արժեքավոր առաջարկությունների և խորհուրդների համար:

² Աշխատանքում օրենսդրությունը օգտագործված է 2013 թվականի մարտի դրությամբ:

ԳԼՈՒԽ 1.

Իրավաբանական անձը որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ

§1. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության պատմաիրավական նախադրյալները և ձևավորման փուլերը

«Կոլեկտիվ» պատասխանատվության ինստիտուտը և մարդկանց միավորումների հանրային պատասխանատվության գաղափարը ծագել են վաղուց: Դրանք առաջացել են դեռևս այն ժամանակաշրջանում, երբ ազգի (տոհմի) բոլոր ներկայացուցիչները «ընտանեկան» պատասխանատվություն էին կրում իրենց ազգականի կատարած արարքի համար, իսկ միջնադարում գոյություն ունեցող արյան վրեժի օրենքներն արտահայտվում էին նաև այդ ժամանակաշրջանի իրավունքի աղբյուրներում: Դեռևս «Ռուսական պրավդայի» համաձայն՝ հանցագործին, որպես ամենաձանր պատժատեսակի կիրառում, տանջամահ էին անում, և այդ պատիժն իր մեջ ներառում էր նաև գույքի բռնագրավումն ու հանցագործին իր ընտանիքի հետ միասին ստրկության հանձնելը: Վերոհիշյալ իրավական աղբյուրի համաձայն՝ որպես պատժի տեսակ կիրառվում էր նաև «վիրա»-ն, այսպես կոչված՝ տուգանքը, որը նշանակվում էր ամբողջ համայնքի նկատմամբ³: Սեծ Բրիտանիայում գոյություն ուներ մի ինստիտուտ, երբ հիմնական պատժի՝ մահապատժի հետ միասին, որպես լրացուցիչ պատժ, անձը գրկվում էր իր բոլոր իրավունքներից, կոչումներից, պարգևներից, այդ թվում՝ դրանք ժառանգաբար փոխանցելու իր իրավունքից: «Կոլեկտիվ» պատասխանատվության ինստիտուտը Հին Չինաստանի իրավունքին հայտնի ավանդական այն ինստիտուտներից էր, որի դեմ պայքարում էին կոնֆուցիոնիստները և լոգիստները, քանզի Հին Չինաստանում պետական դավաճանությ-

³ Տե՛ս Исаев. И.А. История государства и права России. М., изд. "Юристь", 1996, էջ 19:

յան համար մահապատժի էին ենթարկում ոչ միայն հանցագործին, այլ նաև ազգականների երեք սերունդ՝ հոր, մոր և կողակցի կողմից:

Հասարակության զարգացման հետ զուգընթաց, երբ սահմանվեցին մարդու և քաղաքացու իրավունքները, «կոլեկտիվ», «ընտանեկան» պատասխանատվությունից անցում կատարվեց ֆիզիկական անձի անձնական պատասխանատվությանը: «Անվիճելի է, որ անձնական պատասխանատվության գաղափարախոսությունը հանդիսացավ ժողովրդավարական ձեռքբերում ֆեոդալական կարգերի դեմ պայքարում»⁴: Կոլեկտիվ սուբյեկտների հանրային (քրեական կամ վարչական) պատասխանատվությունը⁵ սկսվեց ամրագրվել տարբեր երկրների օրենսդրական ակտերում՝ բազմիցս ենթարկվելով նշանակալից փոփոխությունների՝ նույնիսկ վերացման: Նշված գաղափարի զարգացման բնութագրական յուրահատկությունը կայանում էր նրանում, որ հետագայում այն կրկին օրենսդրորեն սահմանվում էր տվյալ երկրում: Ընդ որում, հաճախ օրենսդրական ամրագրումն իրականացվում էր ոչ միայն քննարկվող հարցադրման շուրջ առկա իրարամերժ տեսակետների կարգավորման, այլև դրա սկզբունքային անհրաժեշտության և ամրագրման հնարավորության նկատմամբ տվյալ երկրի իրավական մտքի ներկայացուցիչների միասնական գիտական դիրքորոշման բացակայության պայմաններում:

⁴ St'u Никифоров А.С. Юридическое лицо как субъект преступления и уголовной ответственности. М., 2002, էջ 14:

⁵ Իր բնույթով հանրային պատասխանատվությունը, ավանդորեն հակառակ կանգնած մասնավոր պատասխանատվությանը բնութագրվում է ներքոշարադրյալ մի շարք հատկանիշներով, որոնք թույլ են տալիս տարբերելու պատասխանատվության վերոհիշյալ տեսակները, և միաժամանակ նաև այն հիմնական սկզբունքներով, որոնց հիման վրա կառուցվում է պատասխանատվության նշված ձևը, մասնավորապես, այն առաջանում է պետության առաջ՝ հանձնիս իր մարմինների, սովորաբար կրում է պատժիչ բնույթ, առաջանում է այնպիսի հանրորեն վտանգավոր մեղավոր արարքի կատարման արդյունքում, որը վնաս է պատճառում հասարակության շահերին: Մանրամասն տե՛ս Кислухин А.В. Виды юридической ответственности: Автореф. дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук.-М., 2002, էջ 9: Հանրային-իրավական պատասխանատվությունը բաժանվում է քրեական և վարչական պատասխանատվության, որոնք շատ ընդհանուր գծեր ունեն, մասնավորապես ունեն միանման կառուցվածք և հիմնվում են միևնույն սկզբունքների վրա: Մանրամասն տե՛ս Сорокин В. Д. Правовое регулирование: Предмет, метод, процесс (макроуровень).-Спб., 2003, էջ 431:

Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում իրավաբանական անձանց հանրային պատասխանատվությունն առաջացել է դեռևս 100-150 տարի առաջ «...որպես պետության իրավաչափ փորձ՝ ուժեղացնելու հսկողությունն առաջին հերթին խոշոր ձեռնարկությունների գործարար ակտիվության և դրա բացասական հետևանքների նկատմամբ»:⁶ Իրավաբանական անձանց հանրային պատասխանատվությունն առավել բուռն զարգացավ արտասահմանյան երկրներում նախորդ դարաշրջանի 40-50-ական թթ:

Արտասահմանյան երկրների մեծամասնությունում հանրային-իրավական պատասխանատվությունն իրավախախտումների համար հանդես է գալիս որպես մեկ միասնական քրեական պատասխանատվություն, այլ կերպ ասած՝ մի շարք արտասահմանյան երկրների իրավական համակարգերում հստակ տարանջատում չկա վարչական և քրեական արարքների միջև, իսկ շատ դեպքերում վարչական զանցանքները նույնիսկ սահմանված են քրեական օրենսդրությամբ⁷, ուստի հարկ ենք համարում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցն ուսումնասիրելիս և իրավահամեմատական վերլուծություն իրականացնելիս սույն աշխատությունում զուգահեռներ անցկացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցի հետ, քանզի իրավաբանական

⁶ St'u Никифоров А.С. Юридическое лицо как субъект преступления и уголовной ответственности. М., 2002, էջ 21-22:

⁷ Օրինակ, Գ-Ղ-նում արարքները բաժանվում են հանցագործությունների և զանցանքների (տե՛ս Уголовный кодекс ФРГ § 12, -М., 2000, էջ 15, Серебрянникова Л. П. Основные черты Уголовного кодекса ФРГ.- М., 1999, էջ 13), Ֆրանսիայում՝ հանցագործությունների, զանցանքների և խախտումների, ընդ որում, նրանցից յուրաքանչյուրն ունի իր ենթատեսակները,(տե՛ս Преступление и наказание в Англии, США, Франции, ФРГ, Японии: Общая часть уголовного права, - М., 1991, էջ 57), ԱՄՆ-ում արարքները բաժանվում են հանցագործությունների և խախտումների: Վերջիններս թեթև արարքներ են և, ըստ Նյու-Յորքի նահանգի Քրեական օրենսգրքի, առաջացնում են միայն տուգանքի նշանակում կամ կալանք 5-օրյա ժամկետով (տե՛ս նույն տեղը՝ էջ 138-139): Դապոնիայում քրեորեն պատժվող արարքները բաժանվում են ծանրի, ոչ մեծ ծանրության և խախտումների (տե՛ս նույն տեղը՝ էջ 228): Նշված խախտումներն անարդիայի կիրառմամբ կարելի է դիտարկել որպես զանցանքներ, քանզի այդ խախտումների համար պատիժը, ի տարբերություն արարքների մյուս տեսակների, նշանակվում է արտադատական, այսինքն՝ վարչական կարգով:

անձանց վարչական պատասխանատվությունն իր իրավական հետևանքներով համարժեք է առանձին երկրներում ընդունված իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության իրավական հետևանքներին: Այսինքն՝ վարչական զանցանքների փոխարեն նախապատվությունը տրվում է քրեական զանցանքներին, այլ կերպ ասած՝ նման երկրներում քրեական իրավունքը հիմնված է այն ելակետի վրա, որ ըստ վտանգավորության աստիճանի՝ քրեական իրավախախտումները բաժանվում են՝ քրեական հանցագործությունների և քրեական զանցանքների: Ըստ որում, վերջիններիս առնչությամբ ևս իրականացվում է քրեական դատավարություն:

«Ստրասբուրգյան» նախադեպային իրավունքը նպաստեց եվրոպայում «քրեական ոլորտում» նոր ուսմունքի ձևավորմանը, քանզի Եվրոպական կոնվենցիայի իմաստով՝ «քրեական» հասկացությունը չի սահմանափակվում յուրաքանչյուր պետության իրավական համակարգում առկա տեսությամբ, ուստի վերոհիշյալ դոկտրինայի զարգացման արդյունքում «քրեական ոլորտը» տարածվել է նաև վարչական իրավախախտումների վրա: Այսպես, օրինակ՝ 1984 թ. փետրվարի 21-ի Օտցյուրկն ընդդեմ Գերմանիայի գործով «քրեական ոլորտին» դասվեցին նաև վարչական իրավախախտումները⁸, ընդ որում, Եվրոպական դատարանը համանման դիրքորոշում է արտահայտել նաև իր մի շարք այլ որոշումներում⁹: Ի դեպ, Եվրոպական դատարանը «հանցագործությա-

⁸ Տե՛ս ECHR case of *Öztürk v. Germany*, (application no. 8544/79, 21 February 1984, Strasbourg), p. 21, § 49:

⁹ Տե՛ս ECHR case of *Escoubet v. Belgium* (application no. 26780/95, 28 October 1999, Strasbourg.), ECHR case of *Engel and others v. Netherlands* (application no. 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, 8 June 1976, Strasbourg) p. 34-35, § 82-83, ECHR case of *Sergey Zolotukhin v. Russia* (application no.14939/03, 10 February 2009, Strasbourg), ECHR case of *Čanády v. Slovakia*, (application no. 53371/99, 16 November 2004, Strasbourg), ECHR case of *Lutz v. Germany*, (application no. 9912/82, 25 August 1987, Strasbourg) p. 23, § 55, ECHR case of *Ezeh and Connors v. the United Kingdom* (application no. 39665/98 and 40086/98, 9 October 2003, Strasbourg) § 82, ECHR case of *Weber v. Switzerland*, (application no. 11034/84, 22 May 1990, Strasbourg) p. 18, § 33 and 34, ECHR case of *Demicoli v. Malta*, (application no. 13057/87, 27 August 1991, Strasbourg) p. 17, § 34, ECHR case of *Ravnsborg v. Sweden*, (application no. 14220/88, 23 March 1994, Strasbourg) § 38, ECHR case of *Deweert v. Belgium*, (application no. 6903/75, 27 February 1980, Strasbourg) p. 22, § 42, and p. 24, § 46, ECHR case of *Eckle v. Germany*, (application no. 8130/78, 15 July 1982, Strasbourg) p. 33, § 73, և այլն:

նը» տվել է ինքնուրույն իմաստ, որը կարող է որոշիչ լինել քրեական վարույթին վերաբերող՝ Եվրոպական կոնվենցիայի տարբեր պահանջներ պարունակող դիմումներ ընդունելիս, և այն փաստը, որ կոնկրետ վարույթները նույն կերպ դասակարգված չեն ազգային իրավունքում, բնավ չի կարող բացառել համապատասխան պահանջների քննարկումը: Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական հայեցակետի կիրառելիության հարցի որոշման ելակետ ընդունվում է վերը վկայակոչված Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների և Օտցյուրկն ընդդեմ Գերմանիայի վճիռներում ընդգծված չափանիշը¹⁰, ըստ որի, «...նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք պատասխանող պետության ներպետական իրավունքում համապատասխան հոդվածները պատկանում են քրեական, թե՛ վարչական իրավունքին, թե՛ երկուսին միաժամանակ: Սակայն այս տվյալներն ունեն միայն ձևական և հարաբերական արժեք և պետք է ուսումնասիրվեն տարբեր մասնակից պետությունների օրենսդրություններից բխող ընդհանուր հայտարարից ելնելով: Այնուհետև անհրաժեշտ է որոշել արարքի իրավական բնույթն ու անձի նկատմամբ նշանակվող պատժի խստության աստիճանը, որոնք էլ բավարար կարող են համարվել, որպեսզի վարչական իրավախախտումները «քրեական» բնույթ կրեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության իմաստով»: Միևնույն ժամանակ Լուսցն ընդդեմ Գերմանիայի գործով վճռում¹¹ նշվեց, որ «քրեական ոլորտին» արարքը դասելու համար, բավարար է վերհիշյալ չափանիշներից մեկը և որ դրանց ամբողջությունը, այսինքն՝ վարչական իրավախախտումները դասվում են «քրեական ոլորտին»՝ անկախ իրենց սանկցիայի խստության աստիճանից:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հիմնադրման և դրա հետագա զարգացման հարցադրումների շուրջ առկա տարաձայնությունները, հիրավի, հետևանք են ինչպես վերջինիս զարգացման փորձ ունեցող երկրներում առկա ոչ միաս-

¹⁰ Տե՛ս ECHR case of *Engel and others v. Netherlands* (application no. 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, 8 June 1976, Strasbourg) p. 34-35, § 82-83, ECHR case of *Öztürk v. Germany*, (application no. 8544/79, 21 February 1984, Strasbourg), p. 21, § 49:

¹¹ Տե՛ս ECHR case of *Lutz v. Germany*, (application no. 9912/82, 25 August 1987, Strasbourg), p. 23:

նական մոտեցումների, այնպես էլ արդեն իսկ ձևավորված պրակտիկայի պարագայում այս ինստիտուտի ներդրման անհրաժեշտության և դրա հետ առնչվող հիմնախնդիրների առկայությամբ: Առայժմ վիճելի են իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի հետ կապված այնպիսի բազմաթիվ հարցադրումներ, ինչպիսիք են՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ամրագրման անհրաժեշտությունը, մեղքը, նրանց նկատմամբ նշանակվող տույժերի տեսակները և այլն, որոնց հանգամանորեն կանդրադառնանք աշխատության հաջորդ պարագրաֆներում: Դրա ձևավորմանն առնչվող պատմահամեմատական վերլուծությունը վկայում է, որ բացի ընդհանուր հատկանիշներից այն օժտված է սոցիալական և իմացաբանական նշանակություն ունեցող ինքնատիպ գծերով, որոնց վերաբերյալ գիտական ուսումնասիրություն կատարելը հնարավորություն է տալիս առանձնացնելու այն փաստական հանգամանքները, որոնցով պայմանավորված է հիշյալ ինստիտուտի ձևավորման և զարգացման գործընթացը:

Մինչ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի ձևավորման իրավական հիմքերի էվոլյուցիային, դրանց հիմնադրույթներին և իրավաբանական նշանակությանն անդրադառնալը, իրավահամեմատական վերլուծությամբ ներկայացնենք այս ինստիտուտի ձևավորման միջազգային փորձն ինչպես եվրոպական, այնպես էլ հետխորհրդային երկրներում:

Այսպես, Ֆրանսիայում մինչ հեղափոխությունը (1789-1794թթ.) հայտնի էր կոլեկտիվ միավորումների, մասնավորապես, տարբեր տեսակի ընկերությունների, ձեռնարկությունների, համալսարանական միությունների, ինչպես նաև քաղաքների, որպես մեկ միասնական տարածքում ապրող մարդկանց միավորման, քրեական պատասխանատվությունը:¹² Քրեական իրավունքի ոլորտում 1670թ. ընդունված խոշոր օրդոնանսում մի ամբողջ գլուխ նվիրված էր կոլեկտիվ միավորումների պատասխանատվությանը և սահմանված էր դրանց նկատմամբ նշանակվող պատիժների տեսակներն ու նշանակման կարգը: Սակայն,

¹² Տե՛ս Կոզոչկն Ի. Դ. Уголовное право зарубежных государств. Общая часть. - М., 2001, էջ. 309:

Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունից հետո այլևս կոլեկտիվ միավորումների քրեական պատասխանատվությունը պաշտոնապես վերացվեց, և Ֆրանսիայի 1810թ. քրեական օրենսգիրքն իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ որևէ նորմ չէր պարունակում¹³: Սակայն, իրավաբանական անձանց պատասխանատվությունը նախատեսվում էր քրեաիրավական շատ այլակերպով, որոնց օրենսդրական դրույթները դարձան Ֆրանսիայում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթակելու ինստիտուտի իրավական հիմնաքարը:

Ոչ պակաս դժվար է եղել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սահմանման ուղին նաև ընդհանուր իրավունքի ընտանիքին պատկանող երկրներում (օրինակ՝ Անգլիայում, Կանադայում, ԱՄՆ-ում)¹⁴: Այսպես, ԱՄՆ-ում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը սահմանված էր 1887թ. «Նահանգների միջև առևտրի մասին» օրենքով և Շերմանի 1890թ. Քրեական օրենքով¹⁵: 1903թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Էլկինսի ակտի¹⁶ ընդունումից հետո աշխատողի (կազմակերպության պաշտոնատար անձի) կողմից կատարված գործողությունները (անգործությունը), որոնք նա կատարել է իր աշխատանքային պարտականությունները կատարելու ժամանակ և իր լիազորությունների շրջանակում, համարվում էին կազմակերպության կողմից կատարված: Այնուհետև «աշխատանքային պարտականությունների շրջանակում» կատարված գործողություններում ներառվեցին ցանկացած անօրինական գործողություն, որը

¹³ Տե՛ս Павлов В.Г. Субъект преступления в зарубежном уголовном праве."Правоведение", 1996, №3.// law.edu.ru/article/article.asp?articleID=141944:

¹⁴ Տե՛ս Никифоров Б. С., Решетников Ф. М. Современное американское уголовное право. -М., 1990, էջ 53:

¹⁵ Տե՛ս Никифоров А.С. Юридическое лицо как субъект преступления // Государство и право, 2000, №8, էջ 23:

¹⁶ Տե՛ս "Corporate criminal liability. National and international responses" by Markus Wagner, Background paper for the international society for the reform of criminal law 13th international conference commercial and financial fraud. Malta, 8-12 July, 1999., p.3:

կազմակերպության աշխատակիցը կատարել է ի շահ կազմակերպության¹⁷:

Կանադայում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի սահմանման վերաբերյալ բազմիցս նախագծեր էին մշակվում, և վերջապես 1987 թ. Կանադայի օրենսդրական բարեփոխումների հանձնաժողովն առաջարկեց կորպորացիայի պատասխանատվության ամրագրում այն բոլոր հանցագործությունների համար, որոնք կատարվել են դատավորությամբ նրա տնօրենների կամ աշխատակիցների կողմից՝ ի շահ տվյալ կորպորացիայի¹⁸:

Անգլիական իրավունքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն սահմանելու փորձերը ձեռնարկվեցին 19-րդ դարի կեսերին: Երբ տնտեսական զարգացմանը զուգընթաց ձեռնարկությունների թիվը զգալիորեն աճեց և տարածում ստացան վերջիններիս գործունեության բացասական հետևանքները, անհրաժեշտություն առաջացավ խստացնելու ձեռնարկատիրական գործունեության բնագավառը կարգավորող և դրանց համար պատասխանատվություն նախատեսող նորմերը: Սակայն լորդ-կանցլերի և գլխավոր դատախազի հանձնարարությամբ մշակված քրեական օրենսգրքի նախագիծը Պառլամենտում այդպես էլ քննարկման չդրվեց, քանզի այդ ժամանակաշրջանում անգլիական իրավունքում դեռևս գտնում էին, որ իրավաբանական անձինք չեն կարող պատասխանատվություն կրել այն արարքների համար, որոնց մեջ նրանց մեղքը պետք է հաստատվի¹⁹:

St'u "Corporate criminal liability" discussion paper, March 2002, Ministry of Justice, Canada, հղումն ըստ համացանցի՝ <http://www.justice.gc.ca/eng/dept-min/pub/jhr-jdp/dp-dt/intro.html>, St'u United States v. Basic Construction Co., 711 F.2d 570, 573 (4th Cir.), cert. denied, 462 U.S. 954 (1983); հղումն ըստ համացանցի՝ <http://law.justia.com/cases/federal/appellate-courts/F2/711/570/302619/>:

¹⁸ St'u "Corporate criminal liability. National and international responses" by Markus Wagner, Background paper for the international society for the reform of criminal law 13th international conference commercial and financial fraud. Malta, 8-12 July, 1999., p.4:

¹⁹ St'u Gerry Ferguson, "Corruption and corporate criminal Liability" paper presented at the for the seminar on New global and canadian standards on Corruption and Bribery in foreign business transactions, february 4-5, Vancouver, Canada, 1998, p 4, Решетников Ф. М. Правовые системы стран мира: Справочник. - М., 1993, էջ 33:

Մեծ Բրիտանիայում իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության ծագումը պայմանավորված է դատական պրակտիկայով: Որպես օրինակ, առ այն որ կորպորացիան Մեծ Բրիտանիայում համարվում է հանցագործության սուբյեկտ, հանդիսանում է Լորդերի պալատի 1996 թ. որոշումը²⁰, որի համաձայն մի ընկերություն մեղավոր էր ճանաչվել «Արտադրությունում առողջության և անվտանգության մասին» Մեծ Բրիտանիայի 1974 թ. օրենքով իր վրա դրված պատասխանությունները չկատարելու համար:

20-րդ դարի կեսերին կոլեկտիվ սուբյեկտների հանրային, մասնավորապես, քրեական պատասխանատվությունը, արտասահմանյան երկրներում նորից մեծ համբավ ձեռք բերեց²¹: Նշված ժամանակաշրջանում քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ կարևոր փաստաթուղթ հանդիսացավ Եվրոխորհրդի անդամ պետությունների համար նախարարների կոմիտեի «Վարչական սանկցիաների մասին» թիվ (91)1 հանձնարարականը²², ըստ որի՝ անդամ պետություններին առաջարկվում է վարչական պատասխանատվության սուբյեկտ ճանաչել ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձանց: Եվրոխորհրդի անդամ պետությունների համար նախարարների կոմիտեն 1988 թ. ընդունել էր նաև «Կազմակերպությունների պատասխանատվության մասին» թիվ (88)18 հանձնարարականը, որը վերաբերում էր այն իրավախախտումներին, որոնք վերջիններս կատարել էին իրենց տնտեսական գործունեության ընթացքում:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, որպես կանոն իրավաբանական անձինք հանրային պատասխանատվության են ենթարկվում այնպիսի իրավախախտումների համար, որոնք ծագում են տնտեսական, ինչպես

²⁰ St'u Card, Cross and Jones. Op. cit., p. 688 (Associated Octel Ltd (1996) 4 All ER 846, HL.)/ Приведено по: Уголовное право зарубежных государств. Общая часть / И. Д. Козочкнн. – М., 2001, էջ 45:

²¹ St'u Минашкин А. В. Проблемы административной ответственности юридических лиц // Журн. рос. права. 1998. № 7. էջ 34:

²² St'u Рекомендация № Rec (91) 1 Комитета министров Совета Европы государствам-членам относительно административных санкций от 13 февраля 1991 года. Հղումն ըստ համացանցի՝ [http://www.coe.int/t/f/affaires_juridiques/coop%E9ration_juridique/droit_et_justice_administratifs/textes_&_documents/Con_v_Rec_Res/Rec%20R\(91\)1.asp](http://www.coe.int/t/f/affaires_juridiques/coop%E9ration_juridique/droit_et_justice_administratifs/textes_&_documents/Con_v_Rec_Res/Rec%20R(91)1.asp):

նաև հարկային և մաքսային ոլորտներում, այլ կերպ ասած՝ բոլոր այն ոլորտներում, որոնց հետ կապված է իրավաբանական անձանց տնտեսական գործունեությունը: Միևնույն ժամանակ, նշենք, որ մի շարք երկրներում իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության են ենթարկվում բոլոր տեսակի հանցագործությունների համար, որոնք սահմանված են այդ երկրների համապատասխան օրենսդրությամբ, այսինքն՝ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվությունը բնավ ոչ բոլոր դեպքերում է անմիջականորեն կապված իրենց տնտեսական գործունեության հետ: Օրինակ՝ Ֆրանսիայի քրեական օրենսգրքում իրավաբանական անձինք հանդիսանում են այնպիսի հանցագործությունների սուբյեկտ, ինչպիսիք են սպանությունը, ահաբեկչությունը, կավատությունը և այլն²³: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն բոլոր տեսակի հանցագործությունների համար սահմանվեցին 1976 թ Նիդերլանդներում, 1982 թ.՝ Պորտուգալիայում, 1995 թ.՝ Ֆինլանդիայում, Ավստրալիայում, իսկ 1997 թ.՝ Չինաստանում²⁴: Հանցագործության տեսակների ցանկը, որոնց համար կորստիցիաներն ենթարկվում էին հանրային պատասխանատվության, աստիճանաբար ընդլայնվում էր: Այնուամենայնիվ, որոշակի տեսակի հանցագործություններ բնավ չեն կարող կատարվել իրավաբանական անձանց կողմից, օրինակ՝ բռնաբարությունը, սուտ ցուցմունք տալը, սպանությունը և այլն: Միևնույն ժամանակ, որքան էլ տարօրինակ է հնչում, ԱՄՆ-ում հայտնի են մի շարք դեպքեր, երբ մեծ

²³ Տե՛ս Крылова Н. Е., Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник МГУ. Серия 11. Право. 1998. № 3, էջ 70:

²⁴ Տե՛ս Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1997թ. մարտի 14-ին) <http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/oeur/lxwechi.htm>, Պորտուգալիայի քրեական օրենսգիրք (ընդունվել է 1982) <http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxwepor.htm>, Ֆինլանդիայի քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1889) <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>, Նիդերլանդների քրեական օրենսգիրք (ընդունվել է 1881 թ. մարտի 3-ին), www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxwened.htm, Уголовный кодекс Австралии 1995 г., (ч.2 ст.12.1 раздела 12 части 2.5 «Уголовная ответственность корпораций») /И. Д. Козочкин, Е. Н. Трнкоз. - СПб., 2002, էջ 89:

հնչեղություն ունեցող իրավաբանական անձինք մեղավոր են ճանաչվել նաև դիտավորյալ սպանության համար²⁵:

Անշուշտ հարկ է նկատել, որ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության ինստիտուտի զարգացման օրինաչափությունների այս կամ այն կերպ դրսևորած առանձնահատկությունները պայմանավորված են կոնկրետ երկրի իրավական համակարգի և իրավակիրառ պրակտիկայի նախադրյալներով: Ինչպես երևում է վերոգրյալ բոլոր օրինակներից, իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության ենթարկելու գաղափարը ծագում, ամրագրվում և մեծ արդիականություն է ձեռք բերում տվյալ երկրի տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ իրավաբանական անձանց քանակի աճի, նրանց հնարավորությունների ընդլայնման, հասարակական կյանքի տնտեսական ոլորտում նրանց զբաղեցրած դիրքի արդյունքում: Մեծ թվով պետություններ իրենց տնտեսական զարգացման և շուկայական հարաբերությունների անցմանը զուգընթաց, որը ենթադրում է նաև մեծ եկամուտների կենտրոնացում ոչ պետական կազմակերպությունների ձեռքում, ամրագրում են կազմակերպությունների ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն: Ավելին, շատ պետություններ²⁶, որոնք արդեն իսկ օրենսդրորեն իրավաբանական անձանց համար սահմանել էին վարչական պատասխանատվություն, հետագայում սահմանեցին նաև քրեական պատասխանատվություն, քանզի ինչպես վկայում էր այդ պետությունների իրավակիրառ պրակտիկան միայն իրավաբանական անձի աշխատակցի կամ տվյալ իրավաբանական անձում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի անձնական պատասխանատվությունն անգամ փոքր չափերով չէր հատուցում պետությանը պատճառված վնասը, ինչպես նաև չէր ունենում նախականիչիչ ազդեցություն հետագայում տնտեսական բնույթի հանցագործությունների կատարումը կանխելու համար:

²⁵ 1978 թ. Բնդիանա նահանգի գլխավոր դատախազը «Ֆորդ» ընկերությանը մեղադրանք առաջադրեց երեք անձի սպանության համար, որոնք այրվել էին այդ ընկերության կողմից թողարկված «Պինտո» մակնիշի ավտոմեքենաների մեջ, և 1984 թ. «Յունիոն Կարբայդ» ընկերության ղեմ հարուցված գործը, երբ նրա գործարաններից մեկում տեղի ունեցավ գազի արտահոսք, որի արդյունքում գազի թունավորումից մահացան մոտ 4000 մարդ, և 50000 մարդ հիվանդացան միջին ծանրության և ծանր հիվանդություններով:

²⁶ Օրինակ՝ Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Մոլդովան, Չինաստանը և այլն:

Միջազգային իրավունքում կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու հարցն առաջին անգամ քննարկման առարկա դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, չնայած որ 1929թ. քրեական իրավունքի միջազգային կոնգրեսը Բուխարեստում կողմ էր արտահայտվել նշված ինստիտուտի ամրագրմանը²⁷: Խաղաղության և մարդկության դեմ ֆաշիստական կազմակերպությունների կողմից կատարված հանցագործությունները Միջազգային զինվորական տրիբունալին կանգնեցրեցին այդ կազմակերպություններին մեղավոր ճանաչելու խնդրի անհրաժեշտության առաջ: Միջազգային զինվորական տրիբունալի կանոնադրության 9-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ տրիբունալը Նյուրեմբերգյան դատավարության ժամանակ²⁸ 1945թ. օգոստոսի 8-ից ՕՍԻ²⁹ եվրոպական պետությունների զինվորական հանցագործներին պատժելու համար այս կամ այն խմբի կամ կազմակերպության ցանկացած առանձին անդամի գործը քննելիս կարող է տվյալ խմբին կամ կազմակերպությանը, որի անդամը հանդիսանում է մեղադրյալը, մեղավոր ճանաչել³⁰: Այլ կերպ ասած՝ պետութ-

²⁷ Տե՛ս Додонов В. “Ответственность юридических лиц в современном уголовном праве”, հղումն ըստ համացանցի՝ <http://www.zakakon.ru>:

²⁸ Նյուրեմբերգում միջազգային զինվորական տրիբունալում պատերազմից հետո տեղի ունեցած քրեական գործընթաց Հիտլերյան Գերմանիայի նախկին պաշտոնյաների և առաջնորդների նկատմամբ, 1945 թ. նոյեմբերի 2- 1946 թ. հոկտեմբերի 1, տե՛ս Douglas, Lawrence, The memory of judgement: making law and history in the trials if the Holocaust. (Yale University Press:2001), p. 91, Sands, Phillipe, Ed. from Nuremberg to the Hague: The future of International Criminal Justice. (Cambridge University Press:2003) p.28:

²⁹ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Բրիտանիայի Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունների և Ֆրանսիայի Հանրապետության ժամանակավոր կառավարության միջև կնքված համաձայնագիր դատական հետապնդման և 1945 թ. օգոստոսի 8-ից ՕՍԻ /նացիստական դաշինքի երկրներ/ եվրոպական պետությունների գլխավոր զինվորական հանցագործներին պատժելու մասին://Международное гуманитарное право в документах. М., 1996. էջ 513 – 520:

³⁰ Եթե տրիբունալն այս կամ այն խմբին կամ կազմակերպությանը մեղավոր ճանաչի, ստորագրած կողմերի իրավասու ազգային իշխանություններն իրավունք ունեն ազգային, զինվորական կամ զավթողական տրիբունալներին դատարան կանչել տվյալ խմբին կամ կազմակերպությանը պատկանելու համար: Այսպիսի դեպքերում տվյալ խմբի կամ կազմակերպության մեղավորությունը համարվում է ապացուցված և չի կարող այլևս բողոքարկվել:

յունները և նրա կազմակերպությունները ճանաչվեցին նաև միջազգային հանցագործությունների սուբյեկտ:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը 1976 թ. դեկտեմբերի 11-ին ընդունեց մի բանաձև, որում մանրամասնվեցին Միջազգային զինվորական տրիբունալի կանոնադրությամբ սահմանված մի շարք սկզբունքներ³¹: Այս ոլորտում հիմնական ակտերը հանդիսանում էին ՄԱԿ-ի հանձնարարականները, որոնք վերաբերում էին հանցավորության կանխման և քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցությանը, որոնցում ՄԱԿ-ի մասնակից պետություններին հանձնարարված էր իրենց ներպետական օրենսդրությունում սահմանել իրավաբանական անձանց հանրային պատասխանատվություն³²:

Այսպիսով, իրավաբանական անձը հանրային պատասխանատվության սուբյեկտ է ոչ միայն բազմաթիվ երկրների ներպետական օրենսդրությամբ, այլ նաև միջազգային իրավունքում:

Հայրենական իրավունքի համար արտասահմանյան երկրների փորձն ունի մեծ կարևորություն, քանի որ հնարավորություն է տալիս կատարելագործելու ներպետական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան՝ հաշվի առնելով այդ երկրների օրենսդրական ակտերում ամրագրված դրույթները և քննարկվող հարցադրման շուրջ ամրագրված նորմերի վերաբերյալ արտասահմանյան գիտնականների եզրահանգումները: Ինչպես նշեցինք, արտասահմանյան երկրների իրավունքում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն գործնականում և օրենսդրորեն գրեթե գոյություն չունի: Դա բացատրվում է նրանով, որ վարչական իրավունքի էությունը տարբեր կերպ է ընկալվում հայրենական և արտասահմանյան իրավունքի տեսությունում: Մայրցամաքային և անգլոսաքսոնական երկրների իրավական համակարգերում վարչական իրավունքը, ընդհանուր առմամբ, բնորոշվում է որպես նորմերի և կանոնների ամբողջություն, որոնք կարգավորում են վարչական մարմինների գործունեությունը՝ ֆիզիկական և իրավաբան-

³¹ Տե՛ս Международное публичное право:Сб.док./Сост. К. А. Бекяшев, А. Г.Ходаков. М.,1996. Т. 2, էջ101 – 110:

³² Տե՛ս նույն տեղը, էջ 111-116:

նական անձանց հետ հարաբերություններում³³: Խնդիրն այն է, որ վարչական պատասխանատվությունն այն տեսքով, ինչ տեսքով որ ձևավորվել է խորհրդային իրավական համակարգում և մասամբ շարունակում է գործել ներկայումս, չունի իր նախադեպն իրավունքի մյուս համակարգերում:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ նաև թվով քիչ, մի շարք այլ երկրների փորձի ուսումնասիրությանը, որոնք օրենսդրորեն ամրագրել են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը: Այն ներկայումս կիրառում ունի նախկին հետխորհրդային որոշ պետություններում, սակայն գրեթե բոլոր պետություններում՝ որոշ բացառություններով, այդ ինստիտուտն ենթարկվել է էական բարեփոխումների, ամբողջովին համապատասխանեցվել է միջազգային իրավական չափանիշներին և գրեթե ընդհանուր ոչինչ չունի այն հիմնադրույթների հետ, որոնք ամրագրված են, մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

Ինչ վերաբերում է մերձբաթյան երկրների օրենսդրությանը, սպա քննարկվող հիմնահարցի օրենսդրական կարգավորումն այս երկրներում նույնպես միասնական չէ: Այսպես, Լատվիայի 1984թ. դեկտեմբերի 7-ին ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում 2006թ. հուլիսի 22-ին կատարված փոփոխությունների արդյունքում լրացվեց 14.1-րդ հոդվածը՝ ամրագրելով իրավաբանական անձանց, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց վարչական պատասխանատվությունը:³⁴ Միևնույն ժամանակ նշենք նաև, որ Լատվիայի քրեական օրենսգրքում 2005թ. մայիսի 5-ին կատարված փոփոխություններով իրավաբանական անձինք ամրագրվեցին նաև որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ³⁵: Իսկ Լիտվայի 1985թ. ընդունված վարչական իրավախախտում-

³³ Տե՛ս օրինակ՝ Брэбан Г. Французское административное право, М., 1988, էջ 237:

³⁴ Տե՛ս Լատվիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին), 14.1-րդ հոդված:

³⁵ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), 8.1 գլուխ 70.1-70.8 հոդվածներ, <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>:

ների վերաբերյալ օրենսգրքի³⁶ ընդհանուր մասի դրույթներում իրավաբանական անձինք ամրագրված չեն որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ: Ուշագրավ է օրենսդրի այն մոտեցումը, որ, այնուամենայնիվ, 2000թ. սկսած վերոնշյալ օրենսգրքի հատուկ մասում լրացվել են մի շարք հոդվածներ, որոնք տուգանք են նախատեսում նաև ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների նկատմամբ: Ընդ որում, Լատվիայի քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածը, սակայն, սահմանում է դրույթներ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ³⁷:

Էստոնիան, հետևելով եվրոպական մի շարք երկրների փորձին ընդունել է մեկ միասնական ակտ, որով սահմանվել են ինչպես՝ հանցագործությունները, այնպես էլ զանցանքները: Այսպես, մինչ նոր քրեական օրենսգրքի ընդունումն Էստոնիայում գործում էր 1992թ. հուլիսի 8-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք³⁸, որում, սակայն իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ նախատեսված չէին: Այս օրենսգիրքը, ուժը կորցրած ճանաչվեց, երբ 2001թ. հունիսի 6-ին ընդունվեց նոր քրեական օրենսգիրքը³⁹: Ընդ որում, «Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Էստոնիայի Հանրապետության օրենքի⁴⁰ համաձայն՝ «վարչական իրավախախտում» հասկացությունը նոր քրեական օրենսգրքի իմաստով կիրառվելու է որպես «զանցանք» (misdemeanour): Նշվածը կարծես, ևս մեկ անգամ փաստում է այն իրականությունը, որ բազմաթիվ երկրներում, որոնք ու-

³⁶ Տե՛ս Լիտվայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1985թ.):

³⁷ Տե՛ս Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>:

³⁸ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1992թ. հուլիսի 8-ին, ուժը կորցրել է 2002թ. սեպտեմբերի 1-ին):

³⁹ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>:

⁴⁰ Տե՛ս «Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Էստոնիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002 թ. հունիսի 12-ին), §30-ի 1-ին մասի 1-ին կետ:

նեն արարքների (իրավախախտումների) տեսակները և դրանց համար նախատեսված պատասխանատվության միջոցները սահմանող մեկ միասնական ակտ՝ հանձինս քրեական օրենսգրքի, իրավաբանական անձինք հանդիսանում են քրեական պատասխանատվության, իրավա-համեմատական տեսանկյունից նաև՝ վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, ապա, ինչպես արդեն նշել ենք, վարչական պատասխանատվությունը խորհրդային ինստիտուտ է և քիչ թվով եվրոպական պետություններ ունեն այդ ոլորտը կարգավորող իրավական ակտեր, ընդ որում, տվյալ դեպքում առկա է բովանդակային խիստ էական տարբերություն: Այսպես, Բուլղարիայի վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգրքում⁴¹ 2005թ. կատարված փոփոխություններով որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ամրագրվեցին նաև իրավաբանական անձն ու անհատ ձեռնարկատերը: Ի դեպ, հարկ ենք ընդգծել, որ նշված օրենսգրքում նորմեր են պարունակվում նաև վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Համանման կարգավորում է տրված նաև Իտալիայում, որի 2001թ. օրենսդրական դեկրետ թիվ 231-ում⁴² սահմանված է իրավաբանական անձանց, ընկերակցությունների և ասոցացիաների վարչական պատասխանատվության ենթարկելու նորմերը, այդ թվում՝ իրավախախտման տեսակներն ու վարչական տույժերի տեսակները, ինչպես նաև վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու նորմեր: Ընդ որում, մինչ այս դեկրետի ընդունումն Իտալիայում գործում էր «Քրեական համակարգում փոփոխությունների մասին» Իտալիայի Հանրապետության

⁴¹ Տե՛ս Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգրք (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին), 4-րդ գլուխ:

⁴² Տե՛ս Իտալիայի Հանրապետության օրենսդրական դեկրետ թիվ 231 (ընդունվել է 2001թ. հունիս 8-ին), Legislative Decree No. 231 of June 8th, 2001 (the “Decree”) of Italy:

տության 1981թ. օրենքը⁴³, որի համաձայն վարչական տուգանքները նշանակվում են նաև իրավաբանական անձանց նկատմամբ:

«Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Գաշնության 1987թ. փետրվարի 19-ի օրենքը⁴⁴ սահմանում է իրավաբանական անձանց նկատմամբ տույժ նշանակելու հնարավորությունը, ընդ որում, որպես տույժի տեսակ սահմանված է միայն տուգանքը: Ի դեպ, սահմանված է նաև, որ տուգանքի նշանակումն իրավաբանական անձի նկատմամբ չի բացառում նույն արարքի համար բռնագրավման նշանակում Գերմանիայի Քրեական օրենսգրքի⁴⁵ 73 և 73 a-րդ հոդվածներին համապատասխան:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն սահմանված է նաև Ավստրիայի⁴⁶, Մակեդոնիայի⁴⁷, Սլովենիայի⁴⁸, Սլովակիայի⁴⁹, Չեխիայի⁵⁰, Խորվաթիայի⁵¹, Պորտուգալիայի⁵², Չինաստանի⁵³ օրենսդրությամբ:

⁴³ Տե՛ս «Քրեական համակարգում փոփոխությունների մասին» Իտալիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 1981թ. նոյեմբերի 24-ին, № 689), (Legge. Modifiche al sistema penale, 24.11.1981, № 689):

⁴⁴ Տե՛ս «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Գաշնության օրենք, (ընդունվել է 1987թ. փետրվարի 19-ին), հոդված 30, հղումն ըստ համացանցի՝ <http://www.aufenthaltstitel.de/owig.html#9>:

⁴⁵ Տե՛ս Գերմանիայի Գաշնության քրեական օրենսգրք (ընդունվել է 1998թ. նոյեմբերի 13-ին), հղումն ըստ համացանցի՝ <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>,

⁴⁶ Տե՛ս Վարչական պատիժների մասին Ավստրիայի Հանրապետության օրենսգրք (ընդունվել է 1991թ.):

⁴⁷ Տե՛ս Չանցանքների մասին Մակեդոնիայի Հանրապետության օրենսգրք, (ընդունվել է 1997թ.):

⁴⁸ Տե՛ս «Մանր իրավախախտումների մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1983թ. հուլիսի 21-ին):

⁴⁹ Տե՛ս «Մանր իրավախախտումների մասին» Սլովակիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1990):

⁵⁰ Տե՛ս «Չանցանքների մասին» Չեխիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1990):

⁵¹ Տե՛ս Չանցանքների մասին Խորվաթիայի Հանրապետության օրենսգրք, (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին):

⁵² Տե՛ս Պորտուգալիայի օրենսդրական դեկրետ թիվ 433/82 (ընդունվել է 1982թ.):

⁵³ Տե՛ս Վարչական պատիժների վերաբերյալ Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության օրենսգրք, (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 1-ին):

Իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդես են գալիս նաև ԱՊՀ մի շարք այլ երկրների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ՝ Մոլդովայի, Ղազախստանի, Բելառուսի, Վրդղգստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ⁵⁴:

Ընդ որում, վերը թվարկված երկրներից միայն Մոլդովայում է սահմանված նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն⁵⁵: Թերևս, վարչական իրավախախտումների բնագավառում վերջին տարիներին ընդունված երիտասարդ օրենսգրքերից է հանդիսանում Մոլդովայի 2008թ. հոկտեմբերի 24-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը: Նախկին ԱՊՀ երկրներից Վրաստանում, որտեղ դեռևս գործում է 1984թ. դեկտեմբերի 15-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, իրավաբանական անձինք օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներում որպես սուբյեկտ ամրագրված չեն, սակայն 2003թ. կատարված փոփոխություններով, ինչպես Լիտվայում, հատուկ մասի նորմերում իրավաբանական անձանց համար սահմանվեցին կոնկրետ իրավախախտումների կատարման համար վարչական տույժի միջոցներ:

Փաստորեն նախկին խորհրդային երկրներից, թերևս միայն Ուկրաինայի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օ-

⁵⁴ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 17-ին), Վրդղգստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1998թ. օգոստոսի 4-ին), Տաջիկստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1991թ. օգոստոսի 31-ին), Ադրբեջանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2000թ. հունիսի 11-ին), Վրաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 15-ին):

⁵⁵ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), հոդված 21:

րենսգրքերում է, որ իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ դեռևս ամրագրված չեն⁵⁶:

Չնայած ռուսական գրականության մեջ գերիշխող է այն տեսակետը, որ իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ օրենսգրքում ամրագրելն աննպատակահարմար է⁵⁷, այնուամենայնիվ, Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքում իրավաբանական անձինք նախատեսվեցին վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում⁵⁸: Հարկ է նկատել, որ ՌԴ նախկին օրենսգրքում⁵⁹ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ամրագրված էր միայն ֆիզիկական անձը, և որևէ նորմով սահմանված չէին իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դրույթներ: Միայն 1991-2002թթ. ընկած ժամանակահատվածում ընդունվեցին մի շարք իրավական ակտեր, որոնցում ամրագրեցին նաև իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու և այն կիրառելու կարգի վերաբերյալ նորմեր: Մասնավորապես, այդպիսի օրենսդրական ակտեր հանդիսացան 1998թ. ՌԴ Հարկային օրենսգիրքը, 1993թ. ՌԴ Մաքսային օրենսգիրքը, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և միավորումների պատասխա-

⁵⁶ Տե՛ս Թուրքմենստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 17-ին), Ուզբեկստանի Հանրապետության վարչական պատասխանատվության մասին օրենսգիրք (ընդունվել է 1994թ. սեպտեմբերի 22-ին), Ուկրաինայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին):

⁵⁷ Տե՛ս օրինակ՝ Сорокин В. Д. О двух тенденциях, разрушающих целостность института административной ответственности//Правоведение. 1999, №1, էջեր 46-54:

⁵⁸ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), 2.10-րդ հոդված:

⁵⁹ Տե՛ս ՌԽՖՍՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. հունիսի 20-ին):

նատվության մասին» 1992թ. ՌԴ- օրենքը և այլն⁶⁰: Այնուհանդերձ, իրավակիրառ պրակտիկայում դեռևս պահպանվում էին իրարամերժ կարծիքներ այն հիմնավորմամբ, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն ամրագրված չէ ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում: Վերջապես 1998 թ. ՌԴ Սահմանադրական դատարանը հայտնեց իր դիրքորոշումը վերոհիշյալ հարցի կապակցությամբ, նշելով, որ ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու նորմերի բացակայությունը խոչընդոտ չի կարող հանդիսանալ այդ պատասխանատվությունն այլ իրավական ակտերով սահմանելու համար, քանի որ հիշյալ օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի դրույթները տարածվում են նաև այն վարչական իրավախախտումների վրա, որոնց կատարման համար պատասխանատվություն է նախատեսված այլ նորմատիվ ակտերով⁶¹:

Ի դեպ, ՌԴ Սահմանադրական դատարանի դիրքորոշման մեջ վկայակոչված նույն նորմը, ամրագրված է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում⁶² և արդի ժամանակահատվածում Հայաստանում առկա են մեծ թվով իրավական ակտեր, որոնցով սահմանված են իրավախախտման տեսակները և դրանց համար իրավաբանական անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ, որոնց մեծ թիվը հանգամանորեն կանդրադառնանք հաջորդիվ: Մինչդեռ, այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն ՌԴ Սահմանադրությանը, ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի դրույթներում հստակ ամրագր-

ված է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը սահմանվում են բացառապես օրենքով:

Չնայած առկա տարածայնություններին, ՌԴ նոր օրենսգրքում իրավաբանական անձինք նախատեսվեցին վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում: Եվ 2000թ. դեկտեմբերի 8-ին Պետդուման ընդունեց վերոհիշյալ օրենսգրքի նախագիծը. այն 2001թ. մարտի 1-ին պետք է ուժի մեջ մտներ, սակայն ՌԴ Նախագահը վետո դրեց նախագծի վրա, քանի որ այն ուներ հայեցակարգային թերություններ, մասնավորապես, նրանում ամրագրված չէին հարկային, բանկային, արժույթային օրենսդրության՝ իրավաբանական անձանց կողմից կատարվող իրավախախտման տեսակները, վարչական տույժերի այնպիսի տեսակները, այնպիսիք, ինչպիսիք են՝ լիցենզիայի կասեցումը և դադարեցումը, ինչպես նաև ամրագրված չէր իրավաբանական անձանց մեղքի հասկացությունը: Այլ կերպ ասած, վետո դնելու հիմքը հանդիսացավ հիշյալ օրենսգրքի նախագծով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցերի ոչ բավարար իրավական կարգավորումը: Արդյունքում, օրենսգրքի նախագիծը շուրջ մեկ տարի վերամշակվեց: Հարկ ենք համարում նշել, որ հարկային և բանկային օրենսդրության բնագավառի իրավախախտումները և դրանց համար նշանակվող տույժերի տեսակները, այնումենայնիվ, առկա տարածայնությունների պարագայում դարձյալ չներառվեցին նշված օրենսգրքում⁶³: Անշուշտ օրենսդրի մման մոտեցումը, կարծում ենք, չի ներառվում վարչական պատասխանատվության օրենսդրության կողմից ֆիզիկայի հայեցակարգի մեջ և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանզի պատասխանատվության վերոհիշյալ տեսակները

⁶⁰ Ст'у Ведомости Съезда народных депутатов Российской Федерации и Верховного Совета Российской Федерации. 1993. № 2. Ст. 58.

⁶¹ Ст'у По запросу Законодательного Собрания Нижегородской области о проверке конституционности части первой статьи 6 Кодекса РСФСР об административных правонарушениях: Определение Конституционного Суда РФ от 01.10.1998 // СЗ РФ. 1998. № 49. Ст. 6102, <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx>:

⁶² Ст'ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին), 2-րդ հոդվածի 3-րդ մաս:

⁶³ Հետաքրքրական է, որ հենց նման տարածայնություններ էին առաջացել նաև ՀՀ նոր վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մշակման աշխատանքային խմբում՝ հարկային և բանկային իրավախախտումներն օրենսգրքում ներառելու մասով:

վարչաիրավական բնույթի են, ինչի մասին նշել է իր որոշումներում նաև ՌԳ Սահմանադրական դատարանը⁶⁴:

Ռուսաստանում նոր օրենսգրքի ընդունման պահից իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը ստացավ իր օրենսդրական ամրագրումն ու կարգավորումը: Այնուամենայնիվ, այսօր Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) զեկույցի պահանջներին համապատասխան «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՌԳ օրենքի նախագիծ⁶⁵ է մշակվել, որով իրավաբանական անձինք սահմանվել են որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ, ինչպես նաև սահմանվել են նրանց նկատմամբ կիրառվող պատժի տեսակները և հասկացությունը, իրավաբանական անձանց դատավաժությունը կարգավորող դրույթներ: Հետաքրքրական է, որ ԳՐԵԿՈ-ն համարել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն ամրագրելու իր առաջարկությունը ՌԳ կողմից չկատարված, նույնիսկ այն դեպքում, երբ ՌԳ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված էր իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը: Ի դեպ, նույն հիմնավորմամբ 2008 թ. հունիսի 13-ի ԳՐԵԿՈ-ի Հայաստանին մվիրված զեկույցի⁶⁶ նույնաբովանդակ պահանջը չի կատարել նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս կապակցությամբ Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբում ՀՀ ներկայացուցիչը նշել էր, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում մշակվում է առանձին գլուխ իրավաբանական անձանց քրեական

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ⁶⁷: Սակայն, հարկ է նկատել, որ նշված նախագիծում ամրագրված են միայն փողերի լվացման համար իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ նորմեր, և վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առանձին գլուխ ամրագրված չէ: Խնդրի մասն կարգավորումն իրավաչափ չի կարող համարվել, քանի որ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել միայն քրեական օրենսգրքով և որևէ այլ իրավական ակտով չի կարող սահմանվել անձի քրեական պատասխանատվություն, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է միայն քրեական օրենսգրքից:

Տվյալ հիմնախնդրի քննարկման համատեքստում տեղին է հիշատակել նաև, որ Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 18-րդ հոդվածը⁶⁸ սահմանում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար, որ իրավաբանական անձինք պատասխանատվություն կրեն վերոնշյալ Կոնվենցիայով նախատեսված ակտիվ կաշառակերության, ազդեցությունը չարաշահելու և փողերի լվացման հանցագործությունների համար, որոնք կատարվել են նրանց օգտին: ՄԱԿ-ի կողմից ընդունված Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի⁶⁹ 26-րդ հոդվածը նույնպես սահմանում է իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ նորմեր, մասնավորապես, այն որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք իր իրավական սկզբունքների համաձայն, կարող են անհրաժեշտ լինել այս Կոնվենցիայով նախատեսված իրավախախտումներին մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար, ընդ որում, իրավաբանական անձանց պատասխանատվությունը

⁶⁴ Տե՛ս օրինակ՝ Определение Конституционного Суда РФ от 5 июля 2001 .№ 130-0, по запросу Омского областного суда о проверке конституционности п. 12 ст.7 Закона РФ «О налоговых органах Российской Федерации» // С.3. РФ. - 2001. - № 34. Ст.3512, <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx>:

⁶⁵ Տե՛ս «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի նախագիծ, հղումն ըստ համացանցի՝ <http://www.forbes.ru/ekonomika-opinion/vlast/63584-yurlitso-pod-sledstviem>, 18.02.2011 դրությամբ:

⁶⁶ Տե՛ս “Compliance report on Armenia” Greco RC-I/II (2008) 3E, Strasbourg, 13 June 2008, Recommendation xxii, հղումն ըստ համացանցի՝ <http://www.coe.int/greco>:

⁶⁷ Տե՛ս www.hrparak.am/wp-content/2010/08/rep_35_036.jpg.

⁶⁸ Տե՛ս Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա 27 հունվարի 1999թ., Ստրասբուրգ), Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 2006 թ. մայիսի 6-ից:

⁶⁹ Տե՛ս Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (14 դեկտեմբերի 2005թ., Նյու-Յորք), Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 7-ին:

կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ⁷⁰ վարչական: Յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ապահովի պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ՝ դրամական պատժամիջոցների կիրառումը: Ընդ որում, համանման դրույթներ են սահմանված նաև միջազգային ձեռնարկատիրական գործարքներում օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառակերության դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածում⁷¹, ըստ որի՝ յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի անհրաժեշտ միջոցներ, իր իրավական սկզբունքների համաձայն, որպեսզի սահմանի իրավաբանական անձանց պատասխանատվություն օտարերկրյա պաշտոնատար անձին կաշառք տալու համար:

Այսպիսով, *իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը միջազգային պահանջ է, որը սակայն չի ենթադրում, վերջիններիս համար վարչական պատասխանատվության ամրագրման պարագայում, քրեական պատասխանատվության բացառում, ինչպես նաև՝ քրեական պատասխանատվության պարտադիր սահմանում:*

Ավելին Կոնվենցիայի վերը հիշատակված հոդվածի մենաբանությունների համաձայն, այն դեպքում, երբ մասնակից պետությունների իրավական համակարգում քրեական պատասխանատվություն չի կիրառվում իրավաբանական անձանց նկատմամբ, ապա մասնակից պետությունից չի կարող պահանջվել, որ վերջինս քրեական պատասխանատվություն սահմանի իրավաբանական անձանց համար⁷²: Կարծում

⁷⁰ Կարծում ենք «կամ» շաղկապը, ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթների, թույլ է տալիս Կոնվենցիայի այս դրույթը մեկնաբանել այն կտրվածքով, որ վերջինս չի պահանջում վարչական և քրեական պատասխանատվության սահմանում միաժամանակ, ըստ հոդվածի՝ այն պարտադրում է կամ վարչական կամ քրեական պատասխանատվության սահմանում:

⁷¹ St'u Convention on Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions, (Adopted by the Negotiating Conference on 21 November 1997) հղումն ըստ համացանցի՝ <http://www.oecd.org/dataoecd/4/18/38028044.pdf>:

⁷² St'u By Mark Pieth, Lucinda A. Low, Peter J. Cullen “The OECD Convention on Bribery: A Commentary”, Cambridge University Press, 2007, էջ 3:

ենք, նույն չափանիշներով, կարելի է մեկնաբանել նաև վերը հիշատակված բոլոր կոնվենցիաների համանման դրույթները:

Ինչպես արդեն նշել ենք, ՄԻԵԴ-ն իր որոշումներով հիմնավորել է կոնվենցիայի դրույթները հավասարապես քրեական հանցագործությունների և վարչական զանցանքների վրա տարածվելու հանգամանքը, սակայն, որոշ միջազգային կառույցներ դրսևորելով անհարկի սահմանափակ գործելաձև, ազգային օրենսդրության զարգացման գործընթացում կատարում են խիստ բացասական ներազդեցություն, ինչը ոչ միայն չի հանգեցնում գործնական տեսանկյունի արդյունքների, այլև խեղաթյուրում է պատասխանատվության ինստիտուտի սկզբունքների ու տեսական չափանիշների կուռ համակարգը: Ուստի, կարծում ենք, անհարկ է վարչական պատասխանատվությունն ամբողջովին քրեական պատասխանատվության փոխարինելու վերաբերյալ դիրքորոշումը:

Այսպիսով, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ առկա է հիրավի հարուստ միջազգային փորձ, որի համալիր վերլուծությունը և համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու այն ուղիները, որոնցով կարող է ընթանալ մեր երկրում իրականացվող դատաիրավական բարեփոխումները: Ի դեպ, միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ միասնական օրենսդրական ակտում իրավաբանական անձանց պատասխանատվության սուբյեկտ անխուսափելիորեն ճանաչելը մեծամասամբ պայմանավորված է ոչ այնքան նրանց քրեական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու միտումով, որքան նրանց նկատմամբ, ըստ էության, վարչական պատասխանատվություն նախատեսելու փաստարկով: Այլ կերպ ասած, եթե մի պահ փորձեինք տարանջատել այդ տեսակները և դրանք ներառենք առանձին օրենսդրական ակտերում, ապա իրավակարգավորման չափանիշներով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կհայտնվեր այն օրենսդրական ակտում, որը նվիրված կլիներ բացառապես վարչական պատասխանատվությանը:

Անկախ ձևավորման միտումներից և նախադրյալներից, վարչական պատասխանատվության ինստիտուտը, հատկապես, իրավաբանական անձանց պարագայում ձեռք է բերել կարևոր պրագմատիկ ու տեսական նշանակություն և բոլորովին նոր որակ ու բովանդակություն: Իրավական ինստիտուտներից շատերին է բնորոշ այն, որ դրանք ի

սկզբանե ձևավորվում են այլ խնդիրների լուծման նպատակով, սակայն ժամանակի ընթացքում սոցիալական պահանջների վերանայմամբ արդյունքում ձեռք են բերում բոլորովին այլ իմաստ և նշանակություն: Այսպես, օրինակ Ֆրանսիայում ձևավորված պետական խորհուրդները կոչված էին պաշտպանելու հեղափոխության արդյունքում իշխանության եկած խավերի շահերը և ապահովելու ժողովրդավարության որոշ շղարշ, սակայն հետագայում դրանք դարձան այնպիսի մեծարժեք ժողովրդավարական ինստիտուտների նախաստղեր, ինչպիսիք են վարչական և սահմանադրական արդարադատությունը:

§2. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի սահմանումը և զարգացումը հայրենական վարչական իրավունքում

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի սահմանումը և զարգացումը հայրենական վարչական իրավունքում կարելի է դիտարկել նրա օրենսդրության ձևավորման և կատարելագործման չորս փուլերի շրջանակներում: Այսպես, առաջին փուլը՝ 1917-1961թթ. ընկած ժամանակաշրջանն է, երկրորդ փուլը՝ 1961-1981թթ., երրորդ փուլը՝ 1981-1991թթ., և չորրորդ փուլը՝ 1991թ. մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Վերջին ժամանակաշրջանը կարելի է ներկայացնել որպես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման հիմնական փուլ: Գժվար չէ նկատել, որ գործող իրավական ակտերի մեծամասնությունը, որոնք սահմանում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն, ընդունվել են 1991թ. մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման առաջին փուլը՝ առաջին հերթին կապված է ձեռնարկատիրական գործունեության ազատության սահմանման հետ: Այս փուլում Հայաստանի խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 6-ին օրենսդիր հանձնաժողովի առաջարկությամբ ընդունել էր «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենքը, համաձայն որի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կա-

ռավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով և լրացումներով⁷³:

1921 թ. հուլիսից Հայաստանում ՌԽՖՍՀ-ի օրինակով կատարվեց անցում «Նոր տնտեսական քաղաքականության» (Նէպ) քաղաքականությանը: Նէպ-ի սահմանման պայմաններում իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվության ամրագրումը ձեռք բերեց առանձնահատուկ նշանակություն և անհրաժեշտություն: Այդ ժամանակաշրջանում հայրենական իրավունքը դեռ չէր սահմանել վարչական պատասխանատվության հասկացությունը, վարչական հարկադրանքի միջոցները, ուստի պարտադիր կարգադրագրերի խախտման համար վարչական տույժեր կիրառելու անհրաժեշտության դեպքում կիրառվում էին վարչական հարկադրանքի բոլոր միջոցները: «Վարչական տույժի, որպես վարչական ներգործության միջոցի կիրառումը, կապված է այն պարտադիր որոշումները խախտելու հետ, որոնց ընդունման իրավունքը վերապահված է գործադիր կոմիտեներին»,⁷⁴ նշում է վարչական իրավունքի տեսաբան Ա.Ի. Յելիստրատովը: Մինչև նախկին ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահության 1961թ. հունիսի 21-ի «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագիրն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը գոյություն ուներ: Այսպես, Ս. Ս. Ստուդենիկինը, սահմանելով վարչական իրավախախտման հասկացությունը, գրում է. «Քաղաքացիների, հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից վարչաիրավական նորմերի այն խախտումները, որոնց համար պետական մարմինը (պաշտոնատար անձը) արտադատական կարգով նշանակում է վարչական տույժ կոչվում է

⁷³ Տե՛ս Ա.Գ. Վաղարշյան «Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր», ԵՊՀ, Երևան 2003, էջ 22:

⁷⁴ Տե՛ս Евтихийев А.Ф. Основы советского административного права, Харьков, 1925, էջ 242, О введении в действие Земельного Кодекса, принятого на 4 сессии IX созыва: Постановление ВЦИК от 30.10.1922 //Сборник узаконений РСФСР, 1922. №68. Ст. 901: Об утверждении правил сенокосения и пастьбы скота в лесах СССР: Постановление Совмина СССР от 17.08.47 №2915 // Свод законов СССР / Президиум ВС СССР, Сов. мин. СССР. Т. 4. - М., 1983. էջ 419:

վարչական իրավախախտում:⁷⁵»: Իրականում, ինչպես նշում էին այդ ժամանակաշրջանի գիտնականները, մինչ ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահության 1961թ. հունիսի 21-ի «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագիրը թույլատրվում էր իրավաբանական անձանց նկատմամբ նշանակել տուգանք՝ որպես վարչական տույժ⁷⁶, չնայած որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վերաբերյալ հիմնախնդրին անդրադառնալիս նույն ժամանակաշրջանի այլ գիտնականների աշխատություններում բավարար որոշակիությամբ չի նշվում այդ ինստիտուտի գոյության մասին, ավելին՝ «վարչական պատասխանատվություն» տերմինը նույնիսկ առանձնացված չէր հարկադրանքի միջոցների համակարգից, սակայն դրանց որոշ տեսակներ, մասնավորապես, վարչական նախազուշակյան միջոցներ նշանակվում էին կազմակերպությունների նկատմամբ, չնայած այսօր դրանք, որպես այդպիսին, չեն համարվում վարչական պատասխանատվության միջոցներ⁷⁷:

Այսպիսով, վարչական իրավունքի զարգացման, և, մասնավորապես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության զարգացման 1-ին փուլում կազմակերպությունները հանդես էին գալիս որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, սակայն վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման և կայացման հետագա, այսինքն՝ 2-րդ փուլը, բնութագրվեց իրավաբանական անձանց նկատմամբ վարչական տույժերի նշանակման և կիրառման սահմանափակմամբ:

Մոցիալիստական տնտեսական պայմաններում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը ցույց

⁷⁵ Ст'у Студеникин С.С., Власов В.А., Евтихий И.И., Советское административное право, М., 1950, էջ 173

⁷⁶ Ст'у Комментарий к законодательству о штрафах, налагаемых в административном порядке, под ред. Власова В.А., М., 1968, էջ 61:

⁷⁷ Ст'у օրինակ՝ ՌԽՖՍՀ-ի Նախարարների Խորհրդի 1960 թ. հունվարի 12-ի «Կոլտնտեսություններից, սովխոզներից, տրանսպորտային, շինարարական, արդյունաբերական և այլ ձեռնարկություններից ու տնտեսական կազմակերպություններից և նրանց ղեկավարներից ճանապարհային աշխատանքներին մասնակցելուց, ինչպես նաև ճանապարհային աշխատանքներին մասնակցելու փոխարեն դրամական վճարներ կատարելուց խուսափելու համար տուգանքներ բռնագանձելու կարգի մասին» թիվ 40 որոշում, СП РСФСР, 1960, № 2, ԿՏ.5:

տվեց իր անկիրառելիությունը, քանի որ պետական հիմնարկները, իրավախախտումներ կանխարգելող միջոցառումներ իրականացնելու և հետագայում նոր իրավախախտումների կատարումը կանխելու նպատակով պայմաններ ստեղծելու փոխարեն, սկսեցին վարչական տուգանքների համար վճարվող գումարները նախապես պլանավորել իրենց ծախսերի նախահաշվում և դնել արտադրվող ապրանքի ինքնարժեքի հիմքում: Սա հենց հիմնական պատճառ հանդիսացավ, որ 1961թ. հուլիսի 21-ին ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահությունն ընդունեց «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագիրը, որով կազմակերպություններին վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը վերացվեց⁷⁸: Հրամանագրում սահմանված էր «...վերացնել վարչական կարգով տուգանքների նշանակումը հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների նկատմամբ» և «...արգելել հիմնարկի, ձեռնարկության և կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ նշանակվող տուգանքների գանձումն այդ հիմնարկի, ձեռնարկության և կազմակերպության հաշվին»: Նման կարգավորման պարագայում այլ անձանց՝ հիմնականում ենթակա աշխատողների, անգործության համար պատասխանատվության էր ենթարկվում միայն ղեկավար պաշտոնատար անձը: Չնայած, վարչական իրավունքի մի շարք գիտնականներ, նշում էին այդ ժամակաշրջանի համար տվյալ իրավական ակտի դրական նշանակությունն արտահայտող հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ «... հրամանագրի ընդունմամբ տուգանքները նշանակվում էին այն պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք իրենց ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ պետք է միջոցներ ձեռնարկելին պահպանելու սահմանված կանոնները և կանխելու իրավախախտումները, հակառակ դեպքում պատասխանատվությունը կրում էր ոչ անմիջական իրավախախտը»⁷⁹:

Ի դեպ, 1962 թ. մարտի 3-ին ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահությունն ընդունեց «Վարչական կարգով նշանակվող տու-

⁷⁸ Ст'у Ведомости ВС СССР. 1961. №2 35. Ст. 386. հղումն ըստ համացանցի՝ <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>:

⁷⁹ Ст'у Попов Л.Л., Шергин А.П., Управление.Гражданин. Ответственность.,Л., 1975, էջ 85:

գանձների հետագա սահմանափակման մասին» մյուս հրամանագիրը, որը կրկնեց նախորդ՝ վերոհիշյալ հրամանագրի դրույթները⁸⁰: Այս հրամանագրերի ընդունումից հետո նրանցում ամրագրված դրույթները թույլ տվեցին արձանագրելու խորհրդային միության այդ ժամանակաշրջանում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական վերացումը: Չնայած դրան՝ իրավաբանական անձանց նկատմամբ դեռ որոշակի կիրառություն ունեին տուգանքների նշանակումը: Այսպես, օրինակ, ԽՍՀ միության ԳԽՆ «Կոլտնտեսություններում ու սովխոզներում ցանքերը վնասելու համար պատասխանատվության մասին» հրամանագրով⁸¹ սահմանված պարտականությունների խախտման համար կազմակերպությունները պատասխանատվություն էին կրում տուգանքի տեսքով և չէին ազատվում դրանով իրենց վրա դրված պարտականությունների կատարումից: Եթե տնտեսության ազատականացման պայմաններում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունն ունի որոշակի նպատակաուղղվածություն և հիմնավորում, ապա այս ժամանակաշրջանում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը չէր ընդունվում, քանի որ նախ՝ գործում էին բացառապես պետական ձեռնարկություններ, որոնց ֆինանսական միջոցները ներառված էին պետական բյուջեի համակարգում, ուստի իրավաբանական անձանց նկատմամբ տուգանք նշանակելը պարզապես արհեստական և սոսկ քարոզչական լծակի նշանակություն ուներ, և երկրորդ՝ ընդունված էր այն մոտեցումը, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում ձևավորվում է նրանց պաշտոնատար անձանց, որպես իրավախախտման անմիջական մեղավորների, անպատժելիության մթնոլորտ:

Բացի այդ խորհրդային իրավունքում վարչական պատասխանատվությունն ընկալվում էր էությանը առավել մոտ կանգնած քրեական պատասխանատվությանը, և իրավագետները գտնում էին, որ իրավաբանական անձինք ինչպես չեն կարող լինել քրեական պատաս-

⁸⁰ Տե՛ս Ведомости ВС РСФСР, 1962, №9, ст. 121. հղումն ըստ համացանցի՝ <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>:

⁸¹ Տե՛ս Ведомости ВС СССР, 1955, №2, ст.46, Ведомости ВС РСФСР, 1959, №14, ст. 24, հղումն ըստ համացանցի՝ <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>:

խանատվության, այնպես էլ վարչական պատասխանատվության սուբյեկտ: Այդ ժամանակաշրջանում կիրառվող վարչական տուգանքները տնտեսական իրավունքի հայեցակարգի կողմնակիցները համարում էին տնտեսական տուգանքներ և գտնում էին, որ հենց տնտեսական օրենսդրությունն է պարունակում համապատասխան սանկցիաներ, որոնք նախատեսում են տնտեսվարող սուբյեկտների գույքային պատասխանատվություն պետության առաջ⁸²: Այնուհանդերձ, որոշ իրավաբան-գիտնականներ կողմ էին իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության սահմանման գաղափարին⁸³: Տուգանքները, անկասկած, հանդիսանում էին իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի հիմնական տեսակը, սակայն ոչ միակը: Կազմակերպությունների նկատմամբ վարչական տույժերի մյուս տեսակները դեռ շարունակվում էին կիրառվել նույնիսկ վերոհիշյալ «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագրերի ընդունումից հետո, քանզի նշված ակտերով չարգելվեցին տույժերի մյուս տեսակների կիրառումը⁸⁴: Վարչական օրենսդրությունում տուգանքների հետ միաժամանակ սահմանում էին նաև վարչական տույժերի այլ տեսակներ՝ նախագուշացում, հատուկ իրավունքից զրկում, արգելված առարկաների բռնագրավում⁸⁵:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի անհրաժեշտության և օրենսդրական ամրագրմամբ է պայմանավորված այս ինստիտուտի զարգացման 3-րդ փուլը: Այդ ժամանակաշրջանում վարչական օրենսդրության զարգացման և, մասնավորապես, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրական անուղղակի ամրագրման արդյունք հանդիսացավ «ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքներն ուժի

⁸² Տե՛ս Колесниченко Ю. Ю. Административная ответственность юридических лиц, автореф. дисс. к.ю.н., М., 2002, էջ 21-22:

⁸³ Տե՛ս օրինակ՝ Лунев А.Е., Проблемы административной ответственности, Соц. законность, 1972, № 5, էջ 64:

⁸⁴ Տե՛ս Студеникина М.С., Законодательство об административной ответственности и проблемы его кодификации, автореф. дисс.к.ю.н., М, 1968, էջ 10:

⁸⁵ Տե՛ս Новоселов В.И., Административная ответственность юридических лиц, Сов. юстиция, №23, 1981, էջ 11:

մեջ մտնելու կարգի մասին»⁸⁶ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1981 թ. փետրվարի 19-ի հրամանագիրը, որի 1-ին հոդվածում սահմանված էր՝ «Սույն հիմունքների ուժի մեջ մտնելը չի տարածվում իրավաբանական անձանց վարչական կարգով պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորող գործող օրենսդրական ակտերի վրա»:

Վերոհիշյալ հոդվածում ամրագրված դրույթը, բնավ, որևէ հստակություն չմտցրեց իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առումով, սակայն սկզբունքային նշանակություն ունեցավ իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու հիմնահարցում՝ իրավաբան-գիտնականների կողմից իրենց աշխատություններում իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ առանձնացնելու տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ 1961 և 1962 թթ. «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագրերով սահմանված տուգանքների նշանակման արգելքը, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքներն ուժի մեջ մտնելուց հետո բնավ այլ կերպ էր մեկնաբանվում: Այսպես՝ «...այդ հրամանագրերում սահմանված նորմերը հակասական բնույթ ունեին և իրավակիրառ պրակտիկայում այդ նորմերը չէին կիրառվում, տուգանքներ շարունակվում էին նշանակվել, ... ընդ որում, տուգանքը վարչական տույժի օրենսդրորեն ամրագրված միակ տեսակը չէր, կիրառվում էին նաև իրավունքից զրկում, գույքի բռնագրավում տեսակները և այլն⁸⁷»: Բացի այդ, իրավաբանական անձանց նկատմամբ «...վարչական իրավախախտումների համար կիրառվող վարչական տույժի տեսակներից բացի, կարող են կիրառվել վարչական հարկադ-

⁸⁶ Տե՛ս Օ порядке введения ц действие Основ законодательства СССР и союзных республик об административных правонарушениях: Указ Президиума Верховного Совета СССР от 19.02.1981// Ведомости Верховного Совета СССР, 1981 год, № 8, էջ 178:

⁸⁷ Տե՛ս Матвеев С.В., Субъекты административной ответственности, в сб. "Субъекты административного права", Межвузовский сборник научных трудов/ Свердловский юридический институт им. Р.А. Руденко; Д.Н. Бахрах, Свердловск: СЮИ, 1985, էջ 153-154:

րանքի այլ տեսակներ, մասնավորապես՝ վարչական-վերականգնման միջոցներ՝ ուղղված խախտված իրավակարգի վերականգնմանը: Այդպիսի միջոցներից հայտնի են ինքնական կառուցված շինությունները քանդելը, ձեռնարկության գործունեության դադարեցումը և այլն:⁸⁸»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքներն ուժի մեջ մտնելուց հետո ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած օրենսդրական ակտերում դեռ դրույթներ էին պարունակվում կազմակերպությունների վարչական պատասխանատվության վերաբերյալ⁸⁹: Փաստորեն խորհրդային վարչական իրավունքում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցի շուրջ միասնական տեսակետ չկար, ու չնայած վերոհիշյալ օրենսդրական ակտերի առկայությանը, որոնցում սահմանված էին կազմակերպությունների վարչական պատասխանատվություն, այնուամենայնիվ, խորհրդային վարչական իրավունքի տեսությունում գերակշռող էր այն տեսակետը, ըստ որի՝ վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը⁹⁰: Այս ոչ միասնական հայեցակարգի պայմաններում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքների հիման վրա

⁸⁸ Տե՛ս Новоселов В.И., Административная ответственность юридических лиц, //Советская юстиция- 1981. - №23, էջ 11, Матвеев С. В. Субъекты ответственности за совершение административных правонарушений // Советское государство и право. 1990. №5, էջ 80- 85

⁸⁹ Տե՛ս օրինակ՝ Об экономической зоне СССР: Указ Президиума Верховного Совета СССР от 28.02.1984// Ведомости Верховного Совета СССР. 1984. №9, էջ 137:

⁹⁰ Տե՛ս Козлов Ю.М. Советское административное право. - М., Знание, 1984. С. 157; Коваль Л. В. Административно-деликтное отношение.-Киев, 1979. с. 118; Якуба О, М. Административная ответственность. - М., 1972. С. 38. Դրան հակառակ այդ ժամանակաշրջանի մի շարք այլ գիտնականներ պաշտպանում էին հակառակ տեսակետը, մասնավորապես՝ Бахрах Д. Н. Советское законодательство об административной ответственности: Учебное пособие /Бахрах Д. Н.; А. А. Ушаков. - Пермь: Пермский Государственный Университет, 1969.- с 97; Галагаи И. А. Административная ответственность в СССР, - Воронеж, 1970. С. 225; Новоселов В. И. Административная ответственность юридических лиц //Советская юстиция. 1981. №23. С. 10; Матвеев С. В. Субъекты ответственности за совершение административных правонарушений //Советское государство и право. 1990. №5, с. 81.

խորհրդային երկրներն ընդունեցին վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքեր: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց 1985 թ. դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ մտավ 1986 թ. հունիսի 1-ին:

Խորհրդային իրավական համակարգում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ամրագրման նկատմամբ զգուշավորությունը, կարծում ենք, թելադրված էր հիմնականում սեփականության միայն մեկ տեսակի գերիշխանությամբ, քանի որ գործում էին հիմնականում պետական ձեռնարկություններ: Միայն մասնավոր սեկտորի սահմանափակ կիրառումը (կոոպերատիվներ, տնայնագործական ֆիրմաներ և այլն) հիմք տվեց վերանայելու իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վերաբերյալ ձևավորված պատկերացումները և քաղաքականությունը: Ընդ որում, 1984թ. մինչև 1991թ. ընկած ժամանակահատվածում օրենսդրորեն որևէ նոր նորմ չսահմանվեց իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վերաբերյալ:

Վերակառուցման անխուսափելի հետևանքը խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացն էր: 1991թ. սեպտեմբերի 23-ի Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումով, հիմք ընդունելով 1991թ. սեպտեմբերի 21-ի ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվեի արդյունքները, հռչակեց ՀՀ անկախությունը⁹¹: Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին 1991թ. դեկտեմբերի 21-ի համաձայնագրի վավերացումից և հայկական ինքնիշխան պետականության ճանաչումից հետո դադարեցին գործել օրենսդրական բոլոր նախկին դրույթները, որոնք ելնում էին խորհրդային նախկին համակարգի գաղափարներից և սկզբունքներից, ու իրավաստեղծ գործընթացը թևակոխեց վերը նշված 4-րդ փուլը՝ 1991թ. մինչև մեր օրերը: Անկախացման գործընթացից հետո հետխորհրդային երկրներում մշակվեցին միջազգային չափանիշներին համահունչ վարչական իրավախախտումների ոլորտը կարգավորող օրենսգրքեր, սակայն, ինչպես արդեն նշել ենք, մի շարք հետխորհրդային պետություններում դեռևս գործում են մոդելային օրենսգրքի հիման վրա ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, սակայն, նույնիսկ այդ օրենսգրքերում, օրինակ՝ Լատվիայի 1984 թ. դեկտեմբերի 7-ին ընդուն-

⁹¹ Տե՛ս ՀՀ ԳԽ Տեղեկագիր, թիվ 18 (998) 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 3:

ված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավաբանական անձինք արդեն իսկ ամրագրվել են որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ: Իսկ Հայաստանը, թերևս այն եզակի երկրներից է (ինչպես և Ուկրաինան, Լիտվան, Թուրքմենստանը, Վրաստանը), որի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում (վերջինիս շուրջ 28 տարվա գործողության ընթացքում շուրջ 150 օրենսդրական ակտերով)⁹² ենթարկվելով փոփոխությունների

⁹² Տե՛ս ԳԽ, 18.08.1993, ՀՕ-73, ԳԽ, 02.09.1993, ՀՕ-79, ԳԽ, 14.06.1994, ՀՕ-105, ԳԽ, 19.05.1995, ՀՕ-137, ԳԽ, 25.05.1995, ՀՕ-139, Աժ. 29.04.1996, ՀՕ-53, Աժ. 04.11.1996, ՀՕ-85, Աժ. 03.12.1996, ՀՕ-102, Աժ. 23.06.1997, ՀՕ-133, Աժ. 09.06.1997, ՀՕ-119, Աժ. 02.12.1997, ՀՕ-162, Աժ. 17.12.1997, ՀՕ-189, Աժ. 28.04.1998, ՀՕ-212, Աժ. 08.06.1998, ՀՕ-226, Աժ. 19.06.1998, ՀՕ-231, Աժ. 28.12.1998, ՀՕ-283, Աժ. 19.03.1999, ՀՕ-287, Աժ. 10.10.2000, ՀՕ-96, Աժ. 26.12.2000, ՀՕ-125, Աժ. 07.03.2001, ՀՕ-156, Աժ. 11.09.2001, ՀՕ-215, Աժ. 26.06.2002, ՀՕ-393-Ն, Աժ. 28.06.2002, ՀՕ-397-Ն, Աժ. 23.10.2002, ՀՕ-438-Ն, Աժ. 06.11.2002, ՀՕ-459-Ն, Աժ. 11.12.2002, ՀՕ-479-Ն, Աժ. 11.12.2002, ՀՕ-495-Ն, Աժ. 11.12.2002, ՀՕ-496-Ն, Աժ. 26.12.2002, ՀՕ-517-Ն, Աժ. 26.12.2002, ՀՕ-499-Ն, Աժ. 07.10.2003, ՀՕ-13-Ն, Աժ. 04.11.2003, ՀՕ-30-Ն, Աժ. 03.12.2003, ՀՕ-44-Ն, Աժ. 01.12.2003, ՀՕ-47-Ն, Աժ. 13.12.2003, ՀՕ-15-Ն, Աժ. 25.12.2003, ՀՕ-31-Ն, Աժ. 16.03.2004, ՀՕ-58-Ն, Աժ. 08.06.2004, ՀՕ-94-Ն, Աժ. 14.12.2004, ՀՕ-187-Ն, Աժ. 08.12.2004, ՀՕ-171-Ն, Աժ. 08.12.2004, ՀՕ-174-Ն, Աժ. 14.12.2004, ՀՕ-37-Ն, Աժ. 24.12.2004, ՀՕ-68-Ն, Աժ. 24.12.2004, ՀՕ-73-Ն, Աժ. 14.12.2004, ՀՕ-19-Ն, Աժ. 24.03.2005, ՀՕ-78-Ն, Աժ. 04.05.2005, ՀՕ-93-Ն, Աժ. 24.11.2004, ՀՕ-136-Ն, Աժ. 20.05.2005, ՀՕ-132-Ն, Աժ. 08.07.2005, ՀՕ-151-Ն, Աժ. 08.07.2005, ՀՕ-168-Ն, Աժ. 04.10.2005, ՀՕ-192-Ն, Աժ. 04.10.2005, ՀՕ-187-Ն, Աժ. 11.11.2005, ՀՕ-217-Ն, Աժ. 08.12.2005, ՀՕ-248-Ն, Աժ. 16.12.2005, ՀՕ-262-Ն, Աժ. 16.12.2005, ՀՕ-14-Ն, Աժ. 08.12.2005, ՀՕ-2-Ն, Աժ. 16.12.2005, ՀՕ-26-Ն, Աժ. 16.12.2005, ՀՕ-32-Ն, Աժ. 01.06.2006, ՀՕ-115-Ն, Աժ. 24.05.2006, ՀՕ-72-Ն, Աժ. 13.06.2006, ՀՕ-138-Ն, Աժ. 15.06.2006, ՀՕ-146-Ն, Աժ. 09.11.2006, ՀՕ-173-Ն, Աժ. 23.05.2006, ՀՕ-89-Ն, Աժ. 15.11.2006, ՀՕ-183-Ն, Աժ. 27.11.2006, ՀՕ-194-Ն, Աժ. 27.11.2006, ՀՕ-215-Ն, Աժ. 27.11.2006, ՀՕ-227-Ն, Աժ. 27.11.2006, ՀՕ-228-Ն, Աժ. 05.12.2006, ՀՕ-237-Ն, Աժ. 05.12.2006, ՀՕ-241-Ն, Աժ. 05.12.2006, ՀՕ-253-Ն, Աժ. 21.12.2006, ՀՕ-14-Ն, Աժ. 25.12.2006, ՀՕ-41-Ն, Աժ. 25.12.2006, ՀՕ-48-Ն, Աժ. 26.02.2007, ՀՕ-70-Ն, Աժ. 21.02.2007, ՀՕ-73-Ն, Աժ. 26.02.2007, ՀՕ-78-Ն, Աժ. 22.02.2007, ՀՕ-83-Ն, Աժ. 22.02.2007, ՀՕ-104-Ն, Աժ. 27.02.2007, ՀՕ-134-Ն, Աժ. 09.04.2007, ՀՕ-145-Ն, Աժ. 27.11.2006, ՀՕ-204-Ն, Աժ. 24.10.2007, ՀՕ-241-Ն, Աժ. 28.11.2007, ՀՕ-276-Ն, Աժ. 06.12.2007, ՀՕ-296-Ն, Աժ. 25.02.2008, ՀՕ-2-Ն, Աժ. 18.03.2008, ՀՕ-8-Ն, Աժ. 10.04.2008, ՀՕ-35-Ն, Աժ. 26.05.2008, ՀՕ-77-Ն, Աժ. 08.04.2008, ՀՕ-7-Ն,

և լրացումների) առ այսօր իրավաբանական անձը չի ամրագրվել որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ: Հետաքրքրական է, որ դատաիրավական բարեփոխումների հսկայական փուլ անցած Հանրապետությունում այդպես էլ սույն հիմնահարցը վարչական օրենսդրությամբ դեռևս չի կարգավորվել:

Մասնավորապես, անցման ժամանակաշրջանում սա այն եզակի հիմնարար օրենսդրական ակտերից է, որն երբևէ համակարգված, հայեցակարգային քննարկման առարկա չի դարձել, ու ներկայումս բազմաթիվ օրենսդրական փոփոխությունների արդյունքում գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն առանձնաճանաչում է սուր հակասություններով և բացարձակապես չի համապատասխանում արդի իրավական համակարգի թե՛ տեսական և թե՛ գործնական պահանջներին, արդյունքում էլ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերում պարբերաբար անխուսափելիորեն կատարվել են տարաբնույթ փոփոխություններ, լրացումներ, ինչպես նաև ընդունվել են նոր օրենսդրական ակտեր: Ընդ որում, վերջիններս չեն բավարարում միասեռ հարաբերությունների կարգավորման միասնականության նվազագույն պահանջներին, իսկ հաճախ էլ գտնվում են ակնհայտ հա-

Աժ.17.06.2008.ՀՕ-120-Ն, Աժ.26.05.2008.ՀՕ-82-Ն, Աժ.21.08.2008.ՀՕ-142-Ն,
Աժ.10.09.2008.ՀՕ-159-Ն, Աժ.27.11.2008.ՀՕ-202-Ն, Աժ.26.12.2008.ՀՕ-239-Ն,
Աժ.02.12.2008.ՀՕ-221-Ն, Աժ.26.12.2008.ՀՕ-244-Ն, Աժ.18.03.2009.ՀՕ-59-Ն,
Աժ.18.03.2009.ՀՕ-55-Ն, Աժ.07.04.2009.ՀՕ-78-Ն, Աժ.08.04.2009.ՀՕ-98-Ն,
Աժ.07.04.2009.ՀՕ-89-Ն, Աժ.26.12.2008.ՀՕ-15-Ն, Աժ.18.05.2009.ՀՕ-132-Ն,
Աժ.20.05.2009.ՀՕ-131-Ն, Աժ.29.10.2009.ՀՕ-199-Ն, Աժ.08.04.2010.ՀՕ-39-Ն,
Աժ.24.06.2010.ՀՕ-118-Ն, Աժ.04.10.2010.ՀՕ-145-Ն, Աժ.05.10.2010.ՀՕ-138-Ն,
Աժ.15.11.2010.ՀՕ-175-Ն, Աժ.18.05.2010.ՀՕ-65-Ն, Աժ.21.12.2010.ՀՕ-220-Ն,
Աժ.22.12.2010.ՀՕ-264-Ն, Աժ.22.12.2010.ՀՕ-10-Ն, Աժ.26.10.2010.ՀՕ-148-Ն,
Աժ.08.02.2011.ՀՕ-48-Ն, Աժ.22.12.2010.ՀՕ-12-Ն, Աժ.14.04.2011.ՀՕ-73-Ն,
Աժ.23.05.2011.ՀՕ-144-Ն, Աժ.11.05.2011.ՀՕ-155-Ն, Աժ.26.05.2011.ՀՕ-165-Ն,
Աժ.23.05.2011.ՀՕ-178-Ն, Աժ.23.05.2011.ՀՕ-163-Ն, Աժ.23.06.2011.ՀՕ-220-Ն,
Աժ.14.09.2011.ՀՕ-220-Ն, Աժ.14.09.2011.ՀՕ-220-Ն, Աժ.03.10.2011.ՀՕ-259-Ն,
Աժ.28.11.2011.ՀՕ-283-Ն, Աժ.29.11.2011.ՀՕ-294-Ն, Աժ.30.11.2011.ՀՕ-289-Ն,
Աժ.08.12.2011.ՀՕ-337-Ն, Աժ.08.12.2011.ՀՕ-340-Ն, Աժ.07.02.2012.ՀՕ-2-Ն,
Աժ.07.02.2012.ՀՕ-17-Ն, Աժ.09.02.2012.ՀՕ-7-Ն, Աժ.09.02.2012.ՀՕ-11-Ն,
Աժ.27.02.2012.ՀՕ-24-Ն, Աժ.19.03.2012.ՀՕ-34-Ն, Աժ.20.03.2012.ՀՕ-39-Ն,
Աժ.21.03.2012.ՀՕ-107-Ն, Աժ.11.09.2012.ՀՕ-179-Ն, Աժ.11.09.2012.ՀՕ-182-Ն՝
ըստ 2013 թվականի մարտի դրության:

կասության մեջ:

Մտահոգող է նաև այն, որ հիշյալ ինստիտուտին նվիրված օրենսդրական ակտերում առկա են բազմաթիվ դրույթներ, որոնք այս կամ այն չափով չեն համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին, ինչի մասին առավել հանգամանորեն կխոսվի ստորև:

Ինչպես նշեցինք, ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության անկատարության պարագայում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը բխում է միայն կոնկրետ օրենսդրական ակտերից: Թերևս, հարկ ենք համարում նշել նաև, որ այդ բազմաթիվ իրավական ակտերում, այնուամենայնիվ, հստակ չեն սահմանվում նաև այն իրավախախտումները, որոնք հիմք են հանդիսանում վարչական պատասխանատվության համար կամ հստակ սահմանված չէ պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձը, թե՞ նրա ղեկավարը: Բնորոշ է նաև այն, որ իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերը դասակարգված են ըստ կառավարման ոլորտների, ինչի արդյունքում կամ դրանք անհարկի կրկնում են միմյանց, կամ պարունակում խնդրահարույց հակասություններ: Հարկ է նկատել, որ օրենսդիրը վարչական պատասխանատվություն սահմանող բազմաթիվ իրավական ակտերում միասնական մոտեցում չի դրսևորել նաև վարչական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտների առումով:

Թերևս, մի շարք օրենսդրական ակտերում որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հստակ սահմանվում են իրավաբանական անձինք, մյուսներում՝ դրանց պաշտոնատար անձինք, իսկ երրորդ խմբի իրավական ակտերում սուբյեկտների հստակ տարանջատում չկա, այլ բխում է տվյալ ակտի դրույթներից և իրավակիրառ պրակտիկայում առաջացնում կիրառման գործնական բարդություններ: Նշվածն առավել մանրամասն ներկայացնենք օրենսդրության կոնկրետ օրինակներով:

Այսպես, 1992թ. փետրվարի 25-ին ընդունված Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի⁹³ 49-րդ հոդվածի համաձայն՝ ընդերքի վերաբերյալ օրենսդրության խախտման համար մեղավոր ձեռնակությունները պատաս-

⁹³ Տե՛ս Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, (ընդունվել է 1992 թ. փետրվարի 25-ին, ուժը կորցրել է 2002 թ. դեկտեմբերի 21-ին):

խանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով: Իսկ 1992թ. մարտի 22-ին «Հայաստանի Հանրապետությունում հարկերի մասին»⁹⁴ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքի 22-րդ հոդվածի բովանդակությունից բխում էր, որ հարկային օրենսդրության պահանջները պահպանելու և ըստ այդմ՝ այն խախտելու համար պատասխանատվությունը դրվում էր ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների պաշտոնատար անձանց վրա: ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993թ. սեպտեմբերի 15-ին ընդունվեց «Արժուքային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքը⁹⁵, որի 15-րդ հոդվածի դրույթներում սահմանված էր հակասական կարգավորում, մասնավորապես, նույն հոդվածի 1-4-րդ պարբերություններից բխում էր, որ արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար ռեզիդենտների, ներառյալ բանկերի և ոչ ռեզիդենտների⁹⁶

⁹⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հարկերի մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 1992 թ. մարտի 22-ին, ուժը կորցրել է 1997 թ. մայիսի 30-ին):

⁹⁵ Տե՛ս «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 1993 թ. սեպտեմբերի 15-ին, ուժը կորցրել է 2005 թ. հուլիսի 28-ին):

⁹⁶ Ռեզիդենտներ՝ ա) ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող, բայց ժամանակավորապես արտասահմանում գտնվող ֆիզիկական անձինք, բ) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ տարածքում, գ) ՀՀ դիվանագիտական և այլ պաշտոնական այն ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ սահմաններից դուրս, դ) «բ» ենթակետում նշված ռեզիդենտների ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցչությունները: Ոչ ռեզիդենտներ՝ ա) արտասահմանում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գտնվող ֆիզիկական անձինք, բ) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ սահմաններից դուրս, գ) ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա դիվանագիտական և պաշտոնական այլ ներկայացուցչությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ֆիրմաների ներկայացուցչությունները, դ) «բ» ենթակետում նշված ռեզիդենտների մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ-ում:

նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվում էին տուգանք, լիցենզավորված գործունեության կասեցում և լիցենզայի գրկում: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ արժութային օրենսդրությունը խախտող ռեզիդենտների, ներառյալ բանկերի և ոչ ռեզիդենտների մեղավոր պաշտոնատար անձինք, ինչպես նաև ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ինչպես տեսնում ենք, մի դեպքում կոնկրետ արժութային իրավախախտումների համար սահմանվում են պատժամիջոցներ ռեզիդենտների, ներառյալ բանկերի և ոչ ռեզիդենտների նկատմամբ, առանց որևէ նշում պարունակելու մեղավոր պաշտոնատար անձանց մասին, իսկ նույն հոդվածի մյուս պարբերությունում ընդհանուր կերպով նշվում է արժութային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն կրող անձանց շրջանակի մասին: Կամ «Գովազդի մասին» 1996թ. ապրիլի 30-ին ընդունված ՀՀ օրենքի⁹⁷ 26-րդ հոդվածով սահմանվեց, որ օրենքով նախատեսված խախտումների համար վարչական պատասխանատվություն են կրում գովազդատու, գովազդ արտադրող և գովազդակիր ձեռնարկությունների ղեկավարները, իսկ նույն թվականի հունիսի 30-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի⁹⁸ 61-րդ հոդվածը սահմանեց բանկերի նկատմամբ կիրառվող տույժերի տեսակները:

Առաջին քայլը մեր օրենսդրության մեջ, որն ուղղակիորեն ամրագրեց իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, հանդիսացավ 1999թ. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի ընդունումը⁹⁹, որը սահմանում է ՀՀ-ում քաղաքաշինա-

⁹⁷ Տե՛ս «Գովազդի մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1996 թ. ապրիլի 30-ին):

⁹⁸ Տե՛ս «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1996 թ. հունիսի 30-ին): Ընդ որում, իրավաբանական գրականության մեջ որոշ իրավագետներ բանկային իրավախախտումների համար նշանակվող տույժերը չեն համարում վարչական տույժեր, այլ բանկային պատասխանատվությունը դիտում են իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակ, և այս տեսանկյունից սույն օրենքով սահմանված տույժերի տեսակների առումով հակասական մեկնաբանություն է տրվում այն հարցին, արդյո՞ք հիշյալ օրենսդրական ակտը կարելի է համարել որպես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ամրագրման օրենսդրական օրինակներից մեկը, թե ոչ:

⁹⁹ Տե՛ս «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին):

կան գործունեության բնագավառում աշխատանքներ իրականացնող իրավաբանական անձանց՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը: Ի դեպ, ներկայումս սահմանված են որոշակի իրավախախտումների համար իրավաբանական անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Էներգետիկայի մասին», «Վիճակախաղերի մասին», «Շահումով խաղերի և խաղատների մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին», «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Բանկերի և բանկային գործունեության գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ համապատասխան օրենքներով¹⁰⁰, ինչպես նաև հողային, մաքսային, հարկային, բնության ու շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերով:

¹⁰⁰ Տե՛ս 2000թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 2001 թ. մարտի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, 2003 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքը, 2003 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքը, 2005 թ. հուլիսի 8-ին ընդունված «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, 2005 թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. նոյեմբերի 22-ին ընդունված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքը, 2006 թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. նոյեմբերի 24-ին ընդունված «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, 2007թ. հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, 1996 թ. հունիսի 30-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2007 թ. ապրիլի 9-ին ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2008 թ. մայիսի 26-ին ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը:

Ընդ որում, նշված ակտերն ընդունվել են անկախացման գործընթացից հետո տարբեր ժամանակահատվածներում, և կոնկրետ հնարավոր չէ առանձնացնել մի ժամանակահատված այն կտրվածքով, որից սկսված իրավաբանական անձինք որպես սուբյեկտ սկսվել են ամրագրվել այլ օրենսդրական ակտերում՝ անկախ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում որպես այդպիսին սահմանված չլինելու պարագայում:

Մինչ 2005 թ. սահմանադրության փոփոխություններն իրավաբանական անձինք, որպես այդպիսին հիշատակված չէին նաև սահմանադրական նորմերում: 2005 թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխությունների արդյունքում Սահմանադրությունը (2005 թ. փոփոխությամբ) լրացվեց՝ 42.1-րդ հոդվածով, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ: Իսկ Սահմանադրության 83.5-րդ և պատասխանատվությանն առնչվող հարաբերությունների կանոնակարգմանը նվիրված մյուս հոդվածներն ուղղակիորեն չեն նախատեսում իրավաբանական անձանց պատասխանատվություն, սակայն չեն էլ բացառում: Այսպես, Սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ կետը սահմանում է միայն այն, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով: Տեղին է հիշատակել նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանը նույնպես իր՝ 2012 թ. թիվ 1048 որոշմամբ արձանագրել է, որ ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավաբանական անձինք օժտված չեն վարչական զանցանքի սուբյեկտի հատկանիշներով:

Միևնույն ժամանակ, այդ նույն որոշմամբ որպես հիմնախնդիր առանձնացրել է նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներից և ի թիվս մի շարք հայեցակարգային նշանակության հարցերի՝ ընդգծել իրավաբան

նական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգումը:

Որպես դատական պրակտիկայի օրինակ նշենք, որ, ՀՀ վճարելի դատարանն իրավաբանական անձի, որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի, հիմնախնդրին անդրադարձել է 2006 թվականի իր՝ աշխատանքի տեսչության Վայոց ձորի մարզի տարածքային կենտրոնի վճարելի բողոքի ընդդեմ «Թովմասյան Համլետ» ՍՊԸ-ի սեպտեմբերի 28-ի որոշման մեջ, որի համաձայն՝ իրավաբանական անձը չի հանդիսանում վարչական պատասխանատվության սուբյեկտ, քանի որ մեղքի դիտավորության և անշարժության տեսակներին վերաբերող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչական իրավախախտման կատարումը հնարավոր է միայն ֆիզիկական անձի կողմից:

Թերևս, դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, Հանրապետությունում չգիտես ինչու ամեն անգամ շրջանցվել է վարչական պատասխանատվության օրենսդրությունը, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը դարձել էր ժամանակի հրամայական և դա պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով, որոնց առավել մանրամասն կանոնադրումներ աշխատության հաջորդ գլխում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ մշակելու կոնկրետ քայլեր ձեռնարկելու սկիզբը, սակայն համընկավ դատաիրավական բարեփոխումների ավարտի հետ, երբ ՀՀ վարչապետի 1998 թ. որոշմամբ ստեղծվեց աշխատանքային խումբ, որը, սակայն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի չմշակեց: Իսկ 10 տարի անց վերոնշյալ խնդրի կարգավորման համար ՀՀ Նախագահի 2008 թ. կարգադրությամբ ստեղծվեց նոր աշխատանքային խումբ: Նշված խմբերի աշխատանքները մանրամասն կլուսաբանվեն աշխատության հաջորդ գլխի 4-րդ պարագրաֆում:

Փաստորեն, ինչպես նկատեցինք, քննարկվող հիմնախնդրի իրավաստեղծ գործընթացի պատմական 4-րդ փուլը՝ 1991 թ. մինչև մեր օրերը, նույնիսկ կարելի է բաժանել 2 ենթափուլերի՝ 1991-2008թթ., և 2008

թ. մեր օրերը, երբ արդեն ձևավորվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակման աշխատանքային խումբ և դեռևս շարունակվում են նախագծի ընդունման հետ կապված աշխատանքները:

Այսպիսով, վերը ներկայացրածը ցույց տվեց Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինտիտուտի զարգացումը ժամանակի տեսլականում, դրան զուգահեռ՝ իրավահամեմատական տեսանկյունից այլ երկրների փորձն ու քննարկվող հիմնախնդրի շուրջ ընդունված օրենսդրությունն ու ձևավորված իրավակիրառ պրակտիկան:

Վերոհիշյալ ուսումնասիրությունների արդյունքում նշենք, որ նախկին ԽՍՀՄ պետությունների համար իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն անցել է օրենսդրական կարգավորման գրեթե նույն ուղին: Հետագայում, խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացի արդյունքում արդեն հետխորհրդային երկրները սկսեցին ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքեր, կամ կատարելագործել գործող օրենսգրքերում տեղ գտած դրույթները՝ կատարելով լայնածավալ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնք բավականին հասցանորեն ներկայացրեցինք վերևում:

Հարկ է նշել, որ ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստելու, որ քննարկվող հարցադրման կապակցությամբ, ընդհանուր առմամբ, կարծում ենք, երկրները կարելի է բաժանել հիմնականում չորս խմբի, մասնավորապես, առաջին խմբում կարելի է ներառել այն երկրները, որտեղ սահմանված է իրավաբանական անձանց համար միայն քրեական պատասխանատվություն, ընդ որում, խոսքը վերաբերում է այն երկրներին¹⁰¹, որոնց իրավական համակարգում հստակ տարանջատում չկա քրեական և վարչական արարքների միջև, և բոլոր իրավախախտումները կարգավորվում են մեկ միասնական քրեական օրենսդրությամբ: Երկրորդ խմբում կարելի է ներառել այն երկրները¹⁰², որոնց

¹⁰¹ Տե՛ս օրինակ՝ Ֆրանսիա, Էստոնիա, Նորվեգիա, Ռումինիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա և այլն:

¹⁰² Տե՛ս օրինակ՝ Վազախստան, Բելառուս, Գրդըզտան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ադրբեջան, Վրաստան, Իտալիա և այլն:

իրավական համակարգում հստակ տարանջատում կա քրեական և վարչական արարքների միջև, սակայն սահմանված է իրավաբանական անձանց միայն վարչական պատասխանատվություն, և այս երկրներից¹⁰³ կարելի է առանձնացնել նաև երրորդ խումբը, որոնց օրենսդրությամբ սահմանված է իրավաբանական անձանց և՛ վարչական, և՛ քրեական պատասխանատվություն: Ընդ որում, կարելի է առանձնացնել նաև չորրորդ՝ թվով շատ քիչ երկրներ ընդգրկող խումբը, որտեղ կոնկրետ քրեական կամ վարչական օրենսդրությամբ ամրագրված չէ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության և ոչ մի տեսակ¹⁰⁴: Հայաստանի Հանրապետությունն այսօր հենց այս խմբի երկրների շարքին է դասվում, քանի դեռ նոր օրենսգիրքը չի ընդունվել:

§3. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի էությունը և դերը վարչական իրավունքի համակարգում

Մինչ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության իրավական էությանն անցնելը, կարծում ենք, հարկ է հակիրճ անդրադառնալ նաև այն հարցադրմանը, թե ինչպիսի՞ դեր ունի իրավական պատասխանատվության համակարգում վարչական պատասխանատվությունը: Այս տեսանկյունից հարցի հետազոտումը թելադրված է հայրենական իրավական համակարգի առանձնահատկություններով, որն իր իրավական պատասխանատվության համակարգով էապես տարբերվում է ինչպես մայրցամաքային, այնպես էլ՝ անգլո-սաքսոնական իրավական համակարգերից: Ինչպես արդեն նշվեց, խնդիրն այն է, որ վարչական պատասխանատվությունն այն տեսքով, ինչ տեսքով որ ձևավորվել է խորհրդային իրավական համակարգում և դեռ մասամբ շարունակում է գործել ներկայումս, չունի իր նախադեպն իրավունքի

¹⁰³ Տե՛ս օրինակ՝ Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Բուլղարիա, Գերմանիա, Չինաստան, Ավստրիա, Մակեդոնիա, Խորվաթիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա, Մլովենիա, Մլովակիա, Չեխիա, Սերբիա, Լեհաստան և այլն:
¹⁰⁴ Տե՛ս օրինակ՝ Ուկրաինա, Ուզբեկստան և Հայաստան:

մյուս համակարգերում: Այս տեսանկյունից խիստ հրատապ նշանակություն ունի վարչական պատասխանատվության ինստիտուտի առավել բնորոշ հատկանիշների համալիր բացահայտումը՝ շեշտադրում կատարելով, հատկապես, այն հատկանիշների վրա, որոնք թույլ կտան հստակ գիտական պատկերացում կազմել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության էության, դրա անհրաժեշտության և զարգացման հեռանկարների մասին:

Վարչական պատասխանատվությունը հանդիսանում է իրավական պատասխանատվության առավել տարածված և լայն կիրառում ունեցող տարատեսակը, վարչական իրավունքի առավել կիրառական և գործնական մեծ նշանակություն ունեցող ինստիտուտը: Քանի որ վարչական պատասխանատվությունը համարվում է իրավական պատասխանատվության տարատեսակ, անհրաժեշտ է անդրադառնալ նաև «պատասխանատվություն», և «իրավական պատասխանատվություն» հասկացությունների բնորոշմանը, որպեսզի ավելի ստույգ պատկերացնենք վարչական պատասխանատվության, և մասնավորապես, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության տեղն իրավական պատասխանատվության համակարգում:

Ընդհանուր *փիլիսոփայական* առումով պատասխանատվություն ասելով՝ ընդունված է հասկանալ անհատի, կոլեկտիվի, հասարակության միջև պատմական բնույթ ունեցող փոխհարաբերություն՝ նրանց ներկայացված փոխադարձ պահանջների գիտակցորեն իրականացնելու տեսանկյունից¹⁰⁵, կամ «հասարակության և պետության նկատմամբ իրենց պարտականությունների պատշաճ գիտակցում...»¹⁰⁶:

Իրավական առումով պատասխանատվությունը սովորաբար դիտվում է որպես պետության բացասական գնահատական սահմանված իրավակարգի խախտման համար: Որպես իրավական երևույթ՝ այն հանդես է գալիս որպես իրավական նորմերի խախտման համար, այսինքն՝ արդեն իսկ կատարած հակաիրավական արարքի համար, սահմանված պատասխանատվություն:

¹⁰⁵ Տե՛ս *Философский энциклопедический словарь*, М., 1983, էջ 469:
¹⁰⁶ Տե՛ս *Строгович М.С. “Сущность юридической ответственности”*, Сов.госво и право, 1979, №10, էջ 76.

Թե՛ արտասահմանյան և թե՛ հայրենական իրավագիտությունում դեռևս բացակայում է միասնական դիրքորոշում իրավաբանական պատասխանատվության, որպես իրավունքի տեսության հնագույն ինստիտուտի, վերաբերյալ և այն բնորոշվում է տարբեր կերպ¹⁰⁷:

Տեսական գրականության մեջ նշվում է, «...իրավաբանական պատասխանատվությունն իր առաջացումից ի վեր միշտ էլ իրենից ներկայացրել է արդեն իսկ կատարած հակաիրավական արարքի համար նախատեսված պատասխանատվություն, հակառակ դեպքում, կարելի է եզրակացնել, որ իրավախախտում չկատարած անձը ևս կարող է կրել իրավական պատասխանատվություն: Ուստի ո՛չ գիտական և ո՛չ էլ առավել ևս գործնական նկատառումները հիմք չեն հանդիսանում, որպեսզի վերանայվի այն տեսակետը՝ ըստ որի իրավաբանական պատասխանատվությունն իրավախախտման հետևանք է:»¹⁰⁸: Ս.Ս Ալեքսեևը տալիս է իրավաբանական պատասխանատվության հետևյալ սահմանումը. «իրավաբանական պատասխանատվությունը մեղավոր անձի նկատմամբ կատարած իրավախախտման համար պետական հարկադրանքի միջոցների կիրառումն է: Իրավաբանական պատասխանատվությունը կապված է իրավախախտի հասարակական դատապարտման, նրա վարքի սոցիալական և բարոյական կշտամբանքի հետ»¹⁰⁹: Այլ կերպ ասած, Ս. Ս. Ալեքսևն իրավաբանական պատասխանատվության էությունը բնորոշում էր որպես անձի կողմից իր կատարած իրավախախտման համար պետական-հարկադրանքի միջոցների ներգործության արդյունքները կրելու մեջ¹¹⁰:

Անշուշտ, իրավաբանական պատասխանատվությունը, այդ թվում՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը, կարող է դիտվել որպես իրավախախտման նկատմամբ պետության բացասական իրավական գնահատական: Ի դեպ, իրավաբանական պա-

¹⁰⁷ Տե՛ս Ապիյան Ն.Ա., Ապիյան Ս.Ն., Սաֆարյան Գ.Հ. «Իրավունքի տեսության հիմնահարցեր», Երևան, 2003, ԵՊՀ հրատ., էջ 250:

¹⁰⁸ Տե՛ս Самощенко И.С., Фарушкин М.Х. Ответственность по советскому законодательству, М., 1971, էջ 43:

¹⁰⁹ Տե՛ս Алексеев С. С. Государство и право. М., 1996. С. 101, Алексеев С. С. Право: ἀράοέα-δαί δεϋ-ծεείη ή δέϋ. Ἰ ἰνὸ εἶ ἰ ἐάεή ἰ αἶ ἐήήεάα ἰ αἶ εϋ- Μ., Ἰδὸδὸδ, 1999, էջ 74:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղը:

տասխանատվությունն անհնարին է դիտարկել անհատի վարքագծից առանձնացված, քանզի այն ուղղակիորեն կապված է նրա կողմից իրավախախտում կատարելու հետ և հանդիսանում է որպես վերջինիս հետևանք: Սակայն իրավաբանական պատասխանատվությունը չպետք է հասկանալ միայն որպես իրավախախտման և պետական հարկադրանքի միջոցների կիրառման հետևանք:

Որոշ հեղինակներ իրավաբանական պատասխանատվությունը բնորոշում են իրավական պարտականության տեսանկյունից: Մի դեպքում իրավաբանական պատասխանատվությունը բնորոշվում է որպես պետական հարկադրանքի միջոցները կրելու կամ դրանց ենթարկվելու իրավական պարտականություն¹¹¹, մյուս դեպքում՝ որպես չկատարված պարտականությունը կատարելուն հարկադրելը, ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն մինչև իրավախախտումը գոյություն ունեցած պարտականությանը, այլ նաև իրավախախտումից հետո ծագող պարտականությանը¹¹²:

Իսկ Ն. Բախրախն առանձնացնում է իրավաբանական պատասխանատվության հետևյալ հիմնական հատկանիշները. «1) այն համարվում է իրավակարգի պահպանման, պետական իշխանության իրականացման միջոց, 2) ունի նորմատիվ բնույթ և դրսևորվում է իրավական նորմերի սանկցիայի կիրառման մեջ, 3) համարվում է մեղավոր հակահասարակական վարքի հետևանք, 4) ուղեկցվում է իրավախախտի և նրա կողմից կատարված իրավախախտման պետական և հասարակական դատապարտմամբ, 5) կապված է հարկադրանքի, իրավախախտի համար բացասական՝ բարոյական կամ նյութական բնույթի հետևանքների հետ, 6) իրագործվում է համապատասխան դատավարական ձևերում»¹¹³:

Վ. Ս. Ներսիսյանցի համոզմամբ՝ իրավական պատասխանատվությունը խախտված նորմի սանկցիայով նախատեսված և իրավասու

¹¹¹ Տե՛ս Ապիյան Ն.Ա., Ապիյան Ս.Ն., Սաֆարյան Գ.Հ. «Իրավունքի տեսության հիմնահարցեր», Երևան, 2003, ԵՊՀ հրատ., էջ 253:

¹¹² Տե՛ս Малейн Н С. Имущественная ответственность в хозяйственных отношениях,-М.,; Наука, 1968, էջ 12:

¹¹³ Տե՛ս Бахрах Д. Н. Административная ответственность граждан в СССР: Учеб. пособие. Свердловск, 1989, էջ 23:

պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատշաճ դատավարական-իրավական կարգով իրավախախտողի նկատմամբ կիրառվող իրավական հարկադրանքի միջոցն է¹¹⁴:

Որոշ իրավաբաններ իրավաբանական պատասխանատվությունը սահմանում են որպես պաշտպանող իրավահարաբերություն: Այսպես, Ի.Ս. Սամոչեկոն գրում էր, որ իրավաբանական պատասխանատվությունը յուրահատուկ իրավունքի նորմերով նախատեսվող և կարգավորվող հարաբերություն է իրավական պահանջները խախտողի և պետության միջև՝ ի դեմս իր համապատասխան մարմինների¹¹⁵:

Վերը նշված սահմանումների համադրման և դրանց համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ իրավական պատասխանատվությունը, իրավախախտում կատարած անձի նկատմամբ նորմատիվ իրավական կարգով սահմանված ընթացակարգի պահպանմամբ իրավական հարկադրանքի միջոցների կիրառումն է: Նշվածից բացառություն չէ նաև վարչական պատասխանատվությունը:

Որոշ հեղինակներ վարչական պատասխանատվությունը բնորոշում են որպես իրավախախտի՝ պետական իրավասու մարմինների կողմից սահմանված կարգով հարկադրանքի միջոցներին ենթարկվելու պարտականություն¹¹⁶: Մյուսներն այն բնորոշում են որպես անձի պարտականություն՝ կրելու կատարած իրավախախտման բացասական հետևանքները կամ ենթարկվելու պետական հարկադրանքի միջոցներին՝ որպես իր կողմից կատարված հակաիրավական արարքի հետևանք¹¹⁷: Թերևս, հարկ է նկատել՝ նման մոտեցումը բավարար չափով չի արտացոլում տվյալ ինստիտուտի էությունը, քանի որ պատասխանատվության էությունը պարտականության մեջ չէ, իսկ իրավաբանական պատասխանատվությունը ծագում է հենց իրավաբանական

¹¹⁴ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նաիրի, 2001.- էջ 285:

¹¹⁵ Տե՛ս Базылев Б. Т. Юридическая ответственность (Теоретические вопросы). - Красноярск, 1985, էջ 23:

¹¹⁶ Տե՛ս Малейн Н. С. Правонарушение: понятие, причины, ответственность. М.; 1985, էջ 155:

¹¹⁷ Տե՛ս Административная ответственность в СССР / В. М. Манохин, Ю.С. Адушкин. - Саратов: Издательство Саратовского Университета, 1988. էջ 67, Костенников М. В. Теоретические проблемы административной ответственности// Юрист. 1998, №9, էջ 45:

պարտականության խախտման դեպքում: Այնուամենայնիվ, վարչական պատասխանատվության տվյալ տեսակետը, անշուշտ միակը չէ տեսական գրականության մեջ:

Մի շարք վարչագետներ գտնում են, որ պատասխանատվությունն իրավական նորմերի սանկցիաների կիրառումն է: Յու. Մ. Կոզլովը բնութագրում էր վարչական պատասխանատվությունն որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ, որն արտահայտվում է իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից վարչաիրավական սանկցիաների (վարչական տույժերի) կիրառում վարչական իրավախախտում (զանցանք) կատարած անձանց նկատմամբ¹¹⁸:

Ըստ Ի. Ա. Գալագանի՝ վարչական պատասխանատվությունը, որպես իրավական ինստիտուտ և որպես իրավական երևույթ, հանդիսանում է վարչական հարկադրանքի մի մասը՝ ընդգրկելով միայն վարչական տույժերի կիրառումը¹¹⁹: Նման տեսակետին են հակված նաև վարչագետների մեծամասնությունը¹²⁰: Մյուս մասը վարչական պատասխանատվությունը բնորոշում է ավելի լայն իմաստով՝ որպես տույժերի և վերականգնիչ միջոցների կիրառում կամ որպես տույժերի և հարկադրանքի միջոցների կիրառում¹²¹: Այս տեսակետին մոտ է կանգնած նաև վարչագետների մեկ այլ խումբ, որոնք գտնում են, որ վարչական պատասխանատվությունը տույժերի, հարկադրանքի և վերականգնիչ միջոցների կիրառումն է¹²²:

¹¹⁸ Տե՛ս Вара́меенко И. И. Административно-правовые санкции. - М., 1975. էջ 162, Козлов Ю. М. Советское административное право. - М., 1984. էջ 62:

¹¹⁹ Տե՛ս Галаган И.А., Административная ответственность в СССР, Воронеж, 1970, էջ 97:

¹²⁰ Տե՛ս Ямпольская Ц. А. Об убеждении и принуждении в советском административном праве //Вопросы советского административного и финансового права (Сборник статей) / В. Ф. Коток. - М., 1952. էջ 167-169; Лазарев П. М., Салищева Н. Г., Сара́дѳі А. В., Студенпкина М. С. Вопросы кодификации законодательства об административной ответственности //Советское государство и право. 1967. №1, էջ 97:

¹²¹ Տե՛ս Лу́нев Л. Е. Административная ответственность за правонарушения. - М., 1961. էջ 90-92:

¹²² Տե՛ս Манохин В. М. Советское административное право. Курс лекций / В. М. Манохин.- Саратов: Издательство Саратовского Университета. - Вып. 1. Часть общая. - 1968, էջ 198.:

Մ.Ս. Ստուդենիկինան առանձնացնում է նաև վարչական պատասխանատվության մի շարք այլ առանձնահատկություններ: Մասնավորապես, նախ՝ այն պակաս խիստ է, քան քրեական պատասխանատվությունը և չի ենթադրում իրավախախտում կատարած անձի դատվածություն: Երկրորդ՝ արտահայտվում է մեղավոր իրավախախտի նկատմամբ վարչական տույժ կիրառելու մեջ: Երրորդ՝ վարչական պատասխանատվությունը կիրառվում է այն մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, ում հետ իրավախախտը կապված չէ ծառայողական ենթակայությամբ: Չորրորդ՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթն ավելի պարզ է և օպերատիվ, քան քրեական դատավարությունը¹²³:

Գ.Ն.Բարխախը տարբերում է վարչական պատասխանատվության ենթարկելու երեք հիմքեր. «նորմատիվ, այսինքն՝ այն կարգավորող նորմերի համակարգ, փաստական, այսինքն՝ կոնկրետ սուբյեկտի արարք, որը խախտել է վարչական սանկցիայով պաշտպանվող իրավական կարգադրագրերը (վարչական իրավախախտում) և դատավարական, այսինքն՝ կոնկրետ կատարված վարչական իրավախախտման համար իրավասու մարմնի կողմից ընդունված կոնկրետ տույժի կիրառման մասին որոշում: Իրավական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ է որպեսզի առկա լինեն բոլոր երեք հիմքերը և, հատկապես, վերը թվարկված հաջորդականության պահպանմամբ¹²⁴»:

Ի լրումն վերոգրյալի՝ Օ.Մ.Յակուբան նշում է, որ վարչական պատասխանատվությունը կարող է առաջանալ նաև զանցանքի հետևանքների բացակայության դեպքում, ինչն էլ ընդգծում է համապարտադիր կանոնների նախագուշակական բնույթը, և հանդես է գալիս պետության առջև՝ ի դեմս պետական մարմինների՝ արտահայտվելով վարչական տույժերի տեսքով¹²⁵:

¹²³ Տե՛ս Студеникина М. С. Что такое административная ответственность? М., 1990. էջ 6-7:

¹²⁴ Տե՛ս Бахрах Д. Н. Принуждение и ответственность по административному праву. Екатеринбург, 1999, էջ 35:

¹²⁵ Տե՛ս Якуба О. М.. Административная ответственность. М., 1972, էջ 70-72:

Վարչական պատասխանատվության հատկանիշներն առավել ամբողջական ընդգրկում է Գ.Ն.Բարխախի կողմից տրված սահմանումը, ըստ որի՝ «վարչական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, որին բնորոշ են վերջինիս բոլոր հատկանիշները (այն առաջանում է իրավունքի նորմերի հիման վրա, իրավական նորմերի խախտման համար, իրագործվում է իրավասու մարմինների իրավական ակտերով և կապված է պետական հարկադրանքի հետ): Մյուս կողմից վարչական պատասխանատվությունը հանդիսանում է վարչական հարկադրանքի հիմնական մաս՝ վերջինիս հատուկ բոլոր հատկանիշներով, մասնավորապես՝ ա) իրականացվում է գործադիր իշխանության սուբյեկտների կողմից ծառայողական ենթակայությունից դուրս, բ) որպես վարչական պատասխանատվության հիմք է հանդիսանում վարչական իրավախախտումը, գ) նպատակը հանդիսանում է սուբյեկտների նկատմամբ իրավասու մարմնի, դատարանի կամ պաշտոնատար անձի կողմից վարչական տույժերի կիրառումը, դ) ունի իրավունքի նորմերով կարգավորվող վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ կարգ¹²⁶»:

Այսկերպ, վարչական պատասխանատվությունը կարող է, նախ, դիտարկվել որպես իրավական երևույթ, այսինքն՝ դատարանի, իրավասու վարչական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից վարչական տույժերի նշանակմանն ուղղված գործունեություն: Երկրորդ՝ որպես իրավական ինստիտուտ, իրավական նորմերի ամբողջություն, որոնք սահմանում են արարքի հակաիրավականությունը, ինչպես նաև կատարված վարչական իրավախախտման համար տույժի տեսակն ու չափը: Երրորդ՝ որպես բարդ կառուցվածք ունեցող վարչական իրավահարաբերություն, ընդ որում, վարչական պատասխանատվության վարչական-նյութական իրավահարաբերությունը հարաբերակցվում է վարչական պատասխանատվության վարչական-դատավարական իրավահարաբերությամբ՝ ինչպես բովանդակությունն ու ձևը:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ քննարկվող հիմնախնդրին վերաբերող գիտական աշխատությունների վերլուծությունը թույլ է տա-

¹²⁶ Տե՛ս Бахрах Д. Н. Принуждение и ответственность по административному праву, էջ 33:

լիս նշելու, որ հեղինակների մեծամասնությունը վարչական պատասխանատվությունը բնորոշում են որպես վարչական տույժի նշանակում ու կիրառում:

Ինչևհետե, հարկ ենք համարում նշել, որ հայրենական գործող օրենսդրության և զիտական աշխատությունների վերլուծությունը, հնարավորություն է տալիս առանձնացնելու նաև վարչական պատասխանատվության հետևյալ հիմնական հատկանիշները՝ 1) վարչական պատասխանատվության հիմքում ընկած է վարչական իրավախախտումը, 2) դրա բովանդակությունը դրսևորվում է իրավախախտի նկատմամբ վարչական տույժի կիրառմամբ, 3) վարչական պատասխանատվություն սահմանվում է միայն օրենսդրական ակտերով, ընդ որում, եթե վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթին առնչվող հարաբերությունները կարող են կարգավորվել նաև ենթաօրենսդրական ակտերով, ապա վարչական տույժի տեսակները սահմանվում են բացառապես օրենքներով, 4) վարչական պատասխանատվությունն առանձնանում է որպես վարչական իրավախախտումների դեմ պայքարի կարևորագույն միջոց, 5) վարչական պատասխանատվության էությունն իրավասու պետական մարմնի նպատակաուղղված ներգործությունն է վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ: Ընդ որում, ներգործության նպատակը կայանում է օրենքն և իրավակարգը պահպանելու ոգով իրավախախտին դաստիարակելու մեջ, ինչպես նաև վարչական պատասխանատվության ենթարկվող անձի և այլ անձանց կողմից նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելը, 6) վարչական տույժեր կիրառելու իրավունք ունեն իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց լայն շրջանակ, ընդ որում, բացի իրավասու պետական մարմիններից և դրանց պաշտոնատար անձանցից նման լիազորությամբ օժտված են նաև դատարանները, 7) վարչական տույժեր կիրառելու իրավունք ունեցող իրավասու պետական մարմինները և պաշտոնատար անձանց նկատմամբ իրավախախտում կատարած անձը չի գտնվում կազմակերպական ենթակայական հարաբերությունների մեջ, 8) օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ կարգ, 9) վարչական պատասխանատվությունն առանձնանում է նաև իր սուբ-

յեկտներով, մասնավորապես, վարչական պատասխանատվության սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն ֆիզիկական անձինք, այլև իրավաբանական անձինք, 10) վարչական պատասխանատվությունը չի կարող հանգեցնել դատվածության կամ իրավունքների որևէ այլ սահմանափակման: Մասնավորապես, որևէ օրենսդրական ակտով չի կարող նախատեսվել և նախատեսված չէ իրավունքի սահմանափակում՝ կապված վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի հետ, 11) այն նյութական և ընթացակարգային իրավանորմների ամբողջություն է. նյութական, որն արտահայտվում է կոնկրետ վարչական իրավախախտման կատարմամբ, վարչաընթացակարգային (վարույթային)՝ կապված վարչական տույժի նշանակմանն ուղղված գործողությունների և նշանակված վարչական տույժի կատարման հետ: Ընդ որում, հաճախ վարչական պատասխանատվության կիրառման դեպքում նյութական և վարույթային նորմերը միաձուլվում են, օրինակ՝ վարչական տուգանքի նշանակումը և տեղում այն զանձելը¹²⁷:

Այսպիսով, վարչական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես իրավասու պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև դատարանի կողմից վարչական իրավախախտման համար օրենքով սահմանված հիմքերով ու կարգով վարչական տույժի նշանակում ու իրավասու պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից վերջինիս կիրառում:

Վարչական պատասխանատվության վերաբերյալ նշված դատողություններն ու դրույթները, որոնք մշակվել են վարչական իրավունքի գիտության և վարչագետների կողմից, անշուշտ, ելակետային նշանակություն ունեն նաև իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության բնորոշման և դրա հետ կապված տեսական այլ խնդիրների հետազոտման և եզրահանգումներ կատարելու համար:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը տեսական գրականության մեջ նույնպես չունի միասնական բնորոշում: Վարչագետների մեծամասնությունը, մասնավորապես՝ Վ.Ի. Դիմչեն-

¹²⁷ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 257:

կոն¹²⁸, Ն.Գ. Սալիշևան¹²⁹, Ե.Վ. Օվչարովան¹³⁰, Յ.Յ.Կոլեսնիչենկոն¹³¹, Ի.Վ. Նազարովը¹³², Յ. Վ. Շիրովը¹³³ նշում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության սահմանման անհրաժեշտության մասին, սակայն դրան հակառակ նաև որոշ վարչագետներ, մասնավորապես՝ Վ. Գ. Սորոկինը¹³⁴, գտնում է, որ իրավաբանական անձինք չեն կարող լինել վարչական իրավախախտման և վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Ըստ Ի.Վ. Նազարովի՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը վարչական իրավախախտում կատարած վարչական իրավասուբյեկտությամբ օժտված և որպես իրավաբանական անձ գրանցված կազմակերպությունների նկատմամբ՝ լիազորված պետական մարմինների, դատարանների և պաշտոնատար անձանց կողմից իրավական նորմերով սահմանված վարչական պատիժների (տույժերի-Թ.Շ) կիրառումն է¹³⁵»:

Յու.Յու. Կոլեսնիչենկոն նշում է՝ «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը վարչական իրավասուբյեկտություն ունեցող կազմակերպությունների նկատմամբ վարչական տույժերի կիրառումն է՝ պետության կողմից հաստատված կանոնները և նորմերը

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, հակաօրինական գործունեությունը դատապարտելու և իրավաբանական անձանց պարտականությունների կատարմանը, ինչպես նաև սոցիալական արդարության վերականգնմանը նպաստելու նպատակներով»¹³⁶:

Իսկ ըստ Ա.Գ.Բերեզնիցկիի՝ «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը նրանց վարչական տույժերի կիրառումն է, որոնք հետապնդում են ինչպես իրավագանցին պատժելու, այնպես էլ տվյալ իրավաբանական անձի կողմից իր պարտականությունների և պետական մարմինների պահանջների կատարման նպատակ»¹³⁷»:

Այսպիսով, իրավաբանական անձի վարչական պատասխանատվության բնորոշումների վերաբերյալ վարչագետների մեծամասնության կարծիքներում գերակշռում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության այն կարևոր հատկանիշը, ըստ որի՝ այն առանձնանում է որպես իրավաբանական անձանց նկատմամբ վարչական իրավախախտման համար վարչական տույժերի կիրառում:

Ընդ որում, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը, օժտված է նաև իրեն բնորոշ հատկանիշներով ու առանձնահատկություններով, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները՝ 1) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունն ունի ինքնուրույն իրավական կարգավորում. այն կարգավորող նորմերի ամբողջությունն առանձնանում է որպես վարչական պատասխանատվության ինստիտուտի ենթաինստիտուտ, 2) տվյալ ենթաինստիտուտի առանձնահատկությունները դրսևորվում են նաև նրանում, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը համարվում է վերջիններիս իրավական կարգավիճակի տարր, 3) տվյալ ենթաինստիտուտը համարվում է միջճյուղային. իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի բովանդակության վրա մեծ ազդեցություն ունեն ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական իրավունքի իրավակարգավորումնե-

¹²⁸ St'u Дымченко В. И. Административная ответственность организаций: Дис. ...канд. юрид. наук.- Свердловск, 1983. էջ 197:

¹²⁹ St'u Салищева Н. Г. Проблемные вопросы института административной ответственности в России // Административная ответственность: вопросы теории и практики., М., 2004, էջեր 10-16:

¹³⁰ St'u Овчарова Е. В. Материально-правовые проблемы административной ответственности юридических лиц // Государство и право. 1998, № 7, էջեր 14 – 19:

¹³¹ St'u Колесниченко Ю. Ю. Некоторые вопросы административной ответственности юридических лиц//Жури. рос. права. 1999, № 10. էջ 137:

¹³² St'u Назаров И. В. Назаров И. В. Административная ответственность организаций (Автореф. дис. ...канд. юрид. наук. - Н. Новгород, 2002, էջ 16:

¹³³ St'u Шилов Ю. В. Административная ответственность юридических лиц (процессуальный аспект). Автореф. дис. ... канд. юрид. наук. Омск, 2003, էջ 14:

¹³⁴ St'u Сорокин В. Д. О двух тенденциях, разрушающих целостность института административной ответственности // Правоведение. 1999. № 1, էջեր 46-54:

¹³⁵ St'u Назаров И. В. Назаров И. В. Административная ответственность организаций (Автореф. дис. ...канд. юрид. наук. - Н. Новгород, 2002, էջեր 24-25:

¹³⁶ St'u Колесниченко Ю. Ю. Некоторые вопросы административной ответственности юридических лиц//Жури. рос. права. 1999. № 10, էջ 137:

¹³⁷ St'u Березницкий А. Г. Административная ответственность юридических лиц: Автореф. дис. ...канд. юрид. наук. М., 2003, էջ 24:

րը, օրինակ՝ մեղքի հաստատումը, ձևերը, վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հիմնարար դրույթները, իրավաբանական անձի հասկացությունը, վերակազմակերպումը, լուծարումը և այլն, 4) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության, որպես վարչական պատասխանատվության ենթահիմնատիտուտի, զարգացումը պայմանավորված է հիմնականում օբյեկտիվ գործոններով՝ տնտեսական հարաբերությունների զարգացմամբ և բարդացմամբ, 5) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առանձնահատկությունը դրսևորվում է նաև վերջինիս նկատմամբ նշանակվող վարչական տույժերի այնպիսի տեսակներով, որոնք կիրառելի չեն վարչական պատասխանատվության մյուս սուբյեկտների նկատմամբ, օրինակ՝ իրավաբանական անձի հարկադիր լուծարումը, 6) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության փաստական հիմքը համարվում է վարչական իրավախախտումը, որի կազմը տարբերվում է վարչական պատասխանատվության մյուս սուբյեկտների կողմից կատարված վարչական իրավախախտման կազմից, մասնավորապես, այն դրսևորվում է դրա սուբյեկտիվ կողմի մեջ, որին մանրամասն կանդրադառնանք աշխատության 2-րդ գլխում, 7) իրավաբանական անձանց բոլոր տեսակները, անկախ իրենց կազմակերպարարական ձևից, կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության, վերջինիս առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ պարագրաֆում, 8) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթի առանձնացված կարգը, օրինակ՝ մի շարք երկրների վարչական պատասխանատվությունը կարգավորող օրենսդրական ակտերում նախատեսված են վարույթային նորմերի առանձնահատկություններ այն դեպքերում, երբ զանցանք կատարած սուբյեկտն իրավաբանական անձն է¹³⁸, 9) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը՝ պատասխանատվություն է պե-

¹³⁸ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), 23.1-րդ հոդվածի 3-րդ մաս, այսպես, որոշ իրավախախտման տեսակների համար, եթե սուբյեկտն իրավաբանական անձն է կամ անհատ ձեռնարկատերը, գործի ենթակայությունը սահմանված է արբիտրաժային դատարանի համար, իսկ եթե նույն իրավախախտումը կատարել է ֆիզիկական անձը, ապա՝ ընդհանուր իրավասության դատարանների համար:

տության առջև՝ ի դեմս լիազորված իրավասու մարմինների, 10) վարչական պատասխանատվության իրավահարաբերություններին մասնակից կողմերն իրավաբանորեն իրավահավասար չեն, նրանց միջև գոյություն չունեն անմիջական ենթակայական հարաբերություններ, 11) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը տարածվում է բոլոր իրավահարաբերությունների վրա՝ անկախ դրանց ճյուղային պատկանելիությունից, որում իր արտահայտությունն է գտնում հասարակական հարաբերությունների կարգավորման վարչաիրավական մեթոդը:

Հարկ է նկատել, որ քննարկվող ինստիտուտի կառուցվածքն իր մեջ ներառում է հանրային և մասնավոր իրավունքի տարրեր: «Իրավաբանական անձ» հասկացությունը և նրա կառուցվածքը սերված են քաղաքացիական իրավունքից, որի նորմերում դրանք մշակվել են բնորոշելու համար այն սուբյեկտներին, ովքեր մասնակցում են քաղաքացիաիրավական հարաբերություններին: Միևնույն ժամանակ վարչական պատասխանատվության ինստիտուտի հիմնարար հասկացություններն ու կառուցվածքը չափազանց մոտ են քրեական իրավունքին, քանի որ երկուսն էլ համարվում են հանրային պատասխանատվության տեսակ, որի էությունն առաջին հերթին իրավախախտում կատարած անձի և նրա վարքագծային փոփոխությունների վրա ներգործելն է, հետագայում նման արարքներ չկատարելու համար:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունն իրեն բնորոշ յուրահատուկ հատկանիշներով տարբերվում է քաղաքացիական պատասխանատվությունից: Նախ, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը հիմնված է միայն օրենքի և ոչ պայմանագրային հարաբերությունների վրա: Երկրորդ՝ այն չի հետապնդում պետությանը հասցված նյութական վնասի փոխհատուցման նպատակ: Երրորդ՝ իրավաբանական անձի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կատարված իրավախախտումը կարող է հիմք է հանդիսանալ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու համար, որին մանրամասն կանդրադառնանք աշխատության 2-րդ գլխում: Չորրորդ՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը, որպես կանոն, արտահայտվում է վարչական տուգանքների տեսքով: Հինգերորդ՝ այն չի սահմանափակվում

միայն պատժելու նպատակով վարչական տույժերի կիրառմամբ: Վարչական պատասխանատվությունը նաև հետապնդում է պետության հանդեպ իրավաբանական անձի կողմից իրենց վրա դրված պարտականությունների կատարում, որոնց կատարումից իրավաբանական անձն ոչ իրավաչափորեն հրաժարվել է:

Իսկ ի տարբերություն քրեական պատասխանատվության՝ նախ այն պակաս խիստ է և չի ենթադրում իրավախախտում կատարած անձի դատվածություն և, երկրորդ, վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթն ավելի պարզ է և օպերատիվ, քան քրեական դատավարությունը:

Այսպիսով, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը՝ իրավաբանական անձանց կողմից կատարված վարչական իրավախախտման համար օրենքով սահմանված կարգով վարչական տույժերի նշանակումն ու կիրառումն է, որն հետապնդում է իրավախախտին պատժելու նպատակ և ապահովում է տվյալ իրավաբանական անձի կողմից օրենքով նրանց վրա դրված պարտականությունների և պետական իրավասու մարմինների պահանջների կատարումը:

Բացահայտել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի էությունը, նշանակում է ի հայտ բերել այն գլխավորը, որոշիչը, որով պայմանավորված է դրա օբյեկտիվ անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակության մեջ: Արդի ժամանակաշրջանի փորձը ցույց է տալիս, որ այսօր դատաիրավական բարեփոխումների մարտահրավերներին համահունչ, խիստ արդիական է դարձել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրորեն ամրագրման և դրա կիրառման հարցերի բացահայտումը: Ուստի ոչ միայն հարկավոր է ներկայացնել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության բնույթը՝ որպես իրավական երևույթի, այլև իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի էությունն առավել խորը բացահայտելու համար, անհրաժեշտ է պարզաբանել նաև դրա անհրաժեշտությունը, կիրառման նպատակներն ու նշանակությունը հասարակության մեջ:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առաջացման կամ «վերածննդի» պատճառները: Իրավաբանական ան-

ձանց հանրային, մասնավորապես վարչական պատասխանատվության գոյության հնարավորության մասին վկայում է այն փաստը, որ, ինչպես արդեն նշվել է աշխատության նախորդ պարագրաֆում, կոլեկտիվ սուբյեկտների հանրային պատասխանատվությունն այս կամ այն ձևով օրենսդրորեն ամրագրված է գրեթե բոլոր պետություններում: Ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գրականության մեջ բազմիցս քննարկվել է կոլեկտիվ սուբյեկտների հանրային (քրեական կամ վարչական) պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության հարցերը, որին առավել մանրամասն անդրադարձել ենք նախորդ պարագրաֆում: Իրավաբանական անձանց հանրային, մասնավորապես վարչական պատասխանատվության անհրաժեշտությունը, կարծում ենք, պայմանավորված է հետևյալ հիմնական փաստարկներով:

Առաջին հերթին, ի տարբերություն պետական կազմակերպությունների, ոչ պետական կազմակերպությունները հաճախ չունեն կառավարման պարզ և հաստատված կառուցվածք, հստակ որոշված չէ աշխատակիցների լիազորությունների ոլորտները, կամ էլ կազմակերպությունները թաքցնում են այն՝ իրենց իսկ շահերից ելնելով: Արդյունքում բարդություններ են առաջանում աշխատակիցների իրավասության ոլորտը ճիշտ որոշելու ժամանակ, իսկ առանց դրա բավական դժվար է պատասխանատվության ենթարկել իրավախախտման անմիջական մեղավորին կամ կոնկրետ պահանջն ավելի վաղ պետք է կատարված լիներ, քան տվյալ կոնկրետ պատասխանատու պաշտոնատար անձանց աշխատանքի անցնելը տվյալ կազմակերպությունում:

Երկրորդ, իրավաբանական անձանց աշխատակիցների վարքագծի առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ իրավաբանական անձի առանձին անդամը՝ աշխատակիցը, պատրաստակամ է խախտել օրենքի պահանջները՝ նախապատվությունը տալով իրավաբանական անձի շահերին, և այն մույնիսկ խրախուսվում է հենց տվյալ իրավաբանական անձի կողմից: Վերջիններս անվանվում են «սպիտակ օձիքներով» իրավախախտներ¹³⁹: Այսպես, օրինակ ԱՄՆ-ում 29 կորպորացիաների ներկայացուցիչները, փոխհամաձայ-

¹³⁹ Առավել մանրամասն տե՛ս Шнайдер Г.Кримнология. М., 1994, էջեր 44-48:

նության գալով միմյանց հետ, բավական բարձր գներով սպառողներին էին մատակարարում էլեկտրական սարքավորումներ՝ դրանով իսկ խախտելով Շերմանի հակամենաշնորհային օրենքը և երկար տարիներ ստանում էին հսկայական գերշահույթ: Արդյունքում, 1960 թ. դատական ակտով մի շարք ընկերություններ (այդ թվում՝ «Ջեներալ էլեկտրիկ» և «Վեսթինգհաուս» հսկա ընկերությունները) տուգանվեցին յուրաքանչյուրը՝ 500.000 ԱՄՆ դոլար, իսկ յոթ աշխատակիցներ (հիմնականում ընկերության փոխնախագահները) դատապարտվեցին մինչև մեկ ամիս կալանքի¹⁴⁰:

Ընդհանրապես արևմտյան գրականության մեջ գերիշխող տեսակետի համաձայն՝ իրավաբանական անձի անդամ հանդիսացող իրավախախտի նկատմամբ անհատական պատիժ սահմանելը տվյալ իրավաբանական անձի համար չի ունենում նախականիչ և դաստիարակչական ազդեցություն, ընդ որում, հարկ է նկատել, որ իրավաբանական անձի առանձի անդամը կարող է և չգիտակցել իր գործողության կամ անգործության հակաօրինական լինելը, իսկ տվյալ իրավաբանական անձը, որպես կանոն, կատարված իրավախախտման արդյունքում բավարար օգուտ է ստանում: Իրավախախտ աշխատակցի կողմից վճարած տուգանքն էլ այս կամ այն կերպ փոխհատուցվում է տվյալ իրավաբանական անձի կողմից: Ինչպես նշում է գերմանացի գիտնական Ռ.Բուշը «Ընկերության քրեական պատասխանատվության հիմնական հարցերը» աշխատությունում, եթե առանձին անհատն այլ պայմաններում չէր իրականացնի հակաիրավական արարք, ապա կոլեկտիվում ներգրավվելու դեպքում այն զսպող շարժառիթները մեղմանում են¹⁴¹:

Ի դեպ, որպես նման վարքագծի դրսևորման պատճառ, կարելի է նշել նաև կոլեկտիվի առանձին անդամի բարոյական և նյութական կախվածությունը տվյալ իրավաբանական անձից: Հետաքրքրական է այս կապակցությամբ հիշատակել Ավստրալիայի Քրեական օրենսգրքի 12.3 հոդվածում ամրագրված իրավաբանական անձի մեղավորության որոշման այնպիսի չափանիշը, ինչպիսին է «այն բանի ապացույ-

¹⁴⁰ Հղումն ըստ համացանցի՝ առավել մանրամասն նման օրինակների կարող եք ծանոթանալ <http://www.iskran.ru/russ/works99/nikero.html>:

¹⁴¹ Տե՛ս Ի. Ի. Իվանով. Административная Ответственность юридических лиц// Российская юстиция. 2001, №3 էջ 24:

ցը, որ կորպորացիայում գոյություն է ունեցել այնպիսի կորպորատիվ մշակույթ, որի պայմաններում այն ուղղորդել, խրախուսել, թույլատրել է չհետևելու համապատասխան կարգադրությանը, կամ էլ ապացույց այն բանի, որ կորպորացիան չի կարողացել ստեղծել և պահպանել այնպիսի կորպորատիվ մշակույթ, որը կնպաստեր համապատասխան կարգադրությանը հետևելուն»¹⁴²:

Երրորդ, որպես իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության անհրաժեշտությունը հիմնավորող պատճառ մի շարք վարչագետ-հետազոտողների կողմից նշվել է ողջ հասարակական կյանքում իրավաբանական անձանց ազդեցությունը, նրանց թվի մեծացումը, պետության ներազդեցությունից վերջիններիս դուրս գալը, նյութական ռեսուրսների ավելի ու ավելի մեծ քանակության կենտրոնացումն իրավաբանական անձանց ձեռքում: Որպես հետևանք այս ամենին՝ մեծանում է նրանց կողմից չարաշահման հնարավորությունը, բարձրանում է դրանց գործունեության հասարակական վտանգավորությունը¹⁴³ և նվազում են իրավաբանական անձանց վրա պետության և հասարակության ներգործության հնարավորությունները¹⁴⁴: Ինչպես նշում է Վ. Ի. Գիմչենկոն. «...Տնտեսական գործունեության մեջ ձեռնարկությունների իրավունքների զգալի ընդլայնումը ենթադրում է՝ ձեռնարկությունների պատասխանատվության բարձրացում»¹⁴⁵:

Չորրորդ՝ առաջնային պատճառներից մեկը նաև «բյուջեի համալրման» անհրաժեշտությունն է, ու չնայած վարչական պատասխանատվությունը չի կրում իրավավերականգնիչ, փոխհատուցող բնույթ, նշված նպատակը, այնուամենայնիվ, անուղղակիորեն առկա է:

¹⁴² Տե՛ս Уголовный кодекс Австралии 1995 года / И.Д. Козочкип, Е. Н. Трикоз. - СПб., 2002, էջ 92:

¹⁴³ Տե՛ս Мальцев В. В. Пикуров И. И., Сенцов А. С., Шепельков В. Ф. Рецепия на: Михеев Р. И., Корчагин Г. А., Шевченко А. С, Уголовная ответственность юридических лиц: за и против. - Владивосток: Издательство Дальневосточного университета, 1999 // Журнал Российского права, 2000, էջեր 263-264.

¹⁴⁴ Տե՛ս Никифоров А. С. Юридическое лицо как субъект преступления //Государство и право. 2000, №8, էջեր 18-27:

¹⁴⁵ Տե՛ս Дымченко В.И., Административная ответственность организаций, дисс. к.ю.н., 1983, Свердловск, էջեր 27-28:

Հինգերորդ, դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նաև իրավաբանական անձի կոնկրետ ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու անհնարինությունը, և անհրաժեշտությամբ՝ ներգործելու այն տնտեսվարող սուբյեկտների վրա, որոնք չեն գտնվում պետական անմիջական կառավարման և ենթակայության տակ:

Եվ վերջապես, կարծում ենք, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության խնդիրների համալիր, ամբողջական լուծումն ապահովելու, ինչպես նաև պատճառված բացասական հետևանքները հնարավորինս համարժեք բացառելու և խախտված իրավունքները վերականգնելու համար: Մասնավորապես, սույն ֆիզիկական անձանց պատասխանատվությունն ի գործու չէ վերականգնելու մրցակցության ազատության սկզբունքի խախտման հետևանքներով խախտված հավասարակշռությունը և այլն:

Իրավաբանական գրականության մեջ վերը ներկայացվածի վերաբերյալ առկա հակադիր տեսակետները հանգում են հետևյալին:

Արտասահմանյան գիտնականների կողմից իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության անհրաժեշտությանը դեմ արտահայտված հիմնական փաստարկը կայանում է նրանում, որ «քանի որ իրավաբանական անձն ուղղակի կամ անուղղակի գործում է իր ներկայացուցիչների միջոցով, ապա նրա արարքը չի կարող ունենալ այսպես կոչված «հոգեբանական հատկանիշ», այսինքն՝ իրավաբանական անձը չի կարող մեղադրվել հակաիրավական արարքի կազմակերպման կամ կատարման մեջ: Այս փաստարկի կողմնակիցները՝ որպես հետևանք տեսնում են «իրավաբանական անձի կեղծ լինելը»¹⁴⁶: Կարծում ենք, իրավաբանական անձի կողմից իրավախախտում կատարելու մեջ մեղավորության և դրա հաստատման հնարավորության հարցը համարվում է լուծելի, չնայած, որ այն չի համընկնում մեղավորության

¹⁴⁶ Տե՛ս օրինակ՝ Черкаев Д. И. Административная ответственность юридических лиц // Законодательство. 2001. №11, էջեր 51-59, Аппакова Т. А. Проблемы административной ответственности юридических лиц// Вестник Высшего Арбитражного Суда Российской Федерации. 2003. №1. էջեր 123-131:

րության ավանդական որոշման հետ՝ որպես կատարածի և դրա հետևանքների նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունք: Այսինքն՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու անհնարինության հիմնական փաստարկ է համարվում իրավաբանական անձանց մեղավորության օրենսդրական ամրապնդման բացակայությունը¹⁴⁷: Հաջորդիվ աշխատության 2-րդ գլխում մանրամասն կներկայացնենք այս հիմնախնդիրը:

Հաջորդ փաստարկը կապված է պատժի անհատականացման և անձնական պատասխանատվության սկզբունքների հետ: Անթույլատրելի է կոլեկտիվի անդամներից մեկի գործողության համար ողջ կոլեկտիվի վրա տարածել իրավախախտման անբարենպաստ հետևանքները: Ի հակադրումն նշվածի՝ արտասահմանյան գիտնականների մյուս մասի կարծիքով այս փաստարկն հիմնավոր չէ: Ըստ Միշել Ռասսայի՝ հակառակ որոշումը կհանգեցնեք ավելի ծանր հետևանքների, երբ գործած իրավախախտման համար իրավաբանական անձի փոխարեն պատասխանատվություն կրեին միայն նրա ղեկավարները¹⁴⁸:

Ի հավելումն վերոգրյալի՝ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության ենթարկելու դեմ որպես փաստարկ է նշվում է նաև այն, որ իրավաբանական անձանց նկատմամբ չի կիրառվում պատժամիջոցների ավանդական տեսակները, իսկ կիրառման դեպքում՝ դրանց առջև դրված համընդհանուր նպատակների անհամապատասխանությունը¹⁴⁹: Կարծում ենք, նշվածը նույնպես հիմնավոր չէ, քանի որ եթե ավանդական պատժամիջոցներից մի քանիսը, օրինակ, ազատագրվման դատապարտելը, չի կարող կիրառվել իրավաբանական անձանց նկատմամբ, և խնդիրն այստեղ ավելի շուտ կազմակեր-

¹⁴⁷ Այս հիմնախնդիրը մանրամասն ներկայացված է աշխատության 2-րդ գլխում:

¹⁴⁸ Տե՛ս M. Rassat M.-L. Droit penal. Paris, 1987, էջեր 492-493/ Приведено по: Крылова Н. Е. Уголовная ответственность юридических лиц по Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник МГК. Серия 11. Право. 1998. № 3. էջեր 73-74:

¹⁴⁹ Տե՛ս Mc Adams J. The Appropriate Sanctions for Corporate Criminal Liability // University of Cincinnati Law Review. 1997/Цит. по: Никифоров А. С. Юридическое Лицо как субъект преступления //Государство и право. 2000. №8. էջեր 18-27, Таганцев Н. С. Русское уголовное право. Часть общая. Т.1.-Тула, 2001, էջ 371:

պական և գործնական բնույթի է, ապա բազմաթիվ այլ պատժամիջոցների կիրառումը հնարավոր է: Իրավաբանական անձի նկատմամբ կարող են կիրառվել բոլոր տեսակի գույքային և կազմակերպական պատժամիջոցները, օրինակ՝ տուգանքը, հարկադիր լուծարումը, և այլն: Պատիժը կարող է վերաբերել նաև նրա հեղինակությանը, օրինակ՝ դատավճռի հրապարակում¹⁵⁰:

Վերը նշված տեսակետների համադրումը, թույլ է տալիս եզրակացնելու, որ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության դեմ արտահայտված փաստարկները հիմնավոր կերպով չեն ժխտվում այդ ինստիտուտի անհրաժեշտությունը հիմնավորող գիտնականների կողմից: Միաժամանակ թե՛ դեմ և թե՛ կողմ փաստարկները բավական ծանրակշիռ են: Հարկ է նկատել, որ այս կամ այն կողմից կազմավորումների հանրային պատասխանատվության գոյության ողջ ընթացքում, հընթացս՝ տնտեսության ազատականացման, շուկայական հարաբերությունների աճին, այնուամենայնիվ, քաղաքակիրթ հասարակության և գիտական հարթության վրա դեռևս չեն դադարում վեճերն իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության սահմանման նպատակահարմարության և դրա առանձին հարցադրումների կարգավորման հիմնախնդիրների շուրջ: Սակայն, հիմք ընդունելով վերը նշված բոլոր տեսական մեկնաբանություններն քննարկվող հիմնախնդրի շուրջ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրորեն միասնական ամրագրումը, հիրավի, դարձել է ժամանակի հրամայական, մասնավորապես, ազատականացված տնտեսություն ձևավորելու, առողջ մրցակցություն ապահովելու և բարեխիղճ մրցակցություն ապահովելու տեսանկյունից՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց թվի աճը, պետության ներագրեցությունից վերջիններիս դուրս գալը, նյութական ռեսուրսների ավելի ու ավելի մեծ քանակության կենտրոնացումն իրավաբանական անձանց մոտ, դրանց գործունեության հասարակական վտանգավորությունը և տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական ոլորտներում իրավախախտումների արդյունքում

¹⁵⁰ Տե՛ս Крылова Н. Е. Уголовная ответственность юридических лиц по Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник МГК. Серия 11. Право. 1998. № 3, էջ 74:

պատճառված վնասի, խախտված հավասարակշռությունը վերականգնելու անհրաժեշտությունը:

§4. Իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի առանձնահատկությունները

Ինչպես արդեն նշել ենք նախորդ պարագրաֆում, վարչական պատասխանատվությունը, որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ, առանձնանում է նաև իր սուբյեկտներով, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն ֆիզիկական անձինք, այլև կոլեկտիվ կազմավորումները:

Գործող օրենսգրքի դրույթները բացառապես վերաբերում են ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվությանն առնչվող իրավահարաբերություններին¹⁵¹: Իսկ նոր օրենսգրքի նախագծում, արդարացիորեն տրված է վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների՝ գործող օրենսգրքի կարգավորումից տարբերվող բոլորովին այլ կարգավորում և առանձին հոդվածում սահմանված է վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների՝ գործող դրույթներից տարբերվող վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների այլ շրջանակ: Մասնավորապես, ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 30-րդ հոդվածի՝¹⁵² վարչական պատասխանատվության սուբյեկտներն են՝ 1) ֆիզիկական անձինք (ՀՀ քաղաքացիները, օտարերկրացիները¹⁵³, 2) ան-

¹⁵¹ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին), 12-16-րդ հոդվածները:

¹⁵² Տե՛ս հղումն ըստ համացանցի՝ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4516&Reading=0>:

¹⁵³ Տե՛ս 2006 թ. դեկտեմբերի 25-ին ընդունված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ըստ որի՝ օտարերկրացիներ հասկացության մեջ ներառվում են օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

հատ ձեռնարկատերերը, 3) իրավաբանական անձինք, 4) պաշտոնատար անձինք, 5) զինծառայողները¹⁵⁴:

Աշխատության մեջ լուսաբանվելու է միայն իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի առանձնահատկությունները:

Որպես այդպիսին իրավաբանական անձի գաղափարը ծագել է դեռևս Հին Հռոմում՝ համայքների, կոլեգիաների ձևով և այլն: Ընդ որում, «իրավաբանական անձ» հասկացությունը հռոմեական իրավաբաններին ծանոթ չէր, սակայն նրանց է պատկանում մասնավոր սուբյեկտների շրջանակի ընդլայնումը՝ ի թիվս կոլեկտիվ միավորումների, կազմակերպությունների¹⁵⁵: Տնտեսական բուռն զարգացումը 19-րդ դարի կեսերին իր մեծ ազդեցությունը ունեցավ նաև իրավաբանական անձանց տեսական զարգացման վրա և առաջացան իրավաբանական անձանց խնդիրներին վերաբերող գերմանացի և ֆրանսիացի քաղաքագետների՝ Սավինիի, Հերինգի, Գիրկեի, Դեռնբուրգի և այլոց հետազոտություններ, որոնք էլ դրեցին այս ինստիտուտների ժամանակակից հասկացության հիմքերը¹⁵⁶: 20-րդ դարում իրավաբանական անձի ինստիտուտի նշանակությունն առավել մեծացավ ձեռնարկատիրական գործունեության միջազգայնացման, տնտեսության մեջ պետական միջամտության ընդլայնման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների առաջացման արդյունքում և զուգահեռ քաղաքացիական իրավունքի գիտությունը մշակեց իրավաբանական անձի հասկացությունն ու հատ-

¹⁵⁴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում սուբյեկտների շրջանակն արդարացիորեն ընդլայնվել է ներառելով՝ նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև՝ իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրական տեխնիկայի դրույթներին համահունչ՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրացիները միավորվել են մեկ սուբյեկտի՝ ֆիզիկական անձ հասկացության մեջ:

¹⁵⁵ Տե՛ս օրինակ, Новицкий И. Б. Римское право. - М., 1993, էջեր 58,60; Суворов Н. С. Об юридических лицах по римскому праву. - М., 2000; Грешников И.П. Субъекты гражданского права: юридическое лицо в праве и законодательстве. - СПб., 2002. էջեր 127-131; Дождев Д.В. Римское частное право, учебник, М.,1996, էջեր 268-272:

¹⁵⁶ Տե՛ս Гражданское право. Том 1, П. Сергеев, 10. К.Толстой.- М., изд-во Проспект, 2008. էջ 141, Ельяшевич В.Б. Юридическое лицо, его происхождение и функции в римском частном праве.1910:

կանիշները:¹⁵⁷ Տեսության մեջ իրավաբանական անձը բնորոշվում է որպես կազմակերպություն, որը, որպես սեփականություն, լրիվ տնտեսվարման կամ օպերատիվ կառավարման իրավունքով ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, հայցվոր կամ պատասխանող լինել դատարանում, միջնորդ դատարանում¹⁵⁸:

Իրավաբանական անձ հասկացության բնորոշման, նրա հատկանիշների մանրամասն բնութագրման և նրա առանձին տեսակների ուսումնասիրությունը բավական խորությամբ ուսումնասիրվել է քաղաքացիական իրավունքի գիտության կողմից: Ուստի դուրս չգալով քննարկվող հիմնախնդրի շրջանակներից՝ հարկ է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 3-րդ հոդվածի 19-րդ կետում սահմանված է նաև նախագծում օգտագործվող «իրավաբանական անձի» հասկացությունը: Մասնավորապես՝ իրավաբանական անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված անձն է¹⁵⁹, այդ թվում՝ իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, օտարերկրյա կազմակերպությունը (օտարերկրյա կամ միջազգային կազմակերպության ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը):

Ինչպես բխում է վերոգրյալից «իրավաբանական անձի» կառուցվածքը մշակվել է քաղաքացիական իրավունքի շրջանակներում՝ որ-

¹⁵⁷ Տե՛ս ԵՒ ՕՕՁ Ի .Ն. Διαçæðèà òèàèèèñðè-áñèîé ì ùñèè á ÑÑÑÐ (=áñòü 1 è 2), Ի ., 1975, էջ 127: Өëð. ìĭ Аникеенко, Ю. Б. Административная ответственность юридических лиц: Материально-правовое исследование: Авторефер. дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук. - Екатеринбург, 2005:

¹⁵⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 111:

¹⁵⁹ Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

պես իրավաբանական հնարք, որը թույլ է տալիս քաղաքացիական շրջանառությունում համատեղ հանդես եկող ֆիզիկական անձանց ամբողջությունը դիտարկել որպես ինքնուրույն սուբյեկտ: Ի դեպ, «իրավաբանական անձ» հասկացությունը, սերվելով քաղաքացիական իրավունքից, չի կորցնում քաղաքացիական իրավունքի կարգավորմանը բնորոշ տարրեր նաև վարչաիրավական հարաբերությունների կտրվածքով:

Հարկ է նկատել, որ վարչական պատասխանատվության վերը թվարկված սուբյեկտներին միավորում են մեկ ընդհանուր առանձնահատկություն. այն է՝ ունենալ վարչական իրավասուբյեկտություն՝ վարչական իրավունակություն և վարչական գործունակություն: Վարչական իրավասուբյեկտությունն ենթադրում է վարչաիրավական հարաբերությունների մեջ մտնելու հնարավորություն, այսինքն՝ իրավաբանական իրավունքների և պարտականությունների կրող պետական կառավարման ոլորտում, քանզի միայն այն անձը, ով օժտված է իրավասուբյեկտությամբ, համարվում է իրավունքի սուբյեկտ, կարող է մտնել կոնկրետ իրավահարաբերությունների մեջ, կրել սուբյեկտիվ իրավունքներ և իրավաբանական պարտականություններ:

Վարչական իրավունակությունը՝ ընդհանուր իրավունակության արտահայտությունն է, այսինքն՝ տվյալ սուբյեկտի հնարավորությունն է մտնելու տարբեր տեսակի իրավահարաբերությունների մեջ, ունենալ սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ: Իրավաբանական անձանց իրավունակությունը չի համարվում դրա հիմնադիրների իրավունակության «վերափոխում»¹⁶⁰, իրավաբանական անձինք օժտված են իրենց հատուկ սեփական իրավունակությամբ: Ի դեպ նշենք նաև, որ իրավունակությունը կարող է լինել ընդհանուր և հատուկ¹⁶¹: Իրավա-

¹⁶⁰ Ст'ю Грешников И. П. Субъекты гражданского права: юридическое лицо в праве и законодательстве /И. П. Грешников.—Спб.: Юридический центр Пресс, 2002. էջեր 124, 148-152:

¹⁶¹ Առավել մանրամասն տե՛ս Комментарий части первой Гражданского Кодекса РФ для предпринимателей / М. И. Брагинский. - М., 1995. էջ 78; Попова Ж. Л. Правовые проблемы легитимации предпринимательства// Государство и право. 1997. №5. էջ 46. Братусь С. Н. Советское гражданское право. Субъекты гражданского права. - М., 1984. էջ 7; Петров Г. И. Административная правосубъектность граждан СССР//Правоведение. 1975. №1. էջ 24:

բանական անձը, ի տարբերություն ֆիզիկական անձի, օժտված է ոչ թե ընդհանուր, այլ հատուկ իրավունակությամբ, քանի որ նա կարող է ձեռք բերել այնպիսի իրավունքներ և կրել այնպիսի պարտականություններ, որոնք անհրաժեշտ են իր հիմնադրման փաստաթղթերով կանխորոշված նպատակների իրականացման համար:

Վարչական գործունակությունը՝ ունակություն է սեփական գործողություններով ձեռք բերելու իրավաբանական պարտականությունների և իրավունքների համապատասխան համալիր և պատասխանատվություն կրել դրանց իրականացման համար¹⁶²: Այլ կերպ ասած՝ վարչական իրավունակությունը կոնկրետ վարչաիրավական հարաբերությունների շրջանակներում գործնականում իրականացնելու ունակությունն է: Կազմակերպությունների գործունակությունը որոշակիորեն սահմանափակվում է այս կամ այն գործունեությամբ զբաղվելու իրավունքի թույլտվություն ստանալու անհրաժեշտությամբ: Այն կարող է դրսևորվել արտոնագրի, լիցենզիայի կամ այլ՝ օրենքով սահմանված որոշ պայմաններին հետևելու ձևով: Ընդ որում, եթե ֆիզիկական անձանց դեպքում վարչական իրավունակության և վարչական գործունակության ծագման պահերը չեն համընկնում¹⁶³, իրավաբանական անձանց դեպքում վարչական իրավասուբյեկտության վերը նշված երկու տարրերը ծագում են միաժամանակ, մասնավորապես՝ իրավաբանական անձանց գործունակությունը ծագում է իրավունակության հետ միասին՝ նրա ստեղծման պահին:

Հարկ է նկատել, որ իրավաբանական անձը ստեղծված է համարվում և նրա իրավունակությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի և 56-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ծագում է պետական գրանցման պահից: Իսկ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստո-

¹⁶² Ст'ю Грешников И. П. «Վարչական իրավունքը ՀՀ իրավական համակարգում (ըստսխոս. կուրս)» Երևան, Հեղինակային հրատարկչություն, 2006, էջ 73,160:

¹⁶³ Ֆիզիկական անձանց իրավունակությունն առաջանում է ծննդյան պահից, իսկ գործունակությունը որոշակի տարիքում. ամբողջ ծավալով 18 տարեկանից, առանձին դեպքերում 16 տարեկանից, օրինակ վարչական պատասխանատվության ֆիզիկական անձը կարող է ենթարկվել 16 տարին լրանալու պահից:

րաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի¹⁶⁴ 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձն ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից, իսկ նրա գործունեությունը դադարած՝ գործունեության դադարման պետական գրանցման պահից: Իսկ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն, պետական գրանցումը համարվում է ստեղծվող իրավաբանական անձի իրավունակության ճանաչում պետության կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ իրավաբանական անձանց վարչական իրավասուբյեկտությունը ծագում է տվյալ իրավաբանական անձի պետական գրանցման պահից:

Այսպիսով, իրավասուբյեկտությունը համարվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի անհրաժեշտ իրավաբանական հատկություն և պայմանավորված է կատարած վարչական գանցանքի համար պատասխանատվություն կրելու ունակությամբ: Իրավախախտում կատարելու պահին անձը պետք է ունենա իրավասուբյեկտություն, իսկ այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս բնորոշել անձի իրավասուբյեկտությունը, ամրագրվում են իրավունքի նորմերով: Ուստի հարկ է որոշել այն հատկանիշները, որոնց պետք է համապատասխանի կոլեկտիվ սուբյեկտը, որպեսզի ունենա իրավասուբյեկտություն:

Նախ հարկավոր է որոշել՝ արդյո՞ք իրավաբանական անձի քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կազմակերպա-իրավական ձևը կարող է նշանակություն ունենալ վարչական պատասխանատվության ենթարկելիս և արդյոք բոլոր կոլեկտիվ սուբյեկտները կարող են կրել վարչական պատասխանատվություն:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի և այլ իրավական ակտերի օրենսդրական վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ օրենսդիրը որևէ տարանջատում չի դնում հիմքում դնելով տվյալ իրավաբանական անձի կազմակերպա-իրավական ձևը: Ընդ որում, նշված նախագծի «Օրենքի առջև

¹⁶⁴ Տե՛ս «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 2001 թ. ապրիլի 3-ին):

հավասարության սկզբունքը» վերտառությամբ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձն ենթակա է վարչական պատասխանատվության անկախ իր գտնվելու վայրից, *կազմակերպական իրավական ձևից*, հիմնադիրների (մասնակիցների) իրավական վիճակից կամ գտնվելու վայրից, իրականացվող գործունեության տեսակից, նպատակներից, խնդիրներից կամ այլ հանգամանքներից:

Միևնույն ժամանակ նշված նախագծի հատուկ մասի 363-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում միայն հիմնադրամների համար նրա կողմից հաշվետվությունը թերի հրապարակելու, կամ չհրապարակելու, հրապարակելու մասին չճանաչելու, ինչպես նաև հասարակական կազմակերպության կողմից որոշումների պատճենները չտրամադրելու համար: Այսինքն՝ ինչպես տեսնում ենք օրենսդիրը նախագծի հատուկ մասում առանձնացրել է նաև *հատուկ սուբյեկտի*՝ ի դեմս հիմնադրամների, այլ կերպ ասած՝ եթե իրավաբանական անձը չունի հիմնադրամի կարգավիճակ, հետևաբար նա չի կարող լինել տվյալ իրավախախտման սուբյեկտ:

Կարծում ենք, բացի վերոշարադրյալից, կազմակերպաիրավական ձևը կարող է մեծ նշանակություն ունենալ իրավաբանական անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելիս: Մասնավորապես, օրինակ, չի կարող տուգանքի չափը նույն վարչական իրավախախտման համար նույնը լինել մի դեպքում, երբ իրավախախտումը կատարել է բարեգործական հիմնադրամը, որը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում, մեկ այլ դեպքում առևտրային գործունեություն իրականացնող և հսկայական շահույթներ ստացող որևէ իրավաբանական անձը, որն ի վիճակի է վճարելու տուգանքի բարձր չափը: Ուստի կարծում ենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի «Վարչական տույժի նշանակման ընդհանուր դրույթները» վերտառությամբ 56-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. *Իրավաբանական անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելիս հաշվի են առնվում վարչական իրավախախտման բնույթը, իրավաբանական անձի գույքային դրությունը, կազմակերպաիրավական ձևը, ինչպես նաև սույն օրենսգրքով նախա-*

տեսված վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:»:

Ինչպես նշեցինք վերևում, հարկավոր է որոշել՝ արդյո՞ք բոլոր կոլեկտիվ սուբյեկտները կարող են կրել վարչական պատասխանատվություն: Արտասահմանյան երկրներում, որտեղ օրենսդրորեն ամրագրված է կոլեկտիվ սուբյեկտների հանրային պատասխանատվություն, որպես սուբյեկտ ամրագրված են ոչ միայն իրավաբանական անձինք, այլ նաև ոչ առևտրային միավորումները, ինչպես նաև պետական և մունիցիպալ մարմինները, հանրային իրավաբանական անձինք և հասարակական կազմակերպությունները:

Այսպես, օրինակ, Ֆրանսիայի 1992 թ. քրեական օրենսգրքի 121.2 հոդվածը սահմանելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, բացառություն է սահմանել հանրային իրավաբանական անձանց, պետության և քաղաքական կուսակցությունների և պրոֆմիությունների համար: Իսկ տեղական ինքնակառավարման մարմինները ենթարկվում են քրեական պատասխանատվության միայն այն իրավախախտումների համար, որոնք իրականացրել են հանրային ծառայություն պատվիրակված լիազորությունների իրականացման ժամանակ¹⁶⁵: Այսինքն՝ պատասխանատվության կարող են ենթարկվել ինչպես առևտրային գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձինք, այնպես էլ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային իրավունքի բնագավառի իրավաբանական անձինք՝ պետական իշխանության մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները, եթե նրանք իրականացնում են պետության կողմից պատվիրակված լիազորություններ:

ԱՄՆ-ում ամրագրելով «միավորում» տերմինը, որը կարող է կրել քրեական պատասխանատվություն, օրենսդիրը նկատի ունի ցանկացած իրավաբանական անձ, բացառությամբ այն հիմնարկների, որոնք հիմնադրված են կամ ղեկավարվում են կառավարության կողմից կա-

¹⁶⁵ Տե՛ս Уголовный кодекс Франции /Л. В. Головки, Е. Н. Крылова. - СПб., 2002. էջ 77:

ռավարության ծրագրի իրականացման համար¹⁶⁶: Իսկ Անգլիական իրավունքի համաձայն՝ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել այնպիսի կորպորացիաները (միավորումները), ինչպիսիք են չկոպերացված միավորումները, հանրային կորպորացիաները կամ տեղական ինքնակառավարման մարմինները¹⁶⁷:

Ինչպես բխում է ՉԺՀ ԶՕ 30 հոդվածի դրույթներից, պատասխանատվության ենթարկելու համար չի պահանջվում իրավաբանական անձի կարգավիճակ, պատասխանատվություն կարող է կրել նաև կոլեկտիվը, ինչպես նաև հիմնարկը¹⁶⁸: Իսկ Նորվեգիայի Քրեական օրենսգրքի 48-րդ պարագրաֆի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում կազմակերպություն, հասարակական կամ այլ միավորում, հիմնադրամները, մեկ անձի կողմից հիմնադրված ձեռնարկություն¹⁶⁹: Խորվաթիայի «Չանցանքերի մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված է, որ սույն օրենքի դրույթները կիրառելի են նաև իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների նկատմամբ: Իսկ 62-րդ հոդվածի համաձայն՝ Խորվաթիայի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում վարչական իրավախախտումների համար, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվության են կրում այն վարչական իրավախախտումների համար, որոնք կապված չեն իրենց իշխանական լիազորությունների իրականացման հետ¹⁷⁰: Նման բացառություն նախատեսված է նաև Մակեդոնիայի «Չանցանքերի մասին» 1997 թ. օրենքի 7-րդ հոդվածով՝ այն տարածելով պետության, պետական իշխանության և տեղական ինքնակառա-

¹⁶⁶ Տե՛ս Уголовное законодательство зарубежных стран (Англии, США, Франции, Германии, Японии). Сборник законодательных материалов/И. Д. Козочкин. - М., 2001. էջ 100:

¹⁶⁷ Տե՛ս Уголовное право зарубежных государств. Общая часть/ И. Д. Козочкин. -М., 2001. էջ 45:

¹⁶⁸ Տե՛ս Уголовный кодекс Китайской Народной Республики/ Л.П. Коробеев. Владивосток, 1999, էջ 16:

¹⁶⁹ Տե՛ս Նորվեգիայի Թագավորության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1902թ. մայիսի 22-ին):

¹⁷⁰ Տե՛ս Խորվաթիայի Հանրապետության զանցանքերի մասին օրենսգիրք, (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին):

վարման մարմինների վրա¹⁷¹: Համանման իրավական կարգավորում է տրված նաև Լիտվայում¹⁷², Էստոնիայում¹⁷³, Մոլդովայում¹⁷⁴ և այլն:

ՌԳ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1 հոդվածով¹⁷⁵ վարչական պատասխանատվության սուբյեկտը սահմանվում է իրավաբանական անձը: Այսինքն՝ ՌԳ օրենսդրության համաձայն իրավաբանական անձանցից բացի այլ հավաքական սուբյեկտները չեն կարող կրել վարչական պատասխանատվություն:

Բոլորովին տարբերվող իրավակարգավորում է սահմանված Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, որում իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները (*մասնաճյուղ և ներկայացուցչություն*), հանդիսանալով ինքնուրույն հարկատուներ, հարկային իրավախախտումներ կատարելու համար կրում են վարչական պատասխանատվություն իրավաբանական անձանց համար սահմանված կարգով: Ընդ որում, օտարերկրյա և միջազգային ոչ առևտրային ոչ կառավարական միավորումների առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղ և ներկայացուցչություն) կրում են վարչական պատասխանատվություն հասարակական միավորումների մասին օրենսդրության դրույթները խախտելու համար իրավաբանական անձանց համար նախատեսված կարգով¹⁷⁶:

Այսպիսով, արտասահմանյան երկրների օրենսդրությունը նախատեսում է հավաքական սուբյեկտների հանրային պատասխանատվություն ինչպես այն կոլեկտիվ սուբյեկտների համար, որոնք ունեն որևէ

կազմակերպական կարգավիճակ, այնպես էլ այն սուբյեկտների համար, որոնք չունեն որևէ կազմակերպական-իրավական կարգավիճակ:

Հարկ է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում իրավաբանական անձ հասկացությունը ներառում է նաև իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, օտարերկրյա կազմակերպությունը (օտարերկրյա կամ միջազգային կազմակերպության ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը): Ի դեպ, նշված օրենսգրքի նախագծում որևէ բացառություն նախատեսված չէ պետության և համայնքների համար: Կարծում ենք, սակայն, որ այս օրենսդրական բացը պետք է վերացնել մինչ նախագծի ընդունվելը՝ տարաբնույթ իրավական մեկնաբանություններից խուսափելու համար՝ նախագծի «Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն» վերտառությամբ 14-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխան բացառություն սահմանելով: Նշվածը, պետք է հիմնավորել նաև նրանով, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների համաձայն՝ ՀՀ և համայնքների նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից:

Կարծում ենք, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար բացառության սահմանումը կարող է, սակայն հակասության մեջ մտնել, 2011 թ. փետրվարի 8-ին ընդունված «ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով տրված այն կարգավորմանը, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմում ներկայացնել վարչական դատարան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին (պաշտոնատար անձին) վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Այս ինստիտուտի ամրագրումը, անշուշտ, չի կարող իրավաչափ համարվել, թերևս, հետևյալ նկատառումներով՝ 1) հակասում է վարչական պատասխանատվության նպատակներին այն առումով, որ արդյունքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը դիմում է պաշտոնատար անձին պատասխանատվո-

¹⁷¹ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք, (ընդունվել է 1997թ.):

¹⁷² Տե՛ս Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), 20-րդ հոդված 5-րդ մաս:

¹⁷³ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), 14-րդ հոդվածի 3-րդ մաս:

¹⁷⁴ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), 17-րդ հոդված:

¹⁷⁵ Տե՛ս Ռուսաստանի Գաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին):

¹⁷⁶ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), 36-րդ հոդվածի 4-րդ մաս, 37-րդ հոդված:

յան ենթարկելու դրանով իսկ չի պաշտպանում կամ չի վերականգնում իր խախտված իրավունքները և ինչպես պաշտոնատար անձը հանդես չի գալիս որպես պետության հանրային շահերը պաշտպանելու գործառույթ իրականացնող անձ: Օրինակ՝ պաշտոնատար անձի նկատմամբ վարչական տուգանքի նշանակման դեպքում այն վճարվում է պետական բյուջե, ուստի ֆիզիկական կամ իրավաբանական անձն որևէ շահագրգռվածություն չի կարող ունենալ մման հայցադիմում դատարան ներկայացնելու համար, 2) այս համատեքստում հարկ ենք համարում նշել նաև, որ նշված օրենսդրական նոր կարգավորումն իր համալիր լուծումը չի ստացել նաև դատական ծախսերը կրելու դեպքում: Այսպես, Վարչական դատավարության ՀՀ օրենսգրքի «Դատական ծախսերի բաշխումը դատավարության մասնակիցների միջև» վերտառությամբ 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն, երբ պատասխանող է հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ: Այս կետում օրենսդիրը պետք է կատարեր համապատասխան լրացում, հետևյալ բովանդակությամբ. «կամ եթե պատասխանողը ենթարկվել է վարչական պատասխանատվության ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումով», 3) նշված իրավակարգավորման հիմնավորման մեջ վկայակոչված է նաև Սահմանադրական դատարանի որոշումը¹⁷⁷, որում թերևս բացակայում է նման իրավակարգավորման անհրաժեշտության մասին որևէ դրույթ:

Այսպիսով, կարծում ենք, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում տրված քննարկվող իրավակարգավորումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի և ներկա դատաիրավական բարեփոխումների փուլում պետք է վերանայվի:

Ինչպես, արդեն նշեցինք, նախագծի իրավակարգավորումից բխում է, որ իրավաբանական անձ հասկացությունը սույն օրենսգրքի կիրառության տեսանկյունից ընդգրկում է նաև մասնաճյուղերն ու ներ-

¹⁷⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. փետրվարի 5-ի ՄԳ-Ո 864 որոշում, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf>:

կայացուցչությունները: Ընդ որում, արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ ՀՀ միակ բացառությունը չէ թերևս, որ նախատեսել է քաղաքացիական օրենսգրքով տրված իրավաբանական անձանցից բացի, իրավաբանական անձ հասկացության շրջանակում նաև մասնաճյուղերին և ներկայացուցչություններին:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը, իսկ մասնաճյուղն իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները¹⁷⁸: Վերջիններս իրավաբանական անձինք չեն և գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա:

Իրերի նման դասավորությունն առաջին հայացքից կարող է նույնիսկ անարդար թվալ, քանի որ այն կոլեկտիվ սուբյեկտները, որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, չեն կարող մտնել վարչական իրավահարաբերությունների մեջ, ու խախտելով պետության կողմից սահմանված պահանջները նրանք չեն կարող ենթարկվել ինքնուրույն պատասխանատվության: Եթե այս մտահոգությունը կարող է ներկայացուցչության պարագայում արդարացի համարվել, ապա մասնաճյուղերի դեպքում, բնավ, այդպես չէ, և այն պարզ պատճառաբանությամբ, որ վերջինս հիմնականում իրականացնում է իրեն ստեղծող իրավաբանական անձի գործառույթներ և նրա գործունեության ոլորտն ավելի ընդարձակ է: Հետևաբար, կարծում ենք, օրենսդրի այսպիսի սահմանումը բավարար հիմնավորում ունի: Վարչական իրավախախտում կարող են կատարել նաև այնպիսի կոլեկտիվ սուբյեկտներ, որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Ենթադրվում է, որ այդպիսի սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելիս հնարավոր է առաջանան կազմակերպչական բնույթի բարդություններ, որոնք կարող են և անլուծելի լինել, քանի որ նրանք օժտված չեն այնպիսի հատ-

¹⁷⁸ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին) հոդված 61:

կանիչներով, ինչպիսիք են՝ բանկում հաշիվ բացելու հնարավորությունը, իրավաբանական հասցեի, սեփական առանձին ունեցվածքի առկայությունը և այլն: Օրինակ, պարզ չէ, ինչ կերպ հաստատել տվյալ կազմակերպության ներկայացուցչի մոտ լիազորությունների առկայությունը, ինչպես իրականացնել նշանակված տույժը, եթե այն չունի ոչ հաշվարկային հաշիվ, ոչ առանձնացված ունեցվածք և այլն: Իսկ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հավաքական սուբյեկտների միակ տեսակը, որը միաժամանակ ունի առանձնացված ունեցվածք, հաշվարկային հաշիվ, աշխատողների հաստիքացուցակ և այլն, մասնաճյուղերն ու ներկայացուցչություններն են:

Այլ կերպ ասած՝ մասնաճյուղերն ու ներկայացուցչություններն օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք թույլ են նրանց ինքնուրույն պատասխանատվություն կրել: Նրանք անձանց կոլեկտիվ են, բնութագրվում են կազմակերպչական առանձնացվածությամբ, ներքին կառուցվածքով, կարող են հանդես գալ իրենց անունից և այլն: Այսինքն՝ նրանց պարագայում չեն առաջանում կազմակերպչական այնպիսի բարդություններ, որոնք խոչընդոտում են իրավաբանական անձ չհամարվող մնացած բոլոր կոլեկտիվ սուբյեկտներին վարչական պատասխանատվության ենթարկելիս: Մի կողմից դա հիմք է տալիս՝ ենթադրելու, որ մասնաճյուղերն ու ներկայացուցչություններն իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով պետք է կրեն վարչական պատասխանատվություն: Մյուս կողմից, այս ենթադրությունը կարելի է կասկածի տակ դնել, քանի որ մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, չլինելով ամբողջությամբ ինքնուրույն, անկախ սուբյեկտներ, համարվում են տվյալ իրավաբանական անձի մաս և այդ իրավաբանական անձը պատասխանատվության ենթարկելիս պատասխանատվության ողջ ծանրությունը բաշխվում է նրանց վրա ևս: Առանձին ուշադրության է արժանի հարցն նաև այն մասին, թե արդյո՞ք նպատակահարմար է նրանց իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով ենթարկել պատասխանատվության որպես ինքնուրույն սուբյեկտների:

Հայրենական օրենսդրությունում գոյություն ունեին նորմեր, որոնք թույլ էին տալիս կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումներին ենթարկել պատասխանատվության: Այսպես, օրինակ՝ «Ար-

ժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի¹⁷⁹ 15-րդ հոդվածի 1-4-րդ պարբերություններից բխում էր, որ արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար ռեզիդենտների, ներառյալ բանկերի և ոչ ռեզիդենտների նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվում էին տուգանք, լիցենզավորված գործունեության կասեցում և լիցենզայի զրկում: Ընդ որում, ռեզիդենտ էին համարվում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ տարածքում, ինչպես նաև դրանց ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:

Նշենք նաև, որ գործող մի շարք իրավական ակտերում ևս կան մնան սահմանումներ, օրինակ, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի¹⁸⁰ դրույթներից բխում է, որ նշված օրենքի նորմերի համար պատասխանատվությունը կրում են հարկ վճարողները, որոնք ըստ նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում են ֆիզիկական և իրավաբանական անձինք, նույնիսկ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի¹⁸¹ դրույթներից բխում է, որ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվություն կրող տնտեսվարող սուբյեկտ են համարվում՝ ֆիզիկական անձը, իրավաբանական անձը, այլ կազմակերպությունը, դրա ներկայացուցիչը, ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը: «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի¹⁸² 3-րդ հոդվածի դրույթներին համահունչ օրենքով սահմանված իրավախախտման սուբյեկտ են հանդիսանում՝ ՀՀ տարածքում գործող

¹⁷⁹ Տե՛ս «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 1993 թ. սեպտեմբերի 15-ին, ուժը կորցրել է 2005 թ. հուլիսի 28-ին):

¹⁸⁰ Տե՛ս «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի, (ընդունվել է 1998թ. ապրիլի 7-ին):

¹⁸¹ Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 2000թ. նոյեմբերի 6-ին):

¹⁸² Տե՛ս «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 22-ին):

իրավաբանական անձինք, դրանց առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղերը և ներկայացուցչությունները), ՀՀ տարածքում գործող օտարերկրյա կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղերը և ներկայացուցչությունները): Համանման կարգավորում ունի նաև «Դրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը¹⁸³:

Այնուամենայնիվ, գտնում ենք նաև, որ միայն իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի սահմանումը, թերևս քավարար չափով, չէր կարող լուծել շուկայական հարաբերություններում տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության, պատասխանատվության նպատակներին հասնելու հիմնախնդիրների պատշաճ կարգավորումը, քանզի խոշոր իրավաբանական անձանց գործունեության պարագայում, որոնք ունեն մի շարք մասնաճյուղեր արդարացված չէր լինի կոնկրետ մասնաճյուղի ոչ օրինական գործունեության արդյունքում պատասխանատվության ենթարկել տվյալ իրավաբանական անձին:

Թերևս, հիմնավորված ենք համարում նաև, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի վերը նշված դրույթում՝ որպես սուբյեկտ ամրագրված օտարերկրյա կազմակերպությունը (օտարերկրյա կամ միջազգային կազմակերպության ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը): Նման մոտեցումը համահունչ է նաև միջազգային փորձին, քանզի արտասահմանյան երկրների օրենսդրական ակտերի վերլուծությունը ևս վկայում է նման սահմանման իրավաչափ լինելը¹⁸⁴:

¹⁸³ Տե՛ս «Դրամարկդային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին) 2-րդ հոդված:

¹⁸⁴ Տե՛ս օրինակ, Լիտվայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ընդունվել է 1985թ.) 1722-րդ հոդված, Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին) 37-րդ հոդված, Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգրքի (ընդունվել է 1997թ.) 3-րդ հոդված, Խորվաթիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգրքի (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին) 59-րդ հոդված:

Բացի այդ, ինչպես երևում է Հայաստանի Հանրապետության գործող իրավական ակտերի վերլուծությունից նման օրենսդրական ամրագրումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում համահունչ է արդեն իսկ գործող իրավանորմերին և իրավակիրառ պրակտիկային և ըստ էության այն նորամուծություն չէ հայրենական օրենսդրության մեջ: Հարկ է նշել նաև այս համատեքստում, վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտ լինելու համար պարտադիր չէ իրավաբանական անձ լինել, անհրաժեշտ է միայն օրենսդրորեն ճանաչել նրանց վարչական իրավասուբյեկտիվությունը¹⁸⁵:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հաջորդ հիմնախնդիրը կապված է իրավաբանական անձանց վերակազմակերպման հետ: Այս հիմնահարցի քննարկումը պահանջում է նաև «իրավախախտման սուբյեկտի» և «պատասխանատվության սուբյեկտի» հասկացությունների հարաբերակցության հիմնահարցի որոշակի լուսաբանում: Ենթադրվում է, որ անձը, ով իրականացնում է իրավախախտում, կրում է դրա համար պատասխանատվություն: Սակայն անձը կարող է պատասխանատվություն կրել նաև ուրիշների կատարած իրավախախտումների համար: Քաղաքացիական իրավունքին հայանի է երրորդ անձանց գործունեության համար պատասխանատվության ինստիտուտը, օրինակ՝ պատասխանատվությունն անչափահասների գործունեության համար: Համաձայն քաղաքացիական իրավունքի տեսության՝ տվյալ պատասխանատվությունն անհրաժեշտ է տարբերել առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտից, քանի որ այդ դեպքում մեղքը կա և իրավախախտում կատարելու մեջ մեղավոր է այն անձը, ում գործողությունների համար անձը ենթարկվում է պատասխանատվության, այսինքն՝ երրորդ անձի մեղավորությունն էլ կայանում է իր գործառնությունների ոչ պատշաճ կատարման մեջ, օրինակ՝ անչափահասների նկատմամբ հսկողության բացակայությունը¹⁸⁶: Երրորդ անձի գործողությունները կարելի է դիտարկել որպես իրավա-

¹⁸⁵ Տե՛ս Ямпольская Ц. А. Об убеждении и принуждении в советском административном праве //Вопросы советского административного и финансового права (Сборник статей) / В. Ф. Коток. - М., 1952. С. 167-169.

¹⁸⁶ Տե՛ս Гражданское право: в 2 т. / Е. Л. Суханов. Т. 1. - М., 2000. էջ 453-454:

խախտման իրականացման պայման: Վարչական իրավունքում ծնողները նույնպես կարող են ենթարկվել պատասխանատվության այն դեպքում, երբ իրենց կողմից ծնողական պարտականության չկատարման արդյունքում երեխան իրավախախտում է գործում: Ծնողը պատասխանատվության է ենթարկվում է ոչ թե երեխայի գործողությունների համար, այլ իր սեփական արարքի համար՝ անգործության ձևով, որը դրսևորվում է իր պարտականությունները չկատարելու մեջ¹⁸⁷:

Մակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի «Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը» վերտառությամբ 34-րդ հոդվածի 4-րդ մասում, որն ամրագրում է իրավաբանական անձի պատասխանատվությունը վերակազմակերպման դեպքում, որպես իրավախախտում իրականացնելու պայման բացակայում է երրորդ անձի գործողությունը, քանի որ նոր իրավաբանական անձը ստեղծվում է իրավախախտում կատարելուց հետո: Այսինքն՝ այս դեպքում չի կարելի նշել, որ օրենսդրի կողմից կարող է ներդրվել երրորդ անձանց գործողությունների համար պատասխանատվության ինստիտուտն այն տեսքով, որը գոյություն ունի իրավագիտության մեջ և օրենսդրության մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածը սահմանում է իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում իրավունքներ

¹⁸⁷ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ մինչև 18 տարին լրանալը լրիվ գործունակ չճանաչված ֆիզիկական անձի կողմից կատարած վարչական իրավախախտման համար որպես վարչական տույժի տեսակ նշանակված տուգանքի վճարման պարտականությունը կրում են վարչական իրավախախտում կատարած անձի ծնողները կամ նրա օրինական ներկայացուցիչները, որի խնամքի տակ գտնվել է անձը վարչական իրավախախտումը կատարելու պահին կամ եթե մինչև 18 տարին լրանալը, լրիվ գործունակ չճանաչված ֆիզիկական անձը վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ օրինական հիմքերով գտնվել է այլ ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի խնամքի տակ, ապա մինչև տասնութ տարին լրանալը լրիվ գործունակ չճանաչված այդ ֆիզիկական անձի կողմից կատարած վարչական իրավախախտման համար որպես վարչական տույժի տեսակ նշանակված տուգանքի վճարման պարտականությունը կրում են այն ֆիզիկական անձը կամ իրավաբանական անձը, որի խնամքի տակ գտնվել է վարչական իրավախախտում կատարած անձը:

րի ու պարտականությունների բաշխման կարգը: Մասնավորապես, իրավաբանական անձանց միաձուլման, իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու, իրավաբանական անձի բաժանման, մեկ տեսակի իրավաբանական անձը մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմակերպելու դեպքում (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) նրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականություններն անցնում են նոր առաջացած իրավաբանական անձին, իսկ իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնանալու դեպքում նրանցից յուրաքանչյուրին են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքները և պարտականությունները:

Ինչպես արդեն նշել ենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 34-րդ հոդվածում ամրագրված են իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում իրավաբանական անձանց պատասխանատվությունը կանոնակարգող դրույթներ: Մասնավորապես, նշված հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում վարչական պատասխանատվության է ենթարկվում նոր առաջացած իրավաբանական անձը կամ իրավաբանական անձինք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, բացառությամբ իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման, որի դեպքում վարչական պատասխանատվության են ենթարկվում նրանցից յուրաքանչյուրը:

Ի դեպ այլ երկրների իրավաբանական անձանց հանրային պատասխանատվություն նախատեսող օրենսդրական ակտերում նույնպես սահմանված են համանման դրույթներ:

Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի¹⁸⁸ 2.10 հոդվածում սահմանված են վարչական պատասխանատվության ենթարկելու կանոններ իրավաբանական անձի վերակառուցման դեպքերում: Այսպես, մի քանի իրավաբանական անձանց միաձուլման դեպքում իրականացված վարչական իրավա-

¹⁸⁸ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին):

խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկվում է նոր ձևավորված իրավաբանական անձը: Մի իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում վարչական իրավախախտման կատարման համար պատասխանատվության է ենթարկվում միացող իրավաբանական անձը: Իրավաբանական անձի բաժանման դեպքում կամ էլ իրավաբանական անձի կողմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանցից դուրս գալու դեպքում վարչական պատասխանատվության ենթարկվում է այն իրավաբանական անձը, որին համաձայն բաժանման հաշվեկշռի անցել են գործարքներ կնքելու կամ գույքի հետ կապված իրավունքներն ու պարտականությունները, որի առնչությամբ էլ իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը:

Մեկ տեսակի իրավաբանական անձը մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմավորվելու դեպքում (կազմակերպական-իրավական ձեռի փոփոխում) վարչական իրավախախտում կատարելու համար պատասխանատվության է ենթարկվում նոր առաջացած իրավաբանական անձը:

Ընդ որում, վարչական իրավախախտում իրականացնելու համար վարչական պատասխանատվություն առաջանում է անկախ այն բանից, վարչական պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձին հայտնի են եղել արդյոք վարչական իրավախախտման փաստը մինչև վերակառուցման ավարտը: Իսկ Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքի¹⁸⁹ 28C հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե մինչև քրեական գործի քննության ավարտն իրավաբանական անձն օրենքով սահմանված կարգով միանում է մեկ այլ իրավաբանական անձի, միաձուլվում, բաժանվում կամ կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխություն է տեղի ունենում, քրեական գործը շարունակվում է նրա իրավահաջորդի կամ իրավահաջորդի նկատմամբ:

Իրավաբանական անձանց հանրային պատասխանատվություն սահմանող համանման դրույթներ սահմանված են նաև Խորվաթիա-

¹⁸⁹ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին):

յի¹⁹⁰, Սլովենիայի¹⁹¹, Բելառուսի¹⁹² և այլ երկրների համապատասխան օրենսդրական ակտերով, իսկ դրան հակառակ, նաև մի շարք այլ երկրների օրենսդրական ակտերով նման դրույթներ սահմանված չեն, օրինակ՝ Լատվիայում¹⁹³, Տաջիկստանում¹⁹⁴, Ղազախստանում¹⁹⁵, Մոլդովայում¹⁹⁶ և այլն:

Կարծում ենք ողջունելի է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի մշակման փուլում վերը նշված հիմնահարցը դարձել է քննարկման առարկա և օրենսդրորեն մասամբ կանոնակարգվել է: Սակայն հարկ է նկատել, որ կարգավորումը թերի է մի շարք պատճառներով: Այսպես, վերը նշված դրույթը սահմանում է, որ նոր առաջացած իրավաբանական անձը պատասխանատվության ենթարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կարծում ենք, վարչական պատասխանատվության ենթարկելու կարգը կարող է սահմանվել միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, բացառությամբ տվյալ օրենսգրքով նախատեսված դեպքերի, բայց, այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ քաղաքացիական օրենսդրությունը բնավ նման կարգ չի սահմանում: Ուստի, նշված հոդվածի 4-րդ մասն առաջարկում ենք խմբագրել հետևյալ բո-

¹⁹⁰ Տե՛ս Խորվաթիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրքը, (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին), Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին):

¹⁹¹ Տե՛ս «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին):

¹⁹² Տե՛ս Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումներ Տե՛ս «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին): րի վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2002 թ. դեկտեմբերի 17-ին), 4.8-րդ հոդված:

¹⁹³ Տե՛ս Լատվիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին):

¹⁹⁴ Տե՛ս Տաջիկստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1991թ. օգոստոսի 31-ին):

¹⁹⁵ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին):

¹⁹⁶ Տե՛ս Մոլդովիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին):

վանդակությամբ. «4. Իրավաբանական անձանց միաձուլման դեպքում կատարված վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկվում է նոր առաջացած իրավաբանական անձը: Իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում իր կողմից կատարված վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկվում միացած իրավաբանական անձը: Իրավաբանական անձի բաժանման դեպքում կամ իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնանալու դեպքում սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության է ենթարկվում այն իրավաբանական անձը, որին համաձայն՝ բաժանիչ հաշվեկշռի անցել են այն իրավունքներն ու պարտականությունները, որի առնչությամբ իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը: Մեկ տեսակի իրավաբանական անձը մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմավորվելու դեպքում (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) վարչական իրավախախտում կատարելու համար սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության է ենթարկվում նոր առաջացած իրավաբանական անձը»:

Համընդհանուր ճանաչում է գտել այն մոտեցումը, որ հանրային պատասխանատվությունը միշտ կապված է անհատի, իրավախախտի հետ, քանի որ իր մեջ կրում է պետության կողմից նրա արարքների գնահատման տարր: Ուրիշի գործողությունների համար պատասխանատվության դեպքում այս սկզբունքը խախտվում է, քանի որ իրավախախտման բացասական հետևանքները կրելու պարտականությունը չի անցնում իրավահաջորդության սկզբունքով, ինչպես քաղաքացիական իրավահարաբերությունների իրավունքներն ու պարտականությունները: Ենթադրվում է, որ իրավաբանական անձինք, որոնք ստեղծվում են իրավախախտում կատարած իրավաբանական անձի վերակազմակերպման արդյունքում, չպետք է կրեն վարչական պատասխանատվություն այն գործողությունների համար, որոնք իրենք չեն կատարել, քանի որ այդ դեպքում առաջին հերթին խախտվում է հենց սեփական մեղավոր գործողությունների համար պատասխանատվության սկզբունքը:

Վերը նշված հիմնավորմամբ, իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրական դրույթները պետք է բացառվեն վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքից՝ որպես վարչական պատասխանատվության տեսության հիմնական դրույթների հակասություն¹⁹⁷: Այսինքն, նշված հիմնավորումից հետևում է, որ վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձը, եթե մինչև վարչական տույժ նշանակելու մասին որոշման կայացումը, օրինակ միանում է այլ իրավաբանական անձի, ապա չպետք է կրի վարչական պատասխանատվություն իր կատարած իրավախախտման համար, քանի որ առաջանում է նոր իրավաբանական անձ, հետևաբար՝ վերջինս չի կարող պատասխանատվության ենթարկել այն իրավախախտման համար, որն ինքը չի կատարել: Առաջին հայացքից, նշված հիմնավորումը, կարող է իրավաչափ թվալ, սակայն տվյալ դեպքում մտահոգող են դրանից բխող մի շարք հիմնախնդիրների լուծումը, օրինակ՝ եթե հարուցվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ, և այնուհետև՝ իրավաբանական անձը վերակազմակերպվել է, ապա ի՞նչ ընթացք է ունենալու այդ վարույթը, և արդյո՞ք այն կարելի է համարել որպես վարույթը կարճելու հիմք: Այնուհանդերձ, կարծում ենք, որ մյուս մոտեցումը, բնավ, չի կարող արդարացված լինել, քանզի վերակազմակերպման (վերակառուցման) բոլոր դեպքերում իրավաբանական անձի գործունեությունը չի դադարում, այլ տեղի է ունենում իրավահաջորդություն, ուստի նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով պետք է անցնեն նոր առաջացած իրավաբանական անձին, հետևաբար՝ նրան պետք է անցնեն նաև այդ իրավունքների և պարտականությունների կապակցությամբ կատարված իրավախախտումների համար պատասխանատվություն կրելու պարտականությունը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք վերակազմակերպման գործընթացը կարող է լինել վարչական վարույթը կարճելու հիմք, կարծում ենք, նշված հիմնավորմամբ այն կարող է սահմանվել

¹⁹⁷ Ст'ю Аникеенко, Ю. Б. Административная ответственность юридических лиц: Материально-правовое исследование: Авторефер. дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук. - Екатеринбург, 2005:

որպես վարչական վարույթը կասեցնելու հիմք՝ մինչև վերակազմակերպման գործընթացի ավարտը:

Տվյալ հիմնախնդրի համատեքստում ներկայացնենք իրավաբանական անձի վարչական պատասխանատվության հիմնահարցը նաև նրա սնանկության, լուծարման դեպքերում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը չի սահմանում վարչական իրավախախտում կատարած լուծարվող կամ արդեն իսկ լուծարված իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կանոններ: Մի շարք երկրների օրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ հիմնահարցն ունի գիտագործնական մեծ նշանակություն, ուստի դրա ուսումնասիրությունը ևս կարևոր է: Այսպես, ըստ Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգրքի¹⁹⁸ սնանկ իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում այն զանցանքների համար, որոնք նա կատարել է մինչև սնանկ ճանաչվելու գործընթացը սկսվելը և նրա նկատմամբ կարող է նշանակվել գույքի, գույքային օգուտների և առարկաների բռնագրավում: Լիովին այլ կարգավորում է տրված «Մանր իրավախախտումների մասին» Մլովենիայի Հանրապետության օրենքում¹⁹⁹, որի համաձայն՝ սնանկ ճանաչված իրավաբանական անձն ենթարկվում է պատասխանատվության անկախ նրանից զանցանքը կատարել է մինչև սնանկ ճանաչվելու գործընթացը սկսվելը, թե դրա ընթացքում, սակայն որպես տույժ նշանակվում է միայն ակտիվների բռնագրավում: Համանման կարգավորում նախատեսված է նաև «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենքում²⁰⁰:

Այսպիսով, կարծում ենք, որ անհրաժեշտ է կարգավորել նաև իրավաբանական անձի վարչական պատասխանատվության հիմնախնդիրները նրա լուծարման, ինչպես նաև սնանկության դեպքերում, քանի

¹⁹⁸ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգրքը, (ընդունվել է 1997թ.), 7-րդ հոդվածի 5-րդ մասի

¹⁹⁹ Տե՛ս Մանր իրավախախտումների մասին» Մլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1983թ. հուլիսի 21-ին), 13-րդ հոդվածի 3-րդ մաս:

²⁰⁰ Տե՛ս «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին), 7-րդ հոդվածի 3-րդ մաս:

որ շատ հաճախ կարող է պատահել իրավիճակներ, երբ իրավաբանական անձը կկատարի որևէ զանցանք և որոշ ժամանակ անց այն կլուծարվի, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի «Վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները» վերտառությամբ 60-րդ հոդվածում սահմանված վաղեմության ժամկետները սեղմ չեն, մասնավորապես, եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու, ապա հայտնաբերված զանցանքի առթիվ վարչական վարույթ չի կարող հարուցվել, եթե զանցանքի կատարման օրվանից, իսկ շարունակվող զանցանքի դեպքում՝ վերջին գործողության կատարման պահից անցել է 3 տարի: Ուստի անհրաժեշտ է հստակ սահմանել իրավաբանական անձի լուծարման դեպքում վարչական պատասխանատվություն կրող սուբյեկտին, քանի որ շատ դեպքերում կարող են կատարված լինել այնպիսի վարչական իրավախախտումներ, որոնց արդյունքում տվյալ իրավաբանական անձը բավական շահույթ է ստացել, այնուհետև՝ լուծարվել: Իրավաբանական անձի լուծարման սնանկության դեպքը²⁰¹, լուծարման մյուս դեպքերից, անհրաժեշտ է տարբերակել, քանի որ սնանկ ճանաչելու հիմնական հիմքն անվճարունակությունն է, այս դեպքում, հարկավ պետք է նաև տարբերել տվյալ իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող վարչական տույժերի տեսակները, օրինակ՝ տուգանքը որպես վարչական տույժ նշանակելու դեպքում տվյալ իրավաբանական անձի նկատմամբ չի կարող ապահովվել վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակների իրականացումը: Ուստի առաջար-

²⁰¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է լուծարվել հետևյալ դեպքերում՝ 1) նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է, 2) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ, 3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների, հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում, 4) սնանկ ճանաչելու հետևանքով:

կում ենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի «Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն» վերտառությամբ 34-րդ հոդվածը լրացնել նոր մասերով հետևյալ բովանդակությամբ.

«5. Եթե վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձը լուծարվել է մինչև սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթ հարուցելը, ապա վարչական պատասխանատվության է ենթարկվում վարչական իրավախախտումը կատարելու պահին տվյալ իրավաբանական անձի պատասխանատու անձը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավարը:

6. Եթե իրավաբանական անձը սնանկության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացվել կամ օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ է ընդունվել, ապա նա վարչական պատասխանատվության է ենթարկվում նաև մինչև իր սնանկության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնելը, ինչպես նաև սնանկության վարույթի ընթացքում կատարած վարչական իրավախախտումների համար: Նշված դեպքերում իրավաբանական անձի նկատմամբ նշանակվում է միայն նախագուշացում կամ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում վարչական տույժերի տեսակները, իսկ վարչական իրավախախտման արդյունքում ստացված գույքը բռնագրավվում է:»:

Առանձնացվում է նաև իրավաբանական անձի կողմից իրավախախտում իրականացնելու համար իրավաբանական անձի հիմնադիրներին պատասխանատվության ենթարկելու մասին հիմնահարցը: Տվյալ գաղափարի ծագումը որպես կանոն կապված է իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու անհնարինության (օրինակ, «լքված» իրավաբանական անձանց դեպքը) կամ էլ տույժի կատարման անհնարինության հետ (օրինակ, եթե իրավաբանական անձը չունի ունեցվածք): Իրավաբանական անձանց և նրանց հիմնադիրների փոխհարաբերությունների ընդհանուր կանոն է համարվում այն, որ իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմ-

նադրի (մասնակցի) պարտավորությունների համար²⁰²: Որոշակի պայմանականությամբ կարելի է ասել, որ հիմնադիրը պատասխանատու է իր կողմից հիմնադրված իրավաբանական անձանց պարտավորություններով, եթե այդ պարտավորություններն ուղղակիորեն բխում են այն գործունեությունից, որի համար իր կողմից ստեղծվել է այդ իրավաբանական անձը և, եթե վերջինս գուրկ է սեփական ունեցվածքից: Այսինքն՝ վարչական պատասխանատվության հարաբերությունների կտրվածքով որպես այդպիսի պայման պետք է դիտարկել առ այն, որ իրավաբանական անձը ստեղծվում է հատուկ իրավախախտում կատարելու նպատակով: Իսկ իրավաբանական անձանց պաշտոնատար անձի պատասխանատվության հիմնահարցը կդիտարկվի հաջորդիվ՝ իրավաբանական անձանց և նրանց պաշտոնատար անձանց պատասխանատվության հարաբերակցությանը նվիրված պարագրաֆում:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները. վարչական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտներից միայն իրավաբանական անձինք կարող են կրել վարչական պատասխանատվություն, ինչպես նաև Նախագծում որպես վարչական պատասխանատվության ինքնուրույն սուբյեկտ, արդարացիորեն ամրագրվել է նաև իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, ինչպես նաև օտարերկրյա կամ միջազգային կազմակերպության ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը: Սակայն, որպես օրենսդրական բաց սահմանված չէ բացառություն պետության և համայնքների համար:

Իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում նրանց վարչական պատասխանատվությունը կանոնակարգող դրույթներն ունեն հայեցակարգային թերություններ, որոնց բացահայտման համատեքստում առաջարկել ենք նախագծում սահմանված հոդվածը խմբագրել նոր բովանդակությամբ: Ի հավիտում վերոգրյալի՝ անհրաժեշտ է կարգավորել նաև իրավաբանական անձի վարչական պատասխանատվության հիմնախնդիրները նրա լուծարման, ինչպես նաև սնանկության դեպքերում, որոնց օրենսդրական լուծումները մանրամասն ներկայացվել են վերևում:

²⁰² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 60-րդ հոդվածի 2-րդ մաս:

ԳԼՈՒԽ 2.

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի առանձնահատկությունները և բարելավման արդի միտումները

§1. Մեղքի գնահատման առանձնահատկությունները՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության պարագայում

Ինչպես նշում է Ֆրիդրիխ Կարլ Վոն Սավինին «...ֆիզիկական անձինք մտածող և զարգացող էակներ են՝ ի վիճակի ազատորեն իրականացնելու իրենց կամքը: Իրավաբանական անձը, որպես այդպիսին հանդես չի գալիս, այն օժտված է տարբեր անձանց ներկայացուցչական կամքով, որն էլ իր հերթին փոխակերպվում է վերջինիս սեփական կամքի: Իրավաբանական անձին վերագրվող ցանկացած իրավախախտում իրականում նրա մարմինների կամ անդամների կողմից կատարված արարք է, ինչը նշանակում է որ դրանք, ըստ էության, կատարվում են առանձին ֆիզիկական անձի կողմից»²⁰³:

Մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարած արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով և հանդես է գալիս որպես զանցակազմի սուբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշ: Իսկ մեղքի՝ որպես արարքի և դրա հետևանքների նկատմամբ ունեցած հոգեբանական վերաբերմունքի տարրերն են՝ գիտակցությունը և կամքը:

Իրավաբանական անձի կամքի ձևավորման խնդիրը սերտորեն փոխկապակցված է վերջինիս մեղքի և մեղավորության հիմնախնդիր-

ների հետ: Ժամանակին խորհրդային իրավաբանական գրականության մեջ կարծիք էր արտահայտվել, որի համաձայն՝ կոլեկտիվը չի կարող մեղավոր լինել այս կամ այն իրավախախտման մեջ և արդյունքում իրավաբանական անձը, փաստորեն, կրում է պատասխանատվություն ուրիշի մեղքի համար, այսինքն՝ իր աշխատակիցների, որոնք ձևավորում են իր կոլեկտիվը: Արդեն արդի ժամանակաշրջանում վերոհիշյալ մոտեցումից գիտնականները սկսեցին հրաժարվել, չնայած նրան, որ միանշանակ մոտեցում չէր ձևավորվել իրավաբանական անձի մեղքի բնույթի և էության ընկալման, ինչպես նաև իրավաբանական անձի մեղքի և կամքի հարաբերակցության վերաբերյալ, արդյո՞ք իրավաբանական անձի ցանկացած աշխատակցի մեղքը միաժամանակ համարվում է նաև իրավաբանական անձի մեղք և այլն ²⁰⁴:

Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական անձի կամքի վերաբերյալ տեսական հետազոտությունները բավականին համալիր ու խորը ներկայացրել են նշված հիմնախնդիրը, ուստի սույն պարագրաֆում նպատակահարմար ենք գտնում առավել համակարգված տեսքով ներկայացնել վերը նշված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիների առնչությամբ մեր եզրահանգումները:

Այս համատեքստում անհրաժեշտ է ներկայացնելու իրավաբանական անձի մեղքի հասկացությունը, արդյո՞ք անհրաժեշտ է իրավաբանական անձի պատասխանատվությունը սահմանող իրավական ակտերում սահմանել իրավաբանական անձի մեղքի հասկացությունը, անհրաժեշտ է արդյոք հաստատել իրավաբանական անձի մեղքը կատարված իրավախախտման մեջ, և ինչպիսի հանգամանքներ են բացառում իրավաբանական անձի մեղքը վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելիս:

Ավանդորեն մեղքը համարվում է որպես վարչական իրավախախտում կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հիմնական պայման և այս մասին բազմիցս նշվել է վարչական իրավունքի

²⁰³ Տե՛ս “Corporate criminal liability. National and international responses” by Markus Wagner, Background paper for the international society for the reform of criminal law 13th international conference commercial and financial fraud. Malta, 8-12 July, 1999., p.2:

²⁰⁴ Տե՛ս Захаров Д.Н., Понятие воли юридического лица и проблема ответственности. www.rae.ru/zk/arj/2005/07/zaharov.pdf:

տեսաբանների կողմից²⁰⁵: Այնուհանդերձ, իրավաբանական գրականության մեջ իրավաբանական անձի մեղքի վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ են կատարվել, սակայն դրանց մեծ մասն անդրադարձել է ֆիզիկական և պաշտոնատար անձանց մեղքի հիմնահարցերի քննարկմանը²⁰⁶ և այդ աշխատանքների ամբողջության մեջ միայն դրանց քիչը մասն է նվիրված վարչական իրավախախտման կատարման մեջ իրավաբանական անձանց մեղքի հիմնախնդրի ուսումնասիրությանը²⁰⁷:

²⁰⁵ St'u Сорокин В. Д. О двух тенденциях, разрушающих целостность института административного права / В. Д. Сорокин // Правоведение. - 1999. - №11. - էջ 50-51, Чапурных Я.Н., Едомина С.А. К вопросу о понятии вины юридических лиц в административном правонарушении. // Публикация Арбитражного суда Кировской области, <http://pda.kirov.arbitr.ru>, Чухлей Т. Административная ответственность: Вина юридического лица как элемент состава административного правонарушения // Журнал «Главный Бухгалтер» № 20, 2007 г., С 10-11, Колесниченко Ю.Ю. Некоторые аспекты вины юридических лиц, привлекаемых к административной ответственности. // Журнал российского права, 2003. էջ 44, Колесниченко Ю. Ю. Некоторые вопросы административной ответственности юридических лиц / Ю. Ю. Колесниченко // Журнал российского права. -1999.-№10.- էջ 51, Иванов Л. Административная ответственность юридических лиц /Л. Иванов//Российская юстиция. - 2001. -№3. - էջ 21-23., Бельский и др."Ääi èi èñòðàðèáí î à ÿðàäi" ó÷èáíèê äëÿ âóçîâ, ÿí à ðàäàèðèèéé ÿ.Ì. Êîçëîâ, À.Ì. Ðîðîâ, "Ð ÐËÑÕ", ÿ ñèèà, 2000, էջ 344, Бахрах Д. Н. Административная ответственность / Д. П. Бахрах. — Пермь. 1966.- էջ 87, Мпнашкн Л. П. Проблемы административной ответственности юридических лиц // Журнал российского права. 1998. №7. էջ 17 և այլն:

²⁰⁶ St'u օրինակ՝ Вёóàà Ì .Ï . Ñi ààòñèi à àäi èi èñòðàðèèáí î à ÿðàäi (Ï à úàÿ ÷-àñòó) Èèèà, 1975, էջ 91:

²⁰⁷ St'u Èi èáñi è÷áí èi Ð.Ð. Ì àèi òi ðúà ài ÿði ñú àäi èi èñòðàðèèáí è îðàäòñò-àáí î ñòè ððèèè÷èèè èèò // Æòðíàè ði ññèèèèáí î ÿðàäà. 1999, № 10, էջ 52, Козлов Ю. М. "Ääi èi èñòðàðèèáí î à ÿðàäi". ó÷èáíèê äëÿ âóçîâ ïî ñïèöèàëüíîñòè "ÿóðèñïðóíäèöèÿ" / ïîä ðåäàêöèÿí Ë.À.Ðîðîâ, Ìîñêâà, "Ð ÐËÑÕ", 2005.- էջ 351-352, Бахрах Д. Н. Административная ответственность / Д. П. Бахрах. — Пермь. 1966.- էջ 87, Иванов Л. Административная ответственность юридических лиц /Л. Иванов//Российская юстиция. - 2001. -№3. - էջ 21, Чапурных Я.Н., Едомина С.А. К вопросу о понятии вины юридических лиц в административном правонарушении. // Публикация Арбитражного суда Кировской области, <http://pda.kirov.arbitr.ru> և այլն:

Հարկ է նկատել նաև, որ իրավաբանական գրականության մեջ քննարկվող խնդրի վերաբերյալ միասնական մոտեցում ձևավորված չէ: Իսկ մինչև 20-րդ դարի 50-ական թվականները վարչական իրավունքի տեսությունը մեղքը չի ընդունել որպես զանցակազմի պարտադիր հատկանիշ, ինչը ոչ մի կերպ չէր կարող հիմնավորված համարվել նաև վարչական պատասխանատվության այդ ժամանակաշրջանի տեսական դրույթների տեսանկյունից²⁰⁸:

Նախ կարծիք է արտահայտվել առ այն, որ վարչական իրավախախտման կատարման մեջ իրավաբանական անձի մեղքը չպետք է որոշվի: Նշված մոտեցման կողմնակիցները մերժում են վարչական իրավախախտման կատարման մեջ իրավաբանական անձի մեղքի գոյությունը՝ նշելով, որ ֆիզիկական անձի համար ձևավորված մեղքի դասական բնորոշումը կիրառելի չէ իրավաբանական անձի համար, որպես «անձի հոգեբանական վերաբերմունք իր հակաիրավական վարքագծի և դրա հետևանքների նկատմամբ», քանի որ իրավաբանական անձը օժտված չէ կամքով և գիտակցությամբ: Եվ որպես պատասխանատվության հիմք նրանք նշում էին «առանց մեղքի պատասխանատվության» գաղափարը, որի հիմքում ընկած են քաղաքացիական օրենսդրության դրույթները²⁰⁹ : Այս տեսանկյունից, օրինակ, պրոֆեսոր Գ. Բախրախը բնութագրելով իրավաբանական անձի վարչական պատասխանատվության առանձնահատկությունները, նշում է, որ այդ պատասխանատվության հատկանիշներից է նաև այն, որ «...մեղքի առկայությունը պարտադիր պայման չէ կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու համար» և միայն վարքագծի հակաիրավականությունը բավարար հիմք է վարչական տույժի նշանակման համար²¹⁰:

²⁰⁸ St'u Գանիելյան Գ.Բ. «Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում», (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌՏ» հրատարակչություն, 2007, էջ 72:

²⁰⁹ St'u Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. дис. ... канд. юрид. наук. – Красноярск, 2003, էջ 177:

²¹⁰ St'u Бахрах Д. Н. Административная ответственность / Д. П. Бахрах. Пермь. 1966, էջ 87:

Նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավաբանական անձի մեղքը վարչական իրավունքում առաջին հերթին կապված է ոչ թե իր կողմից կատարված արարքի հասարակական վտանգավորությունը գիտակցելու ունակությամբ, այլ արարքի հակաիրավականությամբ: Ինչպես նշում է Մ.Ս.Ստոլեցնիկինան «...վարչական իրավախախտման անհրաժեշտ հատկանիշը դրա հակաիրավականությունն է, որն արտահայտվում է համապարտադիր կանոնների խախտման մեջ»²¹¹, իսկ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրն ուսումնասիրող մի շարք այլ իրավաբան-գիտնականներ հակաիրավականությունը բնորոշում են «...վարչական իրավախախտմամբ պատճառված վնասի և իրավաբանական անձի գործողության կամ անգործության և հասցված վնասի պատճառային կապի առկայությամբ և դրանով արտահայտվում է իրավաբանական անձի վարչական պատասխանատվություն առաջացնող վարչական իրավախախտման հակաիրավականությունը»²¹²»:

Վերոհիշյալ մոտեցումը կարծես թե առաջացնում է հասկացությունների միախառնում, այսպես՝ հակաիրավականությունը ձևական-իրավական կատեգորիա է, որը ձևավորվում է օրենսդրի կամքով՝ պարունակվելով ոչ միայն վարչական իրավախախտումների նյութական, այլև ձևական զանցակազմերում և այս տեսանկյունից այն չպետք է կապել հասցված վնասի հետ: Այս համատեքստում ևս մեկ անգամ հարկ են համարում նշել, որ, այնուամենայնիվ, արարքի հակաիրավականության առկայությունը դեռ բավարար չէ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Անհրաժեշտ է որոշելու անձի մեղավորությունը կատարված իրավախախտման մեջ, քանի որ մեղքը ցանկացած տեսակի պատասխանատվության հիմնական պայմանն է, այլ կերպ ասած՝ զանցանքի սուբյեկտիվ կողմից հիմնական տարրն է:

²¹¹ Տե՛ս Տյուդենիկինա Մ.Ս., *Законодательство об административных правонарушениях*, М., 1981, էջ 10:

²¹² Տե՛ս Օվչարова Օ.Դ., *Материально-правовые проблемы административной ответственности юридических лиц, Государство и право*, 1998, №7, էջ 17:

Թերևս չի կարող լինել ոչ վարչական, ոչ կարգապահական և ոչ էլ քրեական պատասխանատվություն առանց մեղքի²¹³:

Ամփոփելով իրավաբանական անձանց մեղքի, վարչական պատասխանատվության պարագայում դրա գնահատման առանձնահատկությունների առկա հիմնախնդիրների և լուծման ուղիների վերաբերյալ տարբեր վարչագետների դատողությունները՝ նկատենք, որ դրանք կարելի է բաժանել մի քանի տեսական հարթությունների, որոնցից յուրաքանչյուրի առանձնահատկությունների ճշգրիտ հաշվառումը կօգնի ընտրել քննարկվող հիմնախնդրի լուծման և կարգավորման առավել հուսալի ու արդյունավետ եղանակներ: Բոլոր տեսակետները կարելի է պայմանականորեն համակարգված ներկայացնել մի քանի մոտեցումների շրջանակում:

Այսպես, *առաջին մոտեցման* համաձայն, իրավաբանական անձի մեղքը որոշվում է՝ կախված վերջինիս այն պաշտոնատար անձի մեղքից, որի գործողությունների, այսինքն՝ կատարված իրավախախտման համար իրավաբանական անձն ենթարկվում է պատասխանատվության²¹⁴: Այն փաստը, որ կոլեկտիվի ներկայացուցիչը հանդես է գալիս պաշտոնատար անձը, չի նշանակում, որ կոլեկտիվ պատասխանատվությունը վերածվում է անհատականի:

Պաշտոնատար անձի գործողությունները, որոնք առաջացնում են իրավական հետևանքներ և իրականացվում են՝ ի շահ կոլեկտիվի պետք է համարել կոլեկտիվի գործողություններ: Հետևաբար, իրավաբանական անձի մեղավորությունը կանխորոշվում է պաշտոնատար անձի մե-

²¹³ Տե՛ս Лунев А.Е., *Понятие административного проступка и основания административной ответственности*, Правоведение, 1959, №3, էջ 31:

²¹⁴ Տե՛ս օրինակ, Викторов И. *Административная ответственность юридических лиц / И. Викторов // Законность*. - 2001. - №. 6, էջ 12.-13, Солдатов А. П. *Проблемы административной ответственности юридических лиц: Дисс.... д-ра. юрид. наук. Краснодар, 2000, էջ 220-221, Назаров И. В. Административная ответственность организаций (юридических лиц): Автореф. дис. ... канд. юрид. наук. - Н. Новгород, 2002. էջ 20, Хазанов С. Д. Кодекс об административных правонарушениях: преемственность и новизна // Бизнес. Менеджмент. Право. - 2002, № 1, էջ 51- 55:*

դավորությամբ²¹⁵: Ընդ որում, այս մոտեցման դեպքում իրավաբանական անձի մեղքը կարող է դրսևորվել դիտավորության կամ անզգուշության տեսքով²¹⁶:

Հիրավի, այդ մոտեցման շրջանակում ձևավորված դիրքորոշումը վիճելի է այն տեսանկյունից, որ նախ եթե կա կոնկրետ անձ, տվյալ դեպքում պաշտոնատար անձ, որի վրա դրված են որոշակի պարտականությունների կատարում, և վերջինս դրանց խախտման արդյունքում կատարել է վարչական իրավախախտում, որի մեջ նրա մեղքը հաստատված է, ապա տվյալ դեպքում ինչու՞ է պատասխանատվություն կրում իրավաբանական անձը, և երկրորդ, եթե հնարավոր չէ հայտնաբերել կոնկրետ վարչական իրավախախտման մեջ մեղավոր պաշտոնատար անձին, ում վրա պետք է դրված լինի որոշակի պարտականությունների կատարում, ապա այս դեպքում ինչպե՞ս է որոշվելու իրավաբանական անձի մեղքը:

Երկրորդ մոտեցումը ձևավորող տեսակետների համաձայն՝ իրավաբանական անձի մեղքի հասկացությունը բնորոշվում է ֆիզիկական անձի մեղքի հասկացությամբ²¹⁷: Այս մոտեցման կողմակիցներն իրավաբանական անձի մեղքը բնորոշում են որպես սուբյեկտիվ վերաբեր-

²¹⁵ Ст'я Солдатов А. П. Проблемы административной ответственности юридических лиц: Дисс.... д-ра. юрид. наук. Краснодар, 2000. էջ 213:

²¹⁶ Ст'я Назаров И. В. Административная ответственность организаций (юридические лица): Автореф. дис. ... канд. юрид. наук. - Н. Новгород, 2002. էջ 20: Իրավաբանական անձի կողմից կատարված վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե կհաստատվի, որ վարչաիրավական նորմերի և կանոնների խախտումը կատարվել է տվյալ իրավաբանական անձի պաշտոնատար անձի գիտակցական գործողությունների (անգործության) արդյունքում և դրանում առկա է վնասակար հետևանքների առաջացման ցանկություն կամ կանխատեսում կամ անտարբերություն դրանց նկատմամբ: Իրավաբանական անձի կողմից կատարված վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե կհաստատվի, որ վարչաիրավական նորմերի և կանոնների խախտումը կատարվել է տվյալ իրավաբանական անձի պաշտոնատար անձի ոչ պատշաճ և չլիազորված գործողությունների (անգործության) արդյունքում, այն դեպքում, երբ պաշտոնատար անձը պետք է և կարող էր կանխատեսելու իր գործողությունների (անգործության) վնասակար հետևանքների առաջացումը:

²¹⁷ Ст'я Аникеенко, Ю. Б. Административная ответственность юридических лиц: Материально-правовое исследование: Авторефер. дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук. - Екатеринбург, 2005. - էջ 17:

մունք ինչ-որ արարքի նկատմամբ: Ինչ որ չափով նման բնորոշման հետ կարելի է համաձայնել, քանզի իրականում իրավաբանական անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է կատարվածի նկատմամբ, սակայն, մեր կարծիքով, իրավաբանական անձի մեղքը նույն բովանդակությունը չունի, ինչ-որ ունի ֆիզիկական անձի մեղքը. «սուբյեկտիվ վերաբերմունք» կատեգորիան հավասարազոր չէ «հոգեբանական վերաբերմունք» կատեգորիային և բնավ, դժվար է խոսել ինչ-որ բանի նկատմամբ կոլեկտիվի հոգեբանական վերաբերմունքի մասին: Բացի այդ, եթե իրավաբանական անձի մեղքը որոշվի ֆիզիկական անձի մեղքի միջոցով, ապա իրավաբանական անձի մեղքը ևս կդրսևորվի դիտավորությամբ և անզգուշությամբ, ինչն իրավաբանական անձի պարագայում, նրա հենց գործունեության գնահատման տեսանկյունից բացառվում է:

Ի դեպ, իրավաբանական անձի աշխատակիցների, այսինքն՝ ֆիզիկական անձանց կողմից կատարված վարչական իրավախախտման կատարումը չի հանդիսանում տվյալ իրավաբանական անձին անվերապահորեն պատասխանատվության ենթարկելու պայման առանց նշված վարչական իրավախախտման կատարման մեջ իրավաբանական անձի մեղքի հաստատման²¹⁸:

Երրորդ մոտեցման դեպքում իրավաբանական անձի մեղքը վարչական իրավախախտման կատարման մեջ դիտվում է որպես կոլեկտիվի մեղք: Ընդ որում, այս մոտեցման շրջանակում ձևավորվել են մի շարք տեսություններ:

Կարելի է առանձնացնել տեսություններից մեկը, որն իրավաբանական գրականության մեջ ստացել է «կամքերի համաձայնեցման տեսություն»²¹⁹ անվանումը, համաձայն որի՝ իրավաբանական անձի մեղքը հանդիսանում է այն կազմող անհատների կոլեկտիվ մեղք և կարող է ձևավորվել ձայների մեծամասնությամբ ընդունված կոլեկտիվ որոշման

²¹⁸ Ст'я Кононов П. И. О некоторых вопросах применения арбитражными судами положений КоАП РФ при рассмотрении дел об административных правонарушениях, совершенных юридическими лицами // Журнал Полицейское право. 2005, №2, էջ 57-58:

²¹⁹ Ст'я Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. дис. ... канд. юрид. наук. - Краснодар, 2003, էջ 123:

ընդունման արդյունքում՝ քվեարկության կամ փոխհամաձայնեցման ճանապարհով:

Իրավաբանական անձի մեղքն իրավաբան-գիտականները բնորոշում են նաև որպես «կազմակերպության թերություն»²²⁰: Ըստ Վ. Ի. Դիմչենկոյի՝ իրավաբանական անձի մեղքը «որպես կազմակերպության ոչ բավարար կազմակերպվածություն» և տեսության մեջ առաջ է քաշել «կազմակերպության թերություն» հասկացությունը, որտեղ որպես «թերության» պատճառ նշվում է կոլեկտիվի, նրա ֆիզիկական անձանց գործադրած անբավարար ջանքերը²²¹: Նշվում է նաև, որ կազմակերպության մեղքը ոչ թե անհատի, այլ կոլեկտիվի մեղքն է, և կազմակերպության մեղքը չի կարող նույնացվել առանձին անհատների մեղքի հետ, քանզի ունի ուրույն և իրեն հատուկ բովանդակություն: Իսկ կազմակերպության մեղքը հաստատելու համար բավարար է հաստատել, որ վարչական իրավախախտումը հանդիսանում է կազմակերպության թերության, վերջինիս անկազմակերպվածության արդյունք, նաև այն, որ կազմակերպության վրա դրված պարտականությունների չկատարման պատճառը հանդիսացավ այդ կազմակերպության կոլեկտիվի գործադրած անբավարար ջանքերը: Այս պարագայում կազմակերպությունը կրում է պատասխանատվություն սեփական մեղքի համար, և նույնիսկ այն դեպքում, երբ կոնկրետ անհատի մեղքը հնարավոր չէ հաստատել կամ բացառվում է²²²: Որպես «թերության» բաղադրամասեր Գ. Կ Մատվեևը նշում է, առանձին վերցրած իրավաբանական անձի աշ-

²²⁰ St'u Дымченко В. И. Административная ответственность предприятий и организаций. Учебное пособие Дальневосточного государственного Университета / В. И. Дымченко. - Владивосток: Издательство Дальневосточного государственного Университета, 1995, էջ 65, Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. дис. ... канд. юрид. наук. - Красноярск, 2003., էջ 124-125, Матвеев Г.К., Психологический аспект вины юридических лиц, // Сов. гос-во и право, 1978, №8, էջ 39, Воробьева А. Д., Ответственность юридических лиц и должностных лиц администрации за нарушение трудового законодательства. дисс. к. ю. н., М., 1972., էջ 329-330:

²²¹ St'u Дымченко В. И. Административная ответственность предприятий и организаций. Учебное пособие Дальневосточного государственного Университета / В. И. Дымченко, Владивосток: Изд. Дальневосточного государственного Университета, 1995, էջ 65:

²²² St'u նույն տեղը:

խատակիցների անհատական մեղավորության հատկանիշները²²³: Նման դիրքորոշում է հայտնել նաև Ն. Ա. Մորոզովան, որն իրավաբանական անձի մեղքը բնորոշում է որպես նրա կոլեկտիվի վերաբերմունք կատարված վարչական իրավախախտման նկատմամբ: Մասնավորապես, կոլեկտիվը կամ նպաստում է վարչական իրավախախտման կատարմանը՝ իր ներքին անկազմակերպվածության արդյունքում չվերահսկելով իր աշխատակցի գործողությունները, կամ ուղղակի կամ անուղղակի հավանություն տալիս իրավախախտման կատարմանը՝ նպաստելով դրանց կատարմանը: Ընդ որում, կոլեկտիվի այս գործողությունները կարելի է բնութագրել որպես իրավաբանական անձի կազմակերպվածության թերություն: Այլ կերպ ասած, իրավաբանական անձի մեղքը կատարված վարչական իրավախախտման մեջ կազմակերպության թերությունն է²²⁴:

Այսպիսով, այս տեսության համաձայն՝ իրավաբանական անձի մեղքը կոլեկտիվի հոգեբանական վերաբերմունքն է կատարված վարչական իրավախախտման նկատմամբ: Կարծում ենք, սակայն, որ նշված բնորոշումներն ունեն որոշակի թերություններ, մասնավորապես, կարող է հարց առաջանալ՝ ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ օրինակ՝ վարչական իրավախախտում կատարելու որոշումն ընդունել է իրավաբանական անձի տնօրենը՝ միանձնյա: Բացի այդ, ցանկացած դեպքում բացահայտել իրավաբանական անձի կոլեկտիվ կամքը, հաստատելու այն փաստը, որ ամբողջ կոլեկտիվը հետևել է իր աշխատակցի գործողություններին և վերահսկել է այն, անշուշտ, անհնար է: Բոլոր դեպքերում այն իրավաբանական անձի ղեկավար մարմնին բնորոշ պարտականություն է:

Չնայած նշվածին, որպես այս տեսակետի հիմնական դրական կողմ կարելի է առանձնացնել այն փաստարկը, որ այս մոտեցման դեպքում պարզ է՝ ինչու է պատասխանատվություն կրում իրավաբանական անձը նույնիսկ այն դեպքում, երբ իրավախախտման կոնկրետ մեղավորին հնարավոր չէ բացահայտել: Հավելենք նաև, որ այս տեսությունը

²²³ St'u Матвеев Г.К., Психологический аспект вины юридических лиц // Сов. гос-во и право, 1978, №8, էջ 39:

²²⁴ St'u Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. дис. ... канд. юрид. наук. Красноярск, 2003, էջ 124-125:

հիմնավորում է կոլեկտիվի դերը կատարված իրավախախտման մեջ և պատասխանում այն հարցին, թե ինչու՞ կոնկրետ մեկ անձի կատարված իրավախախտման համար բոլորը կրում են պատասխանատվություն:

Վերը նշված տեսությունը, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, իր հետագա զարգացումն ու ամրագրումը գտավ «գերիշխող կամքի» տեսության մեջ²²⁵, համաձայն որի՝ իրավաբանական անձի մեղք ասելով՝ հասկանում ենք կոլեկտիվի գերիշխող կամքով որոշվող հոգեբանական վերաբերմունքը կատարված իրավախախտման նկատմամբ, իսկ գերիշխող կամքը բնութագրական է կոնկրետ անձի համար: Այս տեսության դրույթներից բխում է, որ այն անձը, որի կամքը պետք է ճանաչվի գերիշխող, կարող է լինել տվյալ իրավաբանական անձի վարչակազմի անդամ, կամ գործադիր կոլեգիալ (միանձնյա) մարմնի ղեկավար, կամ որևէ այլ անձ, որն իրավունք ունի կազմակերպության անունից իրավախախտին տալու պարտադիր կատարման կարգադրազրեր:

Ինչպես տեսնում ենք, նշված տեսությունը, այնուամենայնիվ, ունի էական թերություն. այն անտեսում է կոլեկտիվը որպես ամբողջական երևույթ՝ իրավաբանական անձի մեղքը և կամքը նույնացնելով կոնկրետ այն անձի մեղքի և կամքի հետ, որը ղեկավար դիրք է զբաղեցնում տվյալ իրավաբանական անձում և այդ կարգավիճակով այն օժտված է գերիշխող կամքով: Ընդ որում, իրավաբանական անձի մեղքի ընկալման քննարկվող մոտեցմանն իրավաբանական գրականության մեջ դեմ են արտահայտվել նաև մի շարք այլ գիտնականներ, համարելով, որ նման ընկալման շրջանակներում, հիրավի, կազմակերպության մեղքը որպես ինքնուրույն, առանձին երևույթ մնում է չբացահայտված: Ավելին՝ կոլեկտիվ մեղք չի կարող գոյություն ունենալ, քանի որ հնարա-

վոր չէ պարզել կոլեկտիվի հոգեբանական վերաբերմունքը կատարված իրավախախտման նկատմամբ²²⁶:

Երրորդ մոտեցման շրջանակում ձևավորվել է ևս մեկ տեսություն, որի հիմնադիրը Յու. Յու. Կոլեսնիչենկոն է: Նա առաջարկեց մի տեսություն, համաձայն որի՝ վարչական իրավունքում պետք է ամրագրել իրավաբանական անձի մեղքի համալիր ընկալում՝ ներառելով իրավաբանական անձի մեղքի ընկալման «օբյեկտիվ մեղսայնացման» և «սուբյեկտիվ մեղսայնացման» մոտեցումները:

Այս համատեքստում ներկայացնենք նաև «օբյեկտիվ մեղսայնացման» և «սուբյեկտիվ մեղսայնացման» մոտեցումները: Այսպես, ըստ «օբյեկտիվ մեղսայնացման» տեսության իրավաբանական անձի մեղքը, որպես օբյեկտիվ երևույթ, միշտ տարբերվում է առանձին անհատի մեղքից և վարչական իրավունքում իրավաբանական անձի մեղքի հասկացությունն ունի այլ սահմանում, քան ֆիզիկական անձի մեղքը: Այս տեսության համաձայն՝ իրավաբանական անձի մեղքը դրսևորվում է իրավական ակտերի պահանջները չպահպանելու կամ ոչ պատշաճ կատարելու մեջ և հաշվի առնելով իրավաբանական անձի, որպես իրավա-հարաբերության յուրահատուկ սուբյեկտի, առանձնահատկությունները՝ վերջինիս մեղքը դիտվում է նաև որպես խախտումները կանխելու համար բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները ձեռնարկելը կամ չձեռնարկելը, ինչպես նաև դրա անբարենպաստ հետևանքները մեղմացնելը: Այլ կերպ ասած՝ այս տեսությունը քննարկում է մեղքի աստիճանը, որն էլ ըստ էության պայմանավորված է իրավաբանական անձի՝ խախտումները կանխելու համար բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու ուղղությամբ դրսևորված ակտիվության աստիճանով²²⁷: Իսկ ըստ «սուբյեկտիվ մեղսայնացման» մոտեցման իրավաբանական անձի մեղքն որոշվում է այն ֆիզիկական անձանց մեղքով, ո-

²²⁵ St'u Петров М.П., «Административная ответственность организаций (юридических лиц)», автореф. к.ю.н., Саратов, 1998, էջ 13, Березницкий А. Г. Административная ответственность юридических лиц. Автореф. дис. ... канд. юрид. наук. -М. , 2003. - էջ 24, Колесниченко Ю.Ю. Некоторые аспекты вины юридических лиц, привлекаемых к административной ответственности.// Журнал российского права, 2003, №1, էջ 71-77:

²²⁶ St'u Сорокин В. Д. Парадоксы Кодекса РФ об административных правонарушениях // Правоведение. - 2004. - № 3. - էջեր 4 – 28, Путинский Б.И. Применение принципа вины при регулировании хозяйственной деятельности.//Сов.гос-во и право, 1979, № 10, էջ 64:

²²⁷ St'u Колесниченко Ю.Ю. Некоторые аспекты вины юридических лиц, привлекаемых к административной ответственности.// Журнал российского права, 2003, №1, էջ 74-75:

րոնք կապված են իրավաբանական անձի հետ աշխատանքային հարաբերություններով: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձի մեղքը նրա վարչակազմի, պաշտոնատար անձի հոգեբանական վերաբերմունքն է կատարված վարչական իրավախախտման նկատմամբ²²⁸:

Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Յու. Կոլեսնիչենկոն, օբյեկտիվ մեղքը կազմակերպության մեղքն է վարչական տույժ նշանակող պետական մարմնի տեսանկյունից՝ ելնելով իրավաբանական անձի՝ սահմանված կանոնները խախտելուն ուղղված կոնկրետ գործողության կամ անգործության բնույթից, իսկ սուբյեկտիվ մեղքը կազմակերպության ի դեմս իր կոլեկտիվի, վարչակազմի, պաշտոնատար անձի հոգեբանական վերաբերմունքն է հակաիրավական արարքի նկատմամբ²²⁹: Իրավաբանական անձի մեղքի ընկալման նման տեսակետ իրավաբանական գրականության մեջ արտահայտել են նաև այլ վարչագետներ²³⁰:

Այսպիսով, կարծում ենք, մեղքի վերը նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի միաձուլման դեպքում ձևավորվում է իրավաբանական անձի մեղքի էությունը մեկնաբանելու հետևյալ տեսակետը, ըստ որի՝ իրավաբանական անձի մեղքը կատարված վարչական իրավախախտման նկատմամբ նրա պատասխանատու ֆիզիկական անձի (պաշտոնատար անձ, աշխատակից և այլոց) հոգեբանական վերաբերմունքի և կատարված արարքի նկատմամբ վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձանց իրավական գնահատականի համակցությունն է՝ ելնելով իրավաբանական անձի կողմից սահմանված կանոնները խախտելուն ուղղված կոնկրետ գործողության կամ անգործության բնույթից, որի համար իրավաբանական անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության:

Տեսական հարթության վրա քննարկելով իրավաբանական անձանց մեղքի ինստիտուտը՝ տվյալ հիմնախնդրի համատեքստում գի-

²²⁸ Տե՛ս նույն տեղը:

²²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 76:

²³⁰ Տե՛ս «Административное право», учебник под редакцией Ю.М. Козлова и Л.Л. Попова, М., Юристы, 1999, էջ 345, Козлов Ю. М. "Άάί έί έñððàðέάί íá íðááί". ó+eáник для вузов по специальности "Юриспруденция" / под редакцией Л.А. Попова, Москва, "Р ÆÑÑÏ", 2005, էջ 351 և այլն:

տագործնական նշանակություն կարող է ունենալ նաև դրա օրենսդրական կարգավորման միջազգային փորձը:

Այսպես, Ռ-Գ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ մեղքը վարչական իրավախախտման սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր է համարվում, նույնիսկ, եթե այդ իրավախախտումը կատարվել է իրավաբանական անձի կողմից: Իրավաբանական անձը վարչական իրավախախտման համար համարվում է *մեղավոր* (ընդգծումը- Թ.Շ.), եթե հաստատվի, որ նա հնարավորություն ուներ հետևելու այն նորմերին ու կանոններին, որոնց խախտման համար սույն օրենսգրքով կամ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքներով սահմանված է վարչական պատասխանատվություն, և նա չի օգտագործել իրենից կախված բոլոր հնարավորությունները դրանց հետևելու համար²³¹: Համանման կարգավորում սահմանված է նաև Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում²³²:

Որոշ վարչական իրավախախտումների վերաբերյալ առանձին օրենսդրական ակտեր ունեցող այլ երկրներում, որոնցում իրավաբանական անձինք սահմանված են որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, ևս սահմանվում է իրավախախտման մեջ մեղավորության հաստատման անհրաժեշտությունը, օրինակ՝ Մոլդովա, Խորվաթիա, Իտալիա, Ավստրիա²³³ և այլն: Սակայն, հարկ է նկատել, որ որևէ օրենսդրական ակտում իրավաբանական անձի մեղքի հասկացությունը տրված չէ: Նշված բոլոր երկրներում իրավաբանական անձի մեղքը հաստատվում է նրա պաշտոնատար անձանց կամ պատասխանատու անձանց կամ ներկայացուցիչների մեղքի հաստատման միջոցով:

²³¹ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), 2.1-րդ հոդված:

²³² Տե՛ս Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 17-ին), 3.5-րդ հոդված:

²³³ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), Խորվաթիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգրքը, (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին), Իտալիայի Հանրապետության օրենսդրական դեկրետ թիվ 231 (ընդունվել է 2001թ. հունիս 8-ին), Legislative Decree No. 231 of June 8th, 2001 (the "Decree") of Italy, Ավստրիայի Հանրապետության վարչական պատիժների մասին օրենսգրքը (ընդունվել է 1991թ.):

Ինչ վերաբերում է այլ երկրների քրեական օրենսդրությամբ ամրագրված իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտին, ապա միանշանակ է, որ այդ երկրներում պատասխանատվությունը սահմանվում է միայն մեղքի առկայության պարագայում, ընդ որում, որոշ երկրներում սահմանվում են նաև մեղքի հաստատման պայմաններ կամ չափորոշիչներ: Որոշ երկրներում էլ ամրագրված է նաև իրավաբանական անձի պատասխանատվություն մեղքի բացակայության պայմաններում, այսպես կոչված՝ խիստ պատասխանատվության (strict liability) ինստիտուտ: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության մեղքի բացակայության պայմաններում բոլոր տեսակի ոսնձգությունների համար: Եթե օրենսդրությունն այլ բան չի սահմանում, ապա իրավաբանական անձի մեղքն անտեսվում է²³⁴:

Հետաքրքրական է նաև Ղազախստանի օրինակը: Այսպես, Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում է համարվում ֆիզիկական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը կամ անգործությունը, կամ իրավաբանական անձի հակաիրավական գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն²³⁵: Հարկ է նկատել, որ այս դեպքում, ի տարբերություն ֆիզիկական անձանց, իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար մեղքի առկայությունը պարտադիր պայման չի համարվում. վարչական պատասխանատվության ենթարկելու բավարար հիմք է հանդիսանում միայն արարքի հակաիրավական բնույթը: Ուսումնասիրելով գրեթե բոլոր երկրների վարչական օրենսդրությունները, որոնցում իրավաբանական անձինք ամրագրված են որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, Ղազախստանի օրինակը, թերևս, կարելի է եզակի համարել:

Ինչպես տեսնում ենք, միջազգային փորձը ցույց տվեց, որ իրավաբանական անձի մեղքի ընկալման վերը ներկայացված մոտեցումներից

²³⁴ Տե՛ս Թ ծ1 à0áá Ð.Ôáí ēī áí äý îðááðñðáá í îñðü ìðēäē-áñēēð ēēð// Í äēī äē, 2001, №1, էջ 71:

²³⁵ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), 28-րդ հոդվածը:

յուրաքանչյուրն ունի նաև իր օրենսդրական կարգավորումները տարբեր երկրների իրավակարգավորումների տեսանկյունից:

Այս հիմնախնդրի շուրջ առանձնահատուկ դերը թողնելով դոկտրինալ մեկնաբանությանը՝ հարկ է անդրադառնալ նաև հայրենական օրենսդրության դրույթների վերլուծությանը և վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումներին: Կարծում ենք, ՀՀ օրենսդրության մեջ նույնպես առանձին դեպքերում անտեսվում է իրավաբանական անձի մեղքի առկայության անհրաժեշտությունը, մասնավորապես, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի դրույթների վերլուծությունից բխում է, որ իրավաբանական անձն ենթարկվում է պատասխանատվության մեղքի բացակայության պայմաններում:

Իսկ ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է ՀՀ մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական եւ պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անգզողորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության: Այստեղից հետևում է, որ ֆիզիկական եւ պաշտոնատար անձանց դեպքում օրենսդիրը սահմանել է նաև մեղքի ձևը, իսկ իրավաբանական անձը ենթարկվում է պատասխանատվության մեղքի բացակայության պայմաններում²³⁶: Սակայն, օրինակ՝ «Տնտեսական մրցակցության պաշտ-

²³⁶ Համանման մոտեցում է որեզրված նաև այլ օրենսդրական ակտերում, օրինակ՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Առողիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և այլն:

պանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվության միջոց կիրառելիս հաշվի է առնում նաև տվյալ տնտեսվարող սուբյեկտի (իրավաբանական անձի) դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները եւ հանգամանքները և այլն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծն որդեգրել է իրավաբանական անձանց համար պատասխանատվության սահմանում մեղքի բացակայության պայմաններում՝ բավարարվելով միայն արարքի հակաիրավականությամբ: Հարկ ենք համարում նշել, որ աշխատանքային խումբը օրենսգրքի մշակման աշխատանքների ժամանակ գրեթե չէր էլ անդրադարձել այս բավականին խորը քննարկում պահանջող հիմնախնդրի քննարկմանը և լուծմանը, ինչը, թերևս, մեր կարծիքով, նույնիսկ հայեցակարգային հիմնախնդիր պետք էր առանձնացնել մինչ օրենսգրքի մշակման անցնելը: Ըստ նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում մարդու իրավունքների և ազատությունների, հասարակական կարգի և անվտանգության, սեփականության, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգող ֆիզիկական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը կամ անգործությունը, կամ **իրավաբանական անձի կողմից կատարված այն հակաիրավական գործողությունը կամ անգործությունը**, որի համար օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն:

Ինչ վերաբերում է մեղքի ձևին, որն ինչպես հայտնի է դրսևորվում է դիտավորությամբ և անգոշությանբ, ապա իրավաբանական անձանց պարագայում այն գործնականում գրեթե անհնար է հաստատել և կարելի է որոշակի եզրահանգումներ անել միայն տեսականորեն: Բացի այդ, ինչպես գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, այնպես էլ նախագծում մեղքի ձևը նշված է հատուկ մասի նորմերում, թերևս նկատի ունենալով հենց մեղքի ձևի ճշգրտման գործնական դժվարությունները: Ուստի աշխատությունում հարկ չենք համարում դրան մանրամասն անդրադառնալ, նաև այն պատճառով, որ օրենսգրքի առանձին հոդվածներ բացարձակ սանկցիաներ են նախատեսում, ինչը հնարավորություն չի տալիս պատժի անհատականացում

իրականացնել՝ հաշվի առնելով մեղքի ձևը: Թերևս, հարկ է նկատել, որ մյուս դեպքերում, անշուշտ, կոնկրետ իրավաբանական անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելիս վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձը կարող է և պետք է հաշվի առնի նաև մեղքի ձևը:

Իրավաբանական անձանց մեղքի հետ կապված հաջորդ ենթահարցն իրավաբանական անձի մեղքի հաստատումն է կատարված իրավախախտման մեջ: Ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում ամրագրված է նույն մոտեցումը, առ այն, որ իրավաբանական անձի մեղքն իրավախախտման կատարման մեջ հաստատված է համարվում հակաիրավական արարքի կատարման փաստով: Այլ կերպ ասած՝ գործում է մեղքի առկայության կանխավարկածը:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացնում են մի շարք պայմաններ, որոնց առկայության դեպքում իրավաբանական անձը ճանաչվում է մեղավոր կատարված վարչական իրավախախտման մեջ: Այսպես, աշխատանքային պայմանագրով աշխատող ֆիզիկական անձանց գործողությունները, որոնք պայմանավորում են օբյեկտիվ կողմի հատկանիշները, մասնավորապես, ֆիզիկական անձանց կողմից նրա մասնագիտական պարտականությունների շրջանակը սահմանող ակտերին չձանոթանալը կամ իրագրել չլինելը, կամ նման ակտերի բացակայությունը, ֆիզիկական անձանց պարտականությունների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությունը և այլն²³⁷:

Հիրավի, թվում է՝ իրավաբանական անձանց մեղքի հաստատման միասնական մոտեցում չի կարող լինել և դրա պատճառը հանդիսանում է այն, որ անհրաժեշտ է հաշվի առնել միաժամանակ մի շարք հանգամանքներ կամ գործոններ, որոնք անհրաժեշտ է հետազոտել, որպեսզի հաստատվի իրավաբանական անձի մեղքը կատարված իրավախախտման մեջ: Այդ հանգամանքների շարքին, թերևս, կարելի է դասել հետևյալները՝ ա) իրավաբանական անձի ղեկավար դիրք զբաղեցնող անձանց կամ նրա մյուս աշխատակիցների մեղավոր գործողությունները՝ որպես վարչական իրավախախտման բաղկացության հատկանիշ, բ) այն փաստի հաստատումը՝ արդյոք իրավաբանական անձի կանո-

²³⁷ St'u Великчева Е. В. Проблемы определения вины юридического лица в арбитражной практике // Юрист. - 2005. - № 1. - էջեր 49 – 51:

նադրությամբ սահմանվում է կոնկրետ աշխատակցի պարտականությունները կամ լիազորությունների շրջանակը, և իրավախախտումը կատարվել է այդ լիազորությունների չարաշահման արդյունքում, կամ ծանոթ է արդյոք տվյալ աշխատակիցն այն փաստաթղթերին, որոնք կարգավորում են նրա պարտականությունները, գ) աշխատակիցների մեղավոր գործողությունները կատարվել են՝ ի շահ, թե ի վնաս իրավաբանական անձի և այլն:

Այսպիսով իրավաբանական անձի մեղքի հաստատումը կարող է իրականացվել՝ օգտագործելով տարբեր իրավական կառուցակարգեր ինչպես կոնկրետ ֆիզիկական անձանց մեղքի հաստատման հետ կապված, այնպես էլ դրա հետ չկապված: Եվ մի շարք դեպքերում ֆիզիկական անձանց արարքներն առաջացնում են միայն իրավաբանական անձի պատասխանատվություն, մի շարք դեպքերում՝ երկուսինն էլ:

Իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է վերջիններիս վարչական պատասխանատվության ենթարկելիս հաշվի առնել նաև իրավաբանական անձի մեղքը բացառող հանգամանքները:

Հարկ է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում վարչական պատասխանատվությունը բացառող ինստիտուտների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով նաև սահմանափակ մեղսունակության, ֆիզիկական և հոգեական հարկադրանքի, հիմնավորված ռիսկի, հրաման կամ կարգադրություն կատարելու ինստիտուտները: Իրավաբանական անձի մեղքը վարչական իրավախախտման կատարման մեջ պետք է բացառվի այն պայմանների առկայության դեպքում, երբ ստանձնած պարտականությունների կատարումը դառնում է անհնարին նույնիսկ իրավաբանական անձի կողմից բոլոր միջոցները գործադրելու դեպքում: Այսինքն՝ այդ խոչընդոտները հաղթահարելու համար իրավաբանական անձը չպետք է խախտի օրենսդրությամբ սահմանված այլ նորմերը և իր վրա դրված պարտականության կատարումը չպետք է սպառնա իրավաբանական անձի գոյությանն ու դրա ֆինանսական միջոցներին: Ընդ որում, այդ հանգամանքները պետք է լինեն անհաղթահարելի և պետք է առկա լինի պատճառական կապ վարչական իրավախախտման և դրանց միջև²³⁸:

²³⁸ Տե՛ս Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. дис. ... канд. юрид. наук. – Красноярск, 2003. , էջ 144:

Նշված խոչընդոտները կարող են լինել այնպիսի իրադարձությունների հետևանքներ, որոնց ցանկը սպառնիչ հնարավոր չէ տալ, մասնավորապես, բոլոր բնական (օրինակ՝ ջրհեղեղ, փոթորիկ, երկրաշարժ և այլն) և հասարակական երևույթները (օրինակ՝ պատերազմ, գործադուլ, զանգվածային անկարգություններ և այլն): Իրավաբանական գրականության մեջ վերջիններս հայտնի են որպես անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր հանգամանքներ): Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրը հետագոտած իրավաբանների մեծամասնությունը համակարծիք են նրանում, որ որպես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք անհրաժեշտ է սահմանել ֆորս-մաժոր հանգամանքները, քանզի այն ավելի է համապատասխանում պատասխանատվության տվյալ սուբյեկտի առանձնահատկություններին²³⁹:

Որպես իրավաբանական անձի մեղքը բացառող հանգամանք իրավաբանական գրականության մեջ նշվել է նաև այն, որ պետք պարտադիր հաշվի առնել իրավաբանական անձի ներքին իրավական ակտերը, որոնցում կոնկրետ պարտականությունների կատարումը և դրա չկատարման իրավական հետևանքները դրված է կոնկրետ պաշտոնատար անձանց վրա²⁴⁰: Նշվածի հետ, կարծում ենք, չի կարելի համաձայնվել, քանզի յուրաքանչյուր դեպքում իրավաբանական անձը «կթաքնվի» կոնկրետ պաշտոնատար անձի միջոցով, քանզի նույն արարքի համար իրավաբանական անձանց համար օրենսդրորեն սահմանված են առավել խիստ վարչական տույժի տեսակներ, և երկրորդ, տվյալ դեպքում կիմաստազրկվի իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը:

Կարծում ենք, որ իրավաբանական անձանց կողմից օրենսդրության պահանջները պահպանելու հնարավորության բացակայությունը

²³⁹ Տե՛ս Аникеенко, Ю. Б. Административная ответственность юридических лиц : Материально-правовое исследование : Авторефер. дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук. - Екатеринбург, 2005, Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. дис. ... канд. юрид. наук. – Красноярск, 2003. , Колесниченко Ю. Ю. Административная ответственность юридических лиц, Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2002:

²⁴⁰ Տե՛ս Назаров И. В. Административная ответственность организаций (юридических лиц) : Автореф. дис. ... канд. юрид. наук. Н.Новгород, 2002. էջ 21:

կարող է պայմանավորված լինել առավել լայն շրջանակի հանգամանքներով, որոնք նշեցինք վերևում, քան միայն նրանք, որոնք համարվում են ֆորս-մաժորային: Ընդ որում, կոնկրետ հանգամանքներ կարող են վերաբերել կոնկրետ իրավաբանական անձին: Ի դեպ հնարավոր չէ օրենսդրորեն սպառնիչ սահմանել այդ բոլոր հանգամանքները և յուրաքանչյուր դեպքում վարչական մարմինը պետք է իրավական գնահատական տա կոնկրետ հանգամանքների, պարզելով, թե՞ որքանով են դրանք տվյալ իրավաբանական անձի համար համարվում խոչընդոտող իր պարտականությունների կատարման տեսանկյունից: Ի դեպ, կարևոր է նաև իրավական գնահատական տալ իրավաբանական անձի կողմից ձեռնարկված միջոցներին, այսինքն՝ արդյո՞ք իրավաբանական անձը կիրառել է բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք նա պարտավոր էր և կարող էր կիրառել օրենսդրության պահանջները չխախտելու համար: Այս համատեքստում հարկ են համարում առանձանցնել այդ միջոցներն որոշելու հետևյալ չափանիշները՝ ա) միջոցները պետք է տվյալ իրավիճակի համար լինեն անհրաժեշտ, բ) միջոցները պետք է լինեն պիտանի, այսինքն՝ անհրաժեշտ մի քանի միջոցների առկայության դեպքում պետք է ընտրել դրանցից պիտանին, գ) միջոցները պետք է լինեն բավարար, դ) և կիրառվող միջոցների շրջահայեցությունը:

Ցանկացած դեպքում, ինչպես վերը նշված բացառող հանգամանքները, այնպես էլ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցների գնահատականը բխում է իրավակիրառ պրակտիկայից, այսինքն՝ կոնկրետ իրավիճակում վարչական մարմինը որոշում է՝ արդյո՞ք կոնկրետ հանգամանքը կոնկրետ իրավաբանական անձի կողմից իր պարտականությունների կատարման համար, ելնելով իրավախախտման սուբյեկտի առանձնահատկություններից, գործունեության բնույթից, կոնկրետ իրավիճակից, համարվում է խոչընդոտող, նշված իրավիճակները կանխավ իրավաբանական անձի կանխատեսելու հնարավորությունը, և թե տվյալ իրավիճակում ի՞նչ միջոցներ պետք է և կարող է կիրառվել վերջինիս կողմից, կամ արդյո՞ք կիրառված միջոցները բավարար, անհրաժեշտ, պիտանի են եղել տվյալ իրավիճակում: Օրինակ, իրավաբանական անձի մոտ բյուջետային միջոցների բացակայությունը, որոնք անհրաժեշտ էին վերջինիս իր վրա դրված հանրային-իրավական պարտականությունները կատարելու համար և որոնց չկատարման համար իրավաբանական

նական անձն ենթակա է վարչական պատասխանատվության, չնայած որ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել էր բյուջեից համապատասխան հատկացումները ստանալու:

Այսպիսով, կարծում ենք, որ իրավաբանական անձի մեղքը վարչական իրավախախտման կատարման մեջ կարող բացառվել այնպիսի «խոչընդոտող հանգամանքների» առկայության դեպքում, որոնց պարագայում անիրագործելի է դառնում իր ստանձնած պարտականությունների կատարումը նույնիսկ նրա կողմից բոլոր բավարար և անհրաժեշտ միջոցները գործադրելու դեպքում: Ընդ որում, վերջինս կարելի է օրենսդրորեն ձևակերպել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, ստորև ներկայացնենք հետևյալ եզրահանգումները՝

1. Մեղքը պատասխանատվության պարտադիր հատկանիշ է և անվերապահորեն պետք է հաստատվի՝ նաև իրավաբանական անձանց պարագայում:

2. Իրավաբանական անձի մեղքի բնորոշումը բարդ և վիճահարույց հիմնահարց է, որի շուրջ իրավաբանական գրականության մեջ ձևավորվել են մի քանի մոտեցումներ և այդ շրջանակում առանձնացվել են վերը քննարկված մի շարք տեսություններ: Կարծում ենք, իրավաբանական անձի մեղքը կատարված վարչական իրավախախտման նկատմամբ նրա պատասխանատու ֆիզիկական անձի (պաշտոնատար անձ, աշխատակից և այլոց) հոգեբանական վերաբերմունքի և կատարված արարքի նկատմամբ, ելնելով իրավաբանական անձի կողմից սահմանված կանոնները խախտելուն ուղղված կոնկրետ գործողության կամ անգործության բնույթից, վարչական մարմինների իրավասու պաշտոնատար անձանց իրավական գնահատականի համակցությունն է, որի համար իրավաբանական անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության:

3. Հայրենական օրենսդրական ակտերի հանգամանալից ուսումնասիրությունը, թույլ է տալիս նշելու, որ դրանք նախատեսելով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն հիմնականում պատասխանատվության ենթարկելու բավարար պայման են համարում արարքի հակաիրավականությունը: Նման մոտեցում է որդեգր-

վել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում:

4. Արտասահմանյան երկրների օրենսդրության հանգամանալից ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների մեծամասնության օրենսդրությամբ մեղքը, համարվում է հանրային պատասխանատվության ենթարկելու պարտադիր պայման, իսկ իրավաբանական անձի մեղքի հասկացությունն օրենսդրորեն ամրագրված է թերևս եզակի երկրների համապատասխան ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերում: Թվում է՝ իրավաբանական անձի մեղքի այսպիսի սահմանափակ կարգավորումը պայմանավորված է մի կողմից վարչական իրավունքի դոկտրինալ ոչ բավարար մշակվածությամբ և իրավակիրառ փորձի բացակայությամբ, մյուս կողմից՝ հիմնախնդրի բարդությունը խոչընդոտում է դրա շուրջ արագ որոշումներ կայացնել՝ պրակտիկայում կիրառման առումով խնդիրներ չառաջանալու համար:

5. Իրավաբանական անձի մեղքի հասկացությունը, կարծում ենք, օրենսդրորեն սահմանելու անհրաժեշտություն չկա, քանի որ դա տեսական հարթության վրա լուծելու խնդիր է, սակայն անհրաժեշտ է սահմանել մեղքի որոշման չափանիշներ, որպեսզի իրավակիրառողները, կարողանան ճիշտ և անշեղորեն կիրառել օրենքը տարբերույթ և հակասական մեկնաբանություններից խուսափելու նպատակով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում ի սկզբանե որոշվել էր ամրագրել իրավաբանական անձանց մեղքի հետևյալ բնորոշումը, ըստ որի՝ իրավաբանական անձը վարչական իրավախախտման համար համարվում է մեղավոր, եթե հաստատվի, որ նա հնարավորություն ուներ հետևելու այն նորմերին ու կանոններին, որոնց խախտման համար սույն օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն, և նա չի օգտագործել իրենից կախված բոլոր հնարավորությունները դրանց հետևելու համար: Նման կարգավորում առկա է նաև ՌԴ, Բելառուսի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում, որոնք առավել մանրամասն ներկայացրել ենք վերևում: Մեր կարծիքով, սակայն, եթե իրավաբանական անձի հասկացությունը կարելի է վերցնել քաղաքացիական իրավունքից, ապա նույնացնել նաև նրանց մեղավորության կանոնները, անթույլատրելի է և համահունչ չէ վարչաիրավական հարաբերու-

յուններին, մասնավորապես, հենց վերջիններիս կարևորագույն սկզբունքների տարբերության պատճառով: Այսպես, ի տարբերություն քաղաքացիաիրավական իրավունքին, վարչական իրավահարաբերություններում առկա է անհավասարություն սուբյեկտների միջև, քանի որ սուբյեկտներից մեկը օժտված է իշխանական լիազորություններով, ուստի միասնական օրենսդրական մոտեցումը չի կարող ճշգրիտ լինել: Այսպես, եթե ձեռնարկատիրական գործունեությունը քաղաքացիաիրավական հարաբերության մասնակիցների կողմից իրականացվում է իր շփակով և եթե կոնկրետ իրավաբանական անձը վստահ չէ, որ կարող է կատարել իր ստանձնած պարտավորությունները, կարող է հրաժարվել այդ հարաբերություններին մասնակցելուց, ինչը, բնավ, բնութագրական չէ վարչաիրավական հարաբերություններին:

Ընդունելի չէ նաև նախագծում ամրագրված տարբերակը՝ որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պայման ամրագրել միայն արարքի հակաիրավականությունը:

Հաշվի առնելով, որ վարչական իրավունքում իրավաբանական անձի մեղքի հասկացությունը կամ մեղավորության հատկանիշները, այնուամենայնիվ, պետք է ունենան իրենց հատուկ կարգավորում, քանի որ տարբերվում է ֆիզիկական անձի մեղավորության հատկանիշներից, ուստի առաջարկում ենք նախագծում այս տեսանկյունից կատարել համապատասխան լրամշակումներ: Նախ իրավաբանական անձանց պարագայում ևս մեղքը սահմանել որպես պատասխանատվության ենթարկելու պայման և ամրագրել չափանիշներ, որոնցով այն պետք է որոշվի: Մասնավորապես, իրավաբանական անձը մեղավոր է կատարված իրավախախտման մեջ հետևյալ պայմաններից մեկի առկայության պարագայում՝ եթե ա) նա մեղավոր է օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, օրենքով սահմանված արգելքները չպահպանելու համար, բ) նա մեղավոր է իր հիմնադիր փաստաթղթերին կամ իր նպատակներին չհամապատասխանող գործունեության իրականացման մեջ:

Արդյունքում իրավաբանական անձի մեղքը որոշելիս պետք է պարզել, արդյո՞ք վերջինս ունեցել է հնարավորություն՝ պահպանելու

սահմանված կանոնները և նորմերը, որոնց խախտման համար սահմանված է պատասխանատվություն, և արդյո՞ք իրավաբանական անձը օգտվել է այդ հնարավորությունից, ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ այդ նորմերը պահպանելու և վարչական իրավախախտումները կանխելու ուղղությամբ:

6. Իրավաբանական անձի մեղքը վարչական իրավախախտման կատարման դեպքում պետք է հաստատվի՝ օգտագործելով տարբեր իրավական կառուցակարգեր, որոնք մանրամասն ներկայացրեցինք վերևում: Մեղքի բացակայության դեպքում, եթե վնասակար հետևանքները վրա են հասել պատահական հանգամանքների բերումով, ապա պետք է արձանագրել, որ չկա մեղք, չկա սուբյեկտիվ կողմ, չկա վարչական իրավախախտում, հետևաբար և չի կարող լինել վարչական պատասխանատվություն:

Ընդ որում, իրավաբանական անձի մեղքը, բացի օրենսդրորեն ամրագրված վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքներից, պետք է բացառվի նաև եթե կան այնպիսի «խոչընդոտող հանգամանքներ», որոնց առկայության պարագայում իրավաբանական անձի կողմից իր ստանձնած պարտականությունների կատարումը դառնում է անհնարին, նույնիսկ նրա կողմից բավարար և անհրաժեշտ բոլոր միջոցները գործադրելու դեպքում:

§2. Իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրը

Ատենախոսության նախորդ գլխում մենք արդեն ներկայացրեցինք իրավաբանական անձանց մեղքի գնահատման առանձնահատկությունները, բայց, հարկ է նկատել նաև, որ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելով նրա աշխատակցի (պաշտոնատար անձի), այսինքն՝ իրավախախտում կատարած կոնկրետ անձի պատասխանատվության հարցը ևս պետք է դառնա քննարկման առանձին առարկա, քանզի այն դեպքում, երբ իրավաբանական անձն իրավախախտում է կատարում, իրավախախտման կազմը ձևավորող անմիջական գործողությունները (օրինակ՝ փաստաթղթի ստորագրություն,

ինքնակամ շինարարություն սկսելը, հսկիչ-դրամարկղային կտրոն չտալը և այլն) կատարվում են նրա աշխատակիցների (պաշտոնատար անձանց) կողմից:

Իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդրի քննարկման անհրաժեշտությունը նախ պայմանավորված է իրավաբանական անձի բնույթի երկակիության հետ, որը մի կողմից համարվում է իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, մյուս կողմից՝ բաղկացած է ֆիզիկական անձանցից, որոնք միավորված են կազմակերպական միասնականությամբ և ձևավորում են կոլեկտիվ, և երկրորդ՝ պայմանավորված է նրանով, որ վերջինիս կառուցվածքը ոչ մի կերպ չի ընդգրկվում հանրային իրավունքում ձևավորված պատասխանատվության ավանդական բնորոշման մեջ, համաձայն որի՝ իրավախախտման համար պատասխանատվություն է կրում այն անձը, որի կողմից կատարվել է այդ իրավախախտումը:

Ըստ էության, քննարկվող հիմնահարցն իր մեջ ներառում է երկու ենթահարց՝ 1) կատարված վարչական իրավախախտման համար իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) միաժամանակյա պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, ինչպես նաև այդ պատասխանատվության պայմանների ուսումնասիրություն,

2) իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) միաժամանակյա պատասխանատվության ենթարկելու հնարավորության դեպքում՝ աշխատակցի (պաշտոնատար անձի) կոնկրետ որարարքների համար իրավաբանական անձին պետք է ենթարկել պատասխանատվության:

Մինչ կոնկրետ ենթահարցերի ուսումնասիրությանն անդրադառնալը, անհրաժեշտ է քննարկվող հիմնախնդրի համատեքստում բացահայտել «աշխատակից» և «պաշտոնատար անձ» հասկացությունները: Հարկ ենք համարում նշել, որ ընդհանուր առմամբ «պաշտոնատար անձի» հասկացության հիմնախնդիրը դեռևս բավարար չափով չի լուսաբանվել մասնագիտական գրականության մեջ, և վերջինիս միասնական բնորոշումը բացակայում է հայրենական օրենսդրության մեջ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի²⁴¹ 308-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք են՝ մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք, պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ գործերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք: Բացի ՀՀ քրեական օրենսգրքից որևէ օրենսդրական ակտում, այդ թվում՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում²⁴², տրված չէ «պաշտոնատար անձի» բնորոշումը: Ըստ էության պետք նշել նաև, որ պաշտոնատար անձի սահմանումը խորհրդային իրավունքի իր ավանդական ընկալմամբ, չի կարող բավարարել ոչ իրավագիտությանը, ոչ առավել ևս իրավակիրառ պրակտիկային²⁴³:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնական պարտականությունների մեջ:

Այս բնորոշումը, անշուշտ, հնարավորություն է տալիս իրավակիրառ մարմնին վարչական պատասխանատվության ենթարկելու նաև որևէ իրավաբանական անձում պաշտոն գրադեցնող անձին՝ որպես պաշտոնատար անձի, այն կանոնները չպահպանելու համար, որոնց պահպանումը տվյալ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ

այլ փաստաթղթով դրված է տվյալ պաշտոնատար անձի վրա²⁴⁴: Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի՝ «Պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվությունը» վերտառությամբ 32-րդ հոդվածի 2-րդ մասի պաշտոնատար անձ է համարվում քաղաքական կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում այլ պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչպես նաև հանրային այն ծառայողները, որոնց վրա ի պաշտոնե կամ օրենքով և այլ իրավական ակտով սահմանված կարգով դրված պարտականությունների խախտման համար նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Ակնհայտ է, որ տրված սահմանումն առավել հստակ է տալիս պաշտոնատար անձի հասկացությունը, սակայն, այն ավելի սահմանափակ է քան գործող օրենսգրքում տրված սահմանումը, և այդ դեպքում, բնավ, հնարավոր չէ, օրինակ՝ իրավաբանական անձի գործադիր տնօրենին ենթարկել պատասխանատվության որպես պաշտոնատար անձ: Այսպիսով՝ իրավաբանական անձում պաշտոն գրադեցնող անձը նշված նախագծի դրույթների համաձայն՝ պաշտոնատար անձ չի համարվում: Այս համատեքստում չենք կարող համաձայնվել այն իրավաբան-գիտնականների կարծիքի հետ, ովքեր գտնում են, որ իրավաբանական անձի պաշտոնատար անձը ևս պետք է դիտարկվի որպես պաշտոնատար անձ:

Այնուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական անձի պաշտոնատար անձինք²⁴⁵ նրանք են, ովքեր իրականացնում են վարչատնտեսական (օրինակ՝ ունեցվածքի, գույքի տնօրինումն ու կառավարումը, իրավաբանական անձի անունից պայմանագրերի կնքումը, նյութական արժեքների հաշվառումը և վերահսկողությունը և այլն) կամ կազմակերպական-տնօրինչական գործառույթներ (օրինակ՝ իրա-

²⁴¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունված է 2003 թ. ապրիլի 18-ին):

²⁴² Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 2011 թ. մայիսի 26-ին):

²⁴³ Տե՛ս Колесниченко Ю. Ю. Административная ответственность юридических лиц, Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2002:

²⁴⁴ Օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում առևտրի իրականացման վարչի կազմակերպչի պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված պահանջները խախտելու համար:

²⁴⁵ Հարկ նկատել, որ «պաշտոնատար անձ» եզրույթը վերջին հաշվով խորհրդային տերմին է, իսկ ներկա իրողությունների պայմաններում ձեռնարկատիրության ոլորտում առավել կիրառելի է «պատասխանատու անձ» կամ որևէ այլ նմանաբնույթ եզրույթ:

վաքանական անձի կառուցվածքային ստորաբաժանման, աշխատանքի կազմակերպում և պլանավորում, կադրերի ընտրություն և բաշխումը, աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում, ենթակաների աշխատանքի կատարման վերահսկողություն և այլն) տվյալ իրավաբանական անձում: Այլ անձինք, ովքեր մտնում են իրավաբանական անձի կոլեկտիվի մեջ, սակայն չեն կատարում վարչատնտեսական կամ կազմակերպական-տնօրինչական գործառնություններ, համարվում են իրավաբանական անձի աշխատակիցներ:

Ուստի սույն պարագրաֆի շրջանակներում քննարկելով իրավաբանական անձի և նրա աշխատակցի պատասխանատվության հարաբերակցության հարցը՝ այն տարածվելու է նաև իրավաբանական անձի պաշտոնատար անձանց վրա, քանի որ եթե հնարավոր է իրավաբանական անձի և նրա աշխատակցի համատեղ պատասխանատվությունը, ապա իրավաբանական անձի պաշտոնատար անձը միանշանակ պետք է պատասխանատվություն կրի, քանզի ներկայացնում է իրավաբանական անձը և վերջինիս գործունեությունն ամենից առաջ կախված է նրանից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի ղեկավարն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարն է (տնօրեն, նախագահ, կառավարիչ, ռեկտոր և այլն), որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով դրված է իրավաբանական անձի գործունեության ղեկավարման պարտականությունը: Նշված դրույթի մեկնաբանությունը թույլ է տալիս նշելու նաև, որ երբ իրավաբանական անձի մարմինը կոլեգիալ է՝ իրավաբանական անձի ղեկավարը համարվում է կոլեգիալ գործադիր մարմնի ղեկավարը:

Իրավաբանական անձի աշխատակից ճանաչվում է այն ֆիզիկական անձը, ով աշխատանք է կատարում աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական այլ պայմանագրի հիման վրա, ընդ որում, եթե գործել են կամ պետք է գործելին համապատասխան իրավաբանական անձի կամ նրա պաշտոնատար անձի հանձնարարությամբ և վերահսկո-

ղությամբ²⁴⁶: Իրավաբանական անձին և նրա աշխատակցին միաժամանակյա պատասխանատվության ենթարկելու հնարավորությանը վերաբերող ենթահարցի վերաբերյալ առանձնացնենք երկու հիմնական մոտեցում:

Առաջին մոտեցման էությունն ընդհանուր կերպով հանգում է նրան, որ կատարված իրավախախտման համար *պատասխանատվություն պետք է կրի կոնկրետ մեկը*. կամ իրավաբանական անձը կամ տվյալ իրավաբանական անձի աշխատակիցը, եթե նույնիսկ սկզբունքորեն հնարավոր է պատասխանատվության ենթարկել և՛ իրավաբանական անձին, և՛ նրա աշխատակցին: Այս մոտեցման շրջանակներում իրավաբանական անձի և նրա աշխատակցի պատասխանատվության հարաբերակցության հարցն ունի լուծման երկու տարբերակ:

Առաջին տարբերակի էությունը դրսևորվում է նրանում, որ վարչական պատասխանատվությունը կարող է սահմանվել *միայն ֆիզիկական անձանց* համար, իսկ իրավաբանական անձինք տվյալ պարագայում ընդհանրապես պատասխանատվության չեն ենթարկվում: Ըստ էության, մեր օրենսդրության մեջ ընդհանուր առմամբ այսպիսի կարգավորում գոյություն է ունեցել միայն մինչև 1991 թ., քանզի դրանից հետո առանձին իրավական ակտերով որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ սահմանվեցին նաև իրավաբանական անձինք²⁴⁷, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ առ այսօր սահմանված է այս տարբերակը: Իրավաբանական գրականության մեջ ներկայումս այսպիսի մոտեցման կողմնակիցներ նույնպես կան²⁴⁸:

Երկրորդ տարբերակի էությունը դրսևորվում է նրանում, որ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է սահմանվել

²⁴⁶ Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

²⁴⁷ Առավել մանրամասն տե՛ս սույն աշխատության 1-ին գլխի 2-րդ պարագրաֆը:

²⁴⁸ Առավել մանրամասն տե՛ս Сорокин В. Д. Правовое регулирование: Предмет, метод, процесс (макроуровень). - Спб., 2003., էջեր 492-499:

միայն իրավաբանական անձը: Այս դեպքում փաստացի պատասխանատվությունը վրա է հասնում իրավաբանական անձի աշխատակիցների (պաշտոնատար անձանց) գործողությունների համար, ինչն ընդունված մտեցում է իրավաբանական գրականության մեջ:

Պաշտոնատար անձանց վրա դրված պարտականությունները և, ըստ այդմ, նրանց պատասխանատվությունը սահմանվում է իրավաբանական անձանց ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: Այս սկզբունքով է կարգավորված որոշ արտասահմանյան երկրների իրավաբանական անձանց պատասխանատվությունը: Այսպես օրինակ, ԱՄՆ-ում կորպորացիաների վարչակազմի գործողությունների համար քրեական պատասխանատվության տեսական հիմնավորում է համարվում «թող պատասխան տա վերադասը» (respondent superior) սկզբունքը, որը փոխառված է քաղաքացիական իրավունքից՝ ըստ որի անձը պատասխանատու է իր ներկայացուցիչների գործողությունների համար:

Եվրոպական շատ երկրների քրեական իրավունքում քաղաքացիական իրավունքից փոխառված «երկրորդ ես» (alter ego) ուսմունքը, ըստ որի կազմակերպության ղեկավար կազմի աշխատակիցներից մեծամասնության գործողությունները նույնացվում են հենց կազմակերպության գործողություններին (Ֆրանսիա, Անգլիա, Ռուս, Նիդերլանդներ և այլն)²⁴⁹:

Վերը քննարկվող մտեցման շրջանակներում կարելի է առանձնացնել նաև երրորդ տարբերակը: Այս տարբերակը հիմնվում է նույն սկզբունքի վրա, ըստ որի՝ աշխատակցի գործողությունները դիտարկվում են որպես իրավաբանական անձի գործողություններ, սակայն այստեղից կարելի է գալ մի եզրահանգման, որն ամբողջությամբ հակասում է մեկ այլ եզրահանգմանը, առ այն, որ վկայում է իրավաբանական անձի և նրա աշխատակցի պատասխանատվությունների առանձնացված լինելու մասին: Ընդհակառակը, իրավաբանական անձն ու նրա աշխատակիցը պատասխանատվություն կրում են միաժամանակ նույն իրավախախտման համար:

²⁴⁹ Ст'у Юрмашев Р. Уголовная ответственность юридических лиц //Налого. 2001. №1, էջ 70:

Իրավաբանական անձի և նրա աշխատակցի պատասխանատվության հարաբերակցության տվյալ տարբերակը նույնպես ամրագրված արտասահմանյան օրենսդրության մեջ, օրինակ, Ավստրալիայի քրեական օրենսգրքի 12.2 հոդվածում²⁵⁰ սահմանված է հետևյալ դրույթը, ըստ որի՝ եթե հանցագործության ֆիզիկական տարրն իրականացվել է միավորման (կորպորացիայի) ծառայողի, ներկայացուցչի կամ պաշտոնատար անձի կողմից, ով գործում է կոնկրետ ոլորտում իր ծառայողական պարտականությունների կամ իր իրավասության սահմաններում, ապա այդպիսի ֆիզիկական տարրը պետք է վերագրվի տվյալ կորպորացիային»: Իսկ 12.3 և 12.4 հոդվածների 1-ին մասերում սահմանված է նաև կորպորացիայի մեղավորության որոշման ձևը:

Եթե համաձայնվենք վերը նշված տարբերակներից յուրաքանչյուրի հետ, ապա բացառվում է վարչական պատասխանատվության նշված տարբերակներից միայն մեկի պատասխանատվությունը, քանի որ խախտվում է հավասարակշռվածությունը, մասնավորապես, մի կողմից կթույլատրվի պաշտոնատար անձանց կողմից կատարվող իրավախախտումների թողություն, որոնք կթաքցվեն իրավաբանական անձանց պատասխանատվության ներքո, մյուս կողմից հնարավոր է դառնում պատասխանատվության ենթարկել այն անձին, ով ընդհանուր առմամբ, իր պաշտոնական դիրքի հետ կապված մեղավոր է ճանաչվել, չնայած, որ այդ անձը չէր կարող փոխել իրադրությունը կամ «նշանակվել» է որպես իրավախախտման մեղավոր: Այսպես, օրինակ, որևէ արդյունաբերական ձեռնարկության գլխավոր ինժինների պաշտոն գրադեցնող անձը պարբերաբար պատասխանատվության կարող է ենթարկվել բնապահպանական օրենսդրության պահաջները խախտելու համար, այն դեպքում, երբ նշված անձն իրականում ոչինչ չէր կարող փոխել կազմակերպության աշխատանքի արդյունքում մթնոլորտային օդում վնասակար արտանետումների քանակի մեջ, քանի որ այդ ձեռնարկությունը նախագծվել և կառուցվել է մինչ իր տվյալ ձեռնարկությունում պաշտոնի նշանակվելը:

Վերոնշյալ բոլոր տարբերակների կողմնակիցներն ելնում են այն հիմնարար սկզբունքից, որ իրավաբանական անձին վերագրվող իրա-

²⁵⁰ Ст'ն Ավստրալիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1995թ. մարտի 12-ին):

վախախտումն իրականացվում է նրա աշխատակցի կողմից, թերևս իրավաբանական անձանց համար նախատեսված վարչական պատասխանատվության նորմերի վերլուծությունը նույնպես ցույց է տալիս, որ դրանք հիմնականում պայմանավորված են իրավաբանական անձանց կոնկրետ իրավասու պաշտոնատար անձի կամ աշխատակցի կողմից կատարված իրավախախտումներով: Տվյալ սկզբունքից բխող եզրահանգումների տարբերությունը կայանում է նրանում, թե՞ արդյոք ուսումնասիրողները համաձայնվում են աշխատակցի գործողությունները համարել իրավաբանական անձի գործողություն (այդ դեպքում պատասխանատվություն կրում է իրավաբանական անձը), թե ոչ (այս դեպքում պատասխանատվություն պետք է կրի աշխատակիցը):

Երկրորդ մոտեցման էությունն այն է, որ կարող է սահմանվել *և՛ իրավաբանական անձանց, և՛ նրանց աշխատակիցների վարչական պատասխանատվություն*: Գ. Ն. Բարխախը գրում է. «Իսկապես, պաշտոնատար անձը, իրականացնելով իր լիազորությունները, գործում է ոչ թե որպես անհատ, այլ որպես տվյալ կազմակերպության լիազոր ներկայացուցիչ: Նրա գործողությունները կազմակերպության համար ունենում են իրավաբանական հետևանքներ և պետք է ճանաչվեն որպես կազմակերպության գործողություններ²⁵¹»:

Ընդունելով վերը ներկայացված տեսակետներից յուրաքանչյուրի տրամաբանական ու հիմնավորված լինելը՝ հարկ է նշել, որ, երկու մոտեցումների պարագայում անվիճելի է որ իրավաբանական անձին վերագրվող իրավախախտումն իրականացվում է ֆիզիկական անձի կողմից: Ընդ որում, բազմաթիվ արտասահմանյան երկրների իրավունքում սահմանված է իրավաբանական անձին, և նրա աշխատակցին (պաշտոնատար անձին) միաժամանակ պատասխանատվության ենթարկելու կարգ:

Տեսության մեջ, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդրի քննարկման համատեքստում, կարևոր և վիճահարույց է հանդիսանում այն հարցը, թե արդյո՞ք իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը չի՞ ազատում ֆիզիկական անձին նույն արարքի կատարման համար վարչա-

²⁵¹ Տե՛ս Бахрах Д. Н. Индивидуальные субъекты административные права / Д. Н. Бахрах // Государство и право, 1994, №3, էջ 70:

կան պատասխանատվության ենթարկելուց: Հիմնախնդրի իրավահամեմատական վերլուծությունը փաստում է հետևյալը. որոշ երկրների օրենսդրությամբ սահմանված է՝ եթե իրավաբանական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում պատասխանատվությունից տվյալ զանցանքի կատարման համար մեղավոր ֆիզիկական անձին և հակառակը, եթե ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա չի ազատում իրավաբանական անձին տվյալ զանցանքի կատարման համար վարչական պատասխանատվությունից: Այս մոտեցումն ամրագրված է նաև այն երկրների քրեական օրենսդրությամբ, որոնք նույնաբնույթ արարքների համար նախատեսում են նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:

Եվրոխորհրդի անդամ պետությունների համար նախարարների կոմիտեի 1988 թ. «Կազմակերպությունների պատասխանատվության մասին» թիվ (88)18 հանձնարարականի հավելվածը նշում է, որ ձեռնարկությունը պետք է քրեական պատասխանատվություն կրի անկախ այն բանից, թե արդյո՞ք նույնականացվել է այն ֆիզիկական անձը, ում գործողությունները կամ անգործությունն ունեն իրավախախտման կազմ²⁵²: Ավելին, վերը նշված հանձնարարականի հավելվածում նշված է, որ կազմակերպությանը պատասխանատվության ենթարկելը չպետք է պատասխանատվությունից ազատի նույն արարքի կատարման համար ֆիզիկական անձին, և մասնավորապես, այն ֆիզիկական անձինք, ովքեր ղեկավարման գործառույթներ են իրականացնում այդ կազմակերպությունում, պատասխանատվության պետք է ենթարկվեն այն պարտավորությունների խախտման համար, որոնք հանգեցրել են հանցագործության կատարմանը²⁵³:

Այս համատեքստում, կարևոր է անդրադառնալ նաև սույն պարագրաֆի սկզբում նշված երկրորդ ենթահարցին, ըստ որի իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) միաժամանակյա պատասխանատվության ենթարկելու հնարավորության դեպ-

²⁵² Հղումն՝ ըստ համացանցի <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=233230&SecMode=1&DocId=698704&Usage=2>, 2-րդ կետ:

²⁵³ Տե՛ս նույն տեղը, 5-րդ կետ:

քում՝ աշխատակցի (պաշտոնատար անձի) որ արարքների համար պետք է իրավաբանական անձին ենթարկել պատասխանատվության: Արտասահմանյան իրավունքում որտեղ սահմանված է միաժամանակ իրավաբանական և պաշտոնատար անձանց պատասխանատվություն, ամրագրված են նաև մի շարք պայմաններ, որոնց դեպքում իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում կատարված արարքների համար:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Գաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը, տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից, այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար իրավաբանական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից²⁵⁴: Համանման կարգավորում է տրված նաև Ղազախստանի²⁵⁵, Էստոնիայի²⁵⁶, Մակեդոնիայի²⁵⁷, Մոլդովայի²⁵⁸, Ֆրանսիայի²⁵⁹, Չինաստանի²⁶⁰, Ավստրալիայի²⁶¹ քրեական կամ վարչական օրենսդրությամբ:

²⁵⁴ Տե՛ս Ռուսաստանի Գաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին):

²⁵⁵ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), 28-րդ հոդված:

²⁵⁶ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), 14-րդ հոդված:

²⁵⁷ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության զանգանքների մասին օրենսգրք, (ընդունվել է 1997թ.), 7-րդ հոդված:

²⁵⁸ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), 17-րդ հոդված:

²⁵⁹ Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 1992թ. հուլիսի 22-ին), 121-2-րդ հոդված, «Corporate criminal liability» Roland Hefendehl, էջ 289:

²⁶⁰ Տե՛ս Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 1997թ. մարտի 14-ին) 31-րդ հոդվածի 4-րդ մաս:

²⁶¹ Տե՛ս Ավստրալիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 1995թ. մարտի 12-ին) 12.2-րդ հոդվածի 4-րդ մաս:

Որոշ և վերը նշված երկրների օրենսդրությամբ նույն արարքի համար ֆիզիկական անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է հանդիսանում իրավախախտման կատարումը՝ «ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի» (ընդգծումը՝ Թ.Շ) : Բացի նշվածից, արտասահմանյան երկրների օրենսդրությամբ սահմանված են նաև այլ պայմաններ, մասնավորապես, ֆիզիկական անձանց շրջանակը, որոնց կողմից կատարված արարքների դեպքում տվյալ իրավաբանական անձն ենթարկվում է վարչական պատասխանատվության, սահմանափակ է, այսինքն՝ այդ արարքները պետք է կատարվեն իրավաբանական անձանց ներկայացուցիչների կամ ղեկավարների կողմից իրենց պարտականություններն ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու հետևանքով, որոնց առավել մանրամասն կանոնադառնանք ստորև:

Տարբերակվող կարգավորում է տրված Լիտվայի քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում²⁶²: Այսպես, իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում ֆիզիկական անձի կողմից կատարված այն հանցավոր արարքների համար, որոնք կատարվել են ի շահ կամ ի օգուտ իրավաբանական անձի, այն ֆիզիկական անձի կողմից, որը գործել է անձամբ կամ իրավաբանական անձի անունից, կամ եթե այդ ֆիզիկական անձն իրականացնում է ղեկավար գործառնություններ և աշխատելով տվյալ իրավաբանական անձում՝ ունի իրավունք ներկայացնելու իրավաբանական անձը, կամ իրավաբանական անձի անունից ընդունելու որոշումներ, կամ հսկողություն իրականացնելու իրավաբանական անձի գործունեության նկատմամբ: Ընդ որում, իրավաբանական անձը պատասխանատվություն կարող է կրել նաև այն դեպքում, երբ հանցավոր արարքը կատարվել է նրա օգտին իր աշխատակցի կամ իրավաբանական անձի լիազոր ներկայացուցչի կողմից վերը նշված անձանց նկատմամբ ոչ պատշաճ հսկողության արդյունքում:

Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի²⁶³ «Իրավաբանական անձի պատասխանատ-

²⁶² Տե՛ս Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին):

²⁶³ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին):

վությունը» վերտառությամբ 17-րդ հոդվածում սահմանված է, որ իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում այն արարքների համար, որոնք կատարվել են իր մարմինների կամ ներկայացուցիչների կողմից՝ տվյալ իրավաբանական անձի անունից կամ ի շահ նրա՝ համապատասխան սահմանված հետևյալ պայմանների՝ ա) եթե անձը մեղավոր է որոշակի գործունեություն իրականացնելու օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու կամ արգելքները չպահպանելու համար, բ) եթե անձը մեղավոր է այնպիսի գործունեություն իրականացնելու համար, որը չի համապատասխանում իր հիմնադիր փաստաթղթերին կամ դրանով նախատեսված նպատակներին, գ) արարք, որը վնաս է հասցրել կամ ստեղծել է այն հասցնելու սպառնալիք այլ անձի, հասարակությանը կամ պետությանը էական չափերով, իրականացվել է ի շահ տվյալ իրավաբանական անձի, թույլատրվել, օգտագործվել է նրա իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից:

Կամ Գերմանիայի «Վարչական իրավախախտումների մասին» օրենքը²⁶⁴ վարչական մարմիններին իրավասություն է վերապահում վարչական պատասխանատվության ենթարկել ինչպես իրավաբանական, այնպես էլ այն ֆիզիկական անձին, որը, ըստ վերը նշված օրենքի §30-ի, իրավունք ունի ներկայացնելու տվյալ իրավաբանական անձը կամ իրավաբանական անձի մարմինը կամ հանդես է գալիս որպես այդ մարմնի անդամ, կամ հանդես է գալիս որպես որպես իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչ կամ զբաղեցնում է ղեկավար պաշտոն՝ որպես նրա վստահված անձ կամ լիազոր ներկայացուցիչ կամ, որպես որևէ այլ անձ, որը պատասխանատու կարգով գործում է տվյալ իրավաբանական անձի ղեկավարության անունից, այդ թվում՝ վերահսկելով գործավարությունը կամ իրականացնելով ղեկավար պաշտոնում այլ վերահսկողական լիազորություններ: Ընդ որում, վերը նշված ֆիզիկական անձը պատասխանատվության է կրում եթե նրա կողմից կատարված քրեական կամ վարչական իրավախախտման արդյունքում խախտվել են իրավաբանական անձի վրա դրված պարտականությունները կամ նա օգուտ է ստացել կամ կարող էր ստանալ:

²⁶⁴ St'n «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Գաշտության օրենք (Ordnungswidrigkeiten), (ընդունվել է 1987թ. փետրվարի 19-ին):

Արտասահմանյան երկրների մեծամասնության օրենսդրական դրույթների բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս հստակ նշելու, որ օրենսդրորեն ամրագրված է իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվություն նույն իրավախախտման կատարման համար, սահմանելով, որ ֆիզիկական անձանց պատասխանատվությունը նույն արարքի համար չի բացառվում միայն այն դեպքում, եթե ֆիզիկական անձն այդ արարքը կատարել է *ի շահ կամ ի օգուտ* տվյալ իրավաբանական անձի: Բացի նշվածից կարևոր պայման է հանդիսանում նաև ֆիզիկական անձի կարգավիճակը:

Միևնույն ժամանակ, տեղին է հիշատակել, որ իրավաբան գիտականների մեծամասնությունը չի ընդունում իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվություն նույն արարքի համար, դիտարկելով այն քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքի խախտում, առ այն, որ չի կարելի կրկին անգամ պատժել միևնույն արարք համար: Շատերը նշում են նաև, որ իրավաբանական անձանց մեղքի որոշման սահմանված կանոնների պարագայում, պարզ չէ, թե ինչի համար է իրավաբանական անձն ենթարկվում պատասխանատվության այն դեպքում, երբ կոնկրետ կատարողի մեղքն իրավախախտման մեջ արդեն իսկ հաստատված է:²⁶⁵ Այս համատեքստում նշենք նաև, որ հայրենական օրենսդրությամբ ընդունված է նման մոտեցումը: Այսպես, ըստ «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ եթե իրավաբանական անձը սույն օրենքով սահմանված կարգով ենթարկվում է պատասխանատվության, ապա այդ նույն իրավախախտման համար ֆիզիկական անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության:

Իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա է նաև հետևյալ տեսակետը, ըստ որի՝ իրավաբանական

²⁶⁵ St'n Калинина Л. Л. Проблемы административной ответственности за нарушения финансового и налогового законодательства // Законодательство. 1999. №8. էջ 36, Сорокин В. Д. Правовое регулирование: Предмет, метод, процесс (макроуровень), -Спо., 2003. էջ 497:

անձի և նրա պաշտոնատար անձի ու նրանցից յուրաքանչյուրի մեղավորության որոշման նման մոտեցում հնարավոր է երկու դեպքում. եթե ենթադրենք, որ մեկ արարքով կատարվում է երկու իրավախախտում, կամ էլ եթե ենթադրենք, որ այդ դեպքում իրավաբանական անձն ու նրա պաշտոնատար անձը զանցակիցներ են²⁶⁶:

Կարծում ենք, սակայն, որ վերը նշված առաջին դեպքը պետք է բացառել, քանի որ երբ մեկ արարքով երկու իրավախախտում է կատարվում, այսպիսի իրավախախտումներում սուբյեկտը միշտ նույնն է: Իսկ ինչ վերաբերում է զանցակցության ինստիտուտին, ապա հարկ ենք համարում նշել, որ այս մոտեցումը վիճարկելի հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ, զանցակցության ինստիտուտը հայրենական օրենսդրությամբ կարգավորված չէ, և ուստի պարզ է, որ որպես զանցակիցներ նրանց օրենսդրորեն հնարավոր չէ պատասխանատվության ենթարկել: Սակայն համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում տրված հանցակցության սահմանման հետ, կարելի է, զանցակցությունը բնորոշել որպես երկու և ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցություն դիտավորյալ զանցանքին²⁶⁷: Օրինակ, Ֆրանսիայի քրեական իրավունքում իրավաբանական անձի և նրա աշխատակցի համատեղ պատասխանատվությունը բացատրվում է նաև նրանով, որ «...ուրիշի արարքի համար (իրավաբանական անձի) պատասխանատվությունը համարվում է իրականում նրա անձնական մեղավորությունը, որովհետև խախտել է հանցավոր արարքի օբյեկտիվ կատարողի նկատմամբ հսկողության պարտականությունը կամ էլ որովհետև ինքն այդ արարքի անուղակի կատարող է»²⁶⁸: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում իրավաբանական անձն ու պաշտոնատար անձը հանցակիցներ են, որտեղ իրավաբանական անձն անուղակի կատարող է, իսկ

²⁶⁶ Ст'я Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. Автореф. дис. ... канд. юрид. наук. – Красноярск, 2008, էջեր 168-191:

²⁶⁷ Կարծում ենք, սակայն, նախագծում անհրաժեշտ է լրացնել զանցակցության ինստիտուտը կարգավորող նորմեր, քանզի տեսականորեն հիմնավորված չէ դրա բացակայությունը նոր օրենսգրքի նախագծում:

²⁶⁸ Ст'я Крылова Н. Е. Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты /Н. Е. Крылова // Вестник Московского Университета. Серия 11. Право. - 1998. - №3. - էջ 75:

պաշտոնատար անձը՝ օբյեկտիվ կատարող է: Սակայն հայրենական իրավունքում չկան համատեղ կատարման նման ձևեր, ինչն էլ անհնարին է դարձնում արտասահմանյան օրենսդրության նման դրույթների կիրառման հնարավորությունը մեր օրենսդրությունում:

Այսպիսով, մեր կարծիքով, լիովին արդարացված է իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվության սահմանում նույն արարքի համար, քանի որ, եթե միայն վարչական պատասխանատվության ենթարկվի իրավախախտում կատարած ֆիզիկական անձը, ապա տվյալ իրավաբանական անձի համար այն չի կարող ունենալ նախակախիչ նշանակություն և դաստիարակչական ազդեցություն, ընդ որում, հարկ է նկատել, որ իրավաբանական անձի առանձին անդամը կարող է և չզիտակցել իր գործողության կամ անգործության հակաօրինական լինելը, իսկ տվյալ իրավաբանական անձը, որպես կանոն, կատարված իրավախախտման արդյունքում բավարար օգուտ է ստանում: Իրավախախտ աշխատակցի կողմից վճարած տուգանքն էլ այս կամ այն կերպ փոխհատուցվում է տվյալ իրավաբանական անձի կողմից:

Միևնույն ժամանակ նշենք, որ իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվություն սահմանելու համար, կարծում ենք, պետք է նախատեսել նաև որոշակի չափանիշներ, մասնավորապես, ա) ֆիզիկական անձի ո՞ր գործողությունների կամ անգործության համար պետք է ծագի իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն, բ) կոնկրետ ո՞ր ֆիզիկական անձանց գործողությունների համար կարող է իրավաբանական անձը կրել վարչական պատասխանատվություն, այլ կերպ ասած՝ արարք կատարող մեղսունակ ֆիզիկական անձի կարգավիճակը՝ դրանից բխող լիազորություններով:

Կարծում ենք, որ իրավաբանական անձը վարչական պատասխանատվություն պետք է կրի իր աշխատակցի (պաշտոնատար անձի) կողմից վարչական իրավախախտում կատարելու համար այն դեպքում, եթե նա իր գործողություններով տվյալ իրավաբանական անձի համար օգուտ բերելու նպատակ է հետապնդում կամ գործում է ի շահ տվյալ իրավաբանական անձի: Օրինակ, եթե իրավաբանական անձի աշխատակիցը խախտում է ճանապարհային երթևեկության կանոնները, այն

չի կատարվում ի շահ տվյալ իրավաբանական անձի, կամ չի կարող նրան օգուտ բերել: Հետևաբար, եթե աշխատակցի (պաշտոնատար անձի) գործողություններն ուղղված են ի վնաս տվյալ իրավաբանական անձի, ապա, կարծում ենք, իրավաբանական անձը չպետք է պատասխանատվության ենթարկվի: Այսինքն, արարքը պետք է կատարված լինի ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի, սակայն իրավաբանական անձի շահերից բխող ոչ բոլոր գործողությունները կարող են պատասխանատվության հիմք հանդիսանալ:

Ինչ վերաբերում է երկրորդ չափանիշին, ապա նախ՝ աշխատակիցը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտում կատարելու պահին պետք է լինի մեղսունակ, քանի որ անմեղսունակ վիճակում կատարած գործողությունների համար ֆիզիկական անձը պատասխանատվություն չի կրում: Ի դեպ ցանկացած կազմակերպականությունում քայլին փոխհարաբերությունների ստեղծման դեպքում իրավաբանական անձն ունակ չէր լինելու վերահսկել այդ անձի գործողությունները, այսինքն՝ նրա մոտ բացակայում է օրենքով սահմանված պարտականություններին հետևելու հնարավորությունը, հետևաբար, վարչական իրավախախտում կատարելու մեջ բացակայում է նաև նրա մեղավորությունը: Երկրորդ՝ աշխատակիցը (պաշտոնատար անձը) պետք է գործի իր լիազորությունների շրջանակներում: Իրավաբանական անձը չի կարող պատասխանատվություն կրել իր աշխատակցի (պաշտոնատար անձի) այն գործողությունների համար, որոնք կատարվել են իր իրավասությունների (պաշտոնական պարտականությունների) սահմաններից դուրս կամ այդ սահմանները խախտելով, քանի որ այդ դեպքում աշխատակիցը գործում է իր ծառայողական փոխհարաբերություններից դուրս: Իրավաբանական անձը չի կարող պատասխանատվություն կրել այն վարչական իրավախախտումների համար, որոնք իր աշխատակիցն իրականացրել է որպես մասնավոր անձ և, եթե վերջինս դուրս է եկել իր իրավունքների և պարտականությունների սահմաններից: Այս համատեքստում նշենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձն ենթարկվել է վարչական պատասխանատվության, ապա տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձը չի ազատվում վարչական պատասխանատվություն:

նից, այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատու իրավաբանական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից: Այլ կերպ ասած, սահմանվել է ֆիզիկական անձի և իրավաբանական անձի համաժամանակյա պատասխանատվություն, սակայն նշված իրավակարգավորումն ունի մի շարք թերություններ: Մասնավորապես, տվյալ պարագայում սահմանված չէ ֆիզիկական անձի կարգավիճակը, և նրա որ գործողությունների համար պատասխանատվություն պետք է կրի իրավաբանական անձը: Նախագծով սահմանված նորմերի համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ տվյալ դեպքում խոսքն իրավաբանական անձի ղեկավարի կամ պատասխանատու անձի մասին է: Քանզի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում իրավաբանական անձի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Իսկ վերջիններիս բնորոշումը տրված է նախագծի 3-րդ հոդվածի 20 և 21-րդ կետերով: Այսպես, *իրավաբանական անձի ղեկավարը*՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարն է, որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով դրված է իրավաբանական անձի գործունեության ղեկավարման պարտականությունը, իսկ *պատասխանատու անձը*՝ իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից հանդես եկող կամ իրավաբանական անձում իր պաշտոնական, ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարող իրավաբանական անձի հիմնադիրների, ղեկավարների, պաշտոնատար այլ անձանց, աշխատակիցների, ինչպես նաև իրավաբանական անձի անունից հանդես եկող այլ անձ: Ինչպես տեսնում ենք, եթե զանցանքը կատարել է իրավաբանական անձի աշխատակիցը, այդ դեպքում՝ իրավաբանական անձը պատասխանատվության չի ենթարկվում, իսկ եթե այն կատարել է իրավաբանական անձի պատասխանատու անձը, ապա նա ենթարկվում է վարչական պատասխանատվության: Տվյալ իրավակարգավորումը, անշուշտ, չի կարող արդարացված լինել:

Բնորոշ է այն, որ նախագծի՝ անձնական պատասխանատվության սկզբունքը սահմանող 11-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ իրավաբանական անձի ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վարչական պատասխանատվության է ենթարկվում նաև իրավաբանական անձը, եթե սույն օրենսգրքով այդ պատասխանատվությունն ուղղակի դրված չէ իրավաբանական անձի ղեկավարի կամ պատասխանատու անձի վրա, այլևս ավելորդ է դառնում վերը նշված կարգավորման պարագայում: Բացի այդ, տվյալ իրավակարգավորումն իրավաչափ չէ, քանի որ օրենսդիրը չի կարող նման դրույթ սահմանել միայն իրավաբանական անձի ղեկավարի կամ պատասխանատու անձի համար, քանզի հնարավոր է որ կոնկրետ պարտականության կատարումը դրված է իրավաբանական անձի մեկ այլ աշխատակցի վրա, այս դեպքում, առկա է հակասական կարգավորում, մասնավորապես, իրավախախտման անմիջական կատարողը պատասխանատվություն չի կրում: Այս կարգավորումը հակասում է նաև նախագծում ամրագրված այն սկզբունքին, որ եթե իրավաբանական անձն ենթարկվել է վարչական պատասխանատվության, ապա տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձը չի ազատվում վարչական պատասխանատվությունից, այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատու իրավաբանական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից:

Հետևաբար, կարծում ենք, որ իրավաբանական անձը վարչական պատասխանատվություն պետք է ենթարկվի այն վարչական իրավախախտումների համար, որոնք կատարվել են ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի, այն ֆիզիկական անձի կողմից, որը՝ 1) գործել է իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից, կամ տվյալ իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչն է, կամ 2) տվյալ իրավաբանական անձի ղեկավարն է, կամ 3) տվյալ իրավաբանական անձի աշխատակիցն է կամ պաշտոնատար անձը, որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով կամ աշխատանքային պայմանագ-

րով դրված են կոնկրետ պարտականություններ, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը: Ուստի առաջարկում ենք, նշված նախագծի 34-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3.Իրավաբանական անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում այն վարչական իրավախախտումների համար, որոնք կատարվել են ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի, այն ֆիզիկական անձի կողմից, որը՝ 1) գործել է իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից, կամ տվյալ իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչն է կամ, 2) տվյալ իրավաբանական անձի ղեկավարն է, կամ, 3) տվյալ իրավաբանական անձի աշխատակիցն է կամ պաշտոնատար անձը, որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով կամ աշխատանքային պայմանագրով դրված է կոնկրետ պարտականություններ, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը:»:

Կարծում ենք, իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու և հայեցողական որոշումներ կայացնելիս որոշակի սահմաններ ընդգծելու անհրաժեշտությունից, անշուշտ, կարելի է օրենսդրորեն նշված հոդվածում նաև սահմանել «ի շահ կամ ի օգուտ» եզրույթի հասկացությունը: Մասնավորապես, ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի կատարված են համարվում այն վարչական իրավախախտումները, որոնց շարժառիթներից են՝ 1) գույքային բնույթի օգուտ ձեռքբերելը տվյալ իրավաբանական անձի համար, այդ թվում՝ եկամտատ ստանալը կամ ունեցած եկամտի չափերն ավելացնելը, ծախսերից խուսափելը կամ դրանց չափերը կրճատելը, 2) կատարված վարչական իրավախախտման արդյունքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պատասխանատվությունից խուսափելը կամ այլ իրավախախտում կատարելը թաքցնելը, 3) գույքային իրավունքներ ձեռքբերելը կամ գույքային բնույթի պարտականություններից ազատվելը:

Այսպիսով, եթե իրավաբանական անձն ենթարկվել է վարչական պատասխանատվության, ապա տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձը չի ազատվում վարչական պա-

տասխանատվությունից, այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատու իրավաբանական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից: Ընդ որում, իրավաբանական անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում այն վարչական իրավախախտումների համար, որոնք կատարվել են ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի, այն ֆիզիկական անձի կողմից, որը՝ 1) գործել է իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից, կամ տվյալ իրավաբանական անձի լիազոր ներկայացուցիչն է կամ, 2) տվյալ իրավաբանական անձի ղեկավարն է, կամ, 3) տվյալ իրավաբանական անձի աշխատակիցն է կամ պաշտոնատար անձը, որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով կամ աշխատանքային պայմանագրով դրված է կոնկրետ պարտականություններ, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը:

§3. Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի շրջանակը ու դրանց իրավական կարգավորման հիմնախնդիրները

Վարչական տույժը կարելի է բնորոշել որպես վարչական պատասխանատվության միջոց, որը օրենքով սահմանված հիմքերով և կարգով նշանակվում ու կիրառվում է իրավասու պետական մարմինների կողմից վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ:

Վարչական տույժի օրենսդրական բնորոշումը տրված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 22-րդ հոդվածում, որի համաձայն՝ վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց: Բնորոշ է այն, որ օրենսգրքի նշված հոդվածում չի նշվում, որ այն հանդիսանում է *վարչական* պատասխանատվության միջոց (*ընդգծումը՝ Թ.Շ.*), սակայն նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն կիրառվում է վարչական իրավախախտում կատարած անձի նկատմամբ զանցանք կատարելու համար՝ սոցիալական արդարությունը վերականգնելու, անձին ուղղելու, օրենքներն և իրավակարգը

հարգելու ոգով դաստիարակելու, ինչպես նաև իրավախախտողի ու այլ անձանց կողմից նոր վարչական իրավախախտումներ կատարելը կանխելու նպատակներով:

Մի շարք երկրների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունում կիրառելի է «վարչական պատիժ» հասկացությունը²⁶⁹, քանի որ նպատակային նշանակությամբ այն նման է քրեական պատժին: Ռուսական իրավական գրականության մեջ այս տերմինների փոխակերպումը հիմնավորվել է այն մեկնաբանությամբ, որ ՌԴ Սահմանադրական դատարանը վարչական իրավախախտումների վերաբերյալ նորմերին առնչվող գործերի վերաբերյալ որոշումներում կիրառել է հենց «վարչական պատիժ» տերմինը²⁷⁰:

Վարչական տույժերն որոշ չափով նման են վարչական խափանիչ միջոցներին, քանի որ երկուսի համար էլ ընդհանուրն ինչպես դրանց կիրառման հիմքն է, այսինքն՝ վարչական իրավախախտումները, այնպես էլ դրանց նպատակային նշանակությունը, այսինքն՝ երկուսն էլ կատարում են իրավախախտումների կանխարգելման գործառույթ: Թերևս, վարչական խափանիչ միջոցները, լինելով պետական հարկադրանքի տեսակներ, այնուամենայնիվ, չեն համարվում վարչական պատասխանատվության միջոցներ²⁷¹, և առանձին դեպքերում դրանք կարող են նախորդել նաև քրեադատավարական միջոցների կիրառման

²⁶⁹ Տե՛ս Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգիրք (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին), Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), Ռուսաստանի Գաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք, (ընդունվել է 1997թ.), և այլն:

²⁷⁰ Տե՛ս օրինակ, Определение Конституционного суда РФ от 20 мая 1997г. по делу о проверке конституционности пп. 4 и 6 ст. 242 и ст. 280 Таможенного Кодекса РФ в связи с запросом Повгородского областного суда // СЗ. 1997. № 21.-Ст. 2542

²⁷¹ Տե՛ս Գանիբեյան Գ.Բ. «Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում», (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌՏ» հրատարակչություն, 2007, էջ 105:

նը²⁷²: Հասարակական հարաբերությունների զարգացումն իր էական ազդեցությունն ունեցավ նաև վարչական տույժերի համակարգի վրա ու ներկայումս տույժերի համակարգի ներքո հասկանում են նորմատիվ իրավական ակտերով նախատեսված հարկադրանքի միջոցները²⁷³:

Վարչական տույժերը սերտորեն փոխկապակցված են և կազմում են միասնական համակարգ²⁷⁴ իրենց բնորոշ հատկանիշներով: Ամփոփ տեսքով վարչական տույժի հատկանիշներն ունեն հետևյալ պատկերը՝ 1) համարվում է հակահրավակական արարքի, այսինքն՝ վարչական իրավախախտման իրավական հետևանք, 2) նշանակվում է հատուկ վարույթային կարգով, այսինքն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում, 3) այն իրավախախտի համար առաջացնում է առավել նվազ ծանր հետևանքներ, քան քրեական պատիժների դեպքում: Սակայն, նվազ լինելու գնահատականին, կարելի է վերապահումով վերաբերել, քանզի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում սահմանված են վարչական տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են, օրինակ իրավաբանական անձի լուծարումը, որոնք ևս իրենց հետևանքներով համարժեք են քրեական պատիժներին, 4) այն նշանակվում է դատարանի, պետական իրավասու մարմինների կողմից: Ընդ որում, ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ կարգով, օրինակ՝ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: Հարկ է նկատել, որ օրենսդրական բարեփոխումների արդի ժամանակաշրջանում հայեցակարգային խնդիր առաջ քաշվեց վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը թոթափելու համար դատարաններին հանել վարչական տույժեր նշանակող

²⁷² St'u Kozlov Ю. М. "Àâi èi èñòðàðèâi íá i ðàâi". ó+еáник для вузов по специальности "Юриспруденция" /под редакцией Л.А.Попова, Москва, "Р ÐËÑÒÛ", 2005. էջ 357:

²⁷³ St'u I eðèèi À.Ñ. i ði áèâi ù ñi ááððáí ñòâi áâi èý ñèñòâi ù íàèàçáí èé â ñi ááðñèi ù óâi èi ái íi i ðàâá// Æèðóáèüí ùá i ði áèâi ù óâi èi ái íi i ðàâá: Ñáí ði èé íáð+í ùð ðàâi ò. I .: ËÃÏ ÁÍ ÑÑÑÐ, 1988, էջ 103:

²⁷⁴ St'u Գ-անիեյան Գ.Բ. «Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում», (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌՏ» հրատարակչություն, 2007, էջ 105, Бахрах Д. П. Административное право России. М., 2000. էջ 497. Максимов И. В. Система административных наказаний по законодательству РФ. էջ 20 – 24:

տուբյեկտների շարքից, դրան զուգահեռ նաև փոփոխություններ կատարվեցին վարչական դատավարության օրենսդրության մեջ՝ վարչական դատարանին իրավունքն վերապահելով վարչական իրավախախտումների վերաբերյալ հարցը քննել միայն վարչական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից, այսինքն՝ ՀՀ սահմանադրությամբ և օրենքով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ, 5) վարչական տույժի նշանակումը չի հանգեցնում դատվածության, սակայն վարչական տույժի ենթարկված լինելու հանգամանքը հիմք է ինչպես կրկնակի իրավախախտում կատարելու դեպքում արարքի որակման համար, այնպես էլ արարքի՝ հանցագործության որակման համար, քանի դեռ ՀՀ քրեական օրենսգրքում պահպանվել են որոշ հողվածներ, որոնցով արարքը հանցագործություն որակելու համար դիսպոզիցիայում սահմանված պայման է հանդիսանում նաև վարչական տույժի ենթարկված լինելու հանգամանքը, օրինակ՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ գավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնակամ շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը վերտառությամբ 315.1 հողվածը: Դատախրավական բարեփոխումների ներկա փուլում խնդիր է դրված ՀՀ քրեական օրենսգրքի բոլոր դիսպոզիցիաներից հանելու արարքը որակելու համար վարչական տույժի ենթարկված լինելու պայմանը՝ շեշտը դնելով արարքի արդյունքում պատճառված վնասի չափի կամ դրա հետևանքների վրա: Ի դեպ, օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ վարչական տույժի ենթարկված լինելու հանգամանքը որևէ այլ սահմանափակում չի առաջացնում, 6) իրավախախտի վրա հարկադիր ներգործության հնարավորություն պետական իրավասու մարմնի կողմից: Անշուշտ, իրավախախտը կարող է կամովին իրականացնել իր նկատմամբ նշանակված վարչական տույժը, օրինակ՝ վճարելու սահմանված ժամկետում նշանակված վարչական տուգանքը, սակայն այն չի փոխում վարչական տույժի հարկադրական էությունը, քանի որ պետությունը միշտ էլ իրավունք ունի իրավախախտին հարկադրելու կրելու նրա նկատմամբ նշանակված վարչական տույժից

բխող սահմանափակումները, օրինակ՝ տուգանքը կամովին չվճարելու դեպքում հարկադիր կարգով գանձելու հնարավորությունը:

Որոշ իրավաբան-գիտնականներ տույժերը բաժանում են երեք խմբի՝ 1) բարոյական, որոնք ներգործում են անմիջականորեն իրավախախտում կատարած անձի հոգեբանության վրա և արտահայտվում են պետության կողմից անձին ուղղված կարգադրագրով՝ հետագայում մնան վարքագիծ չդրսևորելու համար, օրինակ՝ նախազուշացում տույժի տեսակը, 2) գույքային կամ նյութական. արտահայտվում են իրավախախտում կատարած անձին ինչ որ բանից զրկելով, մասնավորապես, դրամից (տուգանք) կամ գույքից (բռնագրավում), 3) կազմակերպական²⁷⁵, որոնց նպատակն է սահմանափակել անձի ազատությունը, որոշակի իրավունքի իրականացումը, որոշակի տեսակի գործունեությանը զբաղվելու իրավունքը:

Սույն պարագրաֆում նպատակահարմար ենք համարում լուսաբանելու բացառապես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակները, դրանց նշանակման, կիրառման կարգն ու առանձնահատկությունները:

Վերոհիշյալ երեք խմբերում ընդգրկված տույժի միջոցները կարող են կիրառվել նաև իրավաբանական անձանց նկատմամբ, իհարկե, հաշվի առնելով նրանց իրավական էության առանձնահատկությունները, որոնք կարող են անդրադառնալ պատասխանատվության այս կամ այն միջոցի կիրառման արդյունավետության վրա: Իսկ առավել արդյունավետը դրանցից հանդիսանում են գույքային և կազմակերպական տույժերի կիրառումը, որը և հաստատվում են նաև այն երկրների օրենսդրական պրակտիկայով, որտեղ սահմանված է կոլեկտիվ սուբյեկտների հանրային պատասխանատվությունը: Արտասահմանյան երկրներում կիրառվող իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության կողմնակիցները գտնում են, որ ավանդական մի շարք պատիժներ, օրինակ ազատագրումը, չեն կարող կիրառվել իրավաբա-

²⁷⁵ Տե՛ս Дымченко В.И., Административная ответственность организации: Автореферат дис. на соиск. уч. степени канд. юр. наук. - Свердловск, 1983. С. 6; Якуба О. М. Административное право (Общая часть). Киев, 1975. էջեր 169-179:

նական անձանց նկատմամբ, սակայն խնդիրն այստեղ առավել գործնական և կազմակերպական բնույթ ունի²⁷⁶:

Այսպիսով, իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի ժամանակակից դասակարգումը կարող է ունենալ հետևյալ պատկերը՝ 1) բարոյաիրավական բնույթի միջոցներ, որպես այդպիսին համարվում է նախազուշացում վարչական տույժի տեսակը, որը, ի դեպ, արտասահմանյան երկրների մեծամասնությունում որպես իրավաբանական անձանց նկատմամբ սահմանված տույժի տեսակ օրենսդրորեն հազվադեպ է ամրագրված, 2) գույքային և դրամական բնույթի տույժեր՝ տուգանքը, գույքի բռնագրավումը, 3) կազմակերպական բնույթի տույժեր՝ որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, իրավաբանական անձի գործունեության դադարեցում, լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում կամ դադարեցում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված են հետևյալ վարչական տույժերը՝ 1) նախազուշացում, 2) տուգանք, 3) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնում, 4) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 5) քաղաքացուն տրված հատուկ իրավունքից զրկում (տրանսպորտային միջոցներ վարելու, որսորդության իրավունքից)²⁷⁷: Ի դեպ, նույն հոդվածի 3-րդ պարբերության դրույթների վերլուծությունը թույլ է տա-

²⁷⁶ Տե՛ս Օրինակ Ավստրալիայի քրեական օրենսգրքը սահմանում է կազմակերպությունների քրեական պատասխանատվություն ցանկացած հանցանքի համար, ներառելով նույնիսկ այն տեսակները, որոնց համար նախատեսված է ազատությունից զրկում (12-րդ գլխի 12.1-րդ հոդվածի 2-րդ մաս), տե՛ս Уголовный кодекс Австралии / И. Д. Козочкин, Е. Н. Трикоз, - СПб., 2002: Սույն աշխատության առաջին գլխի առաջին պարագրաֆում մանրամասն ներկայացվել են այն երկրները, որոնց օրենսդրությամբ ևս նախատեսված են քրեական պատասխանատվություն ցանկացած հանցանքի համար, ներառելով նույնիսկ այն տեսակները, որոնց համար նախատեսված է ազատությունից զրկում:

²⁷⁷ Մինչ 2006 թ. հունվարի 14-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ որպես վարչական տույժի տեսակներ ամրագրված էին վարչական կալանքը և ուղղիչ աշխատանքները, որոնք հիշյալ օրենքի ընդունմամբ հանվեցին օրենսգրքից:

լիս նշելու, որ որպես տույժի առանձին տեսակ օրենսդիրը սահմանում է նաև ՀՀ սահմաններից վարչական վտարում վարչական տույժի տեսակը: Նշված օրենսգրքի հատուկ մասի նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տույժի վերոնշյալ տեսակները, նշանակվում են բացառապես ֆիզիկական և պաշտոնատար անձի նկատմամբ, քանզի ինչպես բազմիցս նշել ենք, սույն օրենսգրքով իրավաբանական անձինք վարչական պատասխանատվության սուբյեկտ չեն հանդիսանում²⁷⁸, այնուամենայնիվ, դա բխում է մի շարք կոնկրետ օրենսդրական ակտերից: Ուստի իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակների ցանկն ավելի լայն է, քան նախատեսված է նշված օրենսգրքով:

Հարկ է նկատել, որ որևէ օրենսդրական ակտով սահմանված չէ բացառապես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի սպառիչ ցանկ, սակայն դրանց մասին կարելի է պատկերացում կազմել՝ դատելով իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերի վերլուծությունից: Այսպես, օրինակ, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքով²⁷⁹, սահմանված են ինչպես քաղաքաշինության բնագավառում իրավաբանական անձանց կողմից կատարվող զանցանքների տեսակները, այնպես էլ դրանց առնչությամբ նրանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի տեսակները: Կամ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքներով²⁸⁰ կազմակերպությունների նկատմամբ նշանակվող տույժի տեսակ

²⁷⁸ Նշված տույժի տեսակները, բացառությամբ հատուկ իրավունքից զրկելու և վարչական վտարում վարչական տեսակների, կարող են նշանակվել և կիրառվել նաև իրավաբանական անձանց նկատմամբ, եթե իրավաբանական անձինք այդ օրենսգրքով ճանաչվեն որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ:

²⁷⁹ Տե՛ս «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին):

²⁸⁰ Տե՛ս «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 2004 թ. նոյեմբերի 22-ին), «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 2006 թ. նոյեմբերի 28-ին):

է համարվում որոշակի վայրում որոշակի ժամկետով տվյալ տեսակի գործունեության կասեցումը և այլն:

Այսպիսով, օրենսդրության ամփոփ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել հիմնականում հետևյալ տույժի տեսակները՝ 1) նախազգուշացում, 2) վարչական տուգանք, 3) լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, 4) լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում, 5) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 6) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, 7) իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

Այս ցանկը սպառիչ չէ, այլ օրենսդրական ակտերով կարող են նախատեսվել նաև վարչական տույժի այլ տեսակներ: Ընդհանուրը, թերևս, այս տույժի տեսակների պարագայում այն է, որ դրանք ունեն գույքային բնույթ, ուղղված են իրավաբանական անձի գույքային իրավունքների սահմանափակմանը:

Նոր օրենսգրքի նախազգուշացումի հատուկ մասի նորմերի և գործող օրենսդրության նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվում են ավելի խիստ վարչական տույժի միջոցներ, քան ֆիզիկական անձանց նկատմամբ: Կարծում ենք նման մոտեցումն իրավաչափ է, քանի որ պետությունը նման կերպ վարչաիրավական ներգործություն է ունենում տնտեսվարող այն սուբյեկտների վրա, որոնք դուրս են եկել պետության անմիջական հսկողությունից, և միայն այս դեպքում կիրականացվեն վարչական տույժի նպատակները:

Հատկանշական է, որ այլ երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալ ոչ միանշանակ պատկերը: Մասնավորապես, օրինակ, Մոլդովայի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն՝ սահմանված է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժի տեսակների սեղմ շրջանակ, որպիսիք են տուգանքը և որոշակի տեսակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը²⁸¹: Իսկ Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը սահմանում է ի-

²⁸¹ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), 32-րդ հոդված:

րավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի լայն շրջանակ՝ 1) նախազգուշացում, 2) վարչական տուգանք, 3) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնում, 4) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի, վարչական իրավախախտման արդյունքում ձեռքբերված գույքի բռնագրավում, 5) հատուկ իրավունքից զրկում, 6) լիցենզիայի, հատուկ թույլտվության գործողության, որակավորման վկայականից զրկում կամ որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի տեսակի գործողությունների իրականացման դադարեցում, ռեեստրից հանում, 7) ապօրինի շինության հարկադիր քանդում, 9) որոշակի գործունեության կամ որոշակի տեսակի գործունեությանը զբաղվելու իրավունքի դադարեցում կամ արգելում²⁸²: Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատիժների տարբերվող և լայն շրջանակ սահմանված է նաև Ֆրանսիայի օրենսդրությամբ²⁸³: Իսկ «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենքի §30-ի համաձայն՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժի տեսակը՝ վարչական տուգանք է: Նույն օրենքի §56-ով սահմանված է նվազ նշանակություն ունեցող զանցանքների դեպքում նախազգուշացման վարույթի իրականացման կարգը, որը կարող է ուղեկցվել ոչ միայն նախազգուշացում վարչական տույժի նշանակմամբ, այլ նաև սահմանված չափով նախազգուշացման գումարի բռնագանձմամբ²⁸⁴:

Հարկ է նշել, որ այլ երկրների օրենսդրության համակողմանի և իրավահամեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ այնուհանդերձ, իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակներն առավել լայն են, ուղղակի դրանք դասակարգված արտացոլում են ստանում այն երկրների օրենսդրությունում, որոնք ունեն իրավաբանական անձանց համար սահմանված քրեական և վարչական պատասխանատվություն: Այսպես, օրինակ, իրավաբանական անձի

²⁸² Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), 45-րդ հոդված:

²⁸³ Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1992թ. հուլիսի 22-ին), 131-37 և 131-39 հոդվածներ:

²⁸⁴ Տե՛ս «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենք, (ընդունվել է 1987թ. փետրվարի 19-ին):

լուծարումը շատ երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի տեսակ է, օրինակ՝ Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Ռումինիա և այլն²⁸⁵:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են հետևյալ վարչական տույժերը՝ 1) նախազգուշացում, 2) տուգանք, 3) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 4) լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում, 5) լիցենզիայի, թույլտվության գործողության դադարեցում, 6) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, 7) իրավաբանական անձի գործունեության դադարեցում, 8) հատուկ իրավունքից զրկում, 9) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկում: Ի դեպ, նույն հոդվածի նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են նախատեսվել և կիրառվել հետևյալ վարչական տույժերը՝ 1) *նախազգուշացում, 2) վարչական տուգանք, 3) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 4) լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում, 5) լիցենզիայի, թույլտվության գործողության դադարեցում, 6) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, 7) իրավաբանական անձի գործունեության դադարեցում*:

Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող, և ընդհանուր առմամբ, վարչական տույժերը բաժանվում են հիմնական և լրացուցիչ տեսակների: Որպես հիմնական տույժի տեսակ Նախազգով սահմանված են նախազգուշացումը և վարչական տուգանքը, իսկ տույժի մյուս տեսակները՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացած առարկայի կամ գույքի բռնագրավումը, որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, իրավաբանական անձի գործունեության դադար-

²⁸⁵ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2004թ.):

րեցում, լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում, լիցենզիայի, թույլտվության գործողության դադարեցում, կարող են սահմանվել և նշանակվել ինչպես հիմնական, այնպես էլ որպես լրացուցիչ վարչական տույժեր: Թերևս մեկ զանցանքի համար կարող է նշանակվել միայն մեկ հիմնական տույժ: Հիմնական տույժին օրենքով սահմանված կարգով և դեպքերում կարող է միացվել մեկ կամ մի քանի լրացուցիչ տույժ:

Հարկ ենք համարում նշել, որ մինչև վերը նշված նախագծի լրամշակված տարբերակն Ազգային ժողով ներկայացնելը, նշված տույժերի ցանկում սահմանված էր նաև որակավորումից զրկելը տույժի տեսակը և բանկային ու հարկային ոլորտի իրավախախտման բոլոր տեսակները, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբն իր աշխատանքի հիմքում դրել էր օրենսգրքի մշակման հայեցակարգային այն դրույթը, ըստ որի՝ պետք էր մշակել ամբողջական կողմֆիկացված ակտ: Հետագայում, սակայն, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ պետական եկամտների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում Կառավարության որոշմամբ այդ դրույթները, այդ թվում՝ վարչական տույժի վերը նշված տեսակը հանվեցին նոր օրենսգրքի նախագծից: Հատկանշական է, սակայն, որ ՌԴ նախագահը ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի վրա վետո դրեց, նաև այն պատճառաբանությամբ, որ այն չէր սահմանում բանկային և հարկային ոլորտի իրավախախտումները, ինչպես նաև լիցենզիայի կասեցում, դադարեցում, որակավորումից զրկում և այլն: Չնայած, շուրջ մեկ տարի տևած լրամշակման աշխատանքներին, այնուամենայնիվ, ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքում²⁸⁶ ամրագրվեց միայն որակագրկում վարչական տույժի տեսակը, իսկ 2005 թ. այս հոդվածում լրացվեց վարչական տույժի ևս մեկ տեսակ՝ գործունեության վարչական դադարեցումը²⁸⁷:

²⁸⁶ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), հոդված 3.2:

²⁸⁷ Տե՛ս նույն տեղը, լրացված «Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՌԴ օրենքով, 09.05.2005 N 45-Փ3:

Իրավահամեմատական վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ Նախագծում, սահմանված են իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի, թերևս, ամբողջական շրջանակ, որոնք համահունչ են ոչ միայն այլ երկրների վարչական, այլև քրեական օրենսդրությանը: Սակայն, կարծում ենք, որ Նախագծում սահմանված տույժի տեսակներն ունեն օրենսդրական և հայեցակարգային որոշակի թերություններ, որոնց ստորև կանոնադաշնանք իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող տույժերի տեսակներն առանձին-առանձին ներկայացնելիս:

Նախագուշացում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում տրված չէ նախագուշացում վարչական տույժի տեսակի բնորոշումը: Մասնավորապես, վերը նշված օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախագուշացումը որպես վարչական տույժի միջոց կիրառվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախագուշացումն արձանագրվում է այլ սահմանված եղանակով²⁸⁸:

Հարկ է նկատել, որ տույժի այս տեսակը կիրառվում է այն դեպքում, երբ ցածր է վարչական իրավախախտման հանրային վտանգավորության աստիճանը՝ հաշվի առնելով իրավախախտի անձը և այլ հանգամանքներ, այն դեպքում, երբ տույժի այս տեսակը սահմանված է որպես այլընտրանքային տեսակ:

Օրենսդրական այս բացը լրացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում, որի 47-րդ հոդվածի համաձայն՝ նախագուշացումը պաշտոնական զգուշացում է վարչական իրավախախտում կատարելու անթույլատրելիության մասին: Նախագծում նույն հոդվածի 3-րդ մասով սահմանափակվել է վարչական մարմնի հայեցողական լիազորությունը՝ ամրագրելով, որ առաջին անգամ կատարած այն զանցանքի համար, որի համար օրենսգրքով վարչական տուգանքի առավելագույն չափը չի գերազանցում այն նշանակելու պահին օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկը՝ ֆիզիկական անձանց համար, հիսնապատիկը՝ պաշտոնատար անձանց համար, հարյուրապատիկը՝ անհատ ձեռնարկատե-

²⁸⁸ Գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց կարող են նախատեսվել նաև նախագուշացման արձանագրման համակարգչային, էլեկտրոնային կամ այլ եղանակներ:

րերի և իրավաբանական անձանց համար, վարչական տուգանքի փոխարեն կարող է կիրառվել նախագգուշացում տույժի միջոցը:

Ի դեպ, նշված նախագծում նաև հստակ իրավական ձևակերպում է ստացել իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող գործող օրենսդրությամբ ամրագրված նվազ նշանակություն ունեցող զանցանքի դեպքում վարչական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը սահմանող նորմը, որը վարչական մարմիններին կամայական որոշումներ ընդունելու հնարավորություն է տալիս, քանի որ գործող օրենսգրքում տրված չէ դրա բնորոշումը²⁸⁹: Ընդ որում, այս դեպքում անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից՝ բավարարվելով բանավոր գգուշացմամբ, որը վարչական տույժի տեսակ չէ և նույնական չէ նախագգուշացում վարչական տույժի տեսակի հետ, քանի որ այս դեպքում անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից:

Այսպիսով նախագգուշացումը, որպես իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող բարոյաիրավական բնույթի միջոց, ոչ միայն պետության իրավասու մարմնի բացասական վերաբերմունքն է, այլև ներառում է իրավաբանական անձի հակաիրավական արարքի պաշտոնական դատապարտումը և պետության նպատակը ստիպելու իրավաբանական անձին կատարելու վերջինիս վրա դրված պարտականությունները կամ սահմանված ժամկետում վերացնելու հայտնաբերված խախտումները կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական, քանի որ նախագգուշացման մասին որոշմամբ կարող են տրվել օրենքով նախատեսված՝ կատարման համար պարտադիր պահանջներ²⁹⁰:

Smqանը: Վարչական տուգանքը, գույքային բնույթ ունեցող, իրավաբանական անձնաց նկատմամբ կիրառվող վարչական տույժի ամեն-

²⁸⁹ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է նվազ նշանակություն ունեցող, երբ տվյալ իրավախախտման համար սույն օրենսգրքով որպես վարչական տույժ կարող է նշանակվել նախագգուշացում, կամ վարչական տուգանք, որի չափը չի գերազանցում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկը:

²⁹⁰ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 47-րդ հոդվածի 2-րդ մաս:

նատարածված և լայն կիրառում ունեցող տեսակ է: Մինչ 2002 թ. կատարված փոփոխությունները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածում տուգանքի բնորոշումը տրված չէր, այլ սահմանում էր վարչական պատասխանատվության սուբյեկտների նկատմամբ նշանակվող տուգանքի նվազագույն և առավելագույն չափերը: 2002 թ. դեկտեմբերի 11-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով²⁹¹ վերը նշված հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց: Կարծում ենք, օրենսդրական այս փոփոխությունը, հիմնավորված չէր, քանի որ վարչական տուգանքն որպես վարչական տույժի տեսակ չէր հանվել օրենսգրքից, այլ վարչական տույժի այս տեսակը սահմանող առանձին հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 48-րդ հոդվածում սահմանվեց վարչական տուգանքի բնորոշումը, ըստ որի՝ վարչական տուգանքը դրամական տուժանք է, որը որպես տույժի միջոց վճարվում է վարչական իրավախախտում կատարելու համար սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում, որոշվեց տուգանքի նվազագույն և առավելագույն չափերը չսահմանել²⁹², քանի որ դա հնարավորություն չի տա օրենսդիրն հետագայում կոնկրետ իրավախախտումների համար սահմանելու տուգանքի բարձր չափեր և անհրաժեշտություն կառաջանա այդ չափն անընդհատ փոփոխության ենթարկել: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախկին խմբագրությամբ 26-րդ հոդվածում սահմանված տուգանքի նվազագույն և առավելագույն չափերը բացարձակ չափեր չէին, քանի որ հետագայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվում էին տուգանքի բարձր չափեր և հակասություն էր առաջանում օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասի նորմերի միջև: Անշուշտ, դրա համար հիմք էր հանդիսանում նույն հոդվածի այն դրույթը,

²⁹¹ Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 2002 թ. դեկտեմբերի 11-ին, ՀՕ-495-Ն):

²⁹² Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքում տուգանքի 51-րդ հոդվածում սահմանված է տուգանքի ինչպես առավելագույն, այնպես էլ նվազագույն չափը:

ըստ որի՝ «...եթե վարչական իրավախախտումների առանձին տեսակների համար պատասխանատվությունն ուժեղացնելու կապակցությամբ այլ բան չի նախատեսվում»:

Նույնիսկ այլ երկրների վարչական օրենսդրության նորմերի վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ տվյալ հիմնահարցն օրենսդրորեն տարբեր կերպ է կարգավորվել: Այսպես, Լատվիայի²⁹³, Էստոնիայի²⁹⁴, Լիտվայի²⁹⁵, Մոլդովայի²⁹⁶, Բելառուսի²⁹⁷, Մակեդոնիայի²⁹⁸, Ղազախստանի²⁹⁹ օրենսդրությամբ սահմանված են տուգանքի առավելագույն և նվազագույն չափերը: Ընդ որում, տարբերակվող լուծում է տրված Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, որը տարբերակում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող տուգանքի առավելագույն և նվազագույն չափերը՝ հաշվի առնելով այն խոշոր ձեռնարակատիրությամբ զբաղվող սուբյեկտ է, թե ոչ³⁰⁰: Գերմանիայի «Վարչական իրավախախտումների մասին» օրենքի §30-ը սահմանում է տուգանքի առավելագույն չափը, ինչպես նաև տարբերակում է տուգանքի առավելագույն չափը դիտավորությամբ կամ անփութությամբ կատարված իրավախախտման դեպքում:

Հարկ է նշել, որ մի շարք այլ երկրների, օրինակ՝ Սլովենիայի, Ֆինլանդիայի, Ռումինիայի, Ավստրիայի, Իտալիայի, Խորվաթիայի

²⁹³ Տե՛ս Լատվիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին), հոդված 26:

²⁹⁴ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), հոդված 46:

²⁹⁵ Տե՛ս Լիտվայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1985թ.), հոդված 24: Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), հոդված 47:

²⁹⁶ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), հոդված 34:

²⁹⁷ Տե՛ս Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 17-ին), հոդված 6.5:

²⁹⁸ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք, (ընդունվել է 1997թ.), հոդված 38:

²⁹⁹ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), հոդված 48:

³⁰⁰ Տե՛ս նույն տեղը, հոդված 48-րդ, 2-րդ և 3-րդ մասեր:

քրեական օրենսդրությամբ նույնպես սահմանված են տուգանքի առավելագույն և նվազագույն չափերը:

Այսպիսով, կարծում ենք, աշխատանքային խմբի ներկայացրած փաստարկն այնքան էլ հիմնավոր չէ և սկզբունքային օրենսդրական լուծում պահանջող այս հարցն անհրաժեշտ է նախագծում կարգավորել՝ սահմանելով տուգանքի միայն առավելագույն չափը, առանց բացառության, որպեսզի անհարկի պատճառաբանությամբ հիմքում դնելով արարքի հանրային վտանգավորությունը, չսահմանվեն տուգանքի այնպիսի չափեր, որոնք մի քանի անգամ կգերազանցեն նույնաբնույթ հանցագործությունների համար քրեական օրենսդրությամբ սահմանված տուգանքի չափերը: Ինչպես արդարացիորեն նշում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Դանիելյանը, եթե անգամ նկատվում է տուգանքի առավելագույն սահմանը գերազանցելուն հանգեցնող որևէ արարքի համար պատասխանատվությունն ուժեղացնելու անհրաժեշտություն, ապա առավել տրամաբանական է, որ տվյալ դեպքում գործ ունենանք ոչ այնքան զանցանքի, որքան հանցանքի հետ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ³⁰¹:

Վերը քննարկվող հիմնախնդրի համատեքստում, բերենք հայրենական օրենսդրությունից կոնկրետ օրինակ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 315.1-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց³⁰² կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը եւ դրա հետեւանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը և (կամ) անօրինական կառույցները չքանդելը, որոնք կատարվել

³⁰¹ Տե՛ս Գանիելյան Գ.Բ. «Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում», (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌՏ» հրատարակչություն, 2007, էջ 109-110:

³⁰² Ալեհայտ է, որ սույն հոդվածում որպես սուբյեկտ պետք է սահմանվեին միայն ֆիզիկական անձինք, քանի որ իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության սուբյեկտ չեն հանդիսանում:

են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Սույն արարքի համար նախատեսված է պատիժ՝ տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով:

Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի «Շեմքեր և շինություններ ինքնակամ կառուցելը» վերտառությամբ 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն զանցանքը կրկին կատարելու համար սահմանված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհինգհարյուրապատիկի չափով: Փաստորեն իրավախախտը նույն վարչական իրավախախտումը կրկին կատարելու համար պատժվում է ավելի կրկնակի բարձր տուգանքի սահմանված չափով, քան այն դեպքում, երբ դրանցի հետո դեռ շարունակում է նույն արարքի կատարումը և տրամաբանական չէ, որ քրեական օրենսգրքի սահմանված տուգանքի չափի համեմատ վարչական օրենսդրությամբ նախատեսված վարչական տուգանքի չափն առավել բարձր է:

Հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 48-րդ հոդվածը պետք է լրացնել նոր 2-րդ մասով՝ սահմանելով վարչական տուգանքի առավելագույն չափը՝ ըստ վարչական պատասխանատվության սուբյեկտների տարբերակման:

Օրենսդրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարչական տուգանքները, այդ թվում՝ և իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող, ըստ տուգանքի չափերի որոշակիության, սահմանվում են երկու ձևով՝ ա) նշվում է տուգանքի ստորին և վերին սահմանները (հարաբերականորեն որոշակի սանկցիա), բ) նշվում է տուգանքի կոնկրետ չափը (բացարձակ որոշակի սանկցիա):

Հարկ է նկատել, որ բացարձակ որոշակի սանկցիաներ մեր օրենսդրության մեջ առավել հազվադեպ են հանդիպում: Նախագիծը մշակող աշխատանքային խումբն որոշեց նոր օրենսգրքում սահմանել միայն բացարձակ որոշակի սանկցիաներ՝ սահմանափակելով վարչական մարմինների հայեցողական լիազորությունները և նվազեցնելով կամայականության դրսևորումները: Կարծում ենք, նշված փաստարկը հիմնավոր չէ, նախ այն պատճառով, որ «Վարչարարության հիմունք-

ների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում³⁰³ ամրագրված են հայեցողական լիազորությունների սահմանափակման և կամայականության արգելքի սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը: Բացի այդ, հարաբերականորեն որոշակի սանկցիաները հնարավորություն են տալիս իրավակիրառողին դրևտրել իր մասնագիտական կարողությունները՝ գնահատելով գործի հանգամանքները, այդ թվում՝ կատարված իրավախախտման բնույթը, իրավախախտի գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, որոնց ամրագրումն անկիրառելի կդառնա օրենսդրությամբ միայն բացարձակ որոշակի սանկցիաներ սահմանելու դեպքում:

Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնելը և վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում: Վարչական տույժի նշված տեսակները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 27-րդ և 28-րդ հոդվածներում: Ըստ նշված հոդվածի դրույթների վերլուծության՝ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելն այն է, որ առարկան հարկադիր կարգով վերցվում է և այնուհետև իրացվում է՝ ստացված գումարը հանձնելով նախկին սեփականատիրոջը վերցված առարկայի իրացման ծախսերի պահումով: Այսինքն՝ իրավախախտը զրկվում է կոնկրետ առարկայի նկատմամբ սեփականության իրավունքից, փոխարենը դրա դիմաց ստանալով դրամական ձևով հատուցում: Կարելի է ենթադրել, որ այս ձևով էլ իրացվում է վարչական տույժի հիմնական նպատակը, այն է կանխել նոր իրավախախտումների կատարումը, քանի որ եթե չլինի իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան, չի կատարվի նաև տվյալ տեսակի իրավախախտումը: Հարկ է նկատել, որ տույժի նշված տեսակը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ընդամենը երկու՝ 191 և 193 հոդվածներում, առաջին դեպքում կրելով այլընտրանքային բնույթ: Այնուհանդերձ, հաշվի առնելով

³⁰³ Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 2004 թ. փետրվարի 18-ին.) հոդված 6 և 7:

նշված հանգամանքը և վարչական իրավախախտումների հանրային վտանգավորության աստիճանը, վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելը, որպես վարչական տույժի տեսակ, չսահմանվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում, քանի որ այն կրում է քաղաքացիաիրավական բնույթ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումն այդ առարկան հարկադիր կարգով, անհատույց դառնում է պետական սեփականություն: Բռնագրավվել կարող է միայն այն առարկան, որը խախտողի անձնական սեփականությունն է, եթե ՀՀ օրենսդրական ակտերով այլ բան նախատեսված չէ: Իսկ նոր օրենսգրքի նախագծի 49-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է բռնագրավման առավել հստակ բնորոշումը, ըստ որի՝ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը՝ վարչական իրավախախտում կատարած անձին սեփականության իրավունքով պատկանող վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության կամ համայնքի:

Կարծում ենք, արդարացված կլինի նաև, եթե նախագծով սահմանվի ոչ միայն վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի, այլև հենց *վարչական իրավախախտման արդյունքում ստացված գույքի բռնագրավումը*, քանի որ հնարավոր է կատարված իրավախախտման արդյունքում ձեռք բերվածն իրենից ավելի մեծ արժեք ներկայացնի, քան տվյալ իրավախախտման համար սահմանված տուգանքի այն չափը, որն իրավախախտը պետք է վճարի³⁰⁴: Ընդ որում, այս համատեքստում պետք է վերանայել հանցավոր ճանապարհով ստացված գույքի իրավական ռե-

³⁰⁴ Օրինակ՝ Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում սահմանված է տույժի նշված տեսակը հետևյալ անվանմամբ «վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի, վարչական իրավախախտման արդյունքում ձեռքբերված գույքի բռնագրավում»: Տե՛ս Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 45-րդ հոդված:

ժինը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ինչպես քրեադատավարական օրենսդրության մեջ, այնպես էլ՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներում, վերջինիս համարժեք իրավակարգավորումներն արտացոլելով նաև նախագծում: Ի դեպ, հարկ է նկատել, որ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում իրավաբանական անձին՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավված լինելն առաջացնում տուգանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հանցավոր ճանապարհով ստացված գույքի չափով, այն դեպքում, երբ իրավաբանական անձանց մասով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում կատարված իրավախախտումները համարվում են վարչական իրավախախտումներ:

Եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան առգրավելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, համապատասխան մարմինը դիմում է դատարան՝ առգրաված առարկան բռնագրավելու պահանջով, ապա նոր օրենսգրքի նախագծում, տվյալ տույժի տեսակը նշանակվում և բռնագրավման մասին որոշումը կատարվում է համապատասխան վարչական մարմնի կողմից՝ առանց դատարան դիմելու³⁰⁵: Օրենսդրական այս կարգավորումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով, նախ՝ դատարանը, որպես վարչական տույժ նշանակող մարմին, այլևս նախատեսված չէ նոր օրենսգրքի նախագծով, ու եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը համաձայն չէ վարչական մարմնի բռնագրավումը որպես տույժի տեսակ նշանակելու որոշման հետ կարող է այն վիճարկել վարչական դատարանում՝ դրանով իսկ ապահովելով իր իրավունքների պաշտպանությունը, և երկրորդ՝ դատաիրավական բարեփոխումների այս փուլում քննարկվող հիմնական դրույթներից է վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նկատառումով վերջիններիս ազատել վարչական իրավախախտումների վերա-

³⁰⁵ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 605 հոդված:

բերյալ գործեր քննելու լիազորություններից: Այս հայեցակարգային դրույթին ավելի մանրամասն կանդիդատականք աշխատության հաջորդ պարագրաֆում:

Կարծում ենք, սակայն, նշված նախագծում սահմանված կարգն իրավաչափ չէ և հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին, որի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված սահմանադրական նորմը, որպես սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիք, նշանակում է, որ սեփականության իրավունքի հարկադիր և անհատույց դադարումը, կարող է կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և դատական կարգով: Նշված համատեքստում, անշուշտ, բռնագրավումը, ևս հանդիսանում է սեփականության իրավունքի հարկադիր և անհատույց դադարում, սակայն, դրա նշանակումը և իրականացումը նշված նախագիծը վերապահել է վարչական մարմիններին, այսինքն՝ արտադատական կարգով: Սահմանադրական նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ սեփականությունից գրկելն արտադատական կարգով արգելվում է³⁰⁶: Իսկ այն հիմնավորումը, որը դրվել է նախագծում օրենսդրական նման կարգավորման հիմքում, առ այն, որ վարչական մարմնի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով, չի կարող համարվել սահմանադրությանը չհակասող, քանի որ այն արդեն հետագա դատական վերահսկողություն է, իսկ ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի նորմից բխում է, որ դատական կարգը պետք է լինի նախնական կամ վերջնական միջոցը դատարանի վճիռն է³⁰⁷, այսինքն՝ բռնագրավումը պետք է նշանակվի դատարանի կողմից:

Ընդ որում, ուսումնասիրելով բոլոր այն երկրների փորձը, որոնք ընդունել են վարչական իրավախախտումների վերաբերյալ առանձին իրավական ակտեր, համոզվել ենք, որ ՀՀ բացառիկ այն երկրներից է, որի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծով՝ բռնագրավումը որպես տույժի տեսակ նշանակվում և կիրառ-

³⁰⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Երևան: «Իրավունք», 2010թ., էջ 368:

³⁰⁷ Տե՛ս նույն տեղը:

վում է առանց դատարանի որոշման: Իհարկե, բացառությունը դեռևս վիճարկելի չէ իրավաչափության տեսանկյունից, այլ խիստ է դառնում վիճարկելի Սահմանադրական նորմերի մեկնաբանության առումով է այն և դրանով իսկ ձևավորում այն կարծիքը, որ իրավական նման կարգավորումը՝ նույնիսկ վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման հիմնավորմամբ չի կարող իրավաչափ լինել:

Այսպիսով, կարծում ենք, նախագծով սահմանված բռնագրավման տույժի տեսակի նշանակման կարգը պետք է համապատասխանեցվի Սահմանադրական վերը նշված նորմին և օրենսգրքի նախագծով վարչական տույժի այս տեսակի նշանակումը պետք է վերապահվի դատարանին: Հատկանշական է, որ ՌԴ Սահմանադրական դատարանը 1998 թ. դեկտեմբերի 3-ի թիվ 201 որոշմամբ³⁰⁸ անդրադառնալով այս հարցին, նշել է, որ վարչական տույժի այս տեսակը պետք է նշանակվի բացառապես դատարանի կողմից, հակառակ դեպքում այն կհակասի ՌԴ Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասին:

Որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում: Վարչական տույժի այս տեսակը կիրառվում էր և սահմանված էր դեռևս խորհրդային օրենսդրությամբ, այսպես կոչված՝ «աշխատանքների իրականացման դադարեցում» անվանմամբ³⁰⁹: Նշված տեսակի էությունը կայանում է նրանում, որ ժամանակավորապես դադարեցվում է որոշակի տեսակի գործունեության իրականացումը կամ որոշակի վայրում կոնկրետ տեսակի գործունեության իրականացումը: Վարչական տույժի այս տեսակը համահունչ է այլ երկրների օրենսդրությամբ սահմանված գործունեության վարչական դադարեցում վարչական տույժի տեսակին, քանի որ գործունեության վարչական դադարեցումը նույնպես իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող գործունեության ժամանակավոր դադարեցումն է: Կարծում ենք, սակայն, որ «կասե-

³⁰⁸ Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 3 декабря 1998 г. № 201-0 по жалобе граждан Л.Н. Васильевой, А.Н. Евгеева и Л. А. Налетова на нарушения их конституционных прав положениями ч.2 ст. 146-7 КоАП РФ // СЗ . — 1999. — №17.-Ст. 2204:

³⁰⁹ Տե՛ս Ведомости ВС СССР, 1961, №52, ст.538, <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>:

ցում» տերմինը տվյալ պարագայում առավել համահունչ է տույժի տվյալ տեսակի էության, քանզի գործունեությունը դադարեցվում է որոշակի ժամկետով և վերսկսվում է մինչև կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքների վերացումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է գործունեության այն տեսակներին որոնց իրականացման համար լիցենզիա կամ հատուկ թույլտվություն չի պահանջվում:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցումը՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակներով կամ որոշակի վայրում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքից ժամանակավոր գրկումն է: Ընդ որում, այն ժամանակահատվածը, որի ընթացքում գործունեության կոնկրետ տեսակի իրականացումը կամ որոշակի վայրում գործունեության տվյալ տեսակի իրականացումը դադարեցվում է, սահմանվում է օրենսդրությամբ: Հարկ է նկատել, որ ըստ նախագծի վերը նշված հոդվածի 2-րդ մասի՝ որոշակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացումը կասեցվում է մինչև խախտման վերացումը կամ մինչև կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքների վերացումը: Օրինակ, ՌԴ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի 3.12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործունեության վարչական դադարեցումը չի կարող 90 օրից ավելի տևել, սակայն, կարող է տույժի տվյալ տեսակի կիրառումը դադարեցվել սահմանված ժամկետից շուտ, եթե վերանան այն նշանակելու համար հիմք հանդիսացած հանգամանքները: Բնորոշ է այն, որ հայրենական օրենսդրությամբ վարչական տույժի այս տեսակը սահմանված է և կիրառվում է: Մասնավորապես, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ ամսվա ընթացքում արձա-

նագրված շրջանառության երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս երեք հարյուր հազար դրամից, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով, կամ ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով³¹⁰:

Այսպիսով, նախագծի 53-րդ հոդվածի 2-րդ մասում պետք է կատարել լրացում, ըստ որի՝ որոշակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացումը կասեցվում է ոչ միայն մինչև խախտման վերացումը կամ մինչև կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքների վերացումը, այլև կոնկրետ հատուկ մասի նորմերում սահմանված ժամկետով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ըստ նախագծի դրույթների՝ վարչական տույժի այս տեսակը նույնպես նշանակվում է վարչական մարմնի կողմից: Կարծում ենք, սակայն, վերջինս արդարացված է և իրավակիրառ տեսանկյունից առավել արդյունավետ է, քանի որ վարչական տույժի այս տեսակն իր խստությամբ զիջում է վարչական տույժի այնպիսի տեսակներին ինչպիսին է օրինակ՝ լիցենզիայի գրկումը կամ իրավաբանական անձի գործունեության դադարեցումը, որոնց կանոնադառնանք ստորև: Այս առումով չի կարելի համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք վարչական տույժի տեսակն ընդհանուր գծերով մասնեցնում են լիցենզիայի դադարեցման վարչական տույժի տեսակի հետ³¹¹: Կարծում ենք, այն իր իրավական հետևանքներով ավելի մասն է լիցենզիայի գործողության կասեցման վարչական տույժի տեսակին, քանի որ վարչական տույժի նշված տեսակները ժամանակավոր բնույթ են կրում, քանի որ որոշակի ժամկետով կոնկրետ գործողության իրականացումը կասեցվում է և որոշակի ժամկետը լրանալուց հետո կամ մի կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքների վերացման դեպքում վերսկսվում է ինչպես լիցենզիայի գործողությունը, այնպես էլ որոշակի տեսակի գործունեության իրականացումը, իսկ լիցենզիայի գործողության դադարեցումը նշանակում է, որ տվյալ լիցենզիան կրկին ստանալու համար, այսինքն՝ տվյալ դեպքում արդեն նոր լիցենզիա

³¹⁰ Տե՛ս «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 11-ին):

³¹¹ Տե՛ս Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. Автореф. дис. ... канд. юрид. наук. – Красноярск, 2008. էջ 198:

ստանալու համար իրավաբանական անձինք պետք է ձեռնամուխ լինեն օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների կատարմանը:

Լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում և դադարեցում: Գործող օրենսդրության ուսումնասիրությունները թույլ են տալիս նշելու, որ լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում և դադարեցում վարչական տույժի տեսակներն իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժի ամենատարածված տեսակներից են: Ընդ որում, վարչական տույժի նշված տեսակները ներկայացնելու ենք նույն համատեքստում, մասնավորապես, նախագծում վերջիններիս օրենսդրական ամրագրումը նույնպես տրված է միասնական իրավական նորմում, քանի որ ինչպես լիցենզիայի կասեցումը, այնպես էլ թույլտվության կասեցումն ունեն նույն բովանդակությունը, ուղղակի օրենսդրությամբ որոշակի տեսակի գործունեության իրականացման համար կարող է պահանջվել լիցենզիա, իսկ մեկ այլ տեսակի գործունեության իրականացման համար՝ թույլտվություն:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողության կասեցումն օրենսդրությամբ սահմանված դեպքերում որոշակի պայմաններով՝ լիցենզավորված կամ թույլտվություն ստացած անձին լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է: Իսկ նախագծի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարեցումը օրենսդրությամբ սահմանված դեպքերում լիցենզավորված կամ թույլտվություն ստացած անձին լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից զրկումն է:

Հատկանշական է սակայն այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբը տարակարծիք էր լիցենզիայի կասեցումը և դադարեցումը որպես

վարչական տույժի տեսակ ամրագրելու հարցում: Սակայն, առանձին իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ տվեց եզրահանգելու, որ լիցենզիայի կասեցումը և դադարեցումը կիրառվում են հենց իրենց բնույթով վարչական իրավախախտում համարվող արարքների կատարման արդյունքում:

Ի դեպ, հարկ է նկատել, որ վարչական տույժի այս տեսակն ամրագրված է նաև մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրությամբ: Այսպես, Մոլդովայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում³¹² որպես համանման վարչական տույժի տեսակ սահմանված է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկումը: Վարչական տույժի նման տեսակ, որն իր բովանդակությամբ ընդգրկում է ինչպես հատուկ թույլտվությունը, այնպես էլ լիցենզիան նախատեսված է նաև Բելառուսի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում³¹³: Ղազախստանի, ինչպես նաև Ղրղզստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում ամրագրված է լիցենզիայից կամ հատուկ թույլտվությունից զրկում, կամ դրանցից զրկում նրանում նախատեսված կոնկրետ գործունեության իրականացման համար վարչական տույժի տեսակը³¹⁴: Իսկ օրինակ՝ Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության վարչական պատիժների վերաբերյալ օրենսգրքում³¹⁵ սահմանված է լիցենզիայի կամ թույլտվության ժամանակավոր դադարեցում (կասեցում-Թ.Շ.) կամ ուժը կորցրած ճանաչում վարչական տույժի տեսակները: Հարկ է նշել նաև, որ լիցենզիայի զրկումը տարբեր անվանումներով, բայց նույն բովանդակությամբ

³¹² Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), 32-րդ հոդվածի 5-րդ մաս, 39-րդ հոդված:

³¹³ Տե՛ս Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգրք (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին), հոդված 6.2 1-ին մաս 6-րդ կետ և հոդված 6.9:

³¹⁴ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), 45-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, Ղրղզստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 1998թ. օգոստոսի 4-ին), 27-րդ հոդվածի 4-րդ մաս:

³¹⁵ Տե՛ս Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության վարչական պատիժների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 1-ին), 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ:

յամբ նաև շատ այլ երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի տեսակ է, օրինակ՝ Լիտվա, Լատվիա, Մոլդովա, Բուլղարիայի, Ռումինիա և այլն³¹⁶։ Ի դեպ, Մակեդոնիայի քրեական օրենսգրքում իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող հիմնական պատժի տեսակներից բացի, որոնք են տուգանքը և գործունեության որոշակի տեսակով զբաղվելու ժամանակավոր արգելում, սահմանված է նաև լրացուցիչ պատիժներ, որոնց թվում է նաև լիցենզիայից կամ հատուկ թույլտվությունից զրկում տեսակները, և դեռ ավելին՝ սահմանված է որպես պատժի տեսակ լիցենզիայի կամ կամ հատուկ թույլտվության ստացման արգելք ընդհանրապես³¹⁷։

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նշված բոլոր երկրներում վարչական տույժի նշված տեսակը նշանակվում է բացառապես դատարանի կողմից, և ավելին՝ նույնիսկ այն երկրներում, որտեղ այն սահմանված է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ։ Իսկ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն՝ լիցենզայի գործողությունը դադարեցվում է միայն դատարանի որոշմամբ³¹⁸։ Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի դրույթների համաձայն վարչական տույժի այս տեսակները նշանակվում են վարչական մարմնի կողմից։ Մասնավորապես, վարչական վարույթն իրականացնող մարմինն անձի լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ միջնորդագիր է ներկայացնում լիցենզավորող կամ թույլտվություն տվող մարմին, եթե ինքն օժտված չէ համապատասխան լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման լիազորությամբ։ Լիցենզավորող կամ թույլտվություն տվող մարմինը միջնորդագրին ընթացք է տալիս

³¹⁶ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), Բուլղարիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1968թ. ապրիլի 2-ին), Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2004թ.):

³¹⁷ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին), հոդված 96-Բ։

³¹⁸ Տե՛ս «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2001 թ. մայիսի 30-ին), հոդված 37։

օրենսդրությամբ սահմանված կարգով՝ այդ մասին պաշտոնապես տեղյակ պահելով վարույթն իրականացնող մարմնին։

Կարծում ենք, սակայն, որ լիցենզիայի և թույլտվության դադարեցման վարչական տույժի տեսակները չեն կարող նշանակվել վարչական մարմինների կողմից։ Մասնավորապես, վերջինս համարվում է խիստ վարչական տույժի տեսակ, և ինչպես արդեն նշել ենք, բազմաթիվ երկրների օրենսդրությամբ այն սահմանված է որպես պատժի տեսակ և նշանակվում է բացառապես դատարանների կողմից։ Ակնհայտ է, որ վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը թոթափելու, պետական միջոցների անհարկի վատնումից խուսափելու հիմնախնդիրն այս համատեքստում չի կարող վեր կանգնած լինել սահմանադրորեն երաշխավորված տնտեսական ազատության, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունից։ Բացի այդ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված հիմքերով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմել միայն լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց *մեկ տարի* հետո։ Տվյալ դեպքում, կարծում ենք, օրենսդրորեն պետք է ամրագրել նաև, որ իրավաբանական անձը չի կարող կրկին դիմել վարչական իրավախախտման կատարման արդյունքում զրկված նույն լիցենզիան ստանալու համար։ Այս նորմը նպատակամղված կլինի կանխելու ինչպես տվյալ իրավաբանական անձի կողմից հետագայում կատարվելիք իրավախախտումները, այնպես էլ ընդհանուր առմամբ մյուսների համար նույնպես նախականիչ նշանակություն կարող է ունենալ ձեռնպահ մնալու իրավախախտումների կատարումից։

Այսպիսով, կարծում ենք, որ վարչական տույժի այս տեսակը, ինչպես նաև իրավաբանական անձի գործունեության դադարեցումը, որին կանդիդատական քննադրիչ, պետք է բացառապես նշանակվեն դատարանների կողմից։

Իրավաբանական անձի գործունեության դադարեցում: Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող ամենախիստ վարչական տույժի տեսակը, որին որոշ ասպեկտներով անդրադարձել ենք վարչական տույժի նախորդ տեսակները քննարկելիս, իրավաբանական անձի գործունեության դադարեցումն է, այլ կերպ ասած՝ լուծարումը։ Ըստ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 54-րդ հոդվածի՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցումն իրավաբանական անձի հարկադիր լուծարումն է: Ի դեպ, Նախագծով բացառություն է սահմանված միայն կուսակցությունների համար: Հարկ է նկատել, որ օրինակ՝ Ռումինիայի քրեական օրենսգրքում³¹⁹ այդ բացառությունը, բացի կուսակցություններից, տարածվում է նաև որպես զանգվածային լրատվության միջոցներ գործունեություն ծավալող իրավաբանական անձանց վրա և կրոնական կազմակերպությունների վրա: Իսկ Խորվաթիայի «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» օրենքի համաձայն՝ նաև տեղական ինքնակառավարման միավորների և առևտրային միությունների վրա³²⁰:

Պետք է տարբերել իրավաբանական անձի լուծարումն որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցումից, ինչպես նաև լիցենզիայի կամ թույլտվության կասեցումից և դադարեցումից, քանի որ տվյալ դեպքում իրավաբանական անձի գործունեությունը դադարում է «ընդմիջտ», այսինքն՝ վերջինս դադարում է գոյություն ունենալ որպես իրավունքի սուբյեկտ: Ակնհայտ է, որ լիցենզիայի գրկման արդյունքում իրավաբանական անձը կարող է դադարեցնել իր գործունեությունը, քանի որ այն կարող է հանդիսանալ իրավաբանական անձի հիմնական գործունեությունը: Տույժի այս տեսակը կազմակերպությունների նկատմամբ կիրառվում էր նաև խորհրդային ժամանակաշրջանում: Այսպես, կրոնական պաշտամունքների մասին օրենսդրության խախտումների համար պատգամավորների շրջանային (քաղաքային) խորհրդի գործադիր կոմիտեն ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր կրոնական հարցերով խորհրդի հետ համատեղ իրավունք ունեւ լուծարելու կրոնական կազմակերպությունները³²¹: Ինչպես արդեն նշել ենք, իրավաբանական անձի լուծարումը որպես վարչական տույժի կամ պատժի տեսակ լայնո-

³¹⁹ Տե՛ս Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2004թ.), 83-րդ հոդված:

³²⁰ Տե՛ս «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին), 12-րդ հոդված:

³²¹ Տե՛ս Бахрах Д. Административное право. Пермь, 1966, էջեր 144-145:

րեն կիրառվում է նաև արտասահմանյան այլ երկրներում: Այսպես, Ֆրանսիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ եթե իրավաբանական անձը կատարել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում, որի համար նախատեսված է ազատազրկում 5 տարի և ավելի ժամկետով, ապա իրավաբանական անձը կարող է լուծարվել³²²: Որպես պատժի տեսակ այն ամրագրված է նաև Լատվիայի, Էստոնիայի, Լիտվայի, Մոլդովայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Սլովենիայի, Խորվաթիայի և այլ երկրների քրեական օրենսգրքով³²³: Ընդ որում, վերը նշված բոլոր երկրները, բացառությամբ Էստոնիայի և Ֆրանսիայի, ունեն նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրական ակտեր, որոնցում իրավաբանական անձի լուծարումը, որպես վարչական տույժի տեսակ, ամրագրված չէ, քանի որ օրենսդիրը համարել է այն իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող ամենախիստ պատասխանատվության միջոցը և սահմանել քրեական օրենսդրությամբ՝ որպես պատիժ:

Հետևաբար, հարկ է նկատել, որ վերը նշված բոլոր երկրներում պատժի տվյալ տեսակը նշանակվում է բացառապես դատարանի որոշմամբ: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի դրույթների համաձայն՝ վարչական տույժի տվյալ տեսակը նույնպես նշանակվում է վարչական մարմինների կողմից: Ինչպես նշեցինք արդեն նախորդ վարչական տույժի տեսակները քննարկելիս, վարչական տույժի տվյալ տեսակը նույնպես պետք է նշանակվի դատարանի կողմից: Հարկ է նշել, որ իրավաբանական անձի լուծար-

³²² Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1992թ. հուլիսի 22-ին), 131-39 հոդված 1-ին մաս:

³²³ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին), Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2004թ.), «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին), «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին):

ման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով³²⁴ և այլ օրենքներով, մասնավորապես, իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման հարաբերությունները կարգավորվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով³²⁵: Նշված դրույթը սահմանված է նաև Նախագծի 54-րդ հոդվածի 2-րդ մասում: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է լուծարվել դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, **օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների** (ընդգծումը-Թ.Շ), հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում: Այսինքն՝ տվյալ դեպքում հակասություն է առաջանում Նախագծի կարգավորումների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների միջև:

Գրեթե բոլոր երկրների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ իրավաբանական անձի լուծարումը համարվում է որպես լրացուցիչ պատիժ, և նախատեսվում է կոնկրետ պայման, այն է՝ եթե տվյալ իրավաբանական անձը ստեղծվել է հանցագործություն կատարելու համար կամ եթե ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է կատարել³²⁶ կամ եթե դատարանը գտնում է, որ իրավաբանական անձի կատարած արարքի ծանրությունն անհնարին է դարձնում նրա հետագա գործունեությունը³²⁷ կամ եթե դատարանը գտնում է,

³²⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրք, (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին) հոդվածներ 67-70:

³²⁵ Տե՛ս «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2001 թ. ապրիլի 3-ին):

³²⁶ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին) 70.3-րդ հոդված:

³²⁷ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգրք (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), 74-րդ հոդված:

որ հանցագործության կատարումը նրա գործունեության հիմնական մասն է կազմում³²⁸ կամ եթե իրավաբանական անձը չարաշահում է իր գործառնությունները հանցանք կատարելու համար և առկա է իրական վտանգ կրկին հանցագործություններ կատարելու³²⁹ կամ իրավաբանական անձը կատարել է այնպիսի արարք, որի կատարման համար ֆիզիկական անձի համար սահմանված է ազատազրկում 5 տարի և ավելի ժամկետով³³⁰:

Կարծում ենք, Նախագծի վերը նշված հոդվածն անհրաժեշտ է լրացնել սահմանելով իրավաբանական անձի գործունեության դադարեցման վարչական տույժի նշանակման համար հետևյալ պայմանը, առ այն՝ եթե օրենսգրքի հատուկ մասի նորմերով սահմանված չէ վարչական տույժի նշված տեսակը, ապա որպես լրացուցիչ վարչական տույժ այն կարող է նշանակվել այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ստեղծվել են վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ եթե իրենց լիազորությունները չարաշահում են վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ վարչական իրավախախտումների կատարումը նրանց գործունեության հիմնական մասն է կազմում: Վարչական տույժի այս տեսակը պետք է սահմանել նաև որպես լրացուցիչ տույժ և դրանով իսկ հնարավորություն տալ իրավակիրառող մարմնին այն նշանակելու, քանի որ եթե գործի հանգամանքներով հիմնավորվի, որ տվյալ իրավաբանական անձը ստեղծվել է զանցանքներ կատարելու համար, այսինքն՝ այն վերջինիս գործունեության հիմնական նպատակն է, հիրավի, հնարավոր չէ միայն տուգանքի կամ առավել խիստ այլ վարչական տույժի կիրառմամբ կանխելու հետագա իրավախախտումների կատարումը տվյալ իրավաբանական անձի կողմից:

³²⁸ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին) 46-րդ հոդված, «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Մլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին):

³²⁹ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին) 96-Բ, «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին), հոդված 12:

³³⁰ Տե՛ս Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրք, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին) հոդված 96-Շ 7-րդ կետ:

Միևնույն ժամանակ, որոշակի առումով զուգահեռներ անցկացնելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի հետ, և հիմնավորելով դեռևս իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ամրագրման անհրաժեշտությունը, կարծում ենք, որպես քրեական պատասխանատվության հետևանք դատվածության առաջացման համատեքստում՝ վարչական պատասխանատվության իրավական հետևանք պետք է ամրագրել առ այն, որ *իրավաբանական անձի նկատմամբ իրավաբանական անձի գործունեության դադարեցման վարչական տույժի նշանակման դեպքում տվյալ իրավաբանական անձի հիմնադիրներին արգելվում է նոր իրավաբանական անձ ստեղծել:*

Ամփոփելով վերոշարադրյալը, նշենք, որ որոշակի թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, ողջունելի պետք համարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նախագծում վարչական տույժերի տեսակների բավական լայն ցանկի սահմանումը, որոնք իրենց ամբողջությամբ, թերևս ամրագրված չեն որևէ երկրի քրեական կամ վարչական օրենսդրությամբ: Հարկ է նկատել նաև, սակայն, որ Նախագծում առկա է հայեցակարգային թերություն: Մասնավորապես, եթե Նախագծում որպես վարչական տույժ նշանակող մարմին ամրագրված չէ դատարանը, այլ միայն վարչական մարմինները, հետևաբար, վարչական տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցումը, այսինքն՝ լուծարումը, լիցենզիայի գործողության դադարեցումը, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը, չեն կարող նշանակվել վարչական մարմինների կողմից, որի վերաբերյալ մեր եզրահանգումները ներկայացրեցինք վերևում, ուստի տվյալ դեպքում օրենսդիրն ունի օրենսդրական լուծման երկու ուղղություն. կամ պետք է կրճատել վարչական տույժի տեսակները, մասնավորապես, վարչական մարմինները կարող են նշանակել միայն՝ 1) նախագուշացում, 2) վարչական տուգանք, 3) լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում, 4) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում տույժի տեսակները: Կամ 1) վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 2) լիցենզիայի, թույլտվության գոր-

ծողության դադարեցում, 3) իրավաբանական անձի գործունեության դադարեցում, տույժի տեսակները պետք է նշանակվեն դատարանի կողմից³³¹, այնպես ինչպես դատարանի կողմից է որոշվում վարչական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց վարչական տույժ նշանակելու հարցը: Ընդ որում, վերջին դեպքում, տույժերի շրջանակը պետք է ընդլայնել՝ ներառելով նաև արտաքսում³³² տույժի տեսակը, ինչպես նաև որակագրվում վարչական տույժի տեսակը՝ դրան համահունչ ներառելով նաև բանկային ոլորտի իրավախախտումները, որոնց սահմանման անհրաժեշտությանը կանոնադաշտնանք աշխատության սույն գլխի հաջորդ պարագրաֆում:

Իսկ միայն իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակների ցանկում անհրաժեշտ է որպես վարչական տույժի լրացուցիչ տեսակ սահմանել նաև **վարչական տույժ նշանակելու մասին որոշման հրապարակումը**: Հարկ է նկատել, որ տվյալ տեսակի տույժի սահմանումը կարող է ունենալ ինչպես դրական այնպես էլ բացասական հետևանքներ: Որպես բացասական հետևանքներ, կարելի է նշել, օրինակ սպառողների վստահության կորուստը, արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազում, և այլն: Ներկայիս շուկայական հարաբերությունների պայմաններում այն կարող է դառնալ մրցակցային պայքարի միջոց այն կազմակերպությունների միջև, որոնք շուկայում մույն հարթության վրա են գտնվում: Ի դեպ, որոշ երկրների վարչական օրենսդրությամբ, սահմանված է, որ վարչական տույժի նշանակումը չպետք է վնաս պատճառի իրավաբանական անձի գործարար համբավին: Ուստի այս համատեքստում անշուշտ, վարչական վերը նշված

³³¹ Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նշված տույժի տեսակները նշանակվում են բացառապես դատարանի կողմից:

³³² Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբն որոշեց արտաքսումը որպես վարչական տույժի տեսակ չամրագրել նախագծում, քանի որ այն կարող է կիրառվել միայն դատարանի որոշմամբ, իսկ քանի որ վարչական տույժ նշանակող սուբյեկտների շարքում դատարանն այլևս նախատեսված չէր, հետևաբար տույժի այս տեսակը սահմանված է միայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով: Վարչական տույժի այս տեսակն ամրագրված է վարչական իրավախախտումների վերաբերյալ առանձին օրենսդրական ակտ ունեցող գրեթե բոլոր երկրներում, օրինակ՝ ՌԴ, Ղազախստան, Ուկրաինա, Բելառուս, Ղրղզստան, Ուզբեկստան, Ադրբեջան, Մոլդովա, Սլովենիա, և այլն:

տույժի տեսակի ամրագրումը կհակասի նշված սկզբունքին: Օրինակ, ՌԳ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքում³³³ ուղղակիորեն ամրագրված է վարչական տույժի նշանակման դեպքում իրավաբանական անձի համբավին վնաս պատճառելու արգելքը:

Կարծում ենք, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշման հրապարակումը, ինչպես արդեն նշեցինք, ունի նաև դրական կողմեր: Մասնավորապես, այն կարող է նպաստել հասարակական կարծիքի ձևավորման վրա, իսկ վերջինս նաև նոր իրավախախտումների կատարման նախականիմանը: Օրինակ, եթե իրավաբանական անձը վարչական պատասխանատվության է ենթարկվել կոնկրետ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի արտադրության համար, ապա արդարացված է նրա նկատմամբ նշանակված վարչական տույժ նշանակելու մասին որոշման հրապարակումը, քանզի այն կարող է վնաս պատճառել ֆիզիկական անձանց առողջությանը կամ գույքին:

Բնորոշ է այն, եվրոպական երկրներում տույժի այս տեսակն օրենսդրորեն ամրագրված է, օրինակ՝ Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սլովենիայի, Խորվաթիայի քրեական օրենսդրությամբ և այլն: Ի դեպ, Մոլդովայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավաբանական անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշման հրապարակումն ամրագրված է «Դատական ատյանում իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունը» վերտառությամբ գլխում, ընդ որում, ոչ որպես վարչական տույժի տեսակ: Վերջինս համանման կարգավորում է ստացել նաև Մակեդոնիայի քրեական օրենսդրությամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդհանուր գծերով ներկայացնելու՝ իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող տույժի տվյալ տեսակի էությունը, սակայն դատավճռի հրապարակման կամ տարածման համատեքստում: Դատարանը կարող է որոշել ամբողջ դատավճիռը, թե նրա միայն մի մասը կամ որոշ մասեր հրապարակել կամ որպես պաշտոնական հաղորդագրություն

³³³ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), հոդված 3.1.:

տարածել՝ հասարակությանն իրազեկելով նման դատավճիռ կայացնելու պատճառների մասին: Դատավճռի հրապարակումն իրականացվում է դատարանի որոշված վայրերում կամ մամուլում և դատարանի կողմից սահմանված ժամկետում: Այն իրականացվում է իրավախախտի հաշվին, ընդ որում, այն հրապարակելու և տարածելու վարչական ծախսերը չպետք է գերազանցի տվյալ իրավախախտման համար սահմանված տուգանքի առավելագույն չափը: Եթե ոչնչացվում են փակցված հաղորդագրությունները կամ այլ կերպ վնասվում են, նշված լրացուցիչ ծախսեր ևս իրականացվում են իրավախախտի հաշվին: Ընդ որում, մամուլը կամ զանգվածային լրատվության միջոցները, որոնց միջոցով այն պետք է տարածվի որոշում է դատարանը, և վերջիններս իրավունք չունեն հրաժարվել դրանց հրապարակումից: Դատավճռի հրապարակման կամ տարածման ժամանակ թույլատրելի է տուժող կողմի անձնական տվյալների հրապարակումը միայն վերջինիս կամ նրա օրինական ներկայացուցչի կամ ներկայացուցչի համաձայնությամբ: Օրինակ, Մակեդոնիայում դատարանը տուժողի խնդրանքով է որոշում կայացնում հրապարակել կամ տարածել իրավաբանական անձի նկատմամբ կայացված դատավճիռը: Սակայն, կարծում ենք, այն սուբյեկտիվ բնույթ կկրի և ցանկացած տուժող, առանց որևէ հիմնավորման, նման խնդրանք կներկայացնի դատարանին: Հետևաբար, դատարանն առանց որևէ միջնորդության, եթե գտնում է որ կան տվյալ գործում հասարակությանն իրազեկելու հիմնավոր պատճառներ՝ հետագայում նման իրավախախտումները կանխելու նպատակով, կամ հրապարակումը կարող է կանխել կյանքի կամ առողջությանը կամ այլ նյութական արժեքին սպառնացող վտանգը կամ տվյալ իրավաբանական անձի գործունեության արդյունքում դեռ կարող է վնաս պատճառվել այլ ֆիզիկական անձի առողջությանը կամ շրջակա միջավայրին, ապա այն կարող է նշանակել որպես լրացուցիչ տույժ:

Այսպիսով, վերը նշված օրենսդրական լուծումների պարագայում կունենանք միասնական կողմի ֆիզիկացված ակտ և կպահպանենք իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժի այնպիսի տեսակները, որոնք համահունչ են այլ երկրների քրեական պատիժների. արդյունքում վարչական պատասխանատվության շրջանակում կլուծվի նաև իրավաբանական անձանց «քրեական պատասխանատվության»

հարցը³³⁴ պատասխանատվության միջոցների խստության և իրավական հետևանքների համապատասխանեցման արդյունքում, որը մանրամասն ներկայացրեցինք վերևում: Նշված խնդրի համատեքստում, կարծում ենք, միայն իրավաբանական անձանց մասով Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքում կարելի է սահմանել քրեական օրենսգրքով սահմանված որոշ արարքների համար վարչական պատասխանատվություն, այսինքն՝ այդ արարքներն իրավաբանական անձանց մասով օրենսդրորեն կամրագրվեն որպես վարչական իրավախախտումներ³³⁵: Որոշ դեպքերում, զանցանքը հանցանքից տարբերվում է պատճառված վնասի չափով, հակառակ դեպքում, իրավաբանական անձը կնախընտրի զանցանքի փոխարեն հանցանք կատարել և արդյունքում կպատժվի վերջինիս իրավասու աշխատակիցը կամ տնօրենը, կամ նույնիսկ չի պատժվի, քանի որ որոշ դեպքերում հնարավոր չի լինում պարզել՝ ում վրա է դրված կոնկրետ պարտականության կատարումը, իսկ վերը նշված կարգավորման դեպքում, նա կարող է գրկվել լիցենզիայից կամ լուծարվել:

§ 4. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի բարելավման հիմնախնդիրները՝ դատախարակական բարեփոխումների խորապատկերում

Ամփոփելով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առկա հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ մեր եզրահանգումները, աշխատության սույն պարագրաֆում կներկայացնենք իրավաբանական անձանց վարչական պատաս-

³³⁴ Որպես հիմնախնդիր առանձնացված է նաև ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը եւ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2009 թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման 99 և 100 կետերում:

³³⁵ Նման նախադեպ սահմանված է Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգրքում, (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին) և Իտալիայի Հանրապետության օրենսդրական դեկրետ թիվ 231-ում (ընդունվել է 2001թ. հունիս 8-ին), Legislative Decree No. 231 of June 8th, 2001 (the “Decree”) of Italy:

խանատվության բարելավման հիմնախնդիրները դատախարակական բարեփոխումների խորապատկերում:

Նախ նկատենք, որ գիտական հետազոտությունները չեն առանձնանում քննարկվող հարցադրումների խորն ուսումնասիրությամբ և հիրավի արդիական խնդիրների և դրանց լուծման ուղիների բազմակողմանի վերլուծությամբ: Այդ իրավիճակին նպաստել է նաև այն, որ, ինչպես արդեն նշել ենք, անկախության երկու տասնամյակների ընթացքում ձեռնարկված դատախարակական բարեփոխումներն անհասկանալիորեն շրջանցել են ոչ միայն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը, այլև՝ վարչական պատասխանատվության ինստիտուտը՝ ընդհանրապես: Բնորոշ է այն, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության էվոլյուցիան ընթացել է մեկուսացված. մասնավորապես այդ ոլորտին վերաբերող բազմաթիվ օրենսդրական ակտեր որդեգրել են միանգամայն նոր դրույթներ, որոնք, թեպետ վերաբերում են վարչական պատասխանատվության ինստիտուտին, սակայն որևէ կերպ չեն արտացոլել այդ ինստիտուտի օրենսդրական դրույթները և ամրագրել են միմյանցից խիստ տարբերվող մոտեցումներ: Համակողմանի հետազոտությունը բերում է այն համոզման, որ իրավասու կառույցները, ձեռնամուխ լինելով բարդ ու հիրավի դժվարին խնդիրների լուծմանը, հաճախ պատշաճ ուշադրություն չեն դարձնում դրանց լուծման համար խիստ կարևոր հարցադրումների համալիր քննարկման ու ամբողջական ու գործնական արժեք ունեցող հայեցակարգ մշակելու ու բացառապես դրա շրջանակներում գործելու անհրաժեշտության վրա:

Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի զարգացումը ժամանակի տեսլականում, հընթացս՝ իրավահամեմատական տեսանկյունից այլ երկրների փորձն ու քննարկվող հիմնախնդրի շուրջ ընդունված օրենսդրությունն ու ձևավորված իրավակիրառ պրակտիկան, արդեն իսկ ներկայացրել ենք սույն աշխատության առաջին գլխում և այն հնարավորություն տվեց կոնկրետ առաջարկություններ և եզրահանգումներ ներկայացնելու՝ իրավաբանական անձանց հետ կապված իրավական պատասխանատվությունը միջազգային չափանիշներին առավել համահունչ դարձնելու տեսանկյունից: Հարկ է նկատել, սակայն,

որ այլ երկրների իրավական համակարգերի, անգամ առանձին ինստիտուտների ներդրման առնչությամբ որոշումներ կայացնելուց առաջ, հարկ է իրականացնել բազմակողմանի ու ծավալուն հետազոտություններ, որպեսզի բարեփոխումներն իրականացնելիս ընտրվեն առավել հուսալի ու արդյունավետ եղանակներ՝ հաշվի առնելով նաև մեր իրավական համակարգի առանձնահատկությունները, թերությունները, բարելավման ուղղությունները, ինչպես նաև այլ երկրների իրավական համակարգերի հետ դրա փոխհարաբերության հեռանկարները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը դարձել է ժամանակի հրամայական և դա պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով, որոնք համառոտ ներկայացմամբ հանգում են հետևյալին՝

- վարչական պատասխանատվության ինստիտուտի ծագումնային և արհեստական և ապրիորի չէր: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված էր բոլշևիկյան հեղափոխությամբ ձեռք բերված իշխանությունը պահելու նպատակով: Վարչական պատասխանատվությունն ի սկզբանե միտված էր վարչակառավարչական կարգն անխոցելի դարձնելուն: Ընդ որում, փորձ արվեց նախ՝ այն պաշտպանել անգամ ամենաչնչին իրավախախտումներից և, ապա, դրանց քննությունը վերապահել բացառապես վարչական մարմիններին: Ուստի պատահական չէ, որ անձի իրավունքները չդարձան վարչական պատասխանատվության օբյեկտ: Իրավական ինստիտուտներից շատերին է բնորոշ այն, որ դրանք ի սկզբանե ձևավորվում են այլ խնդիրների լուծման նպատակով, սակայն ժամանակի ընթացքում սոցիալական պահանջների վերանայման արդյունքում ձեռք են բերում բոլորովին այլ իմաստ և կոչում: Իսկ վարչական պատասխանատվության ինստիտուտը չի կարող միտված լինել սոսկ վարչակառավարչական համակարգի պաշտպանությանը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ որպես *իրավական պաշտպանության հիմնական օբյեկտ չպետք է համարվի կառավարման կարգն* իր բոլոր ոլորտներով հանդերձ, օրինակ՝ հողային, պաշտպանության, ջրային և այլն, *այլ այն հասարակական հարաբերությունները, որոնց այսօր ամրագրված են Մահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով: Մասնավորապես, մարդու իրավունքներն ու ազատությունները, արժա-*

նապատվությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում պետք է որակվեն որպես գերակա իրավական արժեքներ, այսինքն՝ առաջանալությունը պետք է տրվի մարդու իրավունքների և ազատությունների գերակայությանն այլ ոչ կառավարման սահմանված կարգին, պետական կամ հասարակական կարգին: Յուրաքանչյուր նորմատիվ-իրավական ակտի նպատակն անվերապահորեն պետք է լինի մարդու իրավունքների երաշխավորվածությունն ու պաշտպանությունն ապահովելը: Այս չափանիշով հիշյալ ինստիտուտի վերախմաստավորումը հնարավորություն կտա ձեռքբազատվելու վարչական պատասխանատվության խորհրդային պատկերացումներից և այն առավել համահունչ դարձնելու միջազգային արդի չափանիշներին: Ընդ որում, հարկ է նկատել, որ այս կարևոր հայեցակարգային հիմնադրույթն իր օրենսդրական լուծումը չի ստացել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի հայեցակարգում և Նախագծում:

- բացակայում է տրամաբանական ներքին կապը՝ քրեական և վարչական պատասխանատվությունների միջև: Դա պայմանավորված է թերևս նրանով, որ հաճախ միևնույն իրավախախտումը միաժամանակ սահմանված է ինչպես վարչական օրենսդրությամբ որպես վարչական զանցանք, այնպես էլ քրեական օրենսդրությամբ որպես հանցագործություն: Ի դեպ, քրեական օրենսգրքի սահմանված տուգանքի չափի համեմատ վարչական օրենսդրությամբ նախատեսված տուգանքի չափը որոշ արարքների համար առավել բարձր է, որի օրենսդրական օրինակները ներկայացրել ենք նախորդ պարագրաֆում: ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ սկզբնական շրջանում բացառվեց որոշ վարչական զանցանքներ կրկնակի կատարելը քրեական հանցագործություն համարելու գաղափարը, ինչն ընդունելի էր նախկին քրեական օրենսգրքով: Մինչդեռ, հետագայում հիշյալ մոտեցումը, այնուամենայնիվ, կիրառման մեջ դրվեց, անտեսելով, սակայն միասնական իրավական չափանիշներով ղեկավարվելու անհրաժեշտությունը³³⁶: Հավելենք նաև, որ վարչական պատասխանատվության ինստիտուտների վերաբերյալ ամրագրված մոտեցումներն էապես տարբերվում են քրեական

³³⁶ Տե՛ս օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315.1 հոդվածը:

պատասխանատվության նույնասեռ ինստիտուտների առնչությամբ կիրառվող մոտեցումներից: Արդյունքում ստացվում է, որ միևնույն ինստիտուտի առնչությամբ կիրառման մեջ են դրվել միմյանցից սկզբունքորեն տարբերվող դիրքորոշումներ.

- վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունում առկա են ոչ միայն միջազգային իրավական չափանիշներին ակնհայտ հակասող տարաբնույթ ինստիտուտներ, որոնք հարկ է լինում վերացնել նաև միջազգային իրավասու կառույցների միանգամայն իրավաչափ միջամտության արդյունքում (օրինակ՝ վարչական կալանքը, որն ուժը կորցրած ճանաչվեց): Ընդ որում, նաև ՀՀ Սահմանադրության հետ ակնհայտ հակասության մեջ գտնվող նորմեր, ինչպիսին է օրենսգրքով սահմանված վարչական ձերբակալման 10-օրյա ժամկետը, որը Սահմանադրական դատարանի կողմից 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԳՌ-1059 որոշմամբ ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված դրույթներին հակասող³³⁷ և այլն:

- վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում դրա բնականոն ընթացքն ապահովող և անձանց իրավունքներն երաշխավորող իրավական համարժեք ինստիտուտների բացակայություն, ինչպիսիք են՝ վարույթի կասեցումը, կարճումը, նորոգումը և այլն:

- վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրական ակտերը համակարգված չեն: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այդ թերությունը հատկապես լայն տարածում ունի *իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերում*, որոնք, որպես կանոն, նվիրված են կառավարման այս կամ այն ոլորտում իրավահարաբերությունների կանոնակարգմանը և սոսկ մասնակիորեն պարունակում են վարչական իրավախախտումների վարույթին նվիրված որոշ իրավական նորմեր: Ստացվում է, որ ներկայումս գործում են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի բազմաբնույթ արհեստական առանձնահատկություններ, որոնք որևէ կերպ պայմանավորված չեն կառավարման տվյալ ոլորտով: Այլ կերպ ասած, պետք է ապահովել նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի ընթացակարգերում անհրա-

³³⁷ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1059.pdf>:

ժեշտ միասնականություն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց պարագայում: Նոր օրենսգիրքը պետք է իրենից ներկայացնի այդ ոլորտի բոլոր իրավահարաբերությունների կանոնակարգմանը նվիրված մեկ ամբողջական *կողմիֆիկացված իրավական փաստաթուղթ*:

Ինչպես բազմիցս նշել ենք աշխատության նախորդ պարագրաֆներում հարկային և բանկային օրենսդրության բնագավառի իրավախախտումները և դրանց համար սահմանված տույժերն առկա տարածայնությունների պարագայում չներառվեցին նոր օրենսգրքի նախագծում՝ որպես քաղաքական փոխհամաձայնության հետևանք: Անշուշտ մնան մոտեցումը, կարծում ենք, չի կարող ներառվել վարչական պատասխանատվության օրենսդրության կողմիֆիկացիայի հայեցակարգի մեջ և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանզի պատասխանատվության վերոհիշյալ տեսակները վարչաիրավական բնույթի են, ինչի մասին բազմիցս նշել է նաև իր որոշումներում ՌԳ Սահմանադրական դատարանը³³⁸: Հարկ է նկատել, սակայն, որ 2012 թվականի ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հայեցակարգում սահմանված է, որ ապագա օրենսգիրքը պետք է հիմնվի այն հայեցակարգային սկզբունքի վրա, որ չկա վարչական պատասխանատվություն, եթե դա նախատեսված չէ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

-հաշվի առնելով, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով ևս կիրառվում են հարկադրանքի միջոցներ, ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումներ, անհրաժեշտ է հստակեցնել դրանց հիմքերը և կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներն ու պայմանները: Այս համատեքստում տեղին է քննարկման առարկա դարձնել նաև դատախազական հսկողության ինստիտուտը:

³³⁸ Նման տարածայնություններ՝ կապված հարկային և բանկային ոլորտի իրավախախտումների հետ, առաջացել էին նաև ՌԳ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի շուրջ, առավել մանրամասն տե՛ս աշխատության առաջին գլխի առաջին պարագրաֆում:

- պետք է ապահովվի նաև զանցանքների հիմնավորված դասակարգումը և դրանց համար նախատեսված սանկցիաների ներդաշնակությունը, միևնույն հետևանքներ ունեցող զանցանքների համար վարչական տույժերի միատեսակ և համաչափ կիրառումը:

-վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում դեռևս առկա են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ԽՍՀՄ համակարգը», «սոցիալիստական սեփականությունը» և այլն: Հարկ է նկատել, որ առ այսօր անկախ այն հանգամանքից, որ պետք է ընդունվի նոր օրենսգրքի նախագիծ, օրենսդիրը կարծես շրջանցել է նվազագույն օրենսդրական փոփոխությունների արդյունքում նշված հասկացությունները փոփոխելուն նվիրված օրենսդրական ակտի ընդունումը: Բնականաբար մասն մոտեցումը չի կարող քննադատության չարժանանալ ոչ միայն գիտնականների, այլև իրավակիրառողների մոտ:

Վերոշարադրյալ ամենաընդհանուր գծերով փորձ է ներկայացնելու գործող օրենսդրության թերություններն ու անհրաժեշտ բարեփոխումների հիմնարար ուղղությունները: Այս համատեքստում որպես օրենսդրական բաց հանդիսանում, այն է, որ գործող վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրավաբանական անձինք սահմանված չեն որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ:

Անհերքելի իրողություն է այն, որ օրենսդրական լուրջ բացերը և ակնհայտ հակասությունները խիստ բացասաբար են անդրադառնում ինչպես մարդու իրավունքների և ազատությունների և իրավաբանական անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխավորվածության, այնպես էլ նշված ոլորտում պետական կառավարման, ինչպես նաև վարչական զանցանքների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացման արդյունավետության վրա: Բնորոշ է, որ այս պարագայում իրավասու պաշտոնատար անձինք հաճախ ղեկավարվում են ոչ թե կոնկրետ իրավական դրույթներով, այլ՝ հայեցողական որոշումներով: Մտահոգող է նաև այն, որ վարույթի համար սահմանված բազմաթիվ անհարկի առանձնահատկությունները գործնականում խիստ բարդացնում են գործառնությունների իրականացման բնականոն ընթացքը, անխուսափելի դարձնում անհարկի ֆինանսական ծախսեր և մարդկային ռեսուրսներ պահանջող յուրաքանչյուր ոլորտին համապա-

տասխան մասնագիտական լրացուցիչ պատրաստվածություն անցնելու անհրաժեշտությունը և այլն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ մշակելու կոնկրետ քայլեր ձեռնարկելու սկիզբը, սակայն համընկավ դատաիրավական բարեփոխումների ավարտի հետ, երբ ՀՀ վարչապետի 1998 թ. նոյեմբերի 16-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 635 որոշմամբ ստեղծվեց այդ օրենսդրության մշակման աշխատանքային խումբ: Հիշյալ աշխատանքային խումբը ձեռնարկեց որոշակի քայլեր վերը նշված նախագծի մշակման ուղղությամբ, սակայն այդպես էլ այս խմբի կողմից նախագիծ չմշակվեց: Հանձնաժողովի կազմն ամբողջովին փոխվեց, իսկ աշխատանքները հանձնվեցին Գերմանական միջազգային համագործակցության ընկերության երևանյան գրասենյակին («GTZ» միջազգային կազմակերպության հայաստանյան կառույցին), որը բավարարվեց սոսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի մշակմամբ, ինչն էլ պարզապես, Գերմանայի որոշ օրենսդրական ակտերի թարգմանությունն էր՝ մասնակի տեղայնացմամբ: Վերջապես, 10 տարի անց ՀՀ Նախագահի՝ 2008 թ. հունվարի 23-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ՆԿ-9-Ա կարգադրությամբ ստեղծվեց նոր աշխատանքային խումբ, որը պետք է հանձն առներ մշակելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ: Շուրջ երկու տարի տևեցին նոր օրենսգրքի մշակման աշխատանքները, որի առանցքային հարցադրումներից հանդիսացավ նախ այն, որ պետք է մշակվեր մեկ միասնական կողիֆիկացված ակտ՝ ներառելով նաև հարկային, մաքսային, բանկային ոլորտի իրավախախտումները և անշուշտ, իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի ամրագրումը : Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը և դրան կից՝ թվով շուրջ 52 այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացվեց 2010 թ. հունվարին³³⁹: Մի բան որի իրականացման անհրաժեշտությունը նկատելի էր դարձել դեռևս նախկին աշխատան-

³³⁹ Տե՛ս հղումն ըստ համացանցի 2011 թ. դրությամբ՝ <http://moj.am/am/download.php?view.328>, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4516&Reading=0>:

քային խմբի քննարկումների ժամանակ, առ այն՝ նոր օրենսգիրք կարելի էր մշակել արդեն իսկ ընդունված մի շարք օրենսդրական ակտերում էական փոփոխություններ կատարելու պայմաններում: Ընդ որում, ՀՀ կառավարությունը, իր նիստում քննարկելով ներկայացված նախագիծը, այնուամենայնիվ, հարկային և բանկային ոլորտի իրավախախտումները և դրանց համար նշանակվող տույժերի տեսակները մեկ միասնական Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում ներառելու շուրջ տարածայնությունների առկայության պայմաններում որոշում կայացրեց հետ վերադարձնելու նախագիծը կրկին շահագրգիռ մարմինների հետ փոխադարձ համաձայնություն ձևավորելու նպատակով: Անշուշտ, ՀՀ արդարադատության նախարարության հետ ծավալած համատեղ քննարկումների արդյունքում՝ հարկային և բանկային ոլորտի իրավախախտումները հանվեցին նախագծից և արդյունքում մեկ միասնական կողիֆիկացված ակտ ունենալու հայեցակարգային հիմնարար դրույթներից մեկը, կարծես թե, անկատար մնաց: Այս համատեքստում տեղին է նշել, որ բարեփոխումների առավել խոցելի կողմերից մեկն այն է, որ ոլորտին առնչվող հարցադրումների վերաբերյալ գերատեսչական կողմնորոշումները չափազանց շատ են և խիստ իրարամերժ:

2010 թ. սեպտեմբերին ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ կառավարություն ներկայացրեց լրամշակված նախագիծը, վերջինս նույն թվականի հոկտեմբերի 26-ին ուղարկեց Ազգային ժողով³⁴⁰: 2011 թ. փետրվարի 4-ին Ազգային ժողովի պետաիրավական-հանձնաժողովի նիստում, ընդունվեց ի գիտություն, որ ՀՀ կառավարությունը շրջանառությունից հանում է նախագիծը՝ պայմանավորված ՀՀ արդարադատության նախարարությունում կադրային փոփոխությունների հետ՝ կրկին այն լրամշակելու պատճառաբանությամբ: Ընդ որում, որևէ հիմնավոր պատճառաբանություն այդպես էլ չբերվեց և այդ խիստ հրատապ օրենսդրական ակտի ընդունումն անհարկի և անորոշ տևական ժամանակով հետաձգվեց: Հարկ է նկատել, որ դեռևս 2009 թ. ապրիլի 21-ի ՀՀ Նախագահի ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թթ. ռազմավարական գործողությունների ծրագրի ներածական մասում արդեն իսկ սահմանված

³⁴⁰ Տես՝ http://parliament.am/draft_history.php?id=4516&lang=arm, հղումն՝ ըստ համացանցի 2011 թ. դրությամբ:

էր, որ մշակման փուլում է գտնվում վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը: Սակայն, 2012 թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա ՀՀ նախագահի կարգադրությամբ հաստատված «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի և դրանից բխող միջոցառումների ցանկի» «Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ» վերտառությամբ 3 բաժնում 3.6-րդ կետում որպես առանձին միջոցառում սահմանված է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգի և նախագծի մշակում: Ընդ որում, որպես նախագծի Ազգային ժողով ներկայացնելու վերջնաժամկետ սահմանվել է 2014 թ. նոյեմբեր ամիսը: Չքննադատելով այս կարևոր իրավական փաստաթուղթը՝ հիրավի, չենք կարող չանդրադառնալ այն հիմնախնդրին, թե ինչպես կարելի է արդեն իսկ պատրաստ նախագծի և հայեցակարգի շրջանակներում այս ակտի ընդունումը ևս մի քանի տարով հետաձգել:

Հարկ է նկատել, սակայն, որ 2012 թվականին կրկին մշակվեց և ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նոր հայեցակարգ, որում միայն մեկ նախադասությամբ նշվում է, որ պետք է սահմանվեն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հստակ մեխանիզմներ:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը համալիր դարձնելու նկատառումով ստորև կառուցվեցին միայն այն հիմնախնդիրները, որոնք չենք ներկայացրել աշխատության նախորդ գլուխներում և դրանք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ հետագա բարեփոխումների իրականացման ընթացքում:

Արդեն հիմնավորել ենք, որ վարչական պատասխանատվության սուբյեկտ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել ոչ միայն իրավաբանական անձանց, այլև իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, այդ թվում նաև՝ օտարերկրյա կազմակերպության, բացառություն սահմանելով միայն պետության, համայնքների համար, այս համատեքստում հավելենք, որ վարչական պատասխանատվության ենթարկելու տարբերակման հիմք կարելի է նախատեսել նաև մեծ, միջին և փոքր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ի-

րավաբանական անձանց համար, ըստ որոնց՝ հատուկ մասի նորմերում կարելի է նախատեսել վարչական տուգանքի տարբեր չափեր՝ դրանով իսկ ապահովելով այն, որ վարչական տույժի միջոցի կիրառումը չհանգեցնի կոնկրետ իրավաբանական անձի գործունեության փաստացի դադարեցմանը: Այլ կերպ ասած՝ պետք է ապահովվի կատարված իրավախախտման և նշանակվող վարչական տույժի միջոցի համաչափությունը՝ հաշվի առնելով նաև տվյալ իրավաբանական անձի կողմից իրականացվող գործունեության բնույթը:

Ինչպես արդեն նշել ենք Նախագծում որպես վարչական տույժ նշանակող մարմին ամրագրված չէ դատարանը, իսկ վարչական տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցում, այսինքն՝ լուծարում, լիցենզիայի գործողության դադարեցում, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, չեն կարող նշանակվել վարչական մարմինների կողմից, որի վերաբերյալ մեր եզրահանգումները ներկայացրեցինք նախորդ պարագրաֆներում: Այս համատեքստում ուղղակի հավելենք, որ չենք կարող համաձայնվել այն իրավաբան գիտնականների կարծիքների հետ, որոնք, որպես օրինակ բերելով այլ երկրների վարչադատական գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի օրինակները, համարում են, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը բացակայում է կամ նկատվում է դրանից հրաժարվելու միտում: Անշուշտ, այս եզրահանգումները միջազգային փորձի ոչ համալիր հետազոտության արդյունք է, քանի որ, ինչպես արդեն իսկ մանրամասն ներկայացրել ենք նախորդ պարագրաֆներում, վարչական զանցանքերը նման երկրներում կարգավորված են կամ քրեական օրենսգրքերով կամ առանձին ակտերով, որոնց պարագայում, սակայն, չենք հանդիպել մի երկրի օրենսդրական ակտի³⁴¹, որում բացակայի դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

³⁴¹ Ինչ վերաբերում է Գերմանիայի օրենսդրական կարգավորմանը, սակայն վարչական տույժի հիմնական տեսակը, ըստ «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենքի տուգանքն է և բացակայում են տույժի վերը նշված այնպիսի տեսակները, որոնց դատարանի կողմից նշանակման իրավաչափությունն արդեն իսկ ներկայացրել ենք աշխատության նախորդ պարագրաֆներում:

Այս առումով, սակայն, ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թ. փետրվարի 5-ի ՍԳ-Ո 864 որոշմամբ³⁴² վարչական պատասխանատվության ինստիտուտը գնահատելով դրա նպատակի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության համատեքստում, արդարացիորեն եզրահանգել է, որ ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 26-րդ գլխի իրավակարգավորումը սահմանելիս դրսևորված չէ համակարգային մոտեցում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանված չեն բոլոր այն կոնկրետ վարչական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, որոնք իրավասու են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմել և այն ներկայացնել դատարան՝ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը դեմ չի արտահայտվել դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտին այլ արձանագրել է իրավակարգավորման բաց՝ պայմանավորված դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն իր՝ 2012 թ. սեպտեմբերի 19-ի ՍԳ-Ո-1048 որոշմամբ³⁴³ նշում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության և առկա իրավակարգավորումների շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից: Մասնավորապես, հիշյալ որոշմամբ առանձնացվում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից սահմանազատելու ի-

³⁴² Հղումն ըստ համացանցի՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf>:

³⁴³ Հղումն ըստ համացանցի՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1048.pdf>:

րավական չափանիշների առավել հստակեցմանը և մի շարք հայեցակարգային նշանակության այլ հարցեր:

Այսպիսով, վերը նշված բոլոր օրենսդրական բացերը և թերությունները, օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն պահանջող խնդիրները, ոչ միայն գործող օրենսդրության այլև շրջանառության մեջ գտնվող Նախագծերի վերաբերյալ, միայն չնչին մասն են կազմում, գործնականում դրանք անհամեմատ շատ են, ինչը նույնիսկ բնորոշ չէ որևէ իրավական ինստիտուտի, և բնականաբար մեկ պարագրաֆի շրջանակներում, հնարավոր չէր առավել մանրամասն ներկայացնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսդրության թերություններն ու դրանց վերացման բոլոր ուղիները, հետևաբար այս պարագրաֆում փորձեցինք ներկայացնել մեր դատողություններն ու եզրահանգումներն իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական ամրագրման և դրա կարգավորման ուղիների շուրջ՝ ապահովելով օրենքի դրույթների կիրառման գործունե կառուցակարգ, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման գործունե և իրական երաշխիքներ:

2013թ. հունիսին ՀՀ արդարադատության կողմից, ի կատարումն 2012 թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա ՀՀ նախագահի կարգադրությամբ հաստատված «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի և դրանից բխող միջոցառումների ցանկի» «Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ» վերառությամբ 3 բաժնի 3.6-րդ կետի՝ շրջանառության մեջ դրվեց մաս Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի ընդհանուր մասը, որը նախկին նախագծից տարբերվող բոլորովին այլ իրավակարգավորումներ է ամրագրում: Հիրավի, այս աշխատության շրջանակներում չենք կարող չանդրադառնալ մասն նշված նախագծի էական նշանակություն ունեցող իրավակարգավորման բացերին և թերություններին, որոնք համակարգված ձևով ստորև հանգում են հետևյալին.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նոր նախագծում (այսուհետ՝ Նոր նախագիծ) սահմանված **իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը**, լիովին վերանայման և լրամշակման կարիք ունի, որի հիմնավորումները արդեն իսկ ներկայացրել ենք սույն աշխատության մյուս պարագրաֆներում: Այսպես,

ա) նախ նշված օրենսգրքի իմաստով տրված չէ իրավաբանական անձի հասկացությունը, ապա մասն «իրավաբանական անձ» հասկացությունն այս օրենսգրքի իմաստով պետք է ընդգրկի մաս **մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները**, հիմնարկը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, այդ թվում մասն՝ օտարերկրյա կազմակերպությունը: Ընդ որում, բացառություն սահմանելով ոչ միայն պետության, այլ մասն համայնքների համար: Նշվածի հիմնավորումները արդեն իսկ ներկայացրել ենք սույն աշխատության մյուս պարագրաֆներում.

բ) Նախագծում բացառություն պետք է նախատեսել ոչ միայն համայնքների համար, այլև պետության և պետական հիմնարկների համար: Մասնավորապես, աշխատության մեկ ներկայացված միջազգային փորձը ցույց է տալիս, որ մասն բացառությունը միանշանակ սահմանված են բոլոր այն երկրների օրենսդրական ակտերում, որոնք նախատեսում են իրավաբանական անձանց հանրային պատասխանատվություն: Նշվածը, պետք է հիմնավորել մասն նրանով, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների համաձայն՝ **ՀՀ և համայնքների** նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից.

գ) անհրաժեշտ է կարգավորել մասն **իրավաբանական անձի և նրա աշխատակցի պատասխանատվության հարաբերակցության խնդիրը**: Մասնավորապես, կարգավորելով ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձի համաժամանակյա պատասխանատվության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով, սահմանել մասն «ի շահ» եզրույթի հասկացությունը.

դ) լիարժեք և համակողմանի կարգավորում չի ստացել նաև իրավաբանական անձի վարչական պատասխանատվության հիմնահարցերը իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքերում:

ե) պետք է սահմանել նաև իրավաբանական անձանց մեղավորության որոշման պայմանները, քանի որ դրանց բացակայությունը միանշանակ իրավակիրառ պրակտիկայում առաջացնելու է վերջիններին մեղավորության որոշման անհարկի բարդություններ:

2. Նոր Նախագծում ամրագրված է վարչական տույժերի շատ նեղ շրջանակ, որը սկզբունքորեն վերանայման կարիք ունի՝ ներկայիս օրենսդրական կարգավորումներին և միջազգային փորձին համահունչ դարձնելու տեսանկյունից: Այսպես,

ա) իրավահամեմատական վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ Նախագծում սահմանված է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի թերևս ոչ ամբողջական շրջանակ: Հարկ է նկատել, որ որևէ օրենսդրական ակտով սահմանված չէ բացառապես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի սպառնիչ ցանկ, սակայն դրանց մասին կարելի է պատկերացում կազմել՝ դատելով իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող հայրենական և այլ երկրների օրենսդրական ակտերի վերլուծությունից, որոնց մանրամասն անդրադարձ ենք կատարել աշխատության սույն գլխի 3-րդ պարագրաֆում: Գործող օրենսդրության ուսումնասիրությունները թույլ են տալիս նշելու, որ լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում և դադարեցում վարչական տույժի տեսակներն իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժի ամենատարածված տեսակներից են, որոնք բացակայում են այս Նախագծում: Ընդ որում, առավել քան արդարացված կլինի նաև, եթե Նախագծով սահմանվի ոչ միայն վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի, այլև հենց **վարչական իրավախախտման արդյունքում ստացված գույքի բռնագրավումը տույժի տեսակը**, և որպես իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժի լրացուցիչ տեսակ սահմանել նաև **վարչական տույժ նշանակելու մասին որոշման հրապարակումը**:

բ) սահմանված վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավման տույժի տեսակի նշանակման կարգը պետք է համապատասխանեցվի ՀՀ սահմանադրությանը և վարչական տույժի այս տեսակի նշանակումը պետք է վերապահվի բացառապես դատարանին:

գ) Նոր նախագծի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցումը կարող է կիրառվել միայն պարագայում, երբ վարչական վարույթի նյութերով հիմնավորվում է տվյալ հոդվածով նախատեսված մյուս վարչական պատասխանատվության միջոցների նշանակման անարդյունավետությունը: Գտնում ենք, որ իրավաբանական անձի գործունեության դադարեցում տույժի տեսակի կիրառման պայմանները հստակ նախատեսված չեն Նախագծում, և վարչական մարմիններին հայեցողական լիազորություն է վերապահվում առանց որևէ հստակ պայմանի առկայության որոշում կայացնել նման խիստ վարչական տույժի տեսակի կիրառման վերաբերյալ: Ընդ որում, տույժի այս տեսակի նշանակում նույնպես պետք է վերապահել դատարանին, որի հիմնավորումներն արդեն իսկ տրվել են աշխատության սույն գլխի 3-րդ պարագրաֆում:

Գրեթե բոլոր երկրների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձի լուծարումը համարվում է լրացուցիչ պատիժ և դրա կիրառման համար նախատեսվում է կոնկրետ պայման: Հետևաբար, կարծում ենք՝ Նախագծի վերը նշված հոդվածն անհրաժեշտ է լրացնել՝ սահմանելով իրավաբանական անձի գործունեության դադարեցում վարչական տույժի նշանակման համար հետևյալ պայմանը. *եթե օրենսգրքի հատուկ մասի նորմերով սահմանված չէ վարչական տույժի նշված տեսակը, այսպե՛ս որպես լրացուցիչ վարչական տույժ այն կարող է նշանակվել այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ստեղծվել են վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ եթե իրենց լիազորությունները չարաշահում են վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ վարչական իրավախախտումների կատարումը նրանց գործունեության հիմնական մասն է կազմում*: Ընդ որում, անհրաժեշտ է նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված բացառությունը միայն հասարակական կազմակերպությունների և արհեստակցական միությունների մասով հանել և բացառություն սահմանել

միայն կուսակցությունների համար, քանի որ վերջիններիս գործունեությունը, ըստ ՀՀ սահմանադրության 100-րդ հոդվածի՝ դադարեցվում կամ կասեցվում է Սահմանադրական դատարանի որոշմամբ:

զ) սկզբունքային օրենսդրական լուծում պահանջող հարցն անհրաժեշտ է նախագծում կարգավորել՝ **սահմանելով տուգանքի միայն առավելագույն չափը**, որպեսզի չսահմանվեն տուգանքի այնպիսի չափեր, որոնք մի քանի անգամ կգերազանցեն նույնաբնույթ հանցագործությունների համար քրեական օրենսդրությամբ սահմանված տուգանքի չափերը: Ու եթե անգամ նկատվում է տուգանքի առավելագույն սահմանը գերազանցելուն հանգեցնող որևէ արարքի համար պատասխանատվությունն ուժեղացնելու անհրաժեշտություն, ապա առավել տրամաբանական է, որ տվյալ դեպքում գործ ունենանք ոչ այնքան զանցանքի, որքան հանցանքի հետ:

3. Նախագծում սահմանված են *վարչական կանխարգելիչ միջոցներ, որոնք պետք է ունենան բավականին խորը և համակողմանի հիմնավորում՝ Սահմանադրության և ՄԻԵԴ-ի որոշումների մեկնաբանությունների լույսի ներքո:*

Այս համատեսքում պետք է քննարկել նաև **բացակայության արգելքի** ինստիտուտը, որը, ըստ էության, սահմանափակում է անձի ազատ տեղաշարժման իրավունքը, ինչը ևս ազատության սահմանափակում է: Այն խիստ միջոց է և չի համապատասխանում վարչական պատասխանատվության բնույթին և վարչական իրավախախտումների հանրային վտանգավորությանը: Ավելին, վարույթն իրականանող մարմնին վերապահվել է իրավունք արգելել անձին ստանալու նոր փաստաթուղթ:

Ընդհանուր առմամբ, ազատությունից զրկելը բավականին խիստ միջոց է և կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ նվազ խիստ պայմաններում անձին պահելը համարվել է ոչ բավարար նշված անձի կամ հասարակության շահերի պաշտպանության համար: Ընդ որում, պետք է անպայման հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության աստիճանը, արդյոք արդարացված է իրավաչափ է վարչական իրավախախտումների կատարման համար նման միջոցների սահմանումը:

Նախագծում սահմանված հարկադրաբար հեռացնելու ինստիտուտի բովանդակությունից բխում է, որ այն նույնպես անձին ազատությունից զրկելու ձև է, և նույնպես անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորել Սահմանադրության 16-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից:

4. Նախագծում տրված է վարչական պատասխանատվության սուբյեկտների նեղ շրջանակ, այսինքն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ հիմքում ունենալով թերևս այն մոտեցումը, որ պաշտոնատար անձինք, զինծառայողները, անհատ ձեռնարկատերերը նույնպես համարվում են ֆիզիկական անձինք: Սակայն, որդեգրված մոտեցումն ինչպես չի բխում վարչական պատասխանատվության նպատակներից, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում միանշանակ կունենա կիրառման անհարկի բարդություններ: Օրինակ՝ չի կարող նույն իրավախախտման համար տուգանքի չափը կամ վարչական տույժի այլընտրանքային տեսակի կիրառումը նույնը լինել ֆիզիկական անձի և պաշտոնատար անձի համար: Կամ անհատ ձեռնարկատերերը, որպես տնտեսվարող սուբյեկտներ, մտնելով շուկայական հարաբերությունների մեջ, հաճախ առավել տնտեսական շահույթներ են ձեռք բերում և առավել մեծ վնաս իրենց գործունեության արդյունքում կարող են հասցնել պետության շահերին, քան իրավաբանական անձինք, և փաստորեն, օրինակ՝ հարկային ոլորտի իրավախախտումներում եթե իրավաբանական անձինք կտուգանվեն տուգանքի առավել բարձր չափով, ապա անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կկիրառվեն տուգանքի այն չափերը, որը սահմանվում է ֆիզիկական անձանց համար: Նման իրավակարգավորումը չի բխում հենց համաչափության սկզբունքից, առ այն՝ որ վարչական տույժի տեսակները կամ սահմանված չափերը պետք է համապատասխանեն ոչ միայն իրավախախտման ծանրությանը, այլ նաև իրավախախտումը կատարող անձին:

Անշուշտ, հարկ է նկատել, որ բացի սուբյեկտին բնութագրող ընդհանուր հատկանիշներից՝ տարիք և մեղսունակություն, անհրաժեշտ է ամրագրել նաև հատուկ հատկանիշները, որոնք հնարավորություն են տալու առավել համարժեք իրավական գնահատական տալու արարքի հասարակական վտանգավորությանը:

5. Հաշվի առնելով, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով և կիրառվում են հարկադրանքի միջոցներ, ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումներ, անհրաժեշտ է հստակեցնել դրանց հիմքերը և կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներն ու պայմանները: **Այս համատեքստում տեղին է ամրագրել նաև դատախազական հսկողության ինստիտուտը:** Այսպես՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ դատախազը հսկողություն է իրականացնում նաև Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքերում անձին ազատությունից զրկելու նկատմամբ: Նոր նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է միայն, որ ձերբակալման արձանագրությունը և որոշման պատճենները ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ուղարկվում են դատախազին, և սա այն դեպքում, երբ ձերբակալման ժամկետը 3 ժամ է: **Կարծում ենք այն պետք է ուղարկվի դատախազին անհապաղ, բայց ոչ ուշ քան 1 ժամվա ընթացքում:** Ընդ որում դատախազական հսկողության շրջանակներում պետք է ամրագրվի նաև դատախազի իրավունքը վերացնելու անձին ձերբակալելու մասին որոշումը, որը և հիմք պետք է հանդիսանա անձին ազատ արձակելու համար:

Ելնելով վերը նշված հիմնավորումից՝ դատախազական հսկողությունը պետք է տարածվի նաև անձին հարկադրաբար ազատությունից հեռացնելու, դատախազական հսկողության հանձնելու վարչական կանխարգելիչ միջոցների վրա:

Նոր նախագծի վերաբերյալ վերը ներկայացված նշված իրավակարգավորման բոլոր թերությունները, օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն պահանջող խնդիրները միայն մի մասն են կազմում, գործնականում դրանք ավելի շատ են, սակայն այս աշխատության շրջանակներում ներկայացրել ենք առավել խնդրահարույց և համակարգային լուծում պահանջող հիմնահարցերը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով աշխատանքում ներկայացված հետազոտության արդյունքները, թերևս, նպատակահարմար է առանձնացնել հետևյալ եզրահանգումները՝

- իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հիմնադրման, դրա հետագա զարգացման հարցադրումների շուրջ առկա տարածայնությունները, հիրավի, հետևանք են ինչպես վերջինիս զարգացման փորձ ունեցող երկրներում առկա ոչ միասնական մոտեցումների, այնպես էլ արդեն իսկ ձևավորված պրակտիկայի պարագայում դրա ներդրման անհրաժեշտության և վերջինիս հետ առնչվող հիմնախնդիրների առկայությամբ: Ուսումնասիրությունները թույլ են տալիս նշելու, որ քննարկվող հարցադրման կապակցությամբ, կարծում ենք, երկրները կարելի է բաժանել հիմնականում չորս խմբի, մասնավորապես, առաջին խմբում կարելի է ներառել երկրներ, որտեղ սահմանված է իրավաբանական անձանց համար միայն քրեական պատասխանատվություն, ընդ որում, խոսքը վերաբերում է այն երկրներին, որոնց իրավական համակարգում հստակ տարանջատում չկա քրեական և վարչական արարքների միջև, և բոլոր իրավախախտումները կարգավորվում են մեկ միասնական քրեական օրենսդրությամբ: Երկրորդ խմբում կարելի է ներառել այն երկրները, որոնց իրավական համակարգում հստակ տարանջատում կա քրեական և վարչական արարքների միջև, սակայն սահմանված է իրավաբանական անձանց միայն վարչական պատասխանատվություն, և այս երկրներից կարելի է առանձնացնել նաև երրորդ խումբը, որոնց օրենսդրությամբ սահմանված է իրավաբանական անձանց և՛ վարչական, և՛ քրեական պատասխանատվություն: Կարելի է առանձնացնել նաև չորրորդ՝ թվով շատ քիչ երկրներ ընդգրկող խումբը, որտեղ կոնկրետ օրենսդրությամբ ամրագրված չէ իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության և ոչ մի տեսակ: Ընդ որում, Հայաստանն այսօր հենց այս խմբի երկրների շարքին է դասվում, քանի դեռ նոր օրենսգիրքը չի ընդունվել,

- իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրորեն միասնական հիմունքների ամրագրումը, հիրավի, դարձել է ժամանակի հրամայական, մասնավորապես, ազատա-

կանացված տնտեսություն երաշխավորելու, բարեխիղճ մրցակցություն ապահովելու տեսանկյունից՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց թվի զգալի աճը, պետության հսկողությունից վերջիններիս դուրս մնալը, նյութական ռեսուրսների ավելի ու ավելի մեծ քանակության կենտրոնացումն իրավաբանական անձանց ձեռքում, դրանց գործունեության հասարակական վտանգավորությունը և տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական ոլորտներում իրավախախտումների արդյունքում պատճառված վնասը վերականգնելու անհրաժեշտությունը: Այն պայմանավորված է նաև ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության խնդիրների համալիր, ամբողջական լուծումն ապահովելու, ինչպես նաև սոսկ պատճառված բացասական հետևանքները հնարավորիս համարժեք բացառելու և խախտված իրավունքները վերականգնելու համար,

- իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի սահմանումը և զարգացումը Հայաստանի Հանրապետությունում ընթացել է հայրենական օրենսդրության ձևավորման և կատարելագործման 4 փուլերի շրջանակներում, մասնավորապես, առաջին փուլը՝ 1917-1961թթ. ընկած ժամանակաշրջանն է, երկրորդ փուլը՝ 1961-1981թթ., երրորդ փուլը՝ 1981-1991թթ., և չորրորդ փուլը՝ 1991թ. մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը, որը ներկայացվել է որպես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման հիմնական փուլ: Ընդ որում, վերջինս կարելի է բաժանել 2 ենթափուլերի՝ 1991-2008թթ., և 2008 թ. մեր օրերը, երբ արդեն ձևավորվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակման աշխատանքային խումբ, մշակվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) և վերջինիս ընդունման հետ կապված դեռևս շարունակվում են աշխատանքները:

- իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության պարագայում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության պահանջն անհիմն է, սոսկ միտված է իրավական կարգավորումների միասնականությունն ապահովելուն, մինչդեռ միասնական պետք է լինեն ոչ թե իրավական կարգավորումները, այլ իրավունքի սկզբունքներն ու առավել էական ինստիտուտները: Իրավաբանական

անձանց վարչական պատասխանատվությունն առավել շահեկան է, քան քրեական պատասխանատվությունը, քանզի անհարկի չեն խախտվում քրեական պատասխանատվության հանրահայտ ու համընդհանուր սկզբունքները (անհատական պատասխանատվության, սուբյեկտիվ մեղսայնացման և այլ), ապահովում են անհրաժեշտ օպերատիվություն և պարզեցված ընթացակարգ, որին նույնիսկ միտված են արդի ժամանակաշրջանի քրեական դատավարության օրենսդրական ակտերը, նշանակված պատասխանատվության միջոցի ու չափի հանրային համարժեք ընկալումը, ինչն ունի նաև կանխարգելիչ նշանակություն, երաշխավորվում է միևնույն արարքի համար, ըստ էության, կրկնակի պատասխանատվության ենթարկվելուց խուսափելը և այլն, ուղղակի հարկ է նկատել, որ այս ինստիտուտը պետք է ուղեկցվի քրեական դատավարության օրենսդրությունում հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի իրավական ռեժիմի արմատական վերանայմամբ,

- իրավաբանական անձանց պարագայում միայն վարչական տույժի նշանակումը բավարար չէ պատասխանատվության նպատակներին հասնելու համար, մասնավորապես, անհրաժեշտ է կիրառել նաև վարչաիրավական ներգործության այլ միջոցներ: Այսպես, որպես քրեական պատասխանատվության հետևանքին համահունչ դատվածության առաջացման հետևանքի համատեքստում վարչական պատասխանատվության իրավական հետևանք պետք է ամրագրել, առ այն, որ իրավաբանական անձի նկատմամբ լուծարում վարչական տույժի նշանակման դեպքում՝ տվյալ իրավաբանական անձի հիմնադիրներին արգելվում է նոր իրավաբանական անձ ստեղծել, իսկ լիցենզիայի գրկում վարչական տույժի նշանակման դեպքում՝ իրավաբանական անձը չի կարող կրկին դիմել նույն լիցենզիան ստանալու համար:

-իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունն ունի իրեն բնորոշ հատկանիշներ ու առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը բնորոշել՝ որպես իրենց կողմից կատարված վարչական իրավախախտման համար օրենքով սահմանված կարգով վարչական տույժերի նշանակում ու կիրառում, որը հետապնդում է իրավախախտին պատժելու նպատակ և ապահովում է տվյալ իրավաբանական անձի կողմից օրենքով նրանց վրա դրված պարտականությունների և պե-

տական իրավասու մարմինների պահանջների կատարումը:

- իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի սահմանումը, թերևս, բավարար չավոլ, չէր կարող լուծել շուկայական հարաբերություններում ազատ տնտեսական մրցակցության և իրավաբանական անձանց պատասխանատվության հիմնահարցերի պատշաճ կարգավորումը, քանզի խոշոր իրավաբանական անձանց գործունեության պարագայում, որոնք ունեն մի շարք մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, արդարացված չէր լինի կոնկրետ մասնաճյուղի ոչ օրինական գործունեության արդյունքում պատասխանատվության ենթարկել տվյալ իրավաբանական անձին: Նախագծում՝ որպես վարչական պատասխանատվության ինքնուրույն սուբյեկտ, արդարացիորեն ամրագրվել է նաև իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղը, ներկայացուցչությունը: Այս համատեքստում արձանագրվել է, որ բացառություն սահմանված չէ՝ պետության և համայնքների համար,

- ընդունելի չէ որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պայման ամրագրել միայն արարքի հակաիրավականությունը: Ուստի նախագծում այս տեսանկյունից պետք է կատարել համապատասխան լրամշակումներ և իրավաբանական անձանց պարագայում մեղքը սահմանել որպես պատասխանատվության ենթարկելու պայման ու ամրագրել այն որոշելու չափանիշներ: Ընդ որում, իրավաբանական անձի մեղքը վարչական իրավախախտման կատարման մեջ կարող է բացառվել այնպիսի «խոչընդոտող հանգամանքների» առկայության դեպքում, որոնց պարագայում անիրագործելի է դառնում իր ստանձնած պարտականությունների կատարումը նույնիսկ նրա կողմից բոլոր բավարար և անհրաժեշտ միջոցները գործադրելու դեպքում:

- իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում իրավաբանական անձանց պատասխանատվությունը կանոնակարգող Նախագծում սահմանված դրույթներն առաջարկվել է վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Իրավաբանական անձանց միաժողովման դեպքում կատարված վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկվում է նոր առաջացած իրավաբանական անձը: Իրավաբանական անձի՝ այլ իրավաբանական անձի միանալու դեպքում՝ իր կողմից կատարված վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով

սահմանված կարգով վարչական պատասխանատվության է ենթարկվում միացած իրավաբանական անձը: Իրավաբանական անձի բաժանման դեպքում կամ իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնաճյուղ դեպքում՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության է ենթարկվում այն իրավաբանական անձը, որին համաձայն բաժանիչ հաշվեկշռի անցել են այն իրավունքներն ու պարտականությունները, որի առնչությամբ իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը: Մեկ տեսակի իրավաբանական անձը մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմավորվելու (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) դեպքում վարչական իրավախախտում կատարելու համար սույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության է ենթարկվում նոր առաջացած իրավաբանական անձը»:

- Նախագծում անհրաժեշտ է սահմանել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կանոններ առ այն, որ եթե վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձը լուծարվել է մինչև նրա նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթ հարուցելը, ապա վարչական պատասխանատվության է ենթարկվում վարչական իրավախախտումը կատարելու պահին տվյալ իրավաբանական անձի պատասխանատու անձը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավարը (իրավախախտման պահի դրությամբ): Եթե իրավաբանական անձը սնանկության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացրել կամ այն վարույթ է ընդունվել, ապա նա վարչական պատասխանատվության է ենթարկվում նաև մինչև իր սնանկության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնելը, ինչպես նաև այդ վարույթի ընթացքում կատարած վարչական իրավախախտումների համար: Նշված դեպքերում իրավաբանական անձի նկատմամբ նշանակվում է միայն նախագոյազցում կամ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում վարչական տույժերի տեսակները, իսկ վարչական իրավախախտման արդյունքում ստացված գույքը՝ բռնագրավվում է:

- վարչական տույժերի ցանկն անհրաժեշտ է վերանայել՝ ներառե-

լով վարչական տույժի նոր տեսակներ՝ որակագրկում, արտաքսում, վարչական տույժ նշանակելու մասին որոշման հրապարակում: Այս համատեքստում որպես հայեցակարգային թերություն առանձնացվել է հետևյալ հիմնահարցը: Մասնավորապես, եթե Նախագծում որպես վարչական տույժ նշանակող մարմին ամրագրված են միայն վարչական մարմինները, հետևաբար, վարչական տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցում, լիցենզիայի գործողության դադարեցում, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, չեն կարող նշանակվել վարչական մարմինների կողմից: Կամ պետք է կրճատել վարչական մարմինների կողմից նշանակվող վարչական տույժի տեսակները, կամ վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, լիցենզիայի, թույլտվության գործողության դադարեցում, իրավաբանական անձի գործունեության դադարեցում տույժի տեսակները պետք է նշանակվեն դատարանի կողմից: Ի թիվս նշվածների նաև՝ արտաքսում և ակտի հրապարակում վարչական տույժի տեսակները,

- անհրաժեշտ է օրենդորեն սահմանել վարչական տուգանքի առավելագույն չափը, որպեսզի անհարկի պատճառաբանությամբ հիմքում դնելով արարքի հանրային վտանգավորությունը, չսահմանվեն տուգանքի այնպիսի չափեր, որոնք մի քանի անգամ կգերազանցեն նույնաբնույթ հանցագործությունների համար քրեական օրենսդրությամբ սահմանված տուգանքի չափերը: Ընդ որում, Նախագծով վարչական պատասխանատվության ենթարկելու տարբերակման հիմք կարելի է նախատեսել նաև մեծ, միջին և փոքր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար, ըստ որոնց՝ նախատեսել վարչական տուգանքի տարբեր չափեր՝ դրանով իսկ ապահովելով այն, որ վարչական տույժի միջոցի կիրառումը չհանգեցնի կոնկրետ իրավաբանական անձի գործունեության փաստացի դադարեցմանը,

-վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն առանձնանում է սուր հակասություններով և բացարձակապես չի համապատասխանում արդի իրավական համակարգի թե՛ տեսական և թե՛ գործնական պահանջներին, արդյունքում էլ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերում պարբերաբար անխուսափելիորեն կատարվել

են տարաբնույթ փոփոխություններ, լրացումներ, ինչպես նաև ընդունվել են նոր օրենսդրական ակտեր: Մտահոգողն այն է, որ վերջիններս չեն բավարարում միասեռ հարաբերությունների կարգավորման միասնականության նվազագույն պահանջներին, իսկ հաճախ էլ գտնվում են ակնհայտ հակասության մեջ, ինչպես նաև այս կամ այն չափով չեն համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին: Նշվածի վերաբերյալ համառոտ ներկայացվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսդրության թերություններն ու դրանց վերացման ուղիները: Վերոգրյալը վկայում է նոր օրենսգրքի ընդունման հրատապության և անհրաժեշտության մասին:

- համառոտ անդրադառնալով վարչական պատասխանատվության օրենսդրության հիմնախնդիրներին, դատաիրավական բարեփոխումների խորապատկերում առավել հանգամանային ներկայացվել է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրներն ու դրանց լուծման օրենսդրական ուղիները, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում և Նախագծում սահմանված որոշակի դրույթների՝ որոշ հոդվածներում լրացումներ կատարելու և դրանք բոլորովին նոր խմբագրությամբ շարադրելու տեսանկյունից արմատական վերանայման անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1) իրավական և դատական ակտեր

ա) ՀՀ Սահմանադրություն, միջազգային իրավական ակտեր, ՀՀ օրենքներ, այլ նորմատիվ ակտեր՝

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեով, 2005 թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններով և լրացումներով),
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (4 նոյեմբերի 1950թ., Հռոմ),
3. Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (27 հունվարի 1999թ., Ստրասբուրգ),
4. Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (14 դեկտեմբերի 2005թ., Նյու-Յորք),
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին),
6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին),
7. ՀՀ մաքսային օրենսգիրք (ընդունվել է 2000թ. հուլիսի 6-ին),
8. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին),
9. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին),
10. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին),
11. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին),
12. «Նախկին Ռուսական կայսրության օրենքները Հայաստանի Հանրապետության տարածքի վրա գործադրման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1918թ. դեկտեմբերի 6-ին),
13. «Գովազդի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1996թ. ապրիլի 30-ին),
14. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1996 թ. հունիսի 30-ին),
15. «Հարկերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին),

16. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1997թ. սեպտեմբերի 30-ին),

17. «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1998թ. մարտի 3-ին),

18. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998թ. հուլիսի 7-ին),

19. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998թ. դեկտեմբերի 28-ին),

20. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1999թ. ապրիլի 4-ին),

21. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2000թ. նոյեմբերի 6-ին),

22. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. մարտի 7-ին),

23. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թ. ապրիլի 3-ին),

24. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. մայիսի 30-ին),

25. «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 28-ին),

26. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին),

27. «Գրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին),

28. «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին),

29. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին),

30. «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 13-ին),

31. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 3-ին),

32. «Ինկասագիայի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. սեպտեմբերի 28-ին),

33. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին),

34. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 11-ին),

35. «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին),

36. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. հունիսի 8-ին),

37. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին),

38. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006 թ. դեկտեմբերի 25-ին),

39. «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կանոնները մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. նոյեմբերի 28-ին),

40. «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. մայիսի 23-ին),

41. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2007թ. ապրիլի 9-ին),

42. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2008թ. մայիսի 26-ին),

43. Եվրոխորհրդի անդամ պետությունների համար նախարարների կոմիտեի 1988 թ. «Կազմակերպությունների պատասխանատվության մասին» թիվ (88)18 հանձնարարական

44. Եվրոխորհրդի անդամ պետությունների համար նախարարների կոմիտեի 1991թ. փետրվարի 13-ի «Վարչական սանկցիաների մասին» թիվ (91)1 հանձնարարական

45. ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 23-ի « ՀՀ կառավարության 2007 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 1800-Ն որոշում,

46. ՀՀ կառավարության 2007 թ. նոյեմբերի 8-ի « ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 23-ի թիվ 1800-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1315-Ն որոշում,

47. ՀՀ կառավարության 2009 թ. հոկտեմբերի 8-ի « ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշում,

48. ՀՀ վարչապետի 1998 թ. նոյեմբերի 16-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 635 որոշում,

49. ՀՀ Նախագահի՝ 2008 թ. հունվարի 23-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ՆԿ-9-Ա կարգադրություն,

50. ՀՀ Նախագահի 2009 թ. ապրիլի 21-ի «Դատախարակական բարեփոխումների 2009-2011 թթ. ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՆԿ-59-Ն կարգադրություն,

51. ՀՀ Նախագահի՝ 2012 թ. հունիսի 30-ի «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրություն,

բ) Այլ երկրների օրենքներ՝

52. Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին),

53. ՌԽՖՍՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. հունիսի 20-ին),

54. Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1996թ. հունիսի 13-ին),

55. «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի նախագիծ, [http:// www.forbes.ru/ekonomika/vlast/](http://www.forbes.ru/ekonomika/vlast/)

56. Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին),

57. Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1997թ. հունիսի 16-ին),

58. Լատվիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին),

59. Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին),

60. Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգիրք (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին),

61. Բուլղարիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1968թ. ապրիլի 2-ին),

62. Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 17-ին),

63. Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1999թ. հուլիսի 9-ին),

64. Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթային-կատարողական օրենսգիրք (ընդունվել է 2006թ. նոյեմբերի 9-ին),

65. Ուկրաինայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին),

66. Ուկրաինայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2001թ. ապրիլի 5-ին),

67. Գրողզատանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1998թ. օգոստոսի 4-ին),

68. Գրողզատանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1997թ. հոկտեմբերի 1-ին),

69. Ուզբեկստանի Հանրապետության վարչական պատասխանատվության մասին օրենսգիրք (ընդունվել է 1994թ. սեպտեմբերի 22-ին),

70. Ուզբեկստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1994թ. սեպտեմբերի 22-ին),

71. Թուրքմենստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 17-ին),

72. Թուրքմենստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1997թ. հոկտեմբերի 1-ին),

73. Տաջիկստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1991թ. օգոստոսի 31-ին),

74. Տաջիկստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. մայիսի 21-ին),

75. Ադրբեջանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2000թ. հունիսի 11-ին),

76. Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2005թ. հունվարի 31-ին),

77. Վրաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 15-ին),

78. Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1999թ. հուլիսի 22-ին),

79. Էստոնիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1992թ. հուլիսի 8-ին, ուժը կորցրել է 2002թ. սեպտեմբերի 1-ին),

80. Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին),

81. «Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Էստոնիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 2002 թ. հունիսի 12-ին),

82. Լիտվայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1985թ.),

83. Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին),

84. Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին),

85. Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին),

86. «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենք, (ընդունվել է 1987թ. փետրվարի 19-ին),

87. Գերմանիայի Դաշնության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. նոյեմբերի 13-ին),

88. Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության վարչական պատիժների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 1-ին),

89. Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1997թ. մարտի 14-ին),

90. Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1992թ. հուլիսի 22-ին),

91. «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին),

92. Խորվաթիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին),

93. «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին),

94. «Մանր իրավախախտումների մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 1983թ. հուլիսի 21-ին),

95. «Քրեական համակարգում փոփոխությունների մասին» Իտալիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 1981թ. նոյեմբերի 24-ին, № 689), (Legge, Modifiche al sistema penale)

96. Իտալիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1930թ. հոկտեմբերի 19-ին),

97. Իտալիայի Հանրապետության օրենսդրական դեկրետ թիվ 231 (ընդունվել է 2001թ. հունիս 8-ին), Legislative Decree No. 231 of June 8th, 2001 (the “Decree”) of Italy

98. Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք (ընդունվել է 1997թ.),

99. Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին),

100. Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2004թ.),

101. Նորվեգիայի Թագավորության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1902թ. մայիսի 22-ին),

102. Ավստրիայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 1995թ. մարտի 12-ին),

103. Ավստրիայի Հանրապետության վարչական պատիժների մասին օրենսգիրք (ընդունվել է 1991թ.),

104. «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Ավստրիայի Հանրապետության ստատուտ (ընդունվել է 2005թ. դեկտեմբերի 23-ին),

105. «Մանր իրավախախտումների մասին» Սլովակիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 1990թ.),

106. «Չանցանքների մասին» Չեխիայի Հանրապետության օրենք (ընդունվել է 1990թ.),

107. Պորտուգալիայի քրեական օրենսգիրք (ընդունվել է 1982թ.),

108. Պորտուգալիայի օրենսդրական դեկրետ թիվ 433/82 (ընդունվել է 1982թ.)

109. Ֆինլանդիայի քրեական օրենսգիրք (ընդունվել է 1889),

110. Նիդերլանդների քրեական օրենսգիրք (ընդունվել է 1881 թ. մարտի 3-ին),

111. Ведомости ВС СССР, 1955, №2, ст.46, 1961, №52, ст.538 <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>

112. Ведомости Съезда народных депутатов Российской Федерации и Верховного Совета Российской Федерации. 1993. № 2, <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>

զ) Դատական ակտեր՝

113. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. փետրվարի 5-ի ՍԳ-Ո 864 որոշում, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf>:

114. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ. սեպտեմբերի 19-ի ՍԳ-Ո 1048 որոշում, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2012/pdf/sdv-1048.pdf>:

115. ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թ. սեպտեմբերի 28-ի որոշում՝ 3-1787(ՏԳ) քաղաքացիական գործով,

116. ECHR case of *Öztürk v. Germany*, (application no. 8544/79, 21 February 1984, Strasbourg),

117. ECHR case of *Escoubet v. Belgium* (application no. 26780/95, 28 October 1999, Strasbourg),

118. ECHR case of *Engel and others v. Netherlands* (application no. 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, 8 June 1976, Strasbourg),

119. ECHR case of *Lutz v. Germany*, (application no. 9912/82 , 25 August 1987, Strasbourg),

120. ECHR case of *Sergey Zolotukhin v. Russia* (application no.14939/03, 10 February 2009, Strasbourg),

121. ECHR case of *Čanády v. Slovakia*, (application no. 53371/99, 16 November 2004, Strasbourg),

122. ECHR case of *Ezeh and Connors v. the United Kingdom* (application no. 39665/98 and 40086/98, 9 October 2003, Strasbourg),

123. ECHR case of *Weber v. Switzerland*, (application no. 11034/84 , 22 May 1990, Strasbourg),

124. ECHR case of *Demicoli v. Malta*, (application no. 13057/87 , 27 August 1991, Strasbourg),

125. ECHR case of *Ravnsborg v. Sweden*, (application no. 14220/88, 23 March 1994, Strasbourg),

126. ECHR case of *Deweer v. Belgium*,(application no. 6903/75, 27 February 1980, Strasbourg),

127. ECHR case of *Eckle v. Germany*, (application no. 8130/78 , 15 July 1982, Strasbourg),

128. *United States v. Basic Construction Co.*, 711 F.2d 570, 573 (4th Cir.), cert. denied, 462 U.S. 954 (1983); <http://law.justia.com/cases/federal/appellate-courts/F2/711/570/302619/>:

129. Определение Конституционного Суда РФ от 01.10.1998 г. по запросу Законодательного Собрания Нижегородской области о проверке конституционности ч.1 ст. 6 КоАП РСФСР: Определение Конституционного Суда РФ от 01.10.1998 // СЗ РФ. - 1998. - № 49. - Ст. 6102. <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx>

130. Определение Конституционного Суда РФ от 5 июля 2001 г. № 130-О по запросу Омского областного суда о проверке конституционности п. 12 ст.7 Закона РФ «О налоговых органах РФ.» //С.З. РФ, 2001, № 34. Ст.3512.

131. Определение Конституционного суда РФ от 20 мая 1997г. по делу о проверке конституционности пп. 4 и 6 ст. 242 и ст. 280 Таможенного Кодекса РФ в связи с запросом Повгородского областного суда // СЗ. — 1997. — № 21.-Ст. 2542,

132. Определение Конституционного Суда РФ от 3 декабря 1998 г. по жалобе граждан Л.Н. Васильевой, А.Н. Евгеева и Л. А. Налетова

на нарушения их конституционных прав положениями ч.2 ст. 146-7 КоАП РФ // СЗ, 1999, №17.-Ст. 2204,

2) մասնագիտական գրականություն

ա) հայերեն լեզվով

133. Ապիյան Ն.Ա., Ապիյան Ս.Ն., Սաֆարյան Գ.Հ. «Իրավունքի տեսության հիմնահարցեր», Երևան, 2003, ԵՊՀ հրատ., 325 էջ,

134. ՀՀ Սահմանադրական իրավունք, ընդ. խմբ. Ն.Այվազյանի, Երևան, ԵՊՀ հր., 2008, 703 էջ,

135. Բարսեղյան Տ.Կ. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Առաջին մաս, (դասագիրք բուհերի համար), Երևան, ԵՊՀ հրատարկչություն, 2000, 528 էջ,

136. Գանիեյան Գ. «Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները», 2004, Երևան, «ԱՌՏ», 328 էջ:

137. Գանիեյան Գ.Բ. «Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում», (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌՏ» հրատարկչություն, 2007, 246 էջ,

138. Գանիեյան Գ.Բ. «Վարչական վարույթ և դատավարություն», (ուսումնական ձեռնարկ), Երևան, «Տիգրան Մեծ» հրատարկչություն, 2011, 380 էջ:

139. Գանիեյան Գ.Բ. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության բարեփոխման հայեցակարգային խնդիրները», Օրինականություն, Երևան, 1999, № 8, էջեր 1-6,

140. Եղյան Ռ. Հ. «Վարչական տույժեր (դասախոս. կուրս)» Երևան, ԵՊՀ հրատարկչություն, 2000, 48 էջ,

141. Եղյան Ռ. Հ. «Վարչական իրավունքը ՀՀ իրավական համակարգում (դասախոս. կուրս)» Երևան, Հեղինակային հրատարկչություն, 2006, 168 էջ,

142. Եղյան Ռ. Հ. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման և զարգացման հեռանկարները», Իրավագիտության հարցեր, Երևան, 2000, № 1-2, էջեր 6-18,

143. Իսրայելյան Գ.Վ. «Վարչական պատասխանատվությունը և վարչական դեղիկտարզիա», ուս.ձեռ. Երևան, 2010, 120 էջ,

144. Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական վերահսկողություն, ուս. ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար, Երևան, «Նժար», 2002, 192 էջ,

145. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996-2010 թթ.), Երևան, Նժար, 2011, 996 էջ,

146. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. Երևան: «Իրավունք», 2010, 1086 էջ,

147. Մուղնեցյան Գ.Ս. «Վարչական դատավարության ընթացակարգային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում», սեղմագիր, Երևան, 2011, 30 էջ,

148. Ներսիսյանց Վ.Ս., «Իրավունքի և պետության տեսություն», Վ.Նազարյանի, Ս.Միսնյանի և Վ.Էլոյանի թարգմանությամբ, Երևան, Նաիրի, 2001, 305 էջ,

149. Վաղարշյան Ա.Գ. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր», Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 160 էջ,

150. Լուխերիանդ Օ., Ռ-այնրու Ռ.Ռ.Վ. Ուղեցույց Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունքի, Երևան, Հարթ ընդ սոֆթ հրատարակչություն, 2009, 100 էջ:

բ) ռուսերեն լեզվով

151. Абрамов Н. А. О вине хозяйственных организаций при нарушении договорных обязательств / Н. А. Абрамов // Советское государство и право, 1982, №1, էջեր 36-43,

152. Агапов А. Б. Административная ответственность: Учебник / А. Б. Агапов,-М.: Статут, 2000, 251 էջ,

153. Агапов А. Б. Административная ответственность: Учебник: Изд. 3-е, перераб. и доп.- М.: Эксмо, 2007, 400 էջ,

154. Административная ответственность в СССР / В. М. Манохин, Ю.С. Адушкин. Саратов: Издательство Саратовского Университета, 1988, 140 էջ,

155. "Ääi ëí ëñððàèáí îá îðääî ГДР" (учебник, перевод с немецкого Е.Н.Колюшина) под редакцией Б.М. Лазарева, "Прогресс", Москва, 1983, 432 էջ,

156. Административное законодательство Российской Федерации: Сборник нормативных правовых актов /ред. Н. Ю. Хаманева.- М.: ТК Велби, Изд-во Проспект, 2006, 688 էջ,

157. “Административное право. История развития и основные современные концепции. “/ Галлаган Д., Полянский В.В., Старилов Ю.Н., М.: Юристъ, 2002, 410 էջ,

158. Административное право России. // Попов Л.Л., Мигачев Ю.И., Тихомиров С.В.- 2-е изд., перераб. и доп. - М.: Проспект, 2010, 752 էջ,

159. Административное право Российской Федерации. (Учебник) Дмитриев Ю.А., Полянский И.А., Трофимов Е.В., 2008, <http://www.alleng.ru/d/jur/jur508.htm>:

160. Актуальные проблемы административной деликтологии. Сборник научных трудов / А. В. Войцеховский, В. Додин, О. В. Коваленко, В. И. Ремнев, Ю. И. Римареико, В. М. Снежинский, Е. С. Шатский, - Киев: Киевская Высшая школа им. Ф. Э. Дзержинского МВД СССР, 1884, 182 էջ,

161. Алехин А. П. Административное право РФ: Учебник для юрид. ВУЗов и факультетов/ А. П. Алехин, А. А. Кармолицкий, 10. М. Козлов. М.: Зерцало, 2001, 577 էջ,

162. Алексеев С. С. Государство и право. М., 1996, 123 էջ,

163. Антонова В. П. Административная ответственность и проблемы административного права (4-ые Лазаревские чтения) / В. П. Антонова // Государство и право, 2000, №10, էջեր 13-42,

164. Антонова В. П. Административное право и административный процесс: старые и новые проблемы (по материалам Лазаревских чтений) / В. П. Антонова// Государство и право, 1998, №8, էջեր 5-32,

165. Анохин В. С. Привлечение к административной ответственности предпринимателей и юридических лиц // Арбитражная практика. – 2005, № 1, էջեր 74-81,

166. Аппакова Т. А. Проблемы административной ответственности юридических лиц / Т. А. Аппакова // Вестник Высшего Арбитражного Суда Российской Федерации. – 2003, №1, էջեր 123-131,

167. Аникеенко, Ю. Б. Административная ответственность юридических лиц. Материально-правовое исследование: Автореф. дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2005, 17 էջ,

168. Бахрах Д. Н. Административная ответственность / Д.Н. Бахрах, Пермь. 1966, 193 էջ,

169. Бахрах Д. Н. Административное право России: Учебник для вузов / Д. Н. Бахрах, М.:Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИИФРА, М), 2000, 478 т₂,

170. Бахрах Д. Н. Индивидуальные субъекты административные права / Д. Н. Бахрах // Государство и право. – 1994, №3, т₂т_р 16-24,

171. Бахрах Д. Н. Коллективные субъекты административного права /Д.Н. Бахрах // Правоведение. – 1991, №3, т₂т_р 66-73,

172. Бахрах Д. Н. Субъекты советского административного права / Д. Н. Бахрах // Субъекты советского административного права. Межвузовский сб. научи. трудов. — Свердловск: Свердловский юридический институт, 1985, 168 т₂,

173. Бахрах Д. Н. Советское законодательство об административной ответственности: Учебное пособие /Бахрах Д. Н.; А. А. Ушаков. - Пермь: Пермский Государственный Университет, 1969, 344 т₂,

174. Бекетов О. И. Актуальные проблемы административного права России / О. И. Бекетов //Государство и право. 1999, №5, т₂т_р 80-88,

175. Бельский К. С. Административная ответственность: генезис, основные признаки, структура / К. С. Вельский // Государство и право. - 1999. - №12. - т₂т_р 12-21,

176. Березницкий А. Г. Административная ответственность юридических лиц. Автореф. дис. ... канд. юрид. наук. -М. , 2003, 24 т₂,

177. Богданов Е. В. Сущность и ответственность юридического лица / Е.В. Богданов //Государство и право. – 1997, №10, т₂т_р 97-101,

178. Братусь С. Н. Юридическая ответственность и законность (Очерк теории) / С. Н. Братусь. - М.: Юрид. лит., 1976, 215 т₂,

179. Брэбан Ги. Французское административное право/ пер. Д.Н. Васильева, В.Д. Карповича, под ред. С.В. Боботова.-М.,-Прогресс,1988, 487 т₂,

180. Васильев Э.А. Общественная опасность - основной критерий отграничения административных правонарушений от преступлений // Государство и право.- 2007, № 4, т₂ 84,

181. Великчева Е. В. Проблемы определения вины юридического лица в арбитражной практике // Юрист. – 2005, № 1, т₂т_р 49 - 51,

182. Викторов И. Административная ответственность юридических лиц / И. Викторов// Законность. – 2001, №. 6, т₂т_р 12.-13,

183. Виноградова Е. Ю. Юридические лица должны нести ответственность за экологические преступления / ЕЛО// Российская юстиция. – 2001, № 8, т₂т_р 62-64,

184. Волженкин Б. В. Уголовная ответственность юридических лиц/Б. В. Волженкин. Спб.: Санкт-Петербург. юрид. институт Генеральной Прокуратуры РФ, 1998, 40 т₂,

185. Вараменко И. И. Административно-правовые санкции. -М.: Юрид. Ёёё. 1975,192 т₂,

186. Воробьева А.Д., Ответственность юридических лиц и должностных лиц администрации за нарушение трудового законодательства. дисс. к.ю.н., М.,1972., т₂т_р 329-330,

187. Галаган И. Л. Административная ответственность в СССР (Государственное и материальноправовое исследование) / И. А. Галаган. - Воронеж: Издательство Воронежского Университета, 1970, 252 т₂,

188. Галаган И. А. Административная ответственность в СССР (Процессуальное регулирование) / И. А. Галаган. - Воронеж: Издательство Воронежского Университета, 1970, 198 т₂,

189. Галаган И.А. Теоретические проблемы административной ответственности по советскому праву: Автореф. дис. на соиск. уч. степени доктора юр. наук. - М.: Московский Государственный Университет. – 1971, 26 т₂,

190. Голубев В. В. Уголовная ответственность юридического лица. Возможно ли? /В. В. Голубев // Юридический консультант. – 2000, №6, т₂т_р 4-6,

191. Гражданское право: Учебник. В 2 т. / Е. А. Суханов. - Том 1. - М.: Издательство БЕК, 2000, 816 т₂,

192. Гражданское право: Учебник. В 2 т. / Ю. К. Толстой, А. П. Сергеев. Том 1. -М: Издательство Проспект, 2008, 784 т₂,

193. Грешников И. П. Субъекты гражданского права: юридическое лицо в праве и законодательстве /И. П. Грешников.— Спб.: Юридический центр. Пресс, 2002, 331 т₂,

194. Денисов Ю. Производство об административных правонарушениях /Ю. Денисов //Законность, 1998, №8, т₂т_р 16-18,

195. Додонов В. Ответственность юридических лиц в современном уголовном праве, // <http://www.zazakon.ru>

196. Дымченко В. И. Административная ответственность предприятий и организаций. Учебное пособие Дальневосточного государственного Университета, Издательство Дальневосточного государственного Университета, 1995, 83 тз,

197. Дымченко В.И. Административная ответственность организаций: Автореферат дис. на соиск. уч. степени канд. юр. наук / В. И. Дымченко. - Свердловск: Свердловский юридический институт, 1983, 17 тз,

198. Жамбиева Е. М. Структурное подразделение предприятия и учреждения как субъект административного права / Е. М. Жамбиева // Субъекты советского административного права. Межвузовский сб. научн. трудов.- Свердловск: Свердловский юридический институт, 1985, 168 тз,

199. Захаров Д.Н., Понятие воли юридического лица и проблема ответственности. www.rae.ru/zk/arj/2005/07/zaharov.pdf,

200. Иванов Л. Административная ответственность юридических лиц /Л. Иванов//Российская юстиция. – 2001, №3, тзбр 21-24,

201. Исаев И.А. История государства и права России/ Исаев И.А.-М.: Юристъ,1996, 448 тз,

202. Калинина Л. А. Проблемы совершенствования законодательства об административных правонарушениях // Сб. науч. ст. / Административная ответственность: Под ред. И. Л. Бачило. - М., 2001, тзбр 32 – 35,

203. Коваль Л. В. Административно - деликтное отношение / Л. В. Коваль. — Киев; Вища школа, 1979, 230 тз,

204. Козлов Ю. М. Административное право: Учебник для студентов юридических институтов и факультетов / Ю. М. Козлов. - М.: Юрид. лит., 1968, 574 тз,

205. Козлов Ю. М. Советское административное право (пособие для слушателей) /Ю. М. Козлов.- М: Знание, 1984, 208 тз,

206. Козлов Ю. М. Административное право". Учебник для вузов по специальности "Юриспруденция" / под редакцией Л.А.Попова, Москва, "Юристъ", 2005, 695 тз,

207. Колесниченко Ю. Ю. Некоторые вопросы административной ответственности юридических лиц // Журнал российского права. -1999, №10, тзбр 51-55.

208. Колесниченко Ю. Ю. Административная ответственность юридических лиц, Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2002, тзбр 32,

209. Колесниченко Ю.Ю. Некоторые аспекты вины юридических лиц, привлекаемых к административной ответственности.// Журнал российского права, 2003, №1, тзбр 71-81,

210. Комментарий части первой Гражданского Кодекса РФ для предпринимателей / М. И. Брагинский. - М., 1995, 580 тз,

211. Костенников М. В. К вопросу о кодификации норм административного права России / М. В. Костенников, А. В. Куракин // Государство и право, 2006, №8, тзбр 38-45,

212. Костенников М. В. Теоретические проблемы административной ответственности// Юрист. 1998, №9, тз 45,

213. Крылова Н. Е. Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты / Н. Е. Крылова // Вестник Московского Университета. Серия 11. Право, 1998, №3, тзбр 61-75,

214. Крылова Н. Е. Уголовное право современных зарубежных стран (Англии, США, Франции, Германии): Учебное пособие / П. Е. Крылова, А. В. Серебрянникова. - М.: Зерцало, 1997, 192 тз,

215. Кузякин Ю.П. К проблеме об административной ответственности юридических лиц//: В мире права, 2001, № 2, тзбр 1-5,

216. Клепицкий И. А. Преступление, административное правонарушение и наказание в России в свете Европейской конвенции о правах человека // Государство и право, 2000, № 3, тзбр 65-71,

217. Кононов П. И. О некоторых вопросах применения арбитражными судами положений КоАП РФ при рассмотрении дел об административных правонарушениях, совершенных юридическими лицами // Журн. Полицейское право, 2005, №2, тзбр 56-59,

218. Кислухин А.В. Виды юридической ответственности: Автореф. дисс. на соиск. уч. степени канд. юрид. наук.-М., 2002, 18 тз,

219. Лунев А. Е. Административная ответственность за правонарушения / А. Е. Лунев. - М.: Госюриздат, 1961, 187 тз,

220. Лунев А. Е. Административное право. Учебник для юридических институтов и факультетов / А. Е. Лунев - М.: Юрид. лит., 1970, 260 էջ,

221. Лунев А.Е., Понятие административного проступка и основания административной ответственности, Правоведение, 1959, №3,

222. Малеин Н. С. Имущественная ответственность в хозяйственных отношениях,-М.; Наука, 1968, 12 էջ,

223. Малеин Н. С. Правонарушение: понятие, причины, ответственность. М.;1985,

224. Мальцев В. В. Рецензия на: Михеев Р. И., Корчагин Г. А., Шевченко А. С. Уголовная ответственность юридических лиц: за и против. - Владивосток.: Издательство Дальневосточного университета, 1999, //Журнал Российского права, 2000, էջեր 263-264,

225. Манохин В. М. Административная ответственность в СССР. / В. М. Манохин, В. М. Новоселов, Д.Н. Бахрах, 10. С. Адушкин/ Саратов: Изд. Сарат. Унив., 1988, 167 էջ,

226. Манохин В. М. Советское административное право. Курс лекций / В. М. Манохин.- Саратов: Изд. Саратовского Университета. - Вып. 1. Часть общая, 1968, 248 էջ, Вып. 2. Часть особенная, 1968, 232 էջ,

227. Максимов И.В. Система административных наказаний: понятия и признаки /Максимов И.В// Государство и право, 2005, №4, էջեր 18-28,

228. Максимов И.В. Административные наказания./ Максимов И.В. -М.: Норма, 2009, 464 էջ,

229. Матвеев С. В. Субъекты ответственности за совершение административных правонарушений // Советское государство и право, 1990, №5, էջեր 80- 85,

230. Матвеев Г.К., Психологический аспект вины юридических лиц, // Советское государство и право, 1978, №8, էջ 39,

231. Минашкин А. В. Административное право и административный процесс: старые и новые проблемы (По материалам «Лазаревских чтений») // Государство и право, 1998, №8, 12 էջ,

232. Минашкин А. В. Проблемы административной ответственности юридических лиц /А. В, Минашкин // Журнал российского права, 1998, №7, էջեր 17-20,

233. Морозова Н. А. Механизм достижения целей административного наказания при привлечении к ответственности юридических лиц //Административная ответственность: вопросы теории и практики. Лазаревские чтения: Сб. науч. ст. / Под ред. Н. Ю. Хамановой. Из-во Инст. гос-ва и права РАН. - М., 2004, էջեր 229-234,

234. Морозова Н. А. Административная ответственность юридических лиц. Автореф дис. ... канд. юрид. наук. – Красноярск, 2003, 291 էջ,

235. Назаров И. В. Административная ответственность организаций (юридических лиц): Автореф. дис. ... канд. юрид. наук. - Н. Новгород, 2002. 32 էջ,

236. Нарышкин С.Е., Хабриева Т.Я. Административная реформа в россии: некоторые итоги и задачи юридической науки// Журнал российского права, 2006,

237. Никифоров Б. С. Современное американское уголовное право / Б. С. Никифоров, Ф. М. Решетников / Отв. ред. В. А. Власихин, АН СССР, Нн-т США и Канады. Ин-т сов. стр-ва и зак-ва. - М.: Наука, 1990, 253 էջ,

238. Никифоров А. С. Юридическое лицо как субъект преступления / А. С. Никифоров // Государство и право. – 2000, №8, էջեր 18-27,

239. Никифоров А.С. Юридическое лицо как субъект преступления и уголовной ответственности. -М., АО Центр ЮрИнфор, 2002, 203 էջ,

240. Новицкий И. Б. Римское право /И. Б. Новицкий. - М.: Теис, 1998, 254 էջ,

241. Новоселов В. И. Административная ответственность юридических лиц / В. И. Новоселов//Советская юстиция, 1981, №23, 11 էջ,

242. Î añýí êî Ä.Ï "Ääî éí êñòðàðèáîáî ìðàâî". ó÷áíîá ìññîéà, ìîä ääâèèèèè ìðî. Ä.Ä.Òóî áíîâà, "Ððîñó", Ï ìñèàà, 1997, 145 էջ,

243. Овчарова Е. В. Материально-правовые проблемы административной ответственности юридических лиц (К проекту Кодекса РФ об административных правонарушениях) / Е. В. Овчарова // Государство и право, 1998, №7, էջեր 14-19,

244. Овчарова Е. В. Административная ответственность юридических лиц в РФ: Автореф. дис. ...канд. юрид. наук. - М., 2003, 28 тз,

245. Ойгензихт В, А. Юридическое лицо и трудовой коллектив: Сущность. Поведение. Ответственность. Учебн. пособие / В. А. Ойгензихт. - Душанбе, 1988, 116 тз,

246. Панкратов В. В. Проблемы административной ответственности в сфере налогообложения и предпринимательства (К проекту нового Кодекса об административных правонарушениях) / В. В. Панкратов, Т. Л. Гусева // Государство и право, 2000, №9, тзтр 53-56,

247. Панова И. Реформа административного производства назрела / И. Панова // Российская юстиция, 2000, №1,

248. Павлов В.Г. Субъект преступления в зарубежном уголовном праве. "Правоведение", 1996, №3, <http://law.edu.ru/article/article.asp?articleID=141944>:

249. Петров М. П. Административная ответственность организаций (юридических лиц): Автореф. дисс. канд. юр. наук - Саратов: Саратовская Академия права, 1998, 22 тз,

250. Петров Г. И. Административная правосубъектность граждан СССР // Правоведение. 1975, №1, 24 тз,

251. Попова Ж. Л. Правовые проблемы легитимации предпринимательства // Государство и право, 1997, №5, тз 46,

252. Постатейный комментарий к Кодексу РФ об административных правонарушениях. // Под ред. Липатова Э.Г., Чаннова С.Е.- М.: ГроссМедиа, 2008, 912 тз,

253. Путинский Б.И. „Применение принципа вины при регулировании хозяйственной деятельности, Сов.гос-во и право, 1979, № 10, тз 64,

254. Решетников Ф. М. Правовые системы стран мира: Справочник / Ф. М. Решетников. - М: Юрид. лит., 1993, 255 тз,

255. Рохлин В. И. Актуальные проблемы борьбы с административными правонарушениями / В. И. Рохлин, А.П. Стуканов // Известия высших учебных заведений. Правоведение, 1998, №3, тзтр 94-97,

256. Салищева П. Г. Административная реформа в действии // Административное право и процесс, 2004, № 1, тзтр 24–26,

257. Салищева Н. Г. Проблемные вопросы института административной ответственности в России // Административная ответственность: вопросы теории и практики. Лазаревские чтения // Под ред. Н. Ю. Хаманевой - М., 2004, тзтр 10-16,

258. Самощенко И. С. Ответственность по советскому законодательству / И. С. Самощенко, М. Х. Фарухшин. - М.: Юридич. лит., 1971, 190 тз,

259. Серебрянникова А. В. Основные черты Уголовного кодекса ФРГ / А. В. Серебрянников. - М.: Диалог-МГУ, 1999, 262 тз,

260. Сорокин В. Д. О двух тенденциях, разрушающих целостность института административного права / В. Д. Сорокин // Правоведение. - 1999. - №11. - С. 46-54.

261. Сорокин В. Д. Правовое регулирование: Предмет, метод, процесс (макроуровень) / В. Д. Сорокин. - СПб.: Юридический центр Пресс, 2003, 661 тз,

262. Сорокин В. Д. Проблемы административного процесса / В. Д. Сорокин. - М, 1968,

263. Сорокин В. Д. Советское административно — процессуальное право. (Учебно — методическое пособие) / Л.: Изд. Ленинградского Университета, 1976, 56 тз,

264. Сорокин В. Д. Парадоксы Кодекса РФ об административных правонарушениях // Правоведение, 2004, № 3, тзтр 4–28,

265. Соглашение между правительствами СССР, США, Соединенного Королевства Великобритании и Северной Ирландии и Временным Правительством Французской республики о судебном преследовании и наказании главных военных преступников европейских стран оси от 8 августа 1945 г. // Международное гуманитарное право в документах. М., 1996, тзтр 513 - 520,

266. Студеникина М. С. Соотношение административного принуждения и административной ответственности // Советское государство и право, 1968, №10, тзтр 25-28,

267. Студеникина М. С. Что такое административная ответственность? / М. С. Студеникина. - М: Сов, Россия, 1990, 125 тз,

268. Студеникина М. С. Кодекс РФ об административных правонарушениях в системе действующих федеральных кодексов // Административная ответственность: вопросы теории и практики.

Лазаревские чтения: Сб. науч. ст. / Под ред. Н. Ю. Хаманевой. - М.: Из-во Института гос-ва и права РАН, 2004, т. 17-23,

269. Субъекты советского административного права: Межвузовский сборник научных трудов / Свердловский юридический институт им. Р. А. Руденко; Д. Н. Бахрах, - Свердловск: СЮИ, 1985, 168 т.р.,

270. Суворов И. С. Об юридических лицах по римскому праву / И. С. Суворов. - М.: Статут, 2000, 299 т.р.,

271. Строгович М.С., Сущность юридической ответственности, Сов.гос-во и право, 1979, №10,

272. Солдатов А. П. Проблемы административной ответственности юридических лиц: Дисс. д-ра. юрид. наук. Краснодар, 2000, 294 т.р.,

273. Таганцев Н. С. Русское уголовное право. Часть общая. - Репринт изд. 1902 г. / Н. С. Таганцев. - Тула: Автограф., 2001. (юридическое наследие XX век)-Т. 1, 2001, 799 т.р.,

274. Уголовное законодательство зарубежных стран (Англии, США, Франции, Германии, Японии). Сборник законодательных материалов / И. Д. Козочкин. — М.: Зерцало, 2001, 352 т.р.,

275. Уголовный кодекс Австралии 1995 г. / И. Д. Козочкин, Е. Н. Трикоз. — Спб.: Юридический центр Пресс, 2002, 388 т.р.,

276. Уголовный кодекс Китайской Народной Республики / Л. И. Коробеев. -Владивосток: Изд-во Дальневосточного ун-та, 1999, 176 т.р.,

277. Уголовный кодекс Франции / Л. В. Головкин, Е. Н. Крылова. - Спб.: Юридический Центр Пресс, 2002, 650 т.р.,

278. Уголовный кодекс ФРГ. - М.: Зерцало, 2000, 208 т.р.,

279. Уголовное право зарубежных государств. Общая часть / И. Д. Козочкин. - М.: Институт международного права и экономики имени Л. С. Грибоедова, 2001, 576 т.р.,

280. Устав Международного Военного Трибунала для суда и наказания военных преступников европейских стран оси от 8 августа 1945 г. Международное публичное право: Сб. док. / Сост. К. А. Бекашев, А. Г. Ходаков. М., 1996. Т. 2, т.р. 101-110,

281. Хазанов С. Д. Пересмотр дел об административных правонарушениях в арбитражных судах: сложные вопросы

правоприменения // Административная ответственность: вопросы теории и практики. Лазаревские чтения: Сб. науч. ст. / Под ред. П. Ю. Хаманевой. - М.: Из-во Инст. гос-ва и права РАН, 2004, т.р. 248-253,

282. Хаманева Н. Ю. Административная ответственность за нарушение законодательства о налогах и сборах // Административная ответственность: вопросы теории и практики. Лазаревские чтения: Сб. науч. ст. / Под ред. Н. Ю. Хаманевой. - М.: Из-во Института гос-ва и права РАН, 2004, т.р. 72 – 75,

283. Черепяхин Б. Б. Волеобразование и волеизъявление юридического лица / В. В. Черепяхин // Известия вузов: Правоведение, Вып. 2, 1958, т.р. 44-46,

284. Черкаев Д. И. Административная ответственность юридических лиц / Д. И. Черкаев // Законодательство, 2001, №11, т.р. 51-59,

285. Чапурных Я.Н., Едомина С.А. К вопросу о понятии вины юридических лиц в административном правонарушении. // Публикация Арбитражного суда Кировской области, <http://pda.kirov.arbitr.ru>,

286. Чапурных Я.Н. Некоторые аспекты административной ответственности юридических лиц.// Публикация Арбитражного суда Кировской области, 2006, <http://pda.kirov.arbitr.ru>

287. Чухлей Т. Административная ответственность: Вина юридического лица как элемент состава административного правонарушения// Журнал «Главный Бухгалтер» № 20, 2007, т.р. 6-11,

288. Шилов Ю. В. Административная ответственность юридических лиц (процессуальный аспект): Автореф. дне. ... канд. юрид. наук. Омск, 2003, 24 т.р.,

289. Шнайдер Г. Криминология / Г. Шнайдер. - М.: Прогресс, Универс, 1994, 501 т.р.,

290. Юсупов В. А. Актуальные проблемы административного права / В. А. Юсупов // Советское государство и право, 1991, №11, т.р. 35-41,

291. Юрмашев Р. Уголовная ответственность юридических лиц //Налоги. 2001, №1, т.р. 69-74,

292. Юхович А.Ю. Административная ответственность юридических лиц по новому КоАП РФ: соблюдение принципа вины

при привлечении к ответственности. http://www.ecomomer.khv.ru/content/n046/11_adm.

293. Якуба О. М. Административная ответственность / О. М. Якуба. — М.: Юрид. лит., 1972, 152 էջ,

294. Якуба О.М. Административная ответственность по советскому праву в свете дальнейшего усиления прав личности: Автореф. дне. на соиск. уч. степени докт. юр. наук, Харьков, 1964, 19 էջ,

295. Якимов А.Ю. Статус субъекта права (теоретические вопросы) // Якимов А.Ю.// Государства и права, 2003, №4, էջեր 5-10,

296. Ямпольская Ц. А. Об убеждении и принуждении в советском административном праве //Вопросы советского административного и финансового права (Сборник статей) / В. Ф. Коток, М., 1952, էջեր 167-169:

գ) անգլերեն լեզվով

297. Convention on Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions, (Adopted by the Negotiating Conference on 21 November 1997),

298. “Corporate criminal liability. National and international responses” by Markus Wagner, Background paper for the international society for the reform of criminal law 13th international conference commercial and financial fraud. Malta, 8-12 July, 1999., 10 էջ,

299. “Corporate criminal liability” discussion paper, March 2002, Ministry of Justice, Canada, <http://www.justice.gc.ca/eng/dept-min/pub/jhr-jdp/dp-dt/intro.html>:

300. Roland Hefendehl “ Corporate criminal liability: Model Penal Code Section 2.07 and the Development in Western Legal Systems” 1999 , Buffalo Criminal Law Review, Volume 4, Number 1, էջեր 284-300,

301. John C. Coffee, Jr., “Corporate criminal liability: An introduction and comparative survey, in criminal responsibility of legal and Collective Entities”, Albin Eser et.al. eds., 1999, էջեր 21-24,

302. Hood Philips O., Jackson P. Constitutional and Administrative Law. L., Sweet & Maxwell, 8-rd edition, 2001, 984 էջ,

303. Irving Stevens, Constitutional and Administrative Law, 3-rd edition, 1996, 284 էջ,

304. Michaela Mozdiakova, Alena Salinkova. “Administrative Offenses and Legal Sanctions in Accordance with Act no. 254/2008 coll., on the Amendment of Legislation Related to Adoption of Act on Selected Measures Against Legitimation of Proceeds of Crime and Financing of Terrorism”, 2009, 16 էջ,

305. A Lex Mundi Publication prepared by the Lex Mundi Business Crimes and Compliance Practice Group “Business Crimes and Compliance Criminal Liability of Companies Survey”, February 2008, 463 էջ,

306. J.Kyriakakis ,“Corporate criminal liability and the Icc statute:the comparative law challenge”, Netherlands International Law Review /Volume 56/Issue 03, 2009, էջեր 333-366,

307. Mark Pieth, Lucinda A. Low, Peter J. Cullen “The OECD Convention on Bribery: A Commentary”, Cambridge University Press ,2007, 585 էջ,

308. Di Guido Molinari, The System of Administrative (Criminal) Liability of Legal Entities under the 8th June 2001 Legislative Decree n. 231, 2008, 19 էջ,

309. Eero Johannes, Administrative liability of legal persons as a better way of protecting the rights of authors, Juridica, 1997 N 1, էջեր 21-22,

310. Douglas, Lawrence, The memory of judgement: making law and history in the trials if the Holocaust. (Yale University Press:2001), 318 էջ,

311. Sands, Phillipe, Ed. from Nuremberg to the Hague: The future of International Criminal Justice. (Cambridge University Press:2003) 206 էջ,

312. “Criminal responsibility of legal persons in common law jurisdictions”, Paper prepared for OECD Anti-Corruption Unit, Working Group on Bribery in International Business transactions, Paris 4th October 2000, 24 էջ,

313. Préfontaine, Daniel C. “Effective criminal sanctions against corporate entities-Commentary: Canada”, paper presented at the international colloquium on criminal responsibility of legal and collective entities, May, 1998, Berlin, Germany, 6 էջ,

314. Gerry Ferguson, “Corruption and corporate criminal Liability” paper presented at the for the seminar on New global and canadian standards on Corruption and Bribery in foreign business transactions, February 4-5, Vancouver, Canada, 1998, 15 էջ,

315. Khanna V.S, “Corporate Criminal Liability: What Purpose Does it Serve?” Harvard Law Review 1477, 1996, 109 էջ,

316. “Compliance report on Armenia” Greco RC-I/II (2008) 3E, Strasbourg, 13 June 2008, [http:// www.coe.int/greco](http://www.coe.int/greco):

317. OECD Anti-Corruption Network For Eastern Europe and Central Asia, Istanbul Anti-Corruption Action Plan, Second Round of Monitoring, Armenia, Report, [http:// www.oecd.org/corruption/acn](http://www.oecd.org/corruption/acn):

Ինտերնետային այլ կայքեր

318. www.hraparak.am/wp-content/2010/08/rep35_036.jpg,

319. www.armradio.am/arm/news/?part=pol&id=11203,

320. Վարչական իրավասխախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4516&Reading=0>,

321. <http://www.lexadin.nl>,

322. <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>,

323. <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=233230&SecMode=1&DocId=698704&Usage=2>,

324. www.oecd.org, www.coe.int/greco,

325. <http://www.aufenthaltstitel.de/owig.html#9>,

326. <http://www.echr.coe.int/ECHR/EN/hudoc>:

РЕЗЮМЕ

ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО КАК СУБЪЕКТ АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Работа посвящена изучению актуальной темы административной ответственности юридических лиц в Республике Армения и ряда связанных с ней вопросов. Выбранная тема является той редкой областью правоведения, научные исследования о которой не отличаются постановкой необходимых вопросов и всесторонним анализом актуальных задач. Это исследование является комплексным научным материалом об административной ответственности юридических лиц.

В работе всесторонне изучены такие вопросы, как историко-правовые предпосылки и стадии формирования административной ответственности юридических лиц, хронологическое развитие этого института в Республике Армения, в частности, с точки зрения сопоставления правового опыта зарубежных стран и соответствующих законодательств, а также сформировавшейся правовой практики. Большое внимание в работе уделяется влиянию международных правовых критериев на государственные законодательные реформы в области административной ответственности юридических лиц, анализу сопоставления вопроса этого института, сущности института административной ответственности юридических лиц, специфике юридического лица как субъекта административной ответственности, особенностям оценки вины юридического лица, вопросу соотношения административной ответственности юридического лица и его сотрудника (должностного лица). Важной частью работы является разбор установленных видов административных наказаний в отношении юридических лиц, а также анализ направлений совершенствования института административной ответственности юридических лиц в контексте судебно-правовых реформ.

По мнению автора институт административной ответственности по традиции не может быть направлен исключительно на защиту административной системы. В частности, достоинство, права и свободы человека должны быть закреплены в законодательстве об административ-

ных правонарушений как высшие правовые ценности. В тоже время, в диссертации обоснована мнение, что если в правовой системе данной страны для юридических лиц предусмотрена административная ответственность, то международные структуры не могут требовать, чтобы для них была предусмотрена также и уголовная ответственность. При определении административной ответственности юридических лиц требование привлечения их к уголовной ответственности не является обоснованным и полная замена административной ответственности на уголовную в этих случаях не целесообразна. Закрепление таких применяемых к юридическим лицам видов взысканий, которые соразмерны уголовным наказаниям других стран, позволит в результате обеспечения соразмерности их правовых последствий в некоторой степени решить обозначенную международными организациями проблему "уголовной ответственности". Только для юридических лиц в кодексе административно-правовых нарушений можно предусмотреть административную ответственность за некоторые деяния, предусмотренные действующим уголовным кодексом.

В работе системно представлены типичные признаки и особенности административной ответственности юридических лиц, что дает возможность обосновать необходимость ее законодательного закрепления. При этом обосновано то заключение, что административная ответственность юридических лиц отличается такой степенью самостоятельности регулирования, что позволяет считать ее субинститутом института административной ответственности. Институт административной ответственности юридических лиц может распространяться также на организации, не имеющих статус юридического лица, в частности на предпринимательства и отрасли. В основе этого заключения лежит положение, о том что термин "юридическое лицо" в административном праве не воспринимается в том правовом значении, которое свойственно гражданскому праву, несмотря на то, что он заимствован из гражданского права.

В работе приведено обоснованное заключение, о том что привлечение к административной ответственности юридического лица за данное административное правонарушение, не освобождает от админист-

ративной ответственности физическое лицо виновное в данном административном правонарушении, также как в случае привлечения к административной ответственности физического лица, за содеянное административное правонарушение, не освобождает от административной ответственности юридическое лица в данном административном правонарушении. Конкретно указано за какие деяния и каких именно физических лиц ответственность должны нести также юридические лица. С целью законодательного закрепления оснований и пределов административной ответственности физического лица (должностного лица) ответственного за деятельность юридического лица, в диссертации дано толкование терминов "в пользу и в выгоду".

В работе обстоятельно представлены рамки применяемых санкций в отношении юридических лиц, их особенности и обоснованные предложения по расширению их спектра, а также роль суда, на нынешней стадии реформ административного законодательства, как органа назначающего административное наказание. В частности, предлагается в законопроекте список административных наказаний в отношении юридических лиц дополнить новым видом административного наказания, а именно, опубликование административного акта.

В работе на научной основе представлены актуальные проблемы совершенствования исследованного института, а также множество конкретных предложений, в том числе в виде отредактированных в статье с целью совершенствования административного законодательства Республики Армения в контексте осуществляемых судебно-правовых реформ

SUMMARY

LEGAL ENTITIES AS SUBJECT OF ADMINISTRATIVE RESPONSIBILITY

The monograph is dedicated to the actual problem of administrative responsibility of legal entities and other related issues. In the light of inevitable processes of economic liberalization, the defined problem is well-timed.

This research is the first integrated and comprehensive scientific analysis on administrative responsibility of legal entities.

The selected topic is one of the few fields of jurisprudence which were not appropriately and deeply researched by scientists so far.

The monograph touched upon such issues as historical and legal preconditions of the administrative responsibility of legal entities; the development of legal entities administrative responsibility institution in the Republic Armenia; the influence of international legal standards on domestic legal reforms related to administrative responsibility of legal entities; comparative analysis; the essence of the institution of administrative responsibility of legal entities; the peculiarities of a legal entity as a subject of administrative responsibility; the peculiarities of assessment of legal entity's guilt; the problem of correlation of administrative responsibility of legal entity and its employee (official); types of administrative penalties, which can be imposed to legal entities and the improvement of the institution of administrative responsibility of legal entities, in the light of judicial reforms.

According to the given research, the institution of administrative responsibility cannot be aimed only at protection of administrative system. In administrative legislation human rights, freedoms and dignity must be considered as primary legal values.

Meanwhile, the thesis substantiated the following idea: if state's legislation provides system of administrative responsibility for legal entities, international organizations should not require the provision of criminal responsibility.

If national legislation provides administrative responsibility for legal entities, criminal responsibility institution is groundless, and, in any case, the full replacement of administrative responsibility to criminal one is an improper solution. The thesis also studied the most typical characteristics and peculiarities of administrative responsibility and substantiated that the administrative responsibility for legal entities should be allocated by legislation.

The monograph justified the following conclusion: the administrative responsibility of legal entities is characterized by such degree of independence of its regulation which makes it possible to affirm that it can be a component of the institution of administrative responsibility.

The institution of the administrative responsibility of legal entities can be applied to organizations, which are not legal entities by their status, e.g. representatives and branch offices.

This approach is based on the argument that in administrative law and civil law the concept "legal entity" is interpreted in a different way. Being adopted from civil law, in administrative legislation this concept has wider sense.

In this connection the author underlined that if legal entity undergo administrative responsibility, an individual, who is responsible for the same offense, should not be released from administrative responsibility for committing that offence.

The author produced certain conclusions on specific individuals and specific offences when legal entity should undergo administrative liability for offence committed by individual. In order to stipulate the grounds and frameworks of administrative responsibility of the official, who is responsible for activities of legal entity, by specific legislation, the author brought the comprehensive interpretation of concept "in behalf of or in benefit of".

The author thoroughly researched the frames of penalties which can be applied to legal entities, their peculiarities and made well-grounded suggestions on enlargement of penalty list; the role of court as the authority which imposes administrative penalty, in the light of current reforms in administrative responsibility field. In particular, in the list of forms of

administrative penalties, which can be imposed to legal entities, provided in the Draft, there should be included the form of penalty “publication of the decision on imposing administrative penalty”.

The assignment of such forms of penalties to legal entities, which are in line with criminal punishment exercising in other countries, within the frameworks of administrative responsibility, in a result of adjusting the gravity and consequences of responsibility, in a certain degree will response to international organizations, which require “criminal liability” of legal entities.

In administrative legislation administrative responsibility for a number of deeds, stipulated by criminal legislation, can be applied only in relation to administrative responsibility of legal entities.

The monograph scientifically grounded the importance of integrated consideration of modern problems related to this institution in the current stage of judicial legal reforms.

The monograph also studied the definitions of provisions on improvement of the researched institution, as well as other specific suggestions, through edited articles as well, in the context of judicial legal reforms.

Թամարա Արայի Շաքարյան

Թամարա Արայի Շաքարյանը ծնվել է 1984 թվականի օգոստոսի 8-ին Երևան քաղաքում: 2001 թվականի հուլիսի 27-ին ոսկե մեդալով ավարտել է Կ. Գեմիորճյանի անվան թիվ 139 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել է ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետը: 2005թ. գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետը՝ ստացել է իրավագիտության բակալավրի աստիճան «Իրավագիտություն» մասնագիտությամբ և նույն տարում ընդունվել եմ ԵՊՀ-ի իրավագիտության մագիստրատուրան: 2007 թվականին գերազանցությամբ ավարտել է մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան «Իրավագիտություն» մասնագիտությամբ: 2013 թ. պաշտպանել է «Իրավաբանական անձինք՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ» վերատառությամբ թեկնածուական ատենախոսությունը և ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2005-2007 թթ. համատեղությամբ աշխատել է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Մահմանադրական իրավունքի ամբիոնում՝ որպես լաբորանտ: 2007-2010 թվականի դեկտեմբերն աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում որպես ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական:

2011 թվականից՝ ՀՀ Գլխավոր դատախազի (իրավական հարցերով) օգնականն է:

2008 թվականի հուլիսի 21-ին շնորհվել է արդարադատության 3-րդ դասի խորհրդականի դասային կոչում:

2012 թ. նոյեմբերի 26-30 դասախոսել է Արևելյան գործընկերության ուղենիշներով հակակոռուպցիոն հմտությունների զարգացման ծրագրով վերապատրաստման դասընթացում և ստացել համապատասխան վկայական:

2010 թ. առ այսօր դասավանդում է «Գատախագության դպրոց» ՊՈԱԿ-ում «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ» դասընթացը:

2013 թ. աշխատում է ՀՀ կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնում որպես դասախոս:

«Իրավաբանների համահայկական խորհրդաժողով» հասարակական կազմակերպության անդամ:

Մի շարք տպագիր գիտական հոդվածների, ինչպես նաև տասնյակից ավելի օրենքների նախագծերի հեղինակ և համահեղինակ:

Թամարա Արայի Շաքարյան

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

Шакарян Тамара Араевна
**ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО КАК СУБЪЕКТ
АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ**

Shakaryan Tamara
**LEGAL ENTITIES AS SUBJECT OF
ADMINISTRATIVE RESPONSIBILITY**

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն
0025, Երևան, Ա. Մանուկյան 1

Հանձնվել է տպագրության 11.09.2013:
Չափսը՝ 60x84^{1/16}: Ծավալը՝ 15 տպ. մամուլ:
Քանակը՝ 100 օրինակ